ԼԵՋՎԻ ԵՎ ՈՃԻ ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ

Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ քերականագիտության մեջ բարդ նախադասությունների անշաղկապ կապակցությունը հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել։

Նախադասությունների անշաղկապ կապակցության հարցին որոշ չափով անդրադարձել է պրոֆ. Մ. Աբեղյանը, որը «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության մեջ խոսելով բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների մասին՝ գտնում է, որ նրանց կապակցությունը կարող է լինել երկու եղանակով՝ շարահարությամբ և զոդվածով (իմա՝ անշաղկապ և շաղկապական բառերով)։ Այսպիսով՝ Մ. Աբեղյանը անշաղկապ բարդ նախադասությունները չի համարում բարդ նախադասությունների հատուկ տեսակ, այլ դրանք զետեղում է համադասության և ստորադասության տակ՝ համարելով վերջիններիս դրսևորման ձևերից մեկը[1]։ Անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունների մասին մեծ հայագետը ասում է միայն, որ ստորադասական կապակցությունը լինում է «շարահարությամբ, երբ երկրորդական խոսքերը, որոնք սկզբնապես գլխավորից անկախ խոսքեր են, առանց որևէ բառի, նշանակությամբ միայն միանում են գլխավոր խոսքի հետ, դառնալով ենթակա, խնդիր և այլն»։ Ինչպես երևում է մեջբերումից, Աբեղյանը գտնում է, որ նախադասությունների անշաղկապ կապակցությունը առաջացել է նախապես անկախ խոսքի միավորների՝ նախադասությունների ավելի սերտ միացումից։ Այստեղ Աբեղյանը խոսում է նաև անշաղկապ կապակցության՝ շարահարության բնույթի և կիրառության ոլորտի մասին՝ «Շարահարությունը խոսքերի կապակցության ամենապարզ, սկզբնական ձևն է և հա-

1 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն, 1912, Վաղարշապատ, էջ 278 և 325։*

տոկ է ժողովրդական լեզվին, գրական լեզվի մեջ պահանջվում է, որ կապակցված խոսքերի հարաբերությունն արտահայտվի որևէ կապակցական բառով»[1]։ Մ. Աբեղյանը մի քիչ ավելի է խոսում համադասական անշաղկապ նախադասությունների մասին։ Նա գտնում է, որ համադասության ժամանակ շարահարական կապակցության դեպքում խոսքերը իրար միանում և մեկ ամբողջություն են կազմում «միայն բովանդակությամբ և իրենց մեջ ունեցած կարճ դադարով»[2]։ Ինչպես երևում է մեջբերումից, Աբեղյանը նկատել է ինտոնացիայի դերն անշաղկապ կապակցության ժամանակ։ Ուշագրավ է նաև այն դիտողությունը, որ «շարահարությամբ կապակցությունը շատ լույծ է լինում. միջի դադարի երկարելով՝ համադաս խոսքերը հեշտությամբ կարող են իրարուց բաժանվել և կազմել անկախ ասացվածներ»։ Մ. Աբեղյանը համադասական կապակցության հատուկ ձև է համարում ցուցական բառերով կապակցությունը[3], որը մեր կարծիքով պետք է համարել անշաղկապ կապակցություն։

Այսպիսով՝ Մ. Աբեղյանը ճիշտ կերպով նկատել է բարդ նախադասությունների կապակցության երկու եղանակները, սակայն նախադասությունների անշաղկապ կապակցությունը, իր տերմինով ասած՝ շարահարությունը, հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձրել։

Սովետական շրջանում ևս հայ քերականագիտության մեջ բարդ նախադասությունների անշաղկապ կապակցությունը ուսումնասիրության նյութ չի դարձել։ Միայն 1956 թ. ՀՍՍՌ ԳԱ տեղեկագրում լույս տեսավ դոց. Ռ. Մկրտչյանի հոդվածը՝ «Անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունների մասին»[4], որտեղ ընդհանուր գծերով նկարագրված են անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները։

Նախադասությունների անշաղկապ կապակցության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ ռուս քերականագիտությանը, որտեղ վերջերս մեծ հետաքրքրություն է առաջացել դեպի այդ լեզվական երևույթը։

Ռուս քերականագիտության մեջ այս հարցը ստացել է տարբեր

---

[1] Մ. Աբեղյան, աշխարհաբարի շարահյուսություն, 1912, Վաղարշապատ, էջ 278—279։

[2] Նույն տեղում, էջ 325։

[3] նույն տեղում, էջ 326։

[4] Ռ. Մկրտչյան, Անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունների մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1956, № 3, էջ 25—36։

մեկնաբանություններ և լուծումներ։ Հետազոտողների մի մասը գտնում է, որ անշաղկապ բարդ նախադասությունները բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների տարատեսակներն են[1], մյուս մասը գտնում է, որ նախադասությունների անշաղկապ կապակցության ժամանակ չի կարելի տարբերել համադասությունը և ստորադասությունը, և որ անշաղկապ բարդ նախադասությունները հանդիսանում են բարդ նախադասությունների հատուկ տեսակ[2]։ Վերջին տեսակետի համար հիմք է ծառայում շաղկապների և շաղկապական բառերի բացակայությունը անշաղկապ բարդ նախադասություններում։ Վերջին շրջանում սկսել է իշխել այս տեսակետը. այն արտահայտված է նաև ռուսերենի ակադեմիական քերականության մեջ։ Սակայն ակադեմիական քերականության մեջ ևս հարցը վերջնականապես լուծված չէ։ Այսպես՝ քերականության 2-րդ հատորի ներածական մասում նախադասությունների համադասությունը և ստորադասությունը որոշելիս իրավացիորեն հաշվի են առնված ոչ միայն շաղկապներն ու հարաբերական բառերը, այլ նաև բարդ նախադասության կառուցվածքային մյուս առանձնահատկությունները, քերականական մյուս միջոցները, որոնք օժանդակում են համադասության և ստորադասության դրսևորմանը, իսկ 2-րդ մասի անշաղկապ բարդ նախադասությունների ուսումնասիրությանը նվիրված բաժնում ընդունվում է այն կարծիքը, թե անշաղկապ բարդ նախադասությունները չի կարելի համարել ոչ բարդ համադասական, ոչ բարդ ստորադասական, քանի որ նրանք չեն միանում շաղկապներով կամ հարաբերական բառերով[3]։

Այստեղ հաշվի չի առնված անշաղկապ բարդ նախադասությունների ամբողջ քերականական կառուցվածքը։ Մեր կարծիքով նախադասությունների անշաղկապ կապակցության ժամանակ ևս կարելի է տարբերակել համադասությունը և ստորադասությունը, որովհետև այստեղ ևս մենք գործ ունենք բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի ոչ միայն իմաստային կախվածության հետ,

---

[1] *Տե՛ս* **Пешковский**, Русский синтаксис в научном освещении, изд. 6, М., 1938, էջ 419, «Грамматика русского языка» под ред. Щербы, М., 1953. **Коротаева**, К вопросу о бессоюзном подчинении, «Русский язык в школе», 1941, № 3:

[2] *Տե՛ս* **Поспелов**, О грамматической природе и принципах классификации бессоюзных сложных предложений, «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950. «Грамматика русского языка», изд. АН СССР, М., 1960, т. II, ч. 2:

[3] «Грамматика русского языка», изд. АН СССР, Москва, 1960, т. II, ч. 2, էջ 380.

այլ նաև կառուցվածքային, քերականական կախվածության հետ, որոնք անշաղկապ բարդ նախադասության տարբեր տեսակներում արտահայտվում են տարբեր ձևով, ունեն իրենց արտահայտման հատուկ քերականական և բառական միջոցները, որոնք շաղկապների և հարաբերական բառերի բացակայության դեպքում ամբողջությամբ իրենց վրա են վերցնում բարդ ամբողջության կազմելու, նրանց մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունները արտահայտելու պաշտոնը:

Ակադեմիական քերականության մեջ անշաղկապ բարդ նախադասությունների համար թեև մերժված են համադասության և ստորադասության տերմինները, սակայն ամբողջ անշաղկապ բարդ նախադասությունները բաժանված են երկու խմբի՝ միանման մասերով (однотипный) անշաղկապ բարդ նախադասություններ և տարանման (разнотипный) կազմով անշաղկապ բարդ նախադասություններ, որոնց նկարագրությունը համապատասխանում է բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններին (զուգադրության նշանակություն ունեցող նախադասություններ, պայմանի նախադասություններ, առաջին մասի նկատմամբ օբյեկտի, սուբյեկտի, պարագաների պաշտոն կատարող նախադասություններ և այլն)[1]: Իսկ ինչ վերաբերում է այն տեսակետին, թե անշաղկապ կապակցության ժամանակ հաճախ շատ դժվար, համարյա անհնար է լինում որոշել համադասության և ստորադասության սահմանները, ապա, ինչպես նշվել է նաև ռուս քերականագիտության մեջ, այդ սահմանները հաճախ հնարավոր չի լինում որոշել նաև նախադասությունների շաղկապավոր կապակցության ժամանակ, այսպես՝ երբեմն միևնույն շաղկապների միջոցով արտահայտվում են և՛ համադասական, և՛ ստորադասական հարաբերություններ (եթե... ապա, միևնույնը, չնայած... բայց, բավական է... և և այլն): Նախադասությունների համադասությունը և ստորադասությունը չի ստեղծվում միայն շաղկապների կամ շաղկապական բառերի՝ հարաբերական դերանունների միջոցով: Դրանք բարդ նախադասության կառուցվածքային-իմաստային ձևեր են, որոնք ստեղծվում և արտահայտվում են քերականական տարբեր միջոցներով: Շաղկապներն ու հարաբերական բառերը հանդիսանում են այդ հարաբերությունների արտահայտման հիմնական, բայց ոչ միակ միջոցները, որոնց բացակայության դեպքում այդ հարաբերությունները արտահայտելու դերը ամբողջությամբ իրենց վրա են վերցնում մյուս միջոցները:

[1] Տե՛ս «Грамматика русского языка», изд. АН СССР, М., 1960, т. II, ч. 2, էջ 380-382:

Եթե մերժվում են այս տերմինները, ապա դրանք պետք է մերժվեն նաև նախադասությունների շաղկապավոր կապակցության ժամանակ և բարդ նախադասությունները ուսումնասիրվեն ըստ նրանց մասերի մեջ եղած իմաստային և քերականական կախվածության տարբեր աստիճանների[1]։

* *
*

Անշաղկապ բարդ նախադասությունների քերականական բնույթի որոշումը հանդիսանում է շարահյուսության դժվար հարցերից մեկը և, ինչպես տեսանք, պատկանում է այն հարցերի թվին, որոնք լեզվաբանական գրականության մեջ դեռևս վերջնական և բավարար լուծում չեն ստացել։

Անշաղկապ բարդ նախադասությունները բարդ նախադասությունների համակարգում գրավում են առանձնահատուկ տեղ։ Այդ իսկ պատճառով նախքան այն բնորոշելը անհրաժեշտ է համառոտակի հիշել բարդ նախադասության առանձնահատկությունները։ Ինչպես հայտնի է, բարդ նախադասությունները խոսքի մեջ հանդես են գալիս որպես հաղորդակցման ավարտված, ամբողջական միավորներ, որոնց մեջ արտացոլվում է խոսողի՝ ռեալ իրականության երևույթների ու առարկաների տարբեր փոխհարաբերությունները արտացոլող բարդ միտքը։ Բարդ նախադասությունը կազմվում է պարզ նախադասությունների կապակցությունից և ունի հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

1. Բարդ նախադասությունները հանդիսանում են պարզ նախադասությունների ոչ թե քանակային, այլ օրգանական միացությունները, որոնք կազմում են իմաստային և կառուցվածքային կուռ ամբողջություն։

2. Բարդ նախադասության (հատկապես բարդ ստորադասական նախադասության) բաղկացուցիչ մասերը, ունենալով պարզ նախադասության արտաքին կառուցվածքը՝ չունեն ոչ իմաստային և ոչ էլ ինտոնացիոն ամբողջականություն և լիարժեք իմաստ են ստանում

---

[1] *Այստեղ տեղին է հիշել ակադ. Վինոգրադովի խոսքերը՝ «Ավելի զգույշ կլիներ նախադասությունների համադասության և ստորադասության փոխարեն խոսել նախադասությունների միացման տարբեր տեսակների և նրանց կախվածության տարբեր աստիճանների մասին՝ արտահայտված շաղկապներով և այլ քերականական միջոցներով» (В. В. Виноградов, Русский язык, М., 1947, էջ 708):*

միմիայն բարդ նախադասության կազմում. այդ պատճառով դրանք նախադասություն կարելի է կոչել միայն պայմանականորեն[1]։

Բարդ նախադասության բաղկացուցիչ մասերը կապակցվում և մեկ ամբողջություն են կազմում երկու եղանակով՝

ա) Կապակցության հատուկ ձևաբանական-շարահյուսական միջոցներով՝ շաղկապներով ու հարաբերական բառերով, որոնք կապակցելով բարդ նախադասության մեջ մտնող պարզ նախադասությունները՝ միաժամանակ հիմնականում որոշում են նրանց միջև եղած իմաստային փոխհարաբերությունների բնույթը։ Կառուցվածքային, քերականական մյուս միջոցները այս դեպքում համարվում են օժանդակ միջոցներ։

բ) Առանց կապակցության հատուկ միջոցների։ Շաղկապների և հարաբերական բառերի բացակայության ժամանակ բարդ նախադասության քերականական-կառուցվածքային բնույթը որոշելիս մեծանում է նրա բաղկացուցիչ մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունների դերը։ Այս դեպքում բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի միջև եղած իմաստային կապը իրականանում է քերականական և բառային այլ միջոցներով։

Այսպիսով՝ բարդ նախադասությունների անշաղկապ կապակցության ժամանակ բաղկացուցիչ մասերի միացման և մեկ ամբողջության կազմելու համար չեն օգտագործվում հատուկ ձևաբանական-շարահյուսական միջոցներ՝ շաղկապներ կամ հարաբերական բառեր. դրանց փոխարեն այստեղ առաջին պլան են մղվում կառուցվածքային այլ տարրեր, քերականական և բառային այլ միջոցներ, որոնք շաղկապավոր կապակցության ժամանակ օժանդակ դեր են կատարում։ Դրանցից ամենակարևորը ինտոնացիան է, ապա շարադասությունը, ստորոգյալի արտահայտությունը, բայերի եղանակա-ժամանակային ձևերի հարաբերությունը, որոշ բառերի գործածությունը և այլն։

Տոնի բարձրության և արտասանության ուժի զգալի մեծացման միջոցով ինտոնացիան անշաղկապ բարդ նախադասություններում ակտիվ մասնակցում է բաղկացուցիչ մասերի իմաստային հարաբերությունների դրսևորմանը և այդ պատճառով հանդիսանում է նրանց միջև եղած շարահյուսական կապի հիմնական միջոցը։ Այն

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս Н. С. Поспелов, О грамматической природе сложного предложения, «Вопросы синтаксиса современного русского языка», М., 1950:

օգտագործվում է նաև խոսքին արտահայտչականություն, դիպուկություն տալու համար։

Ինտոնացիայի դերը անշաղկապ բարդ նախադասությունների բնույթը որոշելիս ցույց տալու համար բավական է ասել, որ միևնույն անշաղկապ նախադասությունը տարբեր ինտոնացիայով արտասանելիս հաճախ փոխում է իր բնույթը. այսպես՝ Կարող եմ՝ գնացեք: Երբ այս նախադասությունը արտասանում ենք առաջին բաղադրիչի վերջում ձայնի զգալի բարձրացումով, այն ստանում է պայմանի երկրորդական նախադասության բնույթ (Եթե կարող եմ, գնացեք), իսկ երբ արտասանում ենք առաջին բաղադրիչի վերջում ձայնի որոշակի իջեցումով և երկու բաղադրիչների միջև ավելի երկար դադարով (Կարող եմ, (.) գնացեք), այն ստանում է հիմնքի երկրորդական նախադասության բնույթ (Քանի որ կարող եմ, գնացեք կամ՝ Կարող եմ, ետևաբար գնացեք): Կետադրության միջոցով ինտոնացիոն այս տարբերությունները հաճախ հնարավոր չի լինում լրիվ դրսևորել։ Այստեղ օգնության է գալիս կոնտեքստը, որի մեջ անշաղկապ բարդ նախադասության բնույթը վերջնականապես որոշակի է դառնում։ Այդ է պատճառը, որ անշաղկապ բարդ նախադասությունների բնույթը որոշելիս դրանք պետք է վերցնել անպայման կոնտեքստի մեջ[1]։

Անշաղկապ բարդ նախադասություններին հատուկ են ինտոնացիայի չորս հիմնական տեսակներ՝ թվարկման, զուգադրության, բացատրական և նախազգուշական։

Թվարկման ինտոնացիան հատուկ է այն անշաղկապ նախադասություններին, որոնց մասերը պարունակում են բնության առանձին երևույթների, իրողությունների մասին հաղորդումներ թվարկում և շարահյուսորեն հավասարարժեք են, այսինքն՝ ամբողջ բարդ նախադասության բովանդակության արտահայտման համար կատարում են նույն պաշտոնը։ Թվարկման ինտոնացիան բնորոշվում է բազմանդամությամբ, յուրաքանչյուր մասի վերջում և հաջորդի սկզբում ձայնի որոշ բարձրացումով և նրանց միջև եղած փոքր դադարներով. օրինակ՝ «Չկա մի ձայն, չկա քամի, մութ է հիմա» (Ե. Չար., 20)։

Զուգադրության ինտոնացիան լսվում է այն անշաղկապ բարդ նախադասություններում, որոնց մասերը բովանդակությամբ զու-

---

[1] *Մենք մեր ուսումնասիրությունը կատարելիս այդպես էլ վարվել ենք։ Բոլոր անշաղկապ նախադասությունները վերցրել ենք կոնտեքստով, սակայն տեղի սղության պատճառով աշխատության մեջ որպես օրինակ հիմնականում բերել ենք միայն անշաղկապ նախադասությունները։*

գադրված են միմյանց և դարձյալ կատարում են հավասար դեր ամբողջ բարդ նախադասության բովանդակության բացահայտման համար։ Զուգադրության ինտոնացիան հատուկ է երկանդամ անշաղկապ նախադասություններին և բնորոշվում է զուգադրվող բառերի ուժեղ շեշտվածությամբ ու մասերի միջև ընկած համեմատաբար երկար դադարով. օրինակ՝ «Նրանց բաժակը լցնում էին ամենից առաջ, իմ բաժակը՝ ամենքից վերջը» (ՆՋ, ՊՊՆ, 235)։

Նախազգուշական ինտոնացիան հատուկ է այն անշաղկապ բարդ նախադասություններին, որոնց առաջին բաղկացուցիչ մասը ստորադասված է երկրորդին։ Այս նախադասությունների առաջին մասի վերջում ձայնը բավականաչափ բարձրանում է, այդպիսի բարձր վիճակում պահպանվում է երկրորդ մասի սկզբում, ապա աստիճանաբար իջնում է։ Գլխավոր և ստորադաս մասերի միջև լինում է զգալի դադար. օրինակ՝ Աչքդ թեքեցիր-բանիդ տերը չես (ՀՓ, 2, 38)։

Երբ գլխավոր նախադասությունը անշաղկապ բարդ նախադասության առաջին մասն է, իսկ երկրորդ մասը ստորադասված է առաջինին, լրացնում է նրա միտքը, անշաղկապ բարդ նախադասությունը ունենում է բացատրական ինտոնացիա. առաջին՝ գլխավոր մասի վերջում լսվում է ձայնի որոշ իջեցում, դրան հաջորդում է մի փոքր դադար, ապա երկրորդ մասի սկզբում ձայնը կտրուկ բարձրանում է. օրինակ՝ Երբեմն նկատում էի՝ նրա մոտ գալիս էին անծանոթ անձինք... (Ր, 5, 33)։

Թվարկման և զուգադրության ինտոնացիա ունեցող անշաղկապ բարդ նախադասության մասերը իրար նկատմամբ ունեցած հարաբերություններով հավասարազոր են և ամբողջ բարդ նախադասության բովանդակությունը բացահայտելու համար կատարում են նույնպիսի դեր, այսինքն՝ այս անշաղկապ նախադասությունները իրենց քերականական բնույթով բարդ համադասական են։ Իսկ բացատրական և նախազգուշական ինտոնացիա ունեցող անշաղկապ բարդ նախադասություններում քերականական և իմաստային տեսակետից առկա են դերադաս՝ գլխավոր և ստորադաս՝ երկրորդական մասեր, միայն տարբեր շարադասությամբ. այստեղ նախադասության մի մասը հանդիսանում է հաղորդման հիմնական նպատակը, մյուսը որևէ կողմով լրացնում է նրա միտքը, այսինքն՝ այս նախադասությունները բարդ ստորադասական են։

Ինչպես ասվեց, անշաղկապ բարդ նախադասություններում բաղկացուցիչ մասերի շարահյուսական կապերի արտահայտման հիմնական միջոցը ինտոնացիան է, սակայն նախադասությունների

շարահյուսական ձևավորումը կատարվում է կառուցվածքային, ձևաբանական, բառական տարրերի հետ միասին, որոնցից կարևորներն են բաղկացուցիչ մասերի շարադասությունը, բայերի եղանակ-ժամանակային ձևերի օգտագործումը, որոշ բառային տարրեր և այլն։ Այստեղ մենք կտանք դրանց միայն համառոտ նկարագիրը, հիմնական ուսումնասիրությունը թողնելով հաջորդ գլուխներին, որովհետև այս միջոցները անշուշտակապ բարդ նախադասության տարբեր տեսակներում կատարում են տարբեր դեր. մի դեպքում կարևոր է մի գործոնը, մի այլ դեպքում՝ մյուսը։

Համադասական հարաբերությամբ անշուշտակապ նախադասություններում գոյություն ունի բաղկացուցիչ մասերի համեմատաբար ազատ շարադասություն. մասերի շարադասության փոփոխությունը հիմնականում չի ազդում ամբողջ բարդ նախադասության բովանդակության վրա. օրինակ՝ «Աշոտը քնած է, Արամը խաղում է»։ Հավասարապես կարելի է ասել նաև՝ «Արամը խաղում է, Աշոտը քնած է»։ Բացառություն են կազմում միայն ժամանակային հաջորդականություն և որոշ չափով պատճառ-հետևանքային հարաբերություն արտահայտող անշուշտակապ բարդ համադասական նախադասությունները, որոնց բաղկացուցիչ մասերի շարադասության փոփոխությունը առաջ է բերում ամբողջ նախադասության բովանդակության փոփոխություն, խախտվում է դեպքերի, գործողությունների հաջորդականությունը (հմմտ.՝ «Դուռը բացվեց, ներս մտավ Ռուբենը» և «Ներս մտավ Ռուբենը, դուռը բացվեց»)։

Ստորադասական հարաբերությամբ անշուշտակապ բարդ նախադասություններում գոյություն ունի բաղկացուցիչ մասերի որոշակի շարադասություն։ Այստեղ մասերի շարադասության փոփոխությունը կամ բոլորովին անհնարին է (հմմտ.՝ «Տեսավ, չեն գալի, դուռ չեն բաց անում» և «Չեն գալի, դուռ չեն բաց անում, տեսավ»), կամ էլ առաջացնում է իմաստային որոշակի փոփոխություններ (հմմտ.՝ «Կռանում, բարձրացնում են քարը—բացվում է նրանց առաջ մի մութ ներքնահարկ» և «Բացվում է նրանց առաջ մի մութ ներքնահարկ, կռանում բարձրացնում են քարը»)։

Համադասական անշուշտակապ բարդ նախադասություններում բաղկացուցիչ մասերի բայ-ստորոգյալների ժամանակային ձևերը սովորաբար գործածվում են խոսելու պահի համեմատությամբ, այսինքն՝ բացարձակ նշանակությամբ, իսկ ստորադասական անշուշտակապ բարդ նախադասություններում ստորադաս մասերի բայ-ստորոգյալների գործողության ժամանակը որոշվում է նրանց հարաբերությամբ գլխավոր մասերի գործողության ժամանակի հետ։

Հենց բայ-ստորոգյալների ժամանակային ձևերի հարաբերական կիրառությամբ էլ բնորոշվում է բարդ նախադասության մի մասի ստորադասական կախվածությունը մյուս մասից։

Անշաղկապ բարդ նախադասությունների բաղկացուցիչ մասերի կապակցության գործում հաճախ շատ մեծ դեր են խաղում բառական տարրերը, որոնք երբեմն տիպականացվում, ընդհանրացվում են և ինտոնացիայի հետ միասին հանդես են գալիս որպես նախադասությունների՝ մի անշաղկապ բարդ ամբողջության մեջ միավորելու հատուկ շարահյուսական միջոցներ։ Այսպես՝ համադասական անշաղկապ բարդ նախադասություններում կապակցող շարահյուսական դեր է կատարում նույն բառի կամ բառակապակցության կրկնությունը բաղկացուցիչ մասերում, կամ նախադասության ընդհանուր անդամի առկայությունը (օրինակ՝ «Ինչ լավն էր էն աղջիկը, ինչ լավն էին նրա ժպտուն, զվարթ աչքերը» (ՀՔ, 3, 90)։ կամ՝ «Սրեխոյան ես պարապում էի, քույրս գնացել էր թատրոն»)։ Ստորադասական անշաղկապ բարդ նախադասություններում նույնպիսի դեր է կատարում ընդհանուր անորոշ նշանակություն ունեցող, բացահայտվելու կարիք ունեցող բառերի առկայությունը անշաղկապ նախադասության գլխավոր մասում (օրինակ՝ «Նա ուներ մի սովորություն, երեկոները միշտ գնում էր զբոսանքի»)։

Այստեղ անհրաժեշտ է խոսել նաև անշաղկապ բարդ նախադասությունների հետևյալ առանձնահատկության մասին։ Թվարկման նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունները իրենց կառուցվածքով սահմանափակված չեն, այսինքն՝ կարող են ունենալ 3 և ավելի բաղկացուցիչ մասեր (ի տարբերություն շաղկապավոր նախադասությունների, որոնց մեջ շաղկապի միջոցով բարդ նախադասության կառուցվածքը սահմանափակվում, ամփոփվում է)։ Մյուս անշաղկապ նախադասությունները երկանդամ են, այսինքն՝ բաղկացուցիչ մասերից մեկը հարաբերակցում է միայն մեկ պարզ նախադասության. եթե անշաղկապ բարդ նախադասությունը բաղկացած է լինում երկուսից ավելի պարզ նախադասություններից, ապա նրանք միացած են լինում կամ հաջորդական ստորադասության հարաբերությամբ (յուրաքանչյուր հաջորդ նախադասություն ստորադասվում է նախորդին), կամ համաստորադասության սկզբունքով (երկու տարբեր նախադասությունները լրացնում են միևնույն գլխավոր նախադասությանը)։

Անշաղկապ բարդ նախադասությունները կարող են լինել պարզ և բարդ կազմով։ Պարզ են այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց կազմի մեջ մտնող բաղկացուցիչ մասերը պարզ նա-

խադասություններ են. օրինակ՝ Օրերն ավելի էին տաքանում, կաճաչը բոյ էր բաշում, բացվում էին ծաղիկները (ԱԲ, 32)։ Այստեղ համադասական հարաբերությամբ անշաղկապ բարդ նախադասությունը ունի երեք բաղադրիչ մաս, որոնցից յուրաքանչյուրը պարզ նախադասություն է։ Սակայն շատ հաճախ անշաղկապ բարդ նախադասությունը հանդես է գալիս բարդ կազմով, այսինքն՝ նրա բաղկացուցիչ մասերից մեկը կամ բոլորն էլ իրենց հերթին լինում են բարդ նախադասություններ (կամ շաղկապավոր, կամ անշաղկապ)։ Եթե անշաղկապ բարդ նախադասության մասերից մեկը բարդ ստորադասական նախադասություն է, իսկ մյուսը՝ պարզ, նրանց միջև եղած շարահյուսական հարաբերությունները որոշվում են պարզ և բարդ ստորադասականի գլխավոր նախադասության միջև եղած հարաբերություններով, իսկ երբ երկու բաղադրիչներն էլ բարդ ստորադասական նախադասություններ են, նրանց միջև եղած հարաբերությունները որոշվում են գլխավոր նախադասության միջև եղած հարաբերություններով։ Բերենք մի քանի օրինակ.

Ինչ որ կուզես, ասա, աճեմ ֆեզ համար, Արևի տակ իմ սիրուս պես սեր չկա (Ավ. Իս., 2, 131)։ Տասը տարի կլիներ, որ Մասիսյանի տունը երեխա չէր տեսել, այժմ կրկին վերակենդանացավ նա անմեղ մանուկների ուրախ ճլվլոցով (Ր, 3, 514)։ Պառավ դայակը մնացել էր ապշած. նա չգիտեր, թե ինչ է կատարվում (Հեո, 19)։ Տուն փոխես՝ տնով մեկ կֆաճդվիս, գեղ փոխես՝ գեղով մեկ (Հայկ. առած., 7)։

Բարդ կազմ ունեցող պետք է համարել նաև այն անշաղկապ նախադասությունները, որոնք ունեն երկուսից ավելի բաղադրիչներ, և որոնց միջև գոյություն ունեն տարբեր իմաստային հարաբերություններ։ Մի երկու օրինակ.

Հիվանդանոցից փախել է, տուն չի եկել, չգիտեմ ո՞ւր է գնացել (ԴՍՔ, 2, 25)։ Շնորհակալ ենք, մենք, ասին։ Տաշտներդ լի հաց լինի, դուռներդ միշտ բաց լինի. Հաց չենք ուզում ձեզանից, Հող տվեք մեզ ձեր տնից (ՀՔ, 2, 4)։ Խեղճ աղքատը դառը դատի, դատարկ նստի... է՛յ աշխարհ, էլ ինչո՞ւ ես քարը թողնում քարի վրա, քար-աշխարհ (Ավ. Իս., 1, 72)։

Ամփոփենք։

Ինչպես ամեն մի բարդ նախադասության, այնպես էլ անշաղկապ բարդ նախադասության կառուցվածքային-իմաստային էությունը որոշողը հանդիսանում է իմաստային գործոնը, բարդ նախադասության մեջ մտնող նախադասությունների (բաղկացուցիչ

մասերի) բովանդակությունների փոխադարձ կապը և հարաբերակցությունը։ Անշաղկապ կապակցության ժամանակ ևս, ինչպես և շաղկապական կապակցության ժամանակ, բարդ նախադասության մասերը ոչ միշտ են հավասար նշանակություն ունենում ամբողջ բարդ նախադասության արտահայտած իմաստի համար։ Այս դեպքում ևս նրանց միջև կարող է լինել երկու տիպի հարաբերություն՝ համադասական և ստորադասական[1]։ Անշաղկապ բարդ նախադասությունների համակարգում հատուկ տեղ են գրավում այն նախադասությունները, որոնք ունեն բացատրական ինտոնացիային մոտ ինտոնացիա և կարծեք գրավում են միջին տեղ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների միջև (իհարկե, ավելի մոտենում են ստորադասությանը) դրանք, այսպես կոչված, հարակցական նախադասություններ են (այդպիսի նախադասություններ կան նաև շաղկապավոր բարդ նախադասությունների մեջ)։

Կարելի է ասել, որ անշաղկապ բարդ նախադասությունները լեզվում հանդես են գալիս որպես համապատասխան շաղկապավոր բարդ նախադասությունների շարահյուսական համանիշներ։ Սակայն, ի տարբերություն շաղկապավոր բարդ նախադասությունների, որոնց մեջ շնորհիվ շաղկապների ու հարաբերական բառերի՝ բաղկացուցիչ մասերի միջև եղած հարաբերությունները արտահայտվում են ավելի որոշակի ու հստակորեն, անշաղկապ բարդ նախադասություններն ավելի պակաս որոշակիությամբ են արտահայտում բաղադրիչ մասերի հարաբերությունը, մտքի տարբեր երանգները։ Այդ է պատճառը, որ նրանց կիրառության ոլորտը ավելի նեղ է, քան շաղկապավոր բարդ նախադասություններինը։ Գիտական գրականության մեջ անշաղկապ բարդ նախադասությունները քիչ են գործածվում. նրանք շատ են տարածված հատկապես ժողովրդական խոսակցական լեզվում, ասացվածքների, առածների մեջ։ Դրան նպաստում է այն հանգամանքը, որ բանավոր խոսքը ունի շարահյուսական հարաբերություններն արտահայտելու այնպիսի հարուստ միջոց, ինչպիսին ինտոնացիան է։ Կենդանի խոսակցական լեզվից անշաղկապ բարդ նախադասությունները մուտք են գործել գեղարվեստական գրականության մեջ, հատկապես երկխոսությունների և չափածո խոսքի մեջ։ Նրանց գործածությունը գեղարվեստական գրականության մեջ խոսքը դարձնում է ավելի կենդանի, դիպուկ, պատ-

---

[1] *Համադասության և ստորադասության քերականական կարգերի մասին տես՝* Ն. Ա. Պառնասյան, *Ստորադասական հարաբերությունը արդի հայերենի բարդ նախադասություններում*, Երևան, 1961, էջ 11։

կերավոր և արտահայտիչ։ Վերջերս նկատվում է անշաղկապ բարդ նախադասությունների տարածումը նաև հրապարակախոսության լեզվում։

Բանավոր խոսքի համար լինելով անպայման ավելի վաղ շարահյուսական երևույթ՝ անշաղկապ բարդ նախադասությունները գրավոր լեզվում սկսել են տարածվել նրա զարգացման որոշ աստիճանում միայն՝ որպես կենդանի և գեղարվեստական խոսքի ամբողջ հարստությունը առավել սեղմությամբ և արտահայտչականությամբ հաղորդելու պահանջի հետևանք[1]։

Հայերենի լեզվական իրողությունների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ հին շրջանում (գրաբարում) շատ տարածված է եղել նախադասությունների շաղկապներով և հարաբերական բառերով կապակցությունը։ Շատ դեպքերում նույնիսկ առանձին նախադասությունները սկսվում են շաղկապներով։ Անշաղկապ բարդ նախադասությունները գրաբարում հանդիպում են շատ սակավ, այն էլ մեծ մասամբ համադասական հարաբերությամբ, իսկ ստորադասական հարաբերության անշաղկապ արտահայտման դեպքերը հազվադեպ են։

---

[1] Այս տեսակետից շատ հետաքրքրական է ռուս մեծ գիտնական Լոմոնոսովի կարծիքը անշաղկապ բարդ նախադասությունների մասին՝

«Союзы нечто иное суть, как средства, которыми идеи соединяются, и как подобны они гвоздям или клею, которыми части какой махины спло чены или склеены бывают. И как те махины, в которых меньше клею и гвоздей видно, весьма лутчей вид имеют, нежели те, в которых спаев и склеек много, так и слово важнее и великолепнее бывает, чем в нем союзов меньше». *Տե՛ս* Ломоносов, Риторика, ч. III, гл. 6, §325:

ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղարվեստական գրականության մեջ, հատկապես նկարագրությունների ժամանակ, շատ են գործածվում այնպիսի անշաղկապ բարդ նախադասություններ, որոնց բաղկացուցիչ մասերի միջև եղած փոխհարաբերությունները իրենց բնույթով համադասական են, այսինքն նրանք հավասարազոր են և ամբողջ բարդ նախադասության արտահայտած իմաստի, բովանդակության բացահայտման համար ունեն հավասար նշանակություն. օրինակ՝ Նրա վարդագույն շրթունքները բոլորովին գունաթափվեցան, ծնկները դողացին, աչքերի առջև մթնեց *(Ր, 7, 33)։ Այս անշաղկապ բարդ նախադասությունը պարունակում է մի երևույթի՝ վիճակի նկարագրություն և բաղկացած է երեք պարզ նախադասություններից, որոնք ամբողջ բարդ նախադասության բովանդակության արտահայտման համար ունեն հավասար նշանակություն և արժեք։ Հետևաբար նրանց միջև եղած իմաստային հարաբերությունը համադասական է։*

Անշաղկապ բարդ համադասական նախադասությունները իրենց բաղկացուցիչ մասերի միջև եղած իմաստային հարաբերություններով թեև համընկնում են շաղկապավոր բարդ համադասական նախադասություններին, սակայն ունեն տարբեր իմաստային հարաբերություններ արտահայտելու շատ ավելի սահմանափակ հնարավորություններ, քան վերջիններս։ Եվ դա բնական է, որովհետև շաղկապներն ու հարաբերական բառերը, կապելով բարդ նախադասության մասերը միմյանց հետ, միաժամանակ ցույց են տալիս նրանց միջև եղած իմաստային փոխհարաբերությունների բնույթը, այնինչ անշաղկապ բարդ նախադասությունները զրկված են կապակցության այդ միջոցից և իրենց փոխհարաբերությունները արտահայտում են միայն կառուցվածքային-քերականական այլ միջոցներով։

Համադասական անշաղկապ բարդ նախադասությունները իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով բաժանվում են երկու մեծ խմբի.

1. Միավորական անշաղկապ բարդ նախադասություններ.

2. Ջոդադրական անշաղկապ բարդ նախադասություններ։

ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորական են կոչվում այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց մեջ նկարագրվում են որպես մեկ ամբողջություն (ամբողջական պատկեր) դիտվող գործողություններ, իրողություններ, երևույթներ։ Սրանք հիմնականում ունեն թվարկման ընդհանուր նշանակություն և ամենատարածված անշաղկապ նախադասությունները են։

Միավորական անշաղկապ բարդ նախադասությունները շատ են գործածվում գեղարվեստական գրականության մեջ՝ նկարագրությունների ժամանակ։ Նրանք ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

1) Ինչպես ամեն մի անշաղկապ բարդ նախադասության, այնպես էլ միավորական հարաբերություններով միացած անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային կարևոր առանձնահատկություններից մեկը ինտոնացիան է, որը մեծ դեր է կատարում նրանց բաղկացուցիչ մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունները արտահայտելու համար։ Միավորական անշաղկապ բարդ նախադասությունները ունեն թվարկման ընդհանուր ինտոնացիա, որը, ինչպես ասվել է, բնորոշվում է ձայնի որոշ բարձրացումով յուրաքանչյուր մասի վերջում և միանման ոչ մեծ դադարներով բաղկացուցիչ մասերի միջև. ըստ որում բոլոր մասերն էլ արտասանվում են նույն կրկնվող ինտոնացիայով։ Հենց այս միանման կրկնվող ինտոնացիայի միջոցով էլ ընդգծվում է բաղկացուցիչ մասերի հավասարազոր լինելը, նրանց հավասար նշանակություն ունենալը ամբողջ բարդ նախադասության բովանդակության բացահայտման համար։ Թվարկման ինտոնացիան գրավոր խոսքի մեջ արտահայտվում է կետադրության միջոցով. բարդ նախադասության բաղկացուցիչ մասերը բաժանվում են իրարից ստորակետով, երբեմն նաև միջակետով։

2) Այս նախադասությունները, ի տարբերություն նույն իմաստն ունեցող շաղկապավոր բարդ նախադասությունների, ունեն անսահ-

մանափակ կառուցվածք, այսինքն՝ կարող են բաղկացած լինել ինչպես երկու, այնպես էլ երեք և ավելի պարզ նախադասություններից (շաղկապավոր բարդ համադասական նախադասությունները սովորաբար երկանդամ են լինում. շաղկապը միացնելով նախադասության մասերը՝ միաժամանակ ամփոփում, սահմանափակում է նախադասությունը)։ Օրինակներ.

Այդ օրը ամպերն արտակարգ սպիտակ էին, երկինքը չափազանց վսպուրտ, արևի լույսը կրկնակի պայծառ (ՆՋ, ՊՊՆ, 207)։ Նայում է բերդը իր դարավոր, քարե հայացքով, չարագուշակ սոսափում են այգեստանի ծառերը, մի մարդ սովերի պես անցնում է դիրքից-դիրք (ԳՄՆ, 370)։

Հաճախ, երբ բարդ համադասական նախադասությունը բաղկացած է լինում երեք և ավելի պարզ նախադասություններից, առաջին նախադասությունները միանում են անշաղկապ կապակցությամբ, իսկ վերջինը՝ շաղկապով։ Դրանով բարդ նախադասության կառուցվածքը ավելի կուռ և ավարտված է դառնում. օրինակ՝ Փշում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը ornրվում էր սմանշելի ալեկոծությամբ (Ր, 7, 437)։

Երբեմն շաղկապով են միացած լինում ոչ թե վերջին, այլ առաջին երկու պարզ նախադասությունները։ Այս դեպքում առաջին երկու նախադասությունների կապը ավելի սերտ է լինում, և նրանք ընկալվում են որպես մի ամբողջություն, մի բարդ բաղադրիչ մաս. օրինակ՝ Մեր նավակը մեղմ առաջ է սահում, Ու սրտերը մեր ձուլվել են իրար, Աստղերը վերից մեր սերն են օրհնում, Ալիքներն ուրախ բռնել են շուրջպար (Գ. Սար., 133)։

Միավորական անշաղկապ բարդ նախադասությունները արտահայտում են հիմնականում ժամանակի իմաստային հարաբերություններ։ Ժամանակի իմաստային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունների դասակարգման հիմքում ընկած է նրանց բաղկացուցիչ մասերում հաղորդված գործողությունների (իրողությունների, երևույթների) միջև եղած ժամանակային փոխհարաբերությունները։

Ըստ անշաղկապ բարդ նախադասության ստորոգյալների ժամանակային նշանակության, նրանց շարադասության, միավորական անշաղկապ բարդ նախադասություններում, շաղկապավոր բարդ համադասական նախադասությունների նման, կարող են հանդես գալ ժամանակային հարաբերությունների տարբեր երանգներ, որոնք կարելի է խմբավորել երկու տեսակի մեջ. 1) միաժամանակություն,

երբ նկարագրվում են միաժամանակ տեղի ունեցող կամ համատեղ հանդես եկող գործողություններ (երևույթներ, իրողություններ) և 2) ժամանակային հաջորդականություն, երբ նկարագրվում են իրար հաջորդող գործողություններ (երևույթներ, իրողություններ)։ Իմաստային այս փոխհարաբերությունները դրսևորվում են հիմնականում բայերի եղանակների և ժամանակների կիրառությամբ, որն արտահայտվում է երկու ձևով՝ 1) բաղկացուցիչ մասերի ստորոգյալները իրենց եղանակով և ժամանակով համաձայնում են իրար և 2) բաղկացուցիչ մասերի մեջ օգտագործվում են տարբեր եղանակներ և ժամանակներ. ըստ որում ավելի տարածված է ժամանակների համաձայնեցումը։

Ինչպես հայտնի է, այս նույն նշանակություններն ունեն նաև ժամանակային հարաբերություններ արտահայտող բարդ ստորադասական նախադասությունները, սակայն սրանց միջև կա հետևյալ էական տարբերությունը. համադասության ժամանակ ժամանակային հարաբերություններով միացած բաղկացուցիչ մասերն ունեն հարաբերական ինքնուրույնություն և հաղորդման համար ունեն հավասար նշանակություն ու արժեք, այնինչ ստորադասության ժամանակ հաղորդման հիմնական նպատակն է լինում նկարագրել ժամանակային հարաբերություններով միացած գործողություններից մեկի մասին, իսկ մյուսը հաղորդվում է միայն առաջինի արտահայտած իմաստը լրացնելու համար։ Այս երկու տիպի նախադասությունների միջև կան կառուցվածքային հետևյալ տարբերությունները.

ա) Համադասական հարաբերության ժամանակ բայ-ստորոգյալների ժամանակները, ինչպիսին էլ որ նրանք լինեն, ունեն բացարձակ կիրառություն, այսինքն՝ վերցվում են ներկայի համեմատությամբ. օրինակ՝ Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին (Ր, 7, 437)։ Կամ՝ Ենթակայանի հետ կապված մտքերը քոել էին հեռու-հեռու, աչքերի դեմ պատկերվում էր Դավիթիկը՝ սայլակում պառկած (Վերդ., ԻԳՆ, 312)։ Ընդգծված բոլոր ստորոգյալների ժամանակները կիրառված են ներկայի համեմատությամբ (բացարձակ են), որով էլ նրանց տրվում է հավասար նշանակություն հաղորդման համար։ Ստորադասական հարաբերության ժամանակ բաղադրիչ մասերից մեկի (սովորաբար առաջինի) ստորոգյալը ունենում է հարաբերական կիրառություն, այսինքն վերցվում է մյուս բաղադրիչի ստորոգյալի ցույց տված ժամանակի համեմատությամբ. դրանով արտահայտվում է նրա ստորադասվելը այդ բաղադրիչին, վերջինիս

լրացում հանդիսանալը. օրինակ՝ Ու չնն էլ նկատում։ Ասում ես՝ զարմանում են... բացատրում ես՝ խեթում են (Երևան, 10/2—61 թ., էջ 2)։ Այստեղ ասում ես և բացատրում ես ստորոգյալները դրված են ներկա ժամանակով զարմանում են և խեթում են ստորոգյալների հարաբերությամբ։

բ) Տարբեր է նաև այս երկու տիպի նախադասությունների ինտոնացիան. առաջինները (համադասական նախադասությունները) ունեն թվարկման ինտոնացիա, իսկ երկրորդները (ստորադասական նախադասությունները)՝ նախապդուշական-բացատրական ինտոնացիա։

ՄԻԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միաժամանակություն ասելով հասկանում ենք ոչ միայն գործողությունների (երևույթների, իրողությունների) ժամանակների լրիվ համընկնելը, այլ նաև մասնակի համընկնելը։ Այս խմբի մեջ են մտնում նաև այն անշաղկապ նախադասությունները, որոնց մասերը կապված են գործողությունների (երևույթների, իրողությունների) հարատևության նշանակությամբ։

Միաժամանակություն ցույց տվող անշաղկապ բարդ նախադասությունների ստորոգյալները կարող են լինել ինչպես պարզ (բայով արտահայտված), այնպես էլ բաղադրյալ (անվանական)։ Քանի որ այս նախադասությունների բայ-ստորոգյալները ցույց են տալիս միաժամանակ կատարված գործողություններ, միաժամանակ հանդես եկած, ինչպես նաև իրար համապատասխանող երևույթներ, իրողություններ, այդ պատճառով նրանք իրենց ժամանակով և եղանակով սովորաբար համաձայնում են։ Բայերի տարբեր եղանակների ու ժամանակների օգտագործումը այս նախադասություններում կախված է նկարագրվող գործողությունների (երևույթների, իրողությունների) բնույթից։

Սահմանական եղանակի ներկա ժամանակը միաժամանակության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ համադասական նախադասություններում գործածվում է հետևյալ դեպքերում.

ա) Երբ նկարագրվում են ներկայում կատարվող (կատարման ընթացքի մեջ գտնվող) և ժամանակներով համընկնող գործողություններ, ինչպես նաև համատեղ հանդես եկող երևույթներ, իրողություններ և այլն։ Օրինակներ.

Լսվում է գետի միալար վշշոցը վարից, ծառերի արանքից նա-

.յում են *մի քանի գունատ էլեկտրական լամպեր (ԴՄԵ, 430)։ Քամին սուլում է, կատաղած ալիքները մռնչում, զարկվում են ժայռերին (Մ. Ման., 29)։ Արտույտներն ուրախ մեր սերն են երգում, Հովերը կարծես ճամբուրում են մեզ, Արևը սարին գլուխ է թեքում, բարդի ծառի տակ սպասում եմ ես (ԴՄԵ, 29)։*

Ներկա ժամանակին է կիրառվում նաև այն դեպքերում, երբ նկարագրվում են կանոնավոր կերպով կրկնվող, ինչպես նաև հարատևող բնույթ ունեցող միաժամանակ տեղի ունեցող կամ հանդես եկող գործողություններ, եղելություններ, երևույթներ։ Օրինակներ.

Կյանքում հաճախ է պատահում, երբ մարդ առանց պատճառի տխրում է. սիրտը նեղվում է, ծանրանում է, աչքերը թախծոտ են դառնում, դեմքի արտահայտությունը փոխվում է (Ալ., ՀԱ, 234)։ Հազար հույս է վառվում այնտեղ արևաբորբ, հազար կամք է դառնում պողպատ (ԴԲ, 19)։

Անցյալում միաժամանակ կատարված կամ համատեղ հանդես եկած տևական գործողությունների, եղելությունների, դեպքերի և այլնի նկարագրության ժամանակ անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի բայ-ստորոգյալները դրվում են սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակով։ Օրինակներ.

Ձմռան մի գիշեր կար մի հարսանիք, Հրճվում էր անդուսպ ամբոխը գյուղի (ՀԲ, 3, 58)։ Օրերն ավելի էին տաքանում, կանաչը բոյ էր հաշում, բացվում էին ծաղիկները (ԱԲ, 32)։ Անձրևը մաղում էր, մեղմ խոնավության մեջ կար գարնան ծաղիկների, կանաչ խոտի բուրմունք (ԱԲ, 40)։ Ոտները կարծես չէին ճնշվում, ծնկները սաստիկ ցավում էին, շունչը կարծես կտրվում էր (Ալ., ՀԱ, 299)։

Անցյալ անկատար ժամանակին է դրժածվում նաև այն ժամանակ, երբ խոսվում է ընդհանրապես անցյալում միաժամանակ կամ համատեղ հանդես եկած երևույթների, կատարված գործողությունների մասին. օրինակ՝ Նա հիստերիկ կերպով էր խոսում, ձայնի մեջ հաճախ արցունք էր լսվում (Ի. էր., ՓԱ, 1, 134)։

Երբ անշաղկապ բարդ նախադասության մեջ նկարագրվում են միաժամանակ կամ համատեղ հանդես եկող երևույթներ, դրություններ, վիճակ, իրողություն, բաղադրիչ մասերի ստորոգյալները լինում են բաղադրյալ։ Վերջիններիս ստորոգելիական հանգույցը դրվում է ներկա ժամանակով, երբ նկարագրությունը վերաբերում է խոսելու պահին և անցյալ ժամանակով՝ երբ նկարագրությունը վերաբերում է անցյալին։ Օրինակներ.

Անչար է իմ հոգին ու հանգիստ, գիշերը անդորր է, դուրսը՝ ձյուն *(ՎՏ, երկ., 187)։ Գարուն է, ձյունհալ ու ապրիլ (ԳՄԵ, 371)։*

Նրա հագին բազմատարազ շորերի ցնցոտիներ էին, գլխին ծանր քրդի փոլոզ (ՀԲ, 3, 23)։ Նրա հագուստները շէհեղ էին, քայլվածքը նման չէր որևէ մեկին, ձայնը՝ ձայնին (ՄԱՊ, 481)։ Աշուղ էր, խոնավ ու մառախլապատ երեկո (Մուր., 1, 218)։

Անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի բայաստորոգյալները դրվում են սահմանական եղանակի վաղակատար ժամանակով, երբ խոսվում է վաղ անցյալում միաժամանակ կատարված գործողությունների մասին և կամ անցյալում կատարված, բայց մինչև խոսելու պահը հարատևող հետևանքով գործողությունների մասին։ Օրինակ.

Քաղաքում դադարել է առևտուրը, չեն գործել դպրոցական հաստատությունները, լույս չեն տեսել լրագրեր (Ա. Սահ., 194)։ Տարիները աղոտել են շատ բան, շատ գծեր են ջնջվել և շատ պայծառ դեմքեր մշուշվել (ԳՄՆ, 313)։

Անցյալ վաղակատար ժամանակն է կիրառվում այն ժամանակ, երբ նկարագրվում են անցյալում միաժամանակ սկսված, երևան եկած և մինչև նկարագրության պահը հարատևող հետևանքով գործողություններ, երևույթներ, իրողություններ։ Օրինակներ.

Պատշգամբի սյուների ներկը թափվել էր, տանիքի թիթեղը մեխահան եղել, ընկուզենու ճյուղերից մեկը շոռացել (ՍԽՀ, 1, 36)։ Ամենուրեք ծառերը փոխել էին իրենց գույնն ու դարձել ավելի մուգ, խոնավ ճյուղերին ուտել էին հյութալի բողբոջները (Ա. Սեկ., 591)։ Մայրը նեղվել էր սեղանին, մազերի թարմ ճերմակը բարակ եղյամել էր նրա ամբողջ գլուխը (Ն.տ., 204)։ Այժմ, շարունակ թերասնվելու հետևանքով գունատվել էր նա, դեմքը, խորշոմել, ծնոտից ներքև տոպրակի պես կախվել էր նրա մաշկը (ՆՋ, ՊՊՆ, 92)։

Միավորական անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերում անցյալում միաժամանակ հանդես եկած և հարատևող հետևանքով գործողություններ նկարագրելու համար հազվադեպ գործածվում է նաև հարակատար ժամանակը. օրինակ՝ Գնացքների երթևեկությունը դադարած է, ծառայողներն ու առևտրականները ցրված (ՀԲ, 3, 86)։ Այս ձևը տարածված էր XIX դարում, սակայն այժմ հնացել է, և այդ իմաստն արտահայտելու համար սկսել է գործածվել վաղակատար ժամանակը։

Ապագայում ենթադրվող միաժամանակ կատարվելիք կամ համատեղ երևան գալիք գործողությունների նկարագրության ժամանակ այս նախադասություններում հիմնականում կիրառվում են պայմանական եղանակի ձևերը։ Օրինակ.

Շուտով բոլորովին կմթնի, օջախի կրակը կնահգչի, Անդոն

կփաթաթվի մեքենայի ծածկոցի մեջ... (ԱԲ, 160)։ Մի խաղաղ գիշեր դու կգաս ինձ մոտ, քնքուշ ձեռքերդ ես կհամբուրեմ (ՎՏ, Երկ.)։ Ուսումնարան բաց կանենք, կսովորեք, մարդ կդառնաք (ԳՄԵ, 416)։

Միաժամանակություն ցույց տվող անշաղկապ բարդ նախադասություններում համեմատաբար քիչ է գործածվում անցյալ կատարյալ ժամանակը։ Այն կիրառվում է, երբ անհրաժեշտ է լինում նկարագրել միաժամանակ տեղի ունեցած, կատարված, կարճատև գործողություններ։ Բայ-ստորոգյալները այս դեպքում սովորաբար ունենում են կատարված գործողության հետևանքի նշանակություն։ Օրինակներ՝

Ծաղիկները շարժեցին իրենց գլխիկները, խոտերը դողացին, տերևները շրշացին. անտառն սկսեց զարթնել (ՀԹ. 3, 48)։ Միանգամից սենյակը լցվեց ջերմությամբ, կենդանություն առան պատերը, պահարանը, շնչավորվեցին պատուհանից կախած նուրբ վարագույրները (Վերդ., ԻԳԵ, 349)։

Այս ժամանակի կիրառությունը խոսքին տալիս է շարժունություն, այն դարձնում ավելի արտահայտիչ ու պատկերավոր։

Վերևում նկարագրված բոլոր դեպքերում միավորական բարդ նախադասության մասերը իրենց գործողությունների կատարման ժամանակով լրիվ համընկնում են, որն արտահայտվում է, ինչպես տեսանք, բայ-ստորոգյալների ժամանակների համաձայնեցմամբ։

Այստեղ անհրաժեշտ է խոսել նաև անվանական անշաղկապ բարդ նախադասությունների մասին։ Սրանք այն բարդ նախադասություններն են, որոնք գործածվում են գերազանցապես գեղարվեստական խոսքի մեջ՝ նկարագրությունների ժամանակ։ Սրանց կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ բաղկացուցիչ մասերը անվանական միակազմ նախադասություններ են։ Այս նախադասությունները ևս խոսքը դարձնում են կենդանի, դիպուկ և ավելի պատկերավոր։ Օրինակ.

Աստված իմ, ի՜նչ աղքատություն։ Տկլոր երեխաներ, մի քանի պղինձ, մի կապ ցախ և աթարի մուխով լցված կիսաքանդ մարագ (ԱԲ, 457)։ Հինգերորդ հարկ, լայն, երկարավուն միջանցք, մանրահատակ, դռներ՝ տարբեր ցուցատախտակներով (Վերդ., ԻԳԵ, 306—7)։ Փոքրիկ մի նախախրճիթ, անկյունում մի ավել, մի դույլ, հետո խրճիթը մաքուր ավելված, հողե հատակով... երկու փայտե տախտեր համեստ անկողիններով (ԳՄԵ, 429)։ Մարտի արյունոտ տեսարանը փոխարինված էր ինչ-որ տարօրինակ, խաղաղ ճերմակությամբ։ Սպիտակ սփռոցներ, կաթնագույն սեղանիկներ, արագ և գործնական քայլերով երթևեկող քույրերի ժպտուն դեմքեր (Ալ., ՀԱ, 374)։

Համեմատաբար քիչ են այն դեպքերը, երբ լիակատար միաժամանակություն ցույց տվող անշաղկապ բարդ նախադասություններում գործածվում են տարբեր ժամանակային ձևեր, այսինքն՝ երբ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի բայ-ստորոգյալները իրենց ժամանակներով չեն համընկնում։ Կարելի է նշել ստորոգյալների տարբեր ձևերի օգտագործման հետևյալ դեպքերը.

1) Երբ անշաղկապ նախադասության մեջ նկարագրվում է որևէ դրություն, վիճակ և դրա հետ միաժամանակ հանդես եկող կամ դրան համապատասխանող որևէ գործողություն, ապա դրություն, վիճակ ցույց տվող մասի ստորոգյալը լինում է բաղադրյալ, իսկ մյուսինը (կամ մյուսներինը)՝ ներկա, հարակատար, վաղակատար ժամանակներով արտահայտված պարզ ստորոգյալ, ըստ որում տարբեր ժամանակների գործածությունը կախված է բարդ նախադասության իմաստից։ Երբ բարդ նախադասությամբ տրված դրությունը, վիճակը, իրողությունը և նրա հետ հանդես եկող գործողությունը նկարագրվում է ներկա ժամանակակետի համեմատությամբ, բաղադրյալ ստորոգյալի հանգույցը և պարզ ստորոգյալը դրվում են ներկա ժամանակով։ Պարզ ստորոգյալը կարող է դրվել նաև հարատևող հետևանքի նշանակություն ունեցող վաղակատար և հարակատար ժամանակներով. օրինակ՝

Աշուն է. *օրերը ցրտում են,— դիշերը սուզվում է միգում... (ՎՏ, երկ., 252)։ Իսկ տները խաղաղ են, բավական մութ ու ճեղվածք, շատ կարասիներ կան, շատ ավելորդ բաներ (Ի. էր., ՓԱ, 2, 6)։* Ցուրտ է, *գետինը սառել է, ճնճղուկները մրսում են։*

Երբ նկարագրությունը կատարվում է անցյալ ժամանակակետի համեմատությամբ, բաղադրյալ ստորոգյալի հանգույցը դրվում է անցյալ ժամանակով, իսկ պարզ ստորոգյալները՝ համապատասխանաբար անցյալ անկատար, անցյալի վաղակատար և անցյալի հարակատար ժամանակներով։ Օրինակներ.

Բազմոցի վրա անհանգիստ էր, տոթ էր, օդը չէր բավականացնում (Վերդ., ԻԳՆ, 342)։ Աղջիկը լուռ էր, նրա հրաշալի ժպիտը համաձայնություն էր հայտնում (Լեո, 14)։ Դուրսը մութ էր, երկինքը ամպամած (Վերդ., ԻԳՆ, 326)։ Ներքն էլ լուռ էին, յուրաքանչյուրը խորասուզված էր յուր մեջ (Ր, 7, 76)։ Դահլիճում շոգ էր. շատերը հանել էին բաճկոնները, նստել էին կեպիններով, ծխում էին (Ի. էր., ՓԱ, 1, 59)։

Պետք է նշել, որ սովորաբար բաղադրյալ է լինում առաջին բաղադրիչի ստորոգյալը, այսինքն՝ դրությունը, վիճակը նկարագրվում է առաջին բաղադրիչում (տես վերևի օրինակները)։ Սա-

կայն նկարագրությունների ժամանակ երբեմն հանդիպում է նաև հակառակ շարադասությունը, այսինքն՝ բաղադրյալ է լինում երկրորդ կամ երրորդ բաղադրիչի ստորոգյալը: Օրինակներ.

Արյունը կաթիլ-կաթիլ ծորում էր նրա վերքից, խոր ու փոքրիկ վերքից, շրթունքները կիսաբաց էին, կուրծքը ծանր ցածրանում էր ու բարձրանում (Մ. Ման., 24): Տաքացրած այս ջրհորները չկային, հալած ձյունն էր մեր միակ հեղուկը (Ալ., ՀԱ, 17):

2) Միաժամանակություն ցույց տվող անշաղկապ նախադասություններում որևէ տեսարան, երևույթ նկարագրելիս տարածված է նաև ներկա և հարակատար, ինչպես նաև համապատասխանորեն անցյալ անկատար և անցյալ հարակատար ժամանակների միատեղ գործածությունը: Օրինակներ.

Համեստ կահավորված, ոչ մեծ մի սենյակ էր դա: Պատուհաններից մեկը բացվում էր այգու վրա, մեջտեղը դրված էր մի սեղան, աջ կողմում՝ նիկելապատ մահճակալ (Ա. Սեկ., 13): Աջ թևատակին կար մի մաշված հաշվեմատյան, գոտուց կախված էր չոգունե թանաքամանը (Դե, 96): Ամենքի դեմքին պայծառ ժպիտ կար, ուսուցիչը շատ ոգևորված էր (Ավ. Խ., 3, 25):

Համախ է հանդիպում նաև ներկա ու վաղակատար, ինչպես նաև անցյալ անկատար ու անցյալ վաղակատար ժամանակների գործածությունը: Այս դեպքում ներկա կամ անցյալ անկատար ժամանակներով նկարագրվում է կատարվող գործողություն, իսկ վաղակատար կամ անցյալ վաղակատար ժամանակներով՝ մի գործողություն, որը թեև արդեն կատարվել է, սակայն հետևանքը առկա է ներկայով կամ անցյալ անկատարով նկարագրված գործողության կատարման ամբողջ ընթացքում: Օրինակներ՝

Մեզ մոտ արդեն հասմիկը ծաղկել է, վարդերը բացվել, ծառերը կանաչել, թռչունները ուրախ երգում են (Մ. Ման., 301): Նրա այտերը շիկնել էին, աչքերը փայլում էին ներքին կրակով (Ա. Սեկ., 539): Մայր մտնող արևի շառափը դիպել էր լուսամուտներին, քաղաքը ասես այրվում էր ծիրանագույն հրդեհով (ՆՉ, ՊՊՆ, 80):

Միաժամանակություն ցույց տվող անշաղկապ բարդ նախադասություններում, երբ նկարագրվում են այնպիսի երևույթներ, որոնք երևան են եկել անցյալում, սակայն հարատևում են մինչև խոսելու պահը, հաղվադեպ հանդիպում է նաև վաղակատար և հարակատար ժամանակների գործածությունը. այսպես՝ Աննիկը նիհարել է, դունատված է մի քիչ... (ՀՔ, 2, 7):

Միավորական անշաղկապ բարդ համադասական նախադասությունները արտահայտում են մասնակի միաժամանակության հա-

բաբերութիւններ, երբ բաղադրիչ մասերից մեկում նկարագրվում է երկարատև գործողություն, իսկ մյուսում այնպիսի գործողության, որը կատարվում է կամ առաջին գործողության որևէ պահին, կամ սկսվում է վերջինիս կատարման ընթացքում։ Երկարատև գործողությունը արտահայտվում է բայի ներկա կամ անցյալ անկատար ժամանակներով, իսկ նրա ընթացքի որևէ պահին կատարված գործողությունը՝ անցյալ կատարյալ ժամանակով։ Օրինակներ.

Կանաչավարս, գանգրահեր գլուխների նման օրօրվում են ծառապատ բլուրները, մի նապաստակ թռավ թավուտների մեջ, անտառամերձ փոքրիկ տափաստանի վրա մի կով բառաչեց և շարունակեց ապրել անտառը (ԴՄե, 419)։ Մերունիները շարունակ ճորանջում էին, մեկ էլ տեսար մեկն ու մեկը գլուխը կախեց կրծքին ու սկսեց խոմփալ (Ա. Սահ., 177)։

Մասնակի միաժամանակության նշանակությունը արտահայտելուն օժանդակում է գործողության սկսվելու նշանակություն ունեցող բայերի, ինչպես նաև որոշ մակբայների և եղանակավորող բառակապակցությունների առկայությունը երկրորդ բաղադրիչում։ Այդպիսին է վերևի վերջին օրինակը, որտեղ բաղադրիչների գործողությունների մասնակի համընկման իմաստը արտահայտելուն օժանդակում են մեկ էլ տեսար բառակապակցությունը և սկսել բայը։ Բերենք մեկ ուրիշ օրինակ ևս։ «Լեյտենանտը մեղմ սուլում է մի նոր երգի եղանակ, կապիտան Կովալյովը թացում է Չեխովի պատմվածքների գիրքը կարդալու, հաստլիկ մայորը արդեն վերմակը բաշում է գլխին քնելու» (ՀՔ, 2, 16)։ Այստեղ մասնակի միաժամանակությունը արտահայտվում է բայ-ստորոգյալների բառական նշանակությունների միջոցով (սուլում է ցույց է տալիս երկարատև գործողություն, իսկ թացում է, բաշում է՝ կարճատև գործողություններ), ինչպես նաև արդեն մակբայի օգնությամբ, որն ակնարկում է առաջին գործողության ընթացքում սկսված գործողության մասին։

Երբեմն ժամանակային մասնակի համընկնման գաղափարը կարող է արտահայտվել նաև ներկա և վաղակատար ժամանակների համատեղ օգտագործմամբ։ Այս դեպքում վաղակատար ժամանակով տրվում է մի գործողություն, որը կատարվել է անցյալում, բայց որի հետևանքը հարատևել է մինչև խոսելու պահը, ներկա ժամանակով ցույց է տրվում այդ գործողության որևէ պահին սկսված և շարունակվող գործողություն. օրինակ՝ Աշունն անվերջ խոռաճում ու խոռաճում է. Արագածն ու Մասիսներն են վաղուց ձնել (Պ. Սևակ, 114)։ Այստեղ ժամանակային մասնակի համընկնման գաղափարի արտահայտմանը օժանդակում է նաև վաղուց մակբայը, որը դրվե-

լով վաղակատար ժամանակով արտահայտված բայ-ստորոգյալի մոտ, ցույց է տալիս այդ գործողության՝ մյուսից առաջ սկսված լինելը։

Մասնակի միաժամանակության իմաստային փոխհարաբերություն է առկա նաև այն դեպքերում, երբ անշաղկապ բարդ նախադասության մի մասում նկարագրվում է որևէ դրություն, վիճակ, իսկ մյուս մասում (կամ մասերում)՝ դրա որևէ պահին սկսված, կատարված գործողություն։ Առաջին մասի ստորոգյալը լինում է բաղադրյալ կամ արտահայտված բայի հարակատար ժամանակով, մյուսինը լինում է անցյալ կատարյալ ժամանակով դրված պարզ ստորոգյալ. օրինակ՝ Ծառերը անշարժ են. մի ստվեր անցավ նրանց վրայով. կամ՝ Դեմքը գունատված էր, արցունքի կաթիլներ հոսեցին աչքերից։

Միավորական պետք է համարել նաև այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց մեջ նկարագրվում է կատարված, ավարտված գործողություն և արվում է դատողություն նրա հետ միաժամանակ հանդես եկած և շարունակվող գործողության, դրության, երևույթի, վիճակի մասին։ Առաջին բաղադրիչի ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով, իսկ երկրորդինը՝ ներկա կամ անցյալ անկատար ժամանակով (կարող է լինել նաև բաղադրյալ). օրինակ՝ Արշակը արմունկները հենեց սեղանին, գլուխն առավ ափերի մեջ, աչքերը կկոցեց. սիրտը սաստիկ ճմլվում էր, բորբոքված ուղեղի մեջ անընդհատ դառնում էր «—սարսափելի է աշխարհը» (Ավ. Իս., 3, 105)։ Սա բարդ կազմով անշաղկապ նախադասություն է, որտեղ բաղադրիչների առաջին խմբում նկարագրվում են իրար անմիջապես հաջորդող և ավարտված գործողություններ, իսկ երկրորդ խմբում նկարագրվում են միաժամանակ հանդես եկած դրություն, վիճակ, որոնց առկայության պայմաններում են կատարվել առաջին խմբի գործողությունները։ Առաջին և երկրորդ խմբի նախադասությունները առանձին վերցրած իրար հետ ավելի սերտորեն են կապված և այդ պատճառով բաժանվում են համեմատաբար կարճ դադարներով (գրավոր այդ արտահայտվում է ստորակետի միջոցով), իսկ երկու խմբի միջև շարահյուսական կապը համեմատաբար թույլ է, դադարը՝ ավելի երկար, որը գրավոր արտահայտվում է միջակետի միջոցով։

Բերենք այլ օրինակներ.

Հետագայում ես եղա մորաքրոջս տանը, այնտեղ էին ապրում Վարդանն ու Գառնիկը (ԳՄՆ, 474)։ Մարգերում իջավ թովիչ կիսամութ, աշխարհը նորից խոռոնկ է և լայն. Սահեց լուսնյակի ցոլքը

ծածանուտ, ու սև ջրերում աստղերը նլան (ՎՏ, երկ., 155)։ Ամբողջ քսաներդ ժամ անցավ. գրիչը ձեռքիս կանգ է առնում, գլուխս խոնարհվել է թղթի վրա. սիրտս սաստիկ բաբախում է (ՆԴ, 2, 160)։

Վերջին օրինակների կապակցությունը կարելի է համարել նաև հավելական կապակցություն։

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորական անշաղկապ բարդ նախադասությունները կարող են ունենալ ժամանակային հաջորդականության նշանակություն, այսինքն՝ հանդիսանալ իրար հաջորդող գործողությունների, եղելությունների, երևույթների նկարագրություն։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ բաղադրիչ մասերի շարադասությունը աղատ չէ, այլ կախված է նկարագրվող գործողությունների, եղելությունների, իրողությունների հաջորդականությունից։ Սկզբում նկարագրվում է նախորդող գործողությունը, ապա հաջորդող. օրինակ՝ Ահա պարը դադարեց, նվագումները լռեցին, մարդկանց օղակը սեղմվեց Բախշիի շուրջը (Ա. Սահ., 29)։ Այստեղ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի շարադասությունը համապատասխանում է նկարագրվող գործողությունների հաջորդականությանը։ Եթե փոխենք շարադասությունը, կփոխվի նաև նկարագրվող գործողությունների ժամանակային հաջորդականությունը, և իմաստը կաղճատվի։

Ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունները սովորաբար ցույց են տալիս անցյալում կատարված-ավարտված, իրար անմիջապես հաջորդած գործողություններ (եղելություններ, երևույթներ և այլն) և այդ պատճառով նրանց բաղկացուցիչ մասերի բայ-ստորոգյալները մեծ մասամբ դրված են լինում սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով։ Օրինակներ.

Ամբոխը ետ ու ետ քաշվեց, ասպարեզը լայնացավ (Շ, 2, 165)։ Դուռը շուտ փակվեց, ձայնը խլացավ, բոլորովին կտրվեց (ՀԹ, 3, 19)։ Դուրսը քամին ավելի սաստկացավ, պատուհանի փեղկերը ուժեղ կպան պատին (Վերդ., ԻԳՆ, 325)։ Ես բարևեցի նրան, գլուխը բարձրացրեց, սիրալիր ժպտով բարև առավ (Ավ. Իս., 3, 11)։

Նույն իմաստն արտահայտելու համար երբեմն օգտագործվում է պատմական ներկա ժամանակը՝ անցյալում կատարված և իրար հաջորդած գործողությունները ավելի շոշափելի և նկարագրությունը ավելի պատկերավոր դարձնելու նպատակով։ Օրինակներ.

Նա պոկում է խոտը, թափում է: Այդ նրան ձանձրացնում է, աչքն ընկնում է ծղնոտի փշրանքին, ծղնոտը մոտեցնում է շրթունքին (ԱՔ, 156): Հետևից լսվում է աքաղաղի արդեն երրորդ կանչը, սա իր արձագանքն է գտնում հակառակ կողմում (Ա. Սեկ., 28):

Ներկա ժամանակն է օգտագործվում նաև այն դեպքում, երբ նկարագրվում են սովորաբար իրար հաջորդող գործողություններ, եղելություններ, երևույթներ. օրինակ՝ Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում (ԱՔ, 3):

Ապագայում սպասվող՝ իրար անմիջապես հաջորդելիք գործողությունների, եղելությունների մասին հաղորդելիս, անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի բայ-ստորոգյալները դրվում են մեծ մասամբ պայմանական եղանակի ապառնի ժամանակով (շատ հազվադեպ՝ նաև սահմանական եղանակի և հարկադրական եղանակի ապառնի ժամանակներով): Օրինակներ:

Այ, էն ժամանակ քեզ կհավատան, Կմտնեն կոլխոզ, կոլխոզը կաճի, Կդիմես կենտրոն, տրակտոր կտան, Կփոխեն արագ գյուղն ու գյուղացին (ՆՋ, 4, 15): Հիմա միասին կգնանք փորձադաշտ, քո աչքով կտեսնես ամեն ինչ (Ա. Սեկ., 31):

Ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ համադասական նախադասությունները ունեն հիմնականում նույն կառուցվածքային առանձնահատկությունները, ինչ միաժամանակություն ցույց տվող նախադասությունները: Նրանք ևս արտասանվում են թվարկման ընդհանուր ինտոնացիայով և նախադասությունների միջև կարճ դադարներով. օրինակ՝ Դրսից լսվեց ոտնաձայն, բացվեց դուռը, ներս մտավ մի երիտասարդ:

Երբեմն ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող անշաղկապ նախադասությունները ունենում են պատճառահետևանքային հարաբերության իմաստային երանգ, այսինքն՝ առաջին բաղադրիչում նկարագրված գործողությունը նախորդելով երկրորդին՝ միաժամանակ հանդիսանում է հաջորդող գործողության պատճառը. այլ կերպ ասած՝ երկրորդ նախադասության մեջ նկարագրված գործողությունը կատարվում է որպես հետևանք առաջին գործողության: Այս նախադասությունները, ի տարբերություն ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող մյուս անշաղկապ նախադասությունների, սովորաբար երկանդամ են լինում, այսինքն՝ բաղկացած են լինում երկու պարզ նախադասություններից, որոնցից առաջինում նկարագրվում է նախորդող գործողությու-

նը կամ երևույթը, իսկ երկրորդում՝ նրան հաջորդող և կարծես նրա հետևանքը հանդիսացող գործողությունը, երևույթը։ Օրինակներ.

Կանաչը դուրս էր եկել, սովն այլևս սարսափելի չէր (Ա. Սահ., 447)։ Բարեբախտաբար գարնանը խոշորացվելու է այդ կոլտնտեսությունը, այդ կապակցությամբ էլ նրանց հաստիքն ավելացվել է (Ա. Սեկ., 7)։ Բայց գյուղն իր ցավերն ուներ, Պետու մասին հոգալու ժամանակ չկար (ԱՐ, 39)։ Հետո պատերազմը եկավ, աշխարհը տակն ու վրա եղավ (ՍՀ, 25/11—60 թ. 3 էջ)։

Բայի ժամանակների և եղանակների օգտագործումը այս նախադասությունների բաղադրիչ մասերում համեմատաբար աղատ է և կախված է նրանց արտահայտած իմաստից (տե՛ս վերևի օրինակները)։

Ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող միավորական անշաղկապ բարդ նախադասությունները կարող են ոանհնալ նաև հետևյալ իմաստային երանգը. առաջին բաղադրիչում արվում է որևէ դատողություն կամ նկարագրվում որևէ գործողություն, եղելություն, երևույթ, իսկ երկրորդ բաղադրիչում տրվում է դրանից հանված եզրակացությունը։ Այս տիպի նախադասությունները ևս լինում են երկանդամ, այսինքն՝ բաղկացած են լինում երկու բաղադրիչ մասից։ Օրինակներ.

Բայց ճնճղուկներն ավելի բարեխիղճ են. դրանք գոնե չեն ոչնչացնում ծառերը (Ր, 5, 22)։ Պետք է փրկել նրան. ես վախենում եմ, որ հետո ուշ լինի (ՆԴ, 2, 499)։ Հիանալի գործ է, կարելի է զբաղվել հենց դրանով (Վերդ., ԻԳՆ, 7)։ Պահարանում գինի է դրված, երևի խմեցիր մի բաժակ (Խեչ., ՄՄՀ, 461)։ Թունդ մուժիկ է, նրանից պրծնել չի լինի (Վերդ., ԻԳՆ, 331)։

Այս իմաստային երանգի արտահայտմանը օժանդակում է երևի եղանակավորող բառը, որը հաճախ դրվում է երկրորդ բաղադրիչի սկզբում. այսպես՝ Բավական կոկիկ մի սենյակ էր այդ, երևի միայն հյուրերի համար էր պատրաստված (Ր, 5, 9)։ Գայլերը չքացել էին. երևի մի բան գիտեին (Լեո, 95) (տես նաև վերևի օրինակները)։

Այս երկու տիպի անշաղկապ բարդ նախադասությունները իրենց ինտոնացիայով տարբերվում են սոսկ ժամանակային հաջորդականության նշանակություն ոանեցող միավորական նախադասություններից։ Այս նախադասությունների երկու բաղկացուցիչ մասերը, ունեն տարբեր տրամաբանական շեշտեր և արտասանվում են տարբեր ուժգնությամբ. առաջին մասը արտասանվում է ձայնի փոքր իջեցումով, երկրորդ մասը՝ ավելի շատ իջեցումով։ Երկու մասերի միջև

Եղած դադարը ավելի երկար է, քան ժամանակային հաջորդականություն ցույց տվող նախադասություններինը. այդ դրավոր խոսքում արտահայտվում է կետադրության միջոցով. երբեմն այս տիպի նախադասությունների բաղկացուցիչ մասերը բաժանվում են ոչ թե ստորակետով, այլ միջակետով, որով ընդգծվում է դադարի ավելի երկար լինելը: Այսպես՝ Պետք է փրկել նրան. ես վախենում եմ, որ հետո ուշ լինի (ՆԴ, 2, 499):

ՀԱՎԵԼԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշաղկապ բարդ նախադասությունների միավորական կապակցության մի տեսակն է նաև հավելական կապակցությունը, երբ մի որևէ մտքի, դատողության ուղղակի ավելացվում է մեկ ուրիշը որպես լրացուցիչ հաղորդում՝ միտքը ավելի պարզաբանելու, լրիվ դարձնելու նպատակով, կամ ուղղակի թվարկվում են մի քանի դրծողություններ, երևույթներ, իրողություններ՝ մեկ ամբողջական պատկեր ստեղծելու նպատակով: Սրանք ընդհանուր մտքով միմյանց կապված, սերտ ամբողջություն կազմող, բայց համեմատաբար ավելի ինքնուրույնություն ունեցող համադաս նախադասություններից բաղկացած անշաղկապ նախադասություններ են: Հավելական կապը արտահայտվում է ինչպես երկու պարզ նախադասությունների բովանդակությունների հարաբերակցությամբ, այնպես էլ ռիթմոմելոդիկ միջոցներով՝ բաղադրիչների ինտոնացիայով (չունեն ավարտված նախադասության ինտոնացիա) և նրանց միջև ընկած դադարով, որը գրավոր արտահայտվում է ստորակետով, միջակետով, երբեմն նաև գծիկով: Այս դեպքում անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչ մասերի բայ-ստորոգյալները սովորաբար չեն համաձայնում—կարող են դրվել տարբեր եղանակներով և ժամանակներով՝ կախված հաղորդվածի բովանդակությունից: Օրինակներ.

Դե գնանք ներս, ես էլ գրասենյակից եմ գալիս (Ա. Սեկ., 410): Երկու ախպերդ զոհվեցին էս անօրեն կռվում, դու ես մնացել անտեր ծնողներիդ հույսը (ՆՋ, ՊՊՆ, 208): Քանի-քանի հեռավոր վայրեր էր տեսել նա: Սակայն այդ բոլոր ուղևները ավարտվել էին. անցել էին դրանց հետ կապված բոլոր տենչանքներն ու երազանքները (Դխ, 430): Հով էր քարափի գլխին, շինականին հովը դուր եկավ (ԱԲ, 51): Մայրը չգիտեր ինչ ասեր. նա մի տեսակ շնորհակալ ժպիտով նայում էր շուրջը (Ա. Սեկ., 15):

Անշաղկապ բարդ նախադասությունների հավելական կապակ-

ցուիչյունը շատ է տարածված հատկապես կենդանի-խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության երկախոսություններում։ Եվ դա բնական է, որովհետև խոսողը հայտնում է մի միտք կամ հաղորդում է որևէ գործողության, երևույթի մասին, հետո անմիջապես լրացնում է այն մեկ այլ երևույթի մասին խոսելով։ Օրինակներ.

— Իսկ ո՞ւր է Կարինեն, միայն նրա սեղանն էր դատարկ. իհարկե, տուն գնացած չի լինի, որևէ կերպ կհայտներ իրեն (Վերդ., ԻԳե, 336)։— Թող գնան տղաները թիկունք, ուշքի գան, շատ չի տևի, նրանք նորից կդառնան հարձակվողներ (ՄԱՊ, 650)։—Ով էլ որ լինիս՝ բարով ես եկել, Անպորձանք լինի քո ճանապարհը... (ՀՔ, 2, 35)։—Ամա՜ն, վարպետ Մանուկ, դու գիտես, մի կերպ արա, երեխան մեղք է, փողոցներում կմնա (ՀԻԿՎ, 7)։

Հավելական կապակցությամբ միացած պետք է համարել նաև այն միավորական անշաղկապ նախադասությունները, որոնք հանդիսանում են երկու կամ ավելի հարցումների միացություն (այլ կերպ ասած՝ որոնց բաղադրիչ մասերը հարցական նախադասություններ են), ինչպես նաև հրաման կամ հորդոր պարունակող միավորական անշաղկապ նախադասությունները։ Օրինակներ.

— Իսկ ո՞ւմ համար ենք մենք աշխատում, ինչի՞ համար է այս գործարանը (Խեչ. ՄՄՀ, 477)։ Ո՞ւր եմ գնում ես, մեզ ո՞ւր են տանում (ԳՄե, 419)։ Ի՞նչ էր պատահել, ի՞նչը կարող էր այդ աստիճանի հանել նրան հավասարակշռությունից (Ա. Սեկ., 601)։ Ո՞ւմն էր արդյոք ողբում այդ անծանոթ «հրաշք աղջիկը», ո՞վ էր թաղված այդ խոնավ հողաթմբի տակ (ՆՋ, ՊՊՆ, 326)։ Այս բարդ նախադասությունների բաղադրիչները հարցական նախադասություններ են։

Հանդարտ, կամաց իջիր այնպես, որ ծաղկունքը չարթնանան, Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեզ, Ջգո՛ւշ, զգո՛ւշ, անսահման (Գ. Սար., 61)։ Դե գնա՛, օգնի՛ր, էլ ի՞նչ ես եկել այստեղ, գնա՛, ասում եմ (Վերդ., ԻԳե, 341)։ Այստեղ արդեն բարդ նախադասության բաղադրիչ մասերը պարունակում են հորդոր, հրաման՝ գործողություններ կատարելու վերաբերյալ և միացած են դարձյալ հավելական կապակցությամբ։

Հավելական կապակցության ժամանակ անշաղկապ բարդ նախադասության մասերի միջև եղած շարահյուսական կապը ավելի թույլ է, քան միավորական կապակցության մյուս դեպքերի ժամանակ, որը դրսևորվում է բաղադրիչ մասերի միջև համեմատաբար երկար դադարով։ Գրավոր խոսքում այդ արտահայտվում է նրանով,

որ հաճախ բաղադրիչ մասերի միջև դրվում է ոչ թե ստորակետ, այլ միջակետ։ Օրինակներ.

Առաջին հայացքից միջանցքը նատալյային խիստ մութ թվաց. նրա քթին կպավ յուրահատուկ նամահոտ (Ալ., 2Ա, 83)։ Իմ օրերն այստեղ տխուր են անցնում. վառվում է սրտումս հուրը կենսական (ՀՔ, 2, 26)։ Խոսակցությունը ընդհատվեց. Ներս մտավ Սեդայի մորաքույրը (Ա. Սեկ., 10)։ Աստուրը կարկամել էր. նա իր տեսածին չէր հավատում (Դե, 113)։

Այս անշաղկապ բարդ նախադասությունները ունեն նաև այն առանձնահատկությունը, որ նրանց բաղկացուցիչ մասերը համեմատաբար ավելի ինքնուրույնություն ունեն։ Այդ պատճառով բավական է մի քիչ երկարացնել նրանց միջև եղած դադարը, և նրանք կվերածվեն պարզ նախադասությա։ Համեմատիր՝ «Խոսակցությունն ընդհատվեց. Ներս մտավ Սեդայի մորաքույրը» և «Խոսակցությունն ընդհատվեց։ Ներս մտավ Սեդայի մորաքույրը»։ Առաջին դեպքում նկարագրվող երկու գործողությունները դիտվում են որպես մի ամբողջության, մի միասնական երևույթի արտահայտություն։ Այդ պատճառով նրանց միացությունը համարվում է բարդ նախադասություն՝ միացած հավելական կապակցությամբ։ Երկրորդ դեպքում նկարագրվող գործողությունները դիտվում են իբրև ինքնուրույն, իրարից անկախ հանդես եկող երևույթներ, այդ պատճառով էլ արտահայտվում են խոսքի ինքնուրույն միավորներով՝ պարզ նախադասություններով։

ԲԱՌԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԻԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Միավորական անշաղկապ բարդ նախադասություններում բաղկացուցիչ մասերի կապակցությանը և մեկ միասնական ամբողջություն կազմելուն օժանդակում են հետևյալ բառական միջոցները.

1. Բաղադրիչ մասերի սկզբում կարող են դրվել նշանակությամբ իրար համապատասխան դերանուններ կամ մակբայներ, որոնք մի կողմից կատարում են շաղկապող դեր, մյուս կողմից ամբողջ բարդ նախադասությանը տալիս են թվարկման նշանակություն։ Այս դերանուններն ու մակբայները գործածվում են միաժամանակության իմաստային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասություններում՝ մեկ ամբողջական երևույթի մասերը հանդիսացող գործողություններ, իրողություններ նկարագրելու համար։ Դրանցից են՝ մեկը... մյուսը, վերևում... ներքևում, այստեղ... այնտեղ, ոմանք... մյուսները և այլն։ Օրինակներ.

Ելնում է մեկին իր երազն ու սեր, մյուսի մուրաղը սրտումն է մնում (ՀԲ, 2, 55)։ Ոմանք փոքկացրին, մյուսները սաստեցին սրանց (Ա. Սեկ., 413)։ Մեկն անկողնու սպիտակեղենն էր փոխում, մյուսը ապակիներն էր փայլեցնում, երրորդը հաշտի խոնավ գետինն էր մաքրում (Ն.տ., 453)։ Նրանցից ոմանց աչքերին ուրախ ժպիտ էր խաղում, մյուսների դեմքերին լարված սպասում կար (Ն.տ., 6)։ Վերևում փռված էր անտառը, ավելի ներքև գտնվում էր գյուղը։ Աջ կողմում նստած էին ծերունիները, ձախ կողմում խաղում էին երեխաները։

Ինչպես երևում է բերված օրինակներից, բառական այս միջոցների կիրառության դեպքում անշաղկապ միավորական նախադասությունները առանում են նաև զուգադրության իմաստային երանգ, այսինքն՝ թվարկման՝ միաժամանակության ընդհանուր ֆոնի վրա զուգադրվում, համադրվում են երկու կամ ավելի գործողություններ, իրողություններ, երևույթներ։

Բառական այս միջոցները կարծեք իրենց վրա են վերցրել բարդ նախադասության մասերի կապակցության շարահյուսական պաշտոնը և իրենց կատարած դերով մոտենում են շաղկապական բառերին։ Այս է պատճառը, որ Մ. Աբեղյանը այս կարգի նախադասությունները դետեղում է շաղկապական բարդ համադասական նախադասությունների մեջ՝ կապակցության այս ձևը կոչելով մասնական կապակցություն[1]։

2. Բաղադրիչ մասերից մեկում, մեծ մասամբ առաջինում, կարող է առկա լինել ամբողջ բարդ նախադասության համար ընդհանուր մի անդամ, որը ավելի սերտ է դարձնում անշաղկապ բարդ նախադասության մասերի կապակցությունը։ Այդ ընդհանուր անդամը մեծ մասամբ լինում է տեղի կամ ժամանակի պարագա, որով ցույց են տրվում միևնույն ժամանակամիջոցում կամ նույն տեղում մեծ մասամբ միաժամանակ կատարված գործողություններ, կամ համատեղ հանդես եկած իրողություններ, երևույթներ, եղելություններ։ Օրինակներ.

Վերջին խոսքերի միջոցին երիտասարդի ձայնը սկսեց դողալ, ձեռքը տարավ դեպի ճակատը, գլուխը խոնարհեց (Ր, 7, 27)։ Այնտեղ ամեն մի պտուտակ զգացել է նրա մատների հպումը, ամեն մի մարդ տարիներ շարունակ նրա հետ կիսել է աշխատանքի հաջողությունն ու անհաջողությունը (Խեչ., ՄՄՀ, 9)։ Ավազն էր ճմլվում ոտքերի տակ նրանց, ճաքում էին անգամ քարերն ամուր (ԳԲ, 11)։

[1] Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 332։

Որպես ընդհանուր անդամ կարող են հանդես գալ նաև եղանակավորող բառեր, որոնք դրվելով առաջին բաղադրիչի սկզբում, վերաբերում են ամբողջ բարդ նախադասությանը, տալիս են նրան որևէ խմաստային երանգ (հարցման, կասկածի, հաստատման)՝ ավելի կուռ դարձնելով անշաղկապ նախադասության կառուցվածքը. օրինակ՝ Արդյոք նորից երազնե՞րն են թափառում, Սիրո անուշ նվագնե՞րն են ինձ կանչում... (ՎՏ, Երկ., 26)։ Այս օրինակում արդյոք եղանակավորող բառը դրվելով անշաղկապ բարդ նախադասության սկզբում՝ վերաբերում է ամբողջ նախադասությանը և ուժեղացնում է նրա հարցական բնույթը. միաժամանակ այն ավելի միասնական է դարձնում անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցությունը, օժանդակում է նրանց միավորմանը մեկ ամբողջության մեջ։

Այստեղ պետք է խոսել նաև միավորյալ նախադասությունների մասին, որոնց մեջ ընդհանուր է լինում կամ ենթական, կամ ստորոգյալը։ Համեմատաբար շատ են տարածված այն անշաղկապ նախադասությունները, որոնց բաղադրիչ մասերը ունեն ընդհանուր ենթակա. վերջինս հանդես է գալիս միայն առաջին բաղադրիչում, իսկ մյուսներում չնայած բացակայում է, սակայն գիտակցվում և հասկացվում է։ Օրինակներ.

Ինչպես եղավ, մի օր այդ սիրուն մանուկը վազելով թիթեռնիկի ետևից, հեռացավ ջրաղացից, ընկավ մացառների մեջ, անցավ ձորակից ձորակ... հասավ մեծ ճանապարհին, նստեց եզերքին և լաց եղավ (Ավ. Իս., 3, 26)։ Արշակն արմունկները հենեց սեղանին, գլուխն առավ ափերի մեջ, աչքերը գոցեց (Ն.տ., 3, 105)։ Բայց այս անգամ նա յուր զովասանքը չարտասանեց, մի քանի վայրկյան լսեց երգչին, ապա քայլերն ուղղեց դահլիճի խորքը, մի փոքրիկ սանդուղքով բարձրացավ վերև, դեպի աջ (Շ, 2, 163)։

Ընդհանուր ենթակայով անշաղկապ նախադասությունները հատկանշանական են նաև նրանով, որ հաճախ ենթական բոլորովին բացակայում է (զեղչված է լինում նաև առաջին բաղադրիչից)։ Այս դեպքում այն կամ հասկացվում է կոնտեքստից, կամ լինում է առաջին կամ երկրորդ դեմքի դերանուն և հասկացվում է բայի դեմքի միջոցով։ Օրինակներ։

Խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից, պատմում էինք զանազան դեպքեր ու անցքեր, առակներ էինք ասում, երգում ցածր ձայնով (Ավ. Իս., 3, 16)։ Հայտնվի՛ր անհուն փայլով ու փառքով, ժպիտդ փռի՛ր իմ երկրի մթնում (ՎՏ, Երկ.,

186)։ Լուռ նստում եմ առվի մոտ, անուշ հնքիաթ եմ լսում, երեկո և առավոտ խաղաղ սրտով երազում (Ն.տ., 186)։

Բերված օրինակներում ենթական զեղչված է ստորոգյալի առաջին և երկրորդ դեմքերով դրվելու պատճառով։ Այս դեպքում ենթական դրվում է միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում շեշտել գործողություն կատարող անձը. ըստ որում ճակատային նկատառումներով այն կարող է դրվել նաև երկրորդ բաղադրիչում. օրինակ՝ Պար էինք պարում ու երգեր ասում, զենքերի փայլով հրճվում էինք մենք (Ե. Չար., 5)։

Ամռանը ծանոթացա մի բասկ երաժշտագետի հետ։ Բայոն քաղաքից էր, ապրում էր Փարիզում, երաժշտության դասատու էր (Ավ. Իս., 3, 138)։— Ինձ հետ էր գալիս։ Ճանապարհին մարդ հանդիպեց, կանգ առավ, հիմա կգա (ՄԱՊ, 68)։ Վերջին նախադասություններում զեղչված ենթական հասկացվում է միայն կոնտեքստից։

Ընդհանուր ենթակայով անշաղկապ միավորյալ նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ բաղկացուցիչ մասերի ստորոգյալները համաձայնում են թվով ու դեմքով, և դա շատ բնական է, որովհետև նրանք բոլորն էլ համաձայնում են միևնույն ենթակայի հետ և ցույց են տալիս նրա կատարած տարբեր գործողությունները կամ տարբեր վիճակներում (դրությունների մեջ) լինելը (տես վերևի օրինակները)։

Երբեմն անշաղկապ բարդ նախադասության մեջ ընդհանուր է լինում գործողություն ցույց տվող ստորոգյալը, այսինքն՝ անշաղկապ բարդ նախադասությամբ նկարագրվում է մի այնպիսի ամբողջական երևույթ, երբ միևնույն գործողությունը միաժամանակ կատարվում է տարբեր սուբյեկտների կողմից։ Այս դեպքում տվյալ գործողությունը ցույց տվող ստորոգյալը դրվում է միայն առաջին բաղադրիչում, իսկ մյուսում (կամ մյուսներում) այն զեղչվում է։ Ենթական և զեղչված ստորոգյալի լրացումները բաժանվում են բուքով. օրինակ՝ Բանվորների խմբերը գնում էին դեպի գործարանները, աշակերտները՝ դեպի դպրոցները, առևտրականները՝ դեպի խանութները, պաշտոնյաները՝ դեպի գրասենյակները (Ավ. Իս., 3, 94)։ Այստեղ առկա է նաև զուգադրության իմաստային երանգը (զուգադրված են բաղադրիչների և՛ ենթակաները, և՛ տեղի պարագաները)։

3. Երբ միավորական անշաղկապ նախադասությունը ունենում է ժամանակային հաջորդականության կամ միաժամանակության նշանակություն, երկրորդ բաղադրիչի սկզբում կարող է հանդես գալ որևէ ժամանակի պարագա, որով ընդգծվում է երկրորդ

բաղադրիչի գործողության՝ առաջինի գործողությունից հետո կատարվելը կամ միաժամանակ կատարվելը. դրանցից են, օրինակ, ետո, այդ բանից ետո, այդ ժամանակ, այնուհետև *և այլն: Օրինակներ.*

Արտաշի մայրը լաց եղավ, Արտաշն էլ լաց եղավ, ետո *հավաքվեցին որբեր, նրանք էլ լաց եղան... (ԴՄՆ, 440): Ես կանգնած էի կանգառում, այդ ժամանակ ինձ մոտեցավ Սեդան:*

Պետք է նշել, որ այնուհետև *և* ետո *մակբայները սկսել են կորցնել իրենց նյութական նշանակությունը և հաճախ ծառայում են միայն որպես կապակցության միջոցներ. օրինակ՝ Հագեցել է օդը փշատենիների բույրով, լսվում է առվի խոխոջը,* ետո *բզզում են ինչ-որ բզեզներ (ԴՄՆ, 413): Այստեղ* ետո*-ն կատարում է սոսկ կապակցական դեր և մեկ ամբողջության մեջ միացրել է միաժամանակ կատարված գործողությունները: Եթե այն պահպանած լիներ իր նյութական նշանակությունը, ապա բարդ նախադասությունը պետք է ունենար ոչ թե միաժամանակության, այլ ժամանակային հաջորդականության նշանակություն:*

4. Միավորական անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային ամբողջությանը օժանդակող բառական միջոց պետք է համարել նաև նախադասության միևնույն անդամի կրկնությունը բոլոր բաղադրիչ մասերում: Այս երևույթը շատ է տարածված գեղարվեստական գրականության, հատկապես չափածո խոսքի մեջ: Միևնույն անդամի կրկնությունը բաղադրիչ մասերում ունի ոճական նշանակություն և արվում է ավյալ անդամը շեշտելու և ասույթին գեղարվեստական շունչ տալու համար: Կրկնվել կարող են նախադասության տարբեր անդամները, սակայն ամենից շատ հանդիպում ենք ենթակայի կրկնությանը: Օրինակներ.

Ամենուրեք մի կարոտ ես դու նեռել, քո սովերն ես փռել անծիր աշխարհում, Դու ես հյուսում աստղացանցը ոսկեթել, Գիշեր ու զօր կյանքը դու ես զարդարում (ՎՏ, երկ., 85): Այստեղ տրամաբանական շեշտերը դու կրկնվող ենթակայի վրա դրվելուն օժանդակում է նաև օժանդակ բայի շրջուն շարադասությունը երկրորդ և երրորդ բաղադրիչներում (դու ես հյուսում, դու ես զարդարում):

Յուրաքանչյուրը զբաղված էր յուր գործով, յուրաքանչյուրը խորասուզված էր յուր խոկումների մեջ (Ր, 7): Ես երգիչ եմ—երկնի թիթեռ, ես գանձ չունիմ—լեռ ու բեռ, ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ,— Ծաղկի բուրմունք, կույսի սեր (Ավ. Իս., 1, 25): Գետը գնում է դեպի օվկիան, գետն անմահ է, անքննելի (Ալ., ՀԱ, 328): Բայց ևս գոհ չմնաց ռուսաց մայրաքաղաքի կյանքով, ևս կամեցավ նոր

երկրներ, նոր քաղաքներ տեսնել (ՆԴ, 2, 15)։ Շատերն էին նրանց մոտ թամաշայի վազում, շատերն էին նախանձով նայում Վահանին (Ա. Սահ., 36)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, կրկնվող ենթական անշաղկապ բարդ նախադասություններում հիմնականում արտահայտված է լինում դերանվամբ։ Երբեմն կրկնվում է ոչ միայն ենթական, այլ նաև նրա կամ ստորոգյալի որևէ լրացումը. այսպես՝

Այն գիշերը ուշ լուսացավ, Այն գիշերը տևեց մի դար (Ծ. Չար., 163)։ Դու ինձ չես տեսնում լուսե երազում, Դու ինձ չես լսում ձմռան փոթորկում (ՎՏ, Երկ., 42)։ Ես հեզնից դառնացած հեռացա, Ես հեզնից հեռացա ու լացի (Ն.տ., 20)։

Նկարագրությունների ժամանակ հաճախ են հանդիպում նաև ստորոգյալի կրկնություններ՝ ա) Երբ ցանկանում ին շեշտել տարբեր առարկաների միևնույն հատկանիշն ունենալը։ Այս դեպքում կրկնվող ստորոգյալը լինում է բաղադրյալ։ Օրինակներ.

Երգ էր սիրտը ամեն մեկի, Երգ էր հայացքը կրակոտ... (Ծ. Չար., 19)։ Միածանի բոլոր գույները կային նրա հագուստների վրա. գունավոր էր գլխի թեթև ապարոշը, որ թեք կերպով կապած էր թասակի վրա..., Գունավոր էին նրա երկար, ոսկյա գանգուրները, որ սփռված էին ուսերի վրա, գունավոր էր բեհեզյա գոտին, որ... անփույթ վերջավորություններով ծածանվում էր ծնկների վրա. գունավոր էր նրա բաճկոնակը, կուրտիկը... (Ր, 7, 34)։ Քար էր հատակը, քար էր առաստաղը, քարից էին չորեքկողմի պատերը,— միակտուր և միապաղաղ քարից (Ն.տ., 232)։

բ) Ստորոգյալը կարող է կրկնվել նաև այն դեպքերում, երբ նշանակում է դրություն, վիճակ, որը վերագրվում է տարբեր առարկաների, ինչպես նաև միադիմի ստորոգյալը (պետք է, անհրաժեշտ է, կարելի է), երբ արվում է նույն դատողությունը տարբեր գործողությունների կատարման վերաբերյալ կամ տարբեր երևույթների երևան գալու վերաբերյալ։ Օրինակներ.

Ով ո՞վ կլինի զարթոն այս ժամին. Քնած է աշխարհ, քնած է քամին (ՀՔ, 2, 14)։ Չկան օրերն ահարկու, Չկա ժամ ու ժամանակ, Ոչվական ենք մենք երկու Միշտ իրար հետ, միշտ մենակ... (ՎՏ, Երկ., 177)։ Չի կարելի չհավատալ մարդու ապագային, չի կարելի լավատես չլինել մարդու գալիքի նկատմամբ (Վահր. Փափ., 1, 19)։ Թվում է՝ լսում եմ ես քո շունչը, թվում է՝ ինձ մոտ ես դու էլի, թվում է՝ քո ամեն մի շշունջը իջնում է խաղաղ այս տողերին (Գ. Սար., 78)։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ բաղկացուցիչ բոլոր մասերում կրկնվող

ստորոգյալը ենթակայի նկատմամբ ունենում է առաջադաս շարադասություն (դրվում է ենթակայից առաջ)։ Դրանով հիմնական ուշադրությունը հրավիրվում է ստորոգյալի վրա, շեշտվում է այն հանգամանքը, որ տվյալ հատկանիշը, գործողությունը, դրությունը, վիճակը վերաբերում է տարբեր առարկաների։ Երբ անհրաժեշտ է լինում առանձնապես շեշտել բաղադրիչ մասերի ենթականերին վերագրվող նույն հատկանիշը (բաղադրյալ ստորոգյալը), նրա մոտ դրվում է ինչ, որքան, ինչքան հարաբերական դերանուններից որևէ մեկը բացականչական նշանով. այսպես՝ Ի՜նչ լավն էր էն աղջիկը, ի՜նչ լավն էին նրա ժպտուն, զվարթ աչքերը, ի՜նչ լավն էր էն տաք ապահով սենյակը, ինչ լավն էր էն գիշերը (ՀՔ, 3, 90)։

Երբեմն ոճական նկատառումներով կրկնվում է ոչ միայն ստորոգյալը, այլ նաև նրա որոշ լրացումները։ Այդ նույն նպատակով կարող են կրկնվել նաև ենթական և ստորոգյալը միասին։ Այս դեպքում բաղկացուցիչ մասերում տարբեր են լինում միայն ստորոգյալի լրացումները։ Օրինակներ.

Դեռ մնում են նրանց շիրիմները, նրանց կանգնած խաչարձաններն ու մատուռները, դեռ մնում է նրանց կառուցած ճերմակ տաճարը (ՀՔ, 3, 26)։ Այլևս չէր երևում սիրուն քաղաքը, այլևս չէր երևում ծովակը (Ր, 7, 287)։ Ավաղ, նա, որին շատ էր նմանում գարունը սիրուն, նա չկա հիմա, նրա հետ մեռավ սեր ու խնդություն, նրա հետ մեռավ երգը գարունքվա (Ավ. Իս., 1, 137)։ Քո մեջն եմ գտնում իմ սրտի խաղաղությունը, ես մեջ եմ գտնում իմ վշտերի մխիթարությունը, քո անունը հիշելիս լռում է հոգսը, անհետանում է մռայլը (Ր, 7, 126)։ Միայնակ՝ ես սիրում եմ նստել երեքուն լույսերում, ես սիրում եմ երազ ու ստվեր.— ես իմ սերն եմ սիրում (ՎՏ, երկ., 160)։ Ես գիտեմ լուսեղեն մի երկիր, ես գիտեմ դյութական մի հովիտ (Ն.տ., 190)։ Դուք ո՞ւր եք գնում, ծիծեռնակներ, Դուք ո՞ւր եք գնում, հավքեր գարնան (Գ. Սար.)։

Բերված օրինակներից առաջին երեքում կրկնված են ստորոգյալն իր լրացումների հետ, իսկ վերջին երեքում՝ ենթական ու ստորոգյալը։ Վերջին դեպքում կարող է կրկնվել նաև նրանց լրացումների մի մասը։

Անշաղկապ բարդ նախադասության մեջ կրկնվել կարող են նաև բոլոր մասերի համար ընդհանուր հանդիսացող այլ անդամներ, որոնցից հատկապես տարածված են հատկացուցչի և պարագաների կրկնությունները։

Ահա հատկացուցչի կրկնության մի քանի օրինակ։

Նրա մատները գծագրելու են, նրա հատակագծով տներ են շի-

նելու (ԱԲ, 176)։ Քո սերն ինձ քիչ տվեց, Քո կարոտն ինձ ուժ տվեց. Հիմա կանգնած եմ Քո սպասին (Ավ. Իս., 3, 271)։ Մեր պատմական բոլոր նշանավոր դեպքերը նրա [կաղնու] նվիրական ստվերի տակ են որոշվել, մեր ժողովրդի բոլոր ապստամբություններն այնտեղից են սկսվել (Ն.տ., 141)։

Ժամանակի պարագայի կրկնության դեպքում շեշտվում է անշաղկապ բարդ նախադասության մեջ նկարագրվող գործողությունների միաժամանակ կատարվելը, միաժամանակության իմաստային փոխհարաբերությունները բարդ նախադասության մասերի միջև։ Օրինակներ՝

Այժմ նա հոգնել, վաստակել էր հարատև տխրության տանջանքներից, այժմ նա որոնում էր մինչև անգամ մեկը, որին կարողանար յուր սիրտը բանալ, յուր վշտերը պատմել (Մուր., 3, 11)։ Մինչև լույս մնացի կիսարթուն՝ Կռթնած կլոր սեղանին, Մինչև լույս պարեցին իմ հոգում Այս կույսերը հուր-գեղանի (Ե. Չար., 163)։ Նրա տերը դարձյալ տխուր էր, դարձյալ գտնվում էր մի անսովոր, մռայլ մտախոհության մեջ (Ր, 7, 36)։ Այդ ճասակում ևս նրա նետը երբեք չէր վրիպում նպատակից, այդ ճասակում ևս նա խիստ հաջողակ ձեռք ուներ (Ն.տ., 58—59)։ Այդ ժամանակ նրան հայտնի էր ամեն ինչ. այդ ժամանակ նրան արդեն պատմել էին, թե ինչեր կատարվեցան յուր բացակայության միջոցին (Ն.տ., 442)։ Դեռ չի եփել, բալա, դեռ աղն էլ չեմ գցել (Ա. Սահ., 6)։

Երբ հաղորդման ժամանակ նպատակ են ունենում շեշտել անշաղկապ բարդ նախադասության մեջ նկարագրված գործողությունների, եղելությունների, երևույթների համատեղությունը (միևնույն վայրում կատարվելը, երևան գալը), ամբողջ բարդ նախադասության համար ընդհանուր տեղի պարագան կրկնվում է բաղադրիչ մասերից յուրաքանչյուրում. օրինակ՝ Հայոց ձոր, Հայոց ձոր... Այնտեղ մի բլրի վրա նստած էր խեթի անգմբեթ վանքը, այնտեղ կարկաչեցին իմ մանկության լավագույն օրերը (ԳՄԲ, 325)։

Նախադասության ուրիշ անդամների կրկնության դեպքեր.

Հանախ նա առել է քեզ իր գիրկը, Որգել ես, ճյուղից-ճյուղ մագլցել, հանախ դու քո սիրած, տխուր գիրքը կարդացել ես, իսկ նա՝ խուլ լացել (Գ. Սար., 97)։ Շատ անգամ էր այդքան բազմությունն հավաքվել Քաջանց այդ հռչակավոր ծառի տակ, շատ լացի և տրախտության վկա էր եղել նա (ՍԽՀ, 1, 110)։ Այս նախադասություններում շեշտված է նկարագրվող գործողությունների հաճախականությունը։

— Կեղծե՞լ, խաբե՞լ նրան... Քե՞ բացարձակ կերպով դատա-

պարտել հոր վարմունքը...— այդ վարանմանց մեջ էր նա, այդ մտքերն էին տանջում նրան (Ր, 7, 41)։— Այստեղ կրկնված է այդ որոշիչը, որով շեշտված է նախորդ նախադասությամբ տրված դատողության՝ երկու բաղադրիչ մասերի նման նշանակություն ունեցող բառերին (վարանմանց, մտքեր) վերաբերելը, այդ բառերը բացահայտելը, որոշելը։

Երբեմն անշաղկապ բարդ նախադասության ժխտական բնույթը շեշտելու համար նրա բաղկացուցիչ մասերում կրկնվում են ոչ մի, ոչինչ, ոչ ոք և այլ ժխտական դերանուններ. օրինակ՝ Ոչինչ չէր երևում, ոչինչ չէր լսվում։ Նա ոչինչ չգիտեր, նրան ոչինչ հայտնի չէր (Ր, 7, 51)։ Նույն ձևով երբեմն կրկնվում են նաև որոշյալ դերանունները (ամեն ինչ, ամեն մի, բոլորը և այլն), որով ընդգծվում է նկարագրված երևույթները, առարկաները իրենց ամբողջության մեջ վերցնելը։ Օրինակներ՝

Ամեն ինչ ժպտում էր, ամեն ինչ ուրախություն էր շնչում... (Ր, 7, 40)։ Այդ կարճ րոպեներում խմկույն օդի մեջ լուծվեցավ ամեն մի կեղծություն, ամեն ինչ դարձավ պարզ ու թանկագին (Ա. Սեկ., 535)։

Անշաղկապ բարդ նախադասության հարցական բնույթը շեշտելու՝ ընդգծելու նպատակով կրկնվում է բոլոր մասերի համար ընդհանուր հանդիսացող հարցական դերանունը։ Օրինակներ՝

Ինչո՞ւ ինքը՝ պարողը չի ուրախանում, ինչո՞ւ մենակ նա է տխուր (ՀԲ, 3, 24)։ Միայն չգիտեմ, թե ինչո՞ւ են արագիլները Սարդարի այգուց կափկափում այդքան ուրախ, ինչո՞ւ է այս առավոտ երկինքը այսքան կապույտ (ՆՉ, ՊՊՆ, 253)։ Ի՞նչ աներ այդ ժամանակ թագավորը. ի՞նչ կարող էր անել նա (Մուր., 3, 72)։...Մի՞թե այդ հնարավոր էր, մի՞թե թագուհին այդ կարող էր լսել (Ն.տ., 32)։ Որբուկն ո՞ւր մնա, որբուկն ո՞ւր գնա, որտե՞ղ տաքանա, ո՞ւմ թոնրան շրթին (Պ. Սևակ)։ Ի՞նչ էր պատահել այժմ, ինչո՞ւ այդ աստիճան վրդովել էր նա (Մուր., 3, 289)։ Ո՞վ պիտի կատարի դրանց գործը, ի՞նչ հաշվով են իջեցնում պլանը (Ա. Սեկ., 166)։

Բերված օրինակներից առաջիններում հարցական դերանունը բոլոր բաղադրիչներում կրկնվում է նույնությամբ, այսինքն միևնույն հարցը տրվում է տարբեր երևույթների վերաբերյալ, որի միջոցով էլ հենց վերջիններս միավորվում են մեկ ամբողջության՝ բարդ նախադասության մեջ։ Իսկ երբ խոսողի նպատակն է լինում հարցերի միջոցով պարզաբանել միևնույն երևույթը տարբեր կողմերից, բարդ նախադասության բաղադրիչ մասերում օգտագործվում են տարբեր հարցական դերանուններ (տե՛ս վերևի վերջին օրինակ-

ները)։ Երբ հարցումները վերաբերում են որևէ կոնկրետ առարկայի կամ անձի, այդ առարկան կամ անձը ցույց տվող բառը կրկնվում է բոլոր բաղադրիչներում որպես նախադասության տարբեր անդամներ, իսկ երբեմն էլ նրան փոխարինում է որևէ դերանուն։ Դա ևս հանդիսանում է անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցության օժանդակ միջոց. օրինակ՝ Ո՞վ էր նա, ո՞ւմ աղջիկն էր, որտեղ կարելի էր տեսնել նրան (Մուր., 1, 214)։

Երբ անհրաժեշտ է լինում ոճական նկատառումներով միավորական անշաղկապ բարդ նախադասություններին տալ բացականչական բնույթ, նրա բոլոր բաղկացուցիչ մասերի սկզբում դրվում է որևէ հարաբերական դերանուն՝ բացականչական նշանով։ Օրինակներ.

Ինչե՜ր Արշակին չէր ասել նա, ինչո՜ւ բան էր ամիսների ընթացքում սովորել նրանից (Ավ. Իս., 3, 93)։ Ի՜նչ հրաշալիքներ է կերտել հայ մարդը, ի՜նչ կորով կա նրա բազուկներում, ի՜նչ ճաշակ ու արվեստ տրված նրան... (Վերդ., ԻԳե, 13)։ Ախ, որքա՜ն քաղցր էր կտուրային այդ բացօթյա կյանքը, որքա՜ն անմոռանալի հիշատակներով կապված էր նա իմ սրտի հետ (Ր, 5, 12)։ Որքա՜ն գեղեցիկ էր նրա գլուխը բարձի վրա, որքա՜ն մեղմ էր նրա շնչառությունը, ինչպիսի՜ անմեղություն կար նրա դունատ դեմքին (Ալ., ՀԱ, 180)։ Ի՜նչ սարի տրծիվ կը հասնի քաջին, ի՜նչ շահ կը կանգնի նրա առաջին (ՀՔ, 2, 146)։

Անշաղկապ բարդ նախադասության մասերում հաղորդվածը ավելի հաստատական դարձնելու, նրա իրական լինելը, հավաստիությունը շեշտելու նպատակով բաղկացուցիչ մասերի սկզբից կարող է դրվել չէ որ բառակապակցությունը (շեշտված կամ հարցական ինտոնացիայով), որը միաժամանակ հանդիսանում է նրանց կապակցությանն օժանդակող բառական միջոց. օրինակ՝ Չէ՞ որ նա էլ գիտե զգալ, չէ՞ որ այստեղ էլ կենդանություն, շունչ կա, ցավ ու կսկիծ կա (ՀՔ, 3, 50)։

Բառական միջոց պետք է համարել նաև այն, որ երբեմն անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերում հանդիպում է միևնույն բառը տարբեր հոլովաձևերով, այսինքն նույն բառը հանդիպում է բաղկացուցիչ մասերից յուրաքանչյուրում, բայց որպես նախադասության տարբեր անդամներ։ Այս դեպքում արդեն անշաղկապ բարդ նախադասության մեջ որպես մի ամբողջության նկարագրվում են միևնույն առարկայի (կամ երևույթի) հետ կապված տարբեր գործողություններ, տարբեր դրություններ։ Բերենք օրինակներ.

Երեխա էլ ճնշում էր անախորժ միտքը, երեխա էլ զգում էինք մեր դրության կեղծիքը (Շ, 2, 481—482)։ Ամեն տեղ դիտեին նրա մասին, ամեն տեղից հալածված էր նա (Ր, 7, 375)։ Նա մեզ չի սիրում, նրա մեջ չկա բնական կորով (Շեքս., 1, 260—261)։ Նրան հայտնի չէին յուր տիրոջ վշտերը, նա չգիտեր, թե ինչու էր նա այնքան տխուր (Ր, 7, 40)։ Նավը օրորալով ալիքներն էր ճեղքում իր սուր քթով, ալիքները հեռանում էին մի պահ, հետո մոտենում, զարկում նավին, փշրվում կոհակների (ԱՔ, 102)։ Անտառը կանչում է նրան, ընկերների ազատ վազքն է տեսնում նա մթին թավուտների մացառուտ ժայռերն ի վեր (Ավ. Խ., 3, 160)։

Համախ ընդհանուր անդամի առկայության դեպքում երկրորդ և մյուս բաղադրիչներում նրան փոխարինում է համապատասխան դերանուն. այս դեպքում այն ավելի պակաս է շեշտվում, քան նույնության կրկնվելու դեպքում, սակայն բաղադրիչների կապը ավելի սերտ է դառնում. օրինակ՝

Դաշտն է դեմը, խավարակուռ ձգված է նա (Ե. Չար., 20)։ Գևորգը տեղից չշարժվեց, նա ամբողջ մարմնով դողում էր (Մուր., 1, 25)։ Մի առավոտ նրա մոտ ներս մտավ Հոխփսիմեն, դրսի ցրտի ազդեցությունից նրա թշերը կարմիր վարդի քնքուշ գույն էին ստացել (Ր, 3, 515)։ Դիարբեքիրում ձմեռը տաք է, այնտեղ սառնամանիք չկա (ՄԱՊ, 462)։ Այդ վայրերում էին անցել նրա անհոգ ու չարաճճի մանկությունը, երազներով լեցուն պատանեկությունը, այդտեղ էր բողբոջել նաև նրա առաջին սերը (Սհշ, 1, 7)։ Հազվադեպ հանդիպող քիչ սերմերը խոսում էին տեսակի աղնվության մասին, դրանք կարծես սև խալեր լինեին կարմիր միջուկի վրա (Ա. Սեկ., 426)։

Անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի կապակցության օժանդակ բառական միջոց է նաև նշանակությամբ համանիշ կամ իրար մոտ բառերի (մեծ մասամբ ստորոգյալի) գործածությունը։ Օրինակներ.

Տրդատա կառուցած հաստահիմն պարիսպները թվում են ինձ անղոր, մեզ շրջապատող այս խորաձորը երևում է իբրև հովիտ... վերջապես մեր զորքերի թիվը ևս գոնում եմ նվազ... (Մուր., 3, 252)։ Զվարթ էր նրա հովվական սրնգի ձայնը, ուրախ էր պարի եղանակը, աշխույժ էր և պարը, միայն տխուր էին թուխ, կրակոտ աչքերը (ՀԹ, 3, 23)։ Ոչ մի հանդիսավորություն չկար, ոչ ոք չէր պատրաստվում որևէ բաժակաճառ ասել (Ա. Սեկ., 419)։ Ու նստոտեցինք իրար դեմ ու դեմ Սատուրյամբ վառվող կրակի շուրջը, Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին, Մեր դեմը խաղում ձորերի շունչը (ՀԹ, 2, 36)։

Սրանք են այն բառական միջոցները, որոնք միավորական հարաբերության ժամանակ օժանդակում են բաղկացուցիչ մասերի կապակցությանը և մեկ ամբողջություն կազմելուն, խոսողի բարդ միտքն արտահայտելուն։

ՋՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զուգադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունները ցույց են տալիս իմաստային այն հարաբերությունները, ինչ որ նույն նշանակությամբ շաղկապավոր բարդ նախադասությունները. միայն, ի տարբերություն վերջիններիի, սրանց արտահայտած իմաստային փոխհարաբերությունները ավելի սահմանափակ են. մի բան, որ բացատրվում է շաղկապի բացակայությամբ (շաղկապները հնարավորություն են տալիս արտահայտելու ավելի հարուստ, բազմակողմանի իմաստային փոխհարաբերություններ)։

Ի տարբերություն միավորական անշաղկապ նախադասությունների, զուգադրական անշաղկապ նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ երկանդամ են, այսինքն բաղկացած են երկու մասից։ Եվ դա բնական է, որովհետև զուգադրությունը ինքնըստինքյան ենթադրում է համեմատվող երկու օբյեկտ։ Իհարկե, չի բացառվում, որ զուգադրվող յուրաքանչյուր մասը իր հերթին լինի բարդ։ Բերենք օրինակ՝ Բագրատյանը հետաքրքրվում էր, Ռուբենը յուրաքանչյուրի մասին տեղեկություն էր տալիս (Շ, 2, 345)։ Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թեպած ժամանակ՝ երբ հոգնեինք (ԱԲ, 120)։ Բերված օրինակներից առաջինում զուգադրված մասերը պարզ նախադասություններ են, իսկ երկրորդում զուգադրական անշաղկապ բարդ նախադասության երկրորդ բաղադրիչը բարդ է (բարդ ստորադասական նախադասություն է), սակայն այս դեպքում ևս անշաղկապ նախադասությունը երկանդամ է, որովհետև երկրորդ բարդ ստորադասական նախադասությունը դիտվում է իբրև մի ամբողջություն և հակադրվում առաջին նախադասությանը։

Զուգադրական անշաղկապ բարդ նախադասությունները կարող են արտահայտել հիմնականում երկու իմաստային հարաբերություն՝ զուգադրական-համեմատական և հակադրական։ Առաջին դեպքում անշաղկապ նախադասության մեջ նկարագրվում են երկու երևույթ, գործողություն, իրողություն՝ զուգադրվելով, համեմատվելով իրար. ըստ որում զուգադրվել կարող են կամ ամբողջ

նախադասությունները, կամ նրանց առանձին անդամները։ Հակադրական հարաբերության ժամանակ իրար են հակադրվում երկու գործողություն, երևույթ, դեպք։

Ինտոնացիան այս նախադասություններում զուգադրական է, այսինքն՝ բարդ նախադասության բաղադրիչ մասերի համապատասխան շարահյուսական պաշտոն կատարող անդամները ունենում են հավասարաչափ տրամաբանական շեշտադրում. բարդ նախադասության առաջին մասը արտասանվում է ձայնի որոշ բարձրացումով, որին հաջորդում է որոշ դադար (անջատող). երկրորդ մասը հակադրվում է առաջինին ձայնի համապատասխան իջեցումով։ Ինտոնացիոն այս առանձնահատկությունը հատկապես ակնառու երևում է հակադրական անշաղկապ նախադասություններում (օրինակ՝ Ես աղքատ եմ, դու հարուստ)։

Ի տարբերություն միավորական անշաղկապ նախադասությունների՝ զուգադրական հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասություններում բայ-ստորոգյալների եղանակա-ժամանակային հարաբերակցությունը կառուցվածքային դեր չի խաղում. այդտեղ նշանակություն ունի նրանց բառային իմաստը, որի միջոցով էլ իրականանում է զուգադրությունը (հակադրությունը կամ սոսկ զուգադրումը)։ Եվ դա հասկանալի է։ Քանի որ զուգադրությունը սովորաբար կատարվում է մեկ ժամանակային պլանի վրա, դրա հետևանքով էլ զուգադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունների ստորոգյալների հարաբերակցությամբ ստեղծված ժամանակային հարաբերությունները շատ սահմանափակ են։ Սովորաբար նրանք (ստորոգյալները) իրենց ժամանակներով համընկնում են, այսինքն՝ զուգադրությունը կատարվում է միաժամանակության (կամ համատեղության) ֆոնի վրա։ Այստեղ պետք է խոսել կառուցվածքային մեկ առանձնահատկության մասին ևս։ Զուգադրության բոլոր դեպքերում առկա է անշաղկապ բարդ նախադասությունների բաղադրիչ մասերի կառուցվածքային զուգահեռականությունը. այսինքն՝ բաղադրիչ մասերը ունեն նման կառուցվածք (դա վերաբերում է հատկապես շարադասությանը). օրինակ՝ Քույրս սենյակում նստած կարդում էր, եղբայրս բակում խաղում էր։

ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ-ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս տիպի նախադասությունները ունեն իմաստային այն առանձնահատկությունը, որ մեկ ամբողջության մեջ միավորում են

իրար զուգադրվող և համեմատության մեջ դրվող գործողություններ, դեպքեր, երևույթներ։ Ըստ որում զուգադրությունը կարող է կատարվել տարբեր ծավալներով, այսինքն՝ համեմատության մեջ կարող են դրվել բաղադրիչ նախադասությունների տարբեր մասերը։ Դրանցից կարելի է նշել հետևյալները.

ա) Զուգադրվում են անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչների ենթակաները և նկարագրվում նրանց կատարած տարբեր գործողությունները՝ վերցվելով իբրև մեկ ամբողջություն։ Զուգադրվող ենթակաները կարող են լինել անձ ցույց տվող և իր ցույց տվող. ըստ որում զուգադրությունը ավելի ուժեղ է, երբ ենթակաները անձ են ցույց տալիս (գոյականով կամ դերանվամբ արտահայտված)։ Օրինակներ՝

Մեղմ ու սիրագին ժպտում էր նա ինձ օտար կողմերում, լայն ճամփի վրա, Ես լսում էի խոսքերը նրա Եվ անուշ լալիս իմ անուրջ բախտից (ՎՏ, երկ., 39)։ Բագրատյանը հետաքրքրվում էր, Ռուբենը յուրաքանչյուրի մասին տեղեկություն էր տալիս (Շ, 2, 345)։ Տղաներն ամաչելուց ուտելիքին ձեռք չէին տալիս, աղջիկներն ամաչելուց թաքնվում էին իրար եւս (ՆՋ, ՊՊՆ, 76)։ Մայրն էլի ծնոտը հենել էր ոսկրացած չոր ձեռքին, որդին պատին կպած ծխում էր (Վերդ., ԻԳե, 388)։

Պետք է նշել, որ զուգադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երկրորդ բաղադրիչի անդամները ազատ շարադասություն չունեն. բաղադրիչի սկզբում սովորաբար դրվում է զուգադրվող անդամը, ապա նախադասության մյուս անդամները (տես վերևի օրինակները)։

բ) Երբ զուգադրության միջոցով ընդգծվում է երկու տարբեր առարկաների որոշ հատկանիշների տարբերությունը, այդ ժամանակ անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչների ստորոգյալները լինում են բաղադրյալ, ըստ որում ստորոգելիական վերադիրները հանդիսանում են զուգադրվող հատկանիշները։ Զուգադրության հարաբերությունները այս դեպքում դիտվում են որպես կամ ներկայում, կամ անցյալում հանդես եկած հարատևող հարաբերություններ։ Առաջին դեպքում բաղադրյալ ստորոգյալների ստորոգելիական հանգույցները դրվում են ներկա ժամանակով, իսկ երկրորդ դեպքում՝ անցյալ ժամանակով։ Որպես այս տիպի նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություն պետք է նշել այն, որ երկրորդ բաղադրիչի հանգույցը՝ լինելով ընդհանուր առաջինի հետ, հաճախ կրճատվում է։ Դրանով երկու բաղադրիչների կապակ-

ցությունը ավելի սերտ է դառնում։ Կրճատված հանգույցի փոխարեն երկրորդ բաղադրիչի ենթակայից հետո դրվում է բութ։ Բերենք մի քանի օրինակ։

Կյանքը երազ է, աշխարհը՝ ճեճիար, ազգեր, սերունդներ—անցնող ճարավաճ (Ավ. Իս., 2, 66)։ Երկու սուրհանդակներից մեկի ձին սևագույճ էր, մյուսինը՝ կապուտակ (Ր, 7, 17)։ Վերևում արևճ է վառ ու շոգ, ներքևում՝ ճանապարհի փոշիճ (ԳՄԵ, 15)։ Հողը քիչ էր, կերը՝ պակաս (Ա. Սեկ., 153)։ Անճար ցավի տեղը գերեզմաճճ ա, անճար հիվանդի բժիշկը՝ մաճը (Հայկ. առած, 50)։

Ինչպես երևում է օրինակներից, համեմատվող առարկաների հատկանիշների զուգադրությունը սովորաբար ուղեկցվում է այդ հատկանիշները կրողների՝ ենթակաների զուգադրությամբ։

Երբեմն զուգադրությունը կատարվում է նույն առարկայի (անձի) որևէ հատկանիշի և նրա կատարած կամ նրան վերաբերող որևէ գործողության միջև։ Այս դեպքում անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչներից մեկի ստորոգյալը լինում է բաղադրյալ (ցույց է տալիս այդ հատկանիշը), իսկ մյուսինը՝ պարզ (ցույց է տալիս գործողությունը). ըստ որում այդ գործողությունը ևս սովորաբար լինում է տևական և բնորոշում է տվյալ առարկան։ Այդ պատճառով էլ այն դրվում է սահմանական եղանակի ներկա ու անցյալ անկատար ժամանակներով և համաձայնում է բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական հանգույցին։ Այս տիպի անշաղկապ բարդ նախադասությունները սովորաբար ունենում են ընդհանուր անդամ (ենթակա կամ հատկացուցիչ)։ Վերջինս ցույց է տալիս այն առարկան (անձը), որին վերագրվում են զուգադրվող հատկանիշն ու գործողությունը. օրինակ՝ Նրա դեմքը գունատ էր, աչքերը փայլում էին։

գ) Զուգադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասություններում զուգադրության հիմքում սովորաբար ընկած են լինում բաղադրիչներում տրված գործողությունների տարբերությունը և նրանց համեմատական նկարագրությունը։ Այս դեպքում բայ-ստորոգյալների եղանակա-ժամանակային ձևերի օգտագործումը կախված է լինում անշաղկապ բարդ նախադասությունների արտահայտած մտքի բովանդակությունից։ Սակայն բոլոր դեպքերում էլ գործողությունները վերցվում են ժամանակային նույն պլանով, այդ պատճառով էլ բայ-ստորոգյալները իրենց եղանակներով և ժամանակներով սովորաբար համընկնում են. օրինակ՝ Տղաները ճստեցիճ սեղան, աղջիկները մճացիճ կանգնած (ՆԶՊՊՆ, 76)։ Երբ անշաղկապ բարդ նախադասությունում օգտագործվում են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակները, ապա երկրորդ

բաղադրիչում օժանդակ բայը սովորաբար սղվում է, քանի որ այն ընդհանուր է լինում առաջին բաղադրիչի օժանդակ բայի հետ. օրինակ՝ Գործերը քանի գնում վատանում էին, եղած փողերը հալվում (Մ. Ման., 246)։

Ինչպես ասացինք, զուգադրական հարաբերություն ցույց տվող անշաղկապ նախադասությունների բայ-ստորոգյալները համաձայնում են իրար։ Միայն շատ հազվադեպ, երբ զուգադրությունը չի կատարվում ժամանակային նույն պլանով, բաղադրիչներում կարող են օգտագործվել տարբեր եղանակներ կամ ժամանակներ. օրինակ՝

Գնում են, փախչում, շտապում, ես մնացել եմ, ես ընկել եմ անօգնական (ԴՄԲ, 387)։ Ուրախ սրտով դուք ձեր սերը վայելեցեք անթառամ, Ինձ արցունք է տվել տերը, ես պիտի լամ, պիտի լամ (ՀՔ, 2)։ (Առաջին օրինակի բաղադրիչները միավորյալ նախադասություններ են, իսկ վերջին օրինակում երկրորդ բաղադրիչը իր հերթին բարդ նախադասություն է)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, գործողությունները առանձին չեն զուգադրվում. սովորաբար նրանց հետ միասին զուգադրվում են նաև նրանց սուբյեկտները (ենթակաները), երբեմն նաև լրացումները (գործողության օբյեկտները, պարագաները և այլն)։ Այսպես՝ «ես կարդում եմ, դու գրում ես»— այստեղ զուգադրված են և ենթակաները, և ստորոգյալները, իսկ հետևյալ նախադասության մեջ՝ «ես կարդում եմ լավ, դու գրում ես գեղեցիկ»— զուգադրված են նաև ձևի պարագաները (լավ և գեղեցիկ)։ «ես կարդում եմ վեպ, դու գրում ես նամակ»— այստեղ զուգադրված են նաև գործողությունների օբյեկտները։ Երբ զուգադրվում են երկու գործողություններ և նրանց սուբյեկտները, անշաղկապ բարդ նախադասության առաջին բաղադրիչում կարող է առկա լինել երկու մասերի համար ընդհանուր անդամ (մեծ մասամբ ժամանակի պարագա կամ տեղի պարագա), որով մի կողմից ուժեղանում է երկու բաղադրիչների կապը, մյուս կողմից ընդգծվում է զուգադրության՝ ժամանակային նույն պլանով կատարվելը. օրինակ՝ «Երեկոյան Սուրենը նվագում է, քույրը դասերն է սովորում»։ «Տաճր բոլորը քնած էին, նա դեռ կարդում էր»։ Երբ ենթական անշաղկապ բարդ նախադասության երկու բաղադրիչներում էլ նույնն է, և զուգադրվում են ստորոգյալները, այսինքն՝ նրա կատարած տարբեր գործողությունները, ապա երբեմն երկրորդ նախադասության մեջ որպես ենթակա հանդես է գալիս իմքը (իրենք) դերանունը, որով մի կողմից ընդգծվում է առաջին և երկրորդ բաղադրիչների գործող անձի (ենթակայի) համընկնելը, մյուս կողմից կապակցությունը ավելի սերտ

է դառնում. օրինակ՝ Ծերունին ինձ հրավիրեց, և յուր ունեցած շորի կտորը փռեց իմ տակին, ինքը առաջիս մնաց լուռ կանգնած (ՀԹ, 2, 35)։

դ) Հաճախ են հանդիպում նաև այնպիսի անշաղկապ բարդ նախադասություններ, որոնց մեջ ընդհանուր ստորոգյալի առկայության պայմաններում զուգադրվում են երկու բաղադրիչների գործողությունների օբյեկտները։ Օբյեկտների զուգադրությունը ևս սովորաբար ուղեկցվում է սուբյեկտների՝ ենթակաների զուգադրությամբ։ Այս տիպի նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից է այն, որ երկրորդ բաղադրիչում ստորոգյալը, որը ընդհանուր է առաջինի ստորոգյալի հետ, զեղչվում է. զեղչված ստորոգյալի փոխարեն դրվում է բութ։ Օրինակներ՝

Միլիտարիստները կորցրել է մի հարուստ նավթահանք, աղքատ պառավը՝ իր միակ այծը (ՆԶ, ՊՊՆ, 320)։ Մենք լեզու չունենք—ուժեղը՝ աստված (ՀԹ, 2, 39)։ Գայլն ամպ որ կուզե, գողը՝ մութ գիշեր (Հայկ. առած.)։ Տերավորին տերն ա տարել, անտերին՝ գելը (Հայկ. առած., 2)։

Միայն երբեմն, ստորոգյալը շեշտելու նպատակով, այն կրկնվում է նաև երկրորդ բաղադրիչի մեջ. օրինակ՝ Սևին սապոնն ինչ անի, խևին խրատն ինչ անի (Հայկ. առած., 74)։ (Այստեղ զուգադրված են ենթակաները և անուղղակի խնդիրները)։

Անշաղկապ բարդ նախադասության մեջ զուգադրվել կարող են նաև նախադասության մյուս անդամները՝ անուղղակի խնդիրները, գործողության հետ կապված տեղի պարագաները և այլն։ Երբ ընդհանուր ստորոգյալի առկայությամբ զուգադրվում են նախադասության մյուս անդամները, երկրորդ բաղադրիչում ստորոգյալը դարձյալ սովորաբար կրճատվում է։ Բերենք մի քանի օրինակ։

«Արև օրերին ստվերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ հողնեինք» (ԱԲ, 120)։—Այստեղ ընդհանուր ստորոգյալի առկայությամբ զուգադրված են բաղադրիչների ժամանակի պարագաները։ «Շահենն ուժեղ էր մաթեմատիկայից, Արամը՝ գրականությունից» (ՆԶ, ՊՊՆ, 108)։ Այստեղ զուգադրված են բաղադրիչների անուղղակի խնդիրները։ «Նա մինչև ժամը 6-ը աշխատում է, վեցից հետո տանն է լինում»—այստեղ ևս զուգադրված են ժամանակի պարագաները։ «Մաշկի սպիտակությամբ մորն էր քաշել, դիմագծերը, խաժ աչքերը հիշեցնում էին Վահրամին» (Ա. Սեկ., 567)։ Այստեղ զուգադրված են բաղադրիչները ամբողջությամբ վերցրած (և ոչ թե նրա առանձին անդամները)։

Հուդադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունները իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով համապատասխանում են իսկ զուգադրական շաղկապով միացած բարդ համադասական նախադասություններին։

ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն ասվել է, զուգադրության մի տեսակն է հանդիսանում հակադրությունը, երբ անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչներից երկրորդը, զուգադրվելով առաջինին, ունենում է նրան հակադիր բովանդակություն. այլ կերպ ասած՝ իր բովանդակությամբ հակադրվում է առաջին բաղադրիչի բովանդակությանը։ Հակադրական անշաղկապ նախադասությունները ունեն կառուցվածքային նույն առանձնահատկությունները, ինչ զուգադրական-համեմատական նախադասությունները։ Այստեղ ևս սովորաբար հակադրվում են գործողությունները և նրանց սուբյեկտները. ըստ որում այս դեպքում (ի տարբերություն նախորդի) ստորոգյալները ունենում են հակադիր բառական նշանակություն. օրինակ՝ Ես իջնում եմ ձորը, դու բարձրանում ես վեր (Գ. Սար., 57)։ Այստեղ զուգադրվել են երկու տարբեր սուբյեկտների իրար հակադիր գործողությունները. ըստ որում հակադրության նշանակությունը ուժեղացել է նաև տեղի պարագաների բառական հակադիր նշանակություններով (ձորը, վեր)։ Երբեմն հակադրության նշանակությունը կարող է ընդգծվել նաև բաղադրիչների այլ անդամների հակադիր բառական նշանակություններով. օրինակ՝ Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի (Հայկ. առած., 58)։ Հետաքրքիր տեսարան էր. Արմենը բարկանում էր, նա քթի տակ ծիծաղում էր։ Առաջին օրինակում հակադրված են գիտուն և անգետ դոյականները, երկրորդում՝ բարկանալ և ծիծաղել բայերը։ Երկրորդ բաղադրիչում զեղչված է օժանդակ բայը, որը, ինչպես ասվել է վերևում, զուգադրական անշաղկապ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից մեկն է։

Երբ իրար են հակադրվում երկու առարկաների (անձերի) տարբեր, իրար բոլորովին հակադիր հատկանիշները, անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչների ստորոգյալները լինում են կամ բաղադրյալ, կամ հարակատար ժամանակով արտահայտված. օրինակ՝ Շահենը քնավորությամբ խիզախ էր և միաժամանակ ճավասարակշռված, Արամն անզուսպ էր և հաճախ էր անտեղի բռնկվում

(ՆԶ, ՊՊՆ, 108)։ Տղաներից մեկը խելոք է, մյուսը՝ չար։ «Այն տարին նրա երեսին ժպիտ չէր երևում. այժմ կենսուրախ է, աննոգ» (ԱԲ, 179)։ Վերջին օրինակում ժամանակի պարագաների դուգադրության հողի վրա (այն տարին, այժմ) իրար են հակադրված նույն առարկայի (անձի) հետ կապված երևույթը (երեսին ժպիտ չէր երևում) և դրան հակադիր նշանակություն ունեցող հատկանիշը (կենսուրախ, աննոգ)։ Այժմ ես մեծացել եմ, դարձել չափահաս, դու մնացիր պատանի (Թոթ., 126)։— Այստեղ հակադրված են զուգադրված ենթակաների հատկանիշները, որոնք հանդես են եկել որպես ստորոգելիական վերադիրներ։

Երբ հակադրվում են միևնույն բառական նշանակությունն ունեցող ենթակաների լրացումները (որոշիչ, հատկացուցիչ և այլն), երկրորդ բաղադրիչում ենթական սովորաբար չի կրկնվում. այն զեղչվում է, և նրա փոխարեն դրվում է բուն. օրինակ՝ Իմ գիրքը նոր է, քոնը՝ հին։ Երբեմն, սակայն, ենթական կրկնվում է նաև երկրորդ բաղադրիչում։ Դա արվում է այն ժամանակ, երբ ենթական իր լրացման հետ վերցվում է իբրև մի ամբողջություն և տրամաբանական շեշտն էլ գտնվում է ենթակայի վրա, այսինքն՝ երբ անհրաժեշտ է համարվում շեշտել ենթական. օրինակ՝ Թրի կտրածը կըլավանա, լեզվի կտրածը չի լավանա (Հայկ. առած., 18)։

Երբ երկու բաղադրիչի համար ընդհանուր են լինում և՛ ենթակաները, և՛ ստորոգյալները, երկրորդ բաղադրիչում սովորաբար զեղչվում են երկուսն էլ. այս դեպքում կարող են հակադրվել և՛ ենթակայի լրացումները, և՛ ստորոգյալի լրացումները. օրինակ՝ Իմ տղան լավ է դրում, քոնը՝ վատ։ Իմ ձեռագիրը ընթեռնելի է, քոնը՝ ոչ։ «Նրանց բաժակը լցնում էին ամենքից առաջ, իմ բաժակը՝ ամենքից վերջը» (ՆԶ, ՊՊՆ, 235)։ Վերջին օրինակի մեջ ենթական զեղչված է նաև առաջին բաղադրիչում, այն հասկացվում է կոնտեքստից։

Նկարագրված նախադասությունները իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով համապատասխանում են իսկ շաղկապով, կապակցվող հակադրական բարդ համադասական նախադասություններին։

Հակադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասություններում կարող են հանդես գալ նաև հետևյալ իմաստային փոխհարաբերությունները.

ա) Ժողովրդական-խոսակցական լեզվում, հատկապես առածների, ասացվածքների մեջ, շատ են տարածված այն անշաղկապ նախադասությունները, որոնց առաջին մասում նկարագրվում է

որևէ գործողություն, երևույթ, իսկ երկրորդ մասում՝ այդ գործողությունից կամ երևույթից սպասվող հետևանքին բոլորովին հակառակ գործողություն։ Այս կառուցվածքի նախադասություններում երկրորդ բաղադրիչի բովանդակությունը տրամաբանորեն հակադրվում է ոչ թե անմիջապես առաջին բաղադրիչի բովանդակությանը, այլ նրանից սպասվող հետևանքին։ Այդ է պատճառը, որ այս նախադասությունները ունեն զիջականության որոշ երանգ։ Օրինակներ.

Արջը մենք խաղացրինք, շաբաշը դուխ առավ (Հայկ. առած., 14)։ Ալյուրը մենք մաղեցինք, փախլավան ուրիշը կերավ (Ն.տ., 3)։ Ես նախիրն եմ ղրկում, իմին ախոռն ա մտնում (Ն.տ., 87)։ Հողմ ու փոթորիկ շուրջս են հածում, ես ժայռի նման կանգնած եմ ամուր (Ավ. Իս., 1, 37)։

Բերված օրինակների առաջին բաղադրիչներում նկարագրված են այնպիսի գործողություններ, որոնցից սպասվում են երկրորդ բաղադրիչներում նկարագրված գործողություններին հակադիր գործողություններ։

Անշաղկապ բարդ նախադասության երկրորդ բաղադրիչ մասը կարող է լինել ժխտական և ցույց տալ առաջին մասի բովանդակությունից սպասվող գործողության չիրագործվելը։ Ի տարբերություն վերևում նկարագրված նախադասությունների, այստեղ առաջին նախադասությանը հակադրվում է ոչ թե բոլորովին այլ, չսպասվող գործողություն, այլ սոսկ ցույց է տրվում որպես հետևանք ենթադրվող, սպասվող գործողության չիրագործվելը։ Օրինակներ.

Բռնում եմ բադումը, որոնում եմ գարկերակը—չեմ գտնում (Ավ. Իս., 3, 129)։ Մի վարդապետ բեղով-մորուքով վանք է եկել՝ վանք չի մտել (Պ. Սևակ)։ Ասացին, որ ճաց կբերեն, չբերին (Ի. էր., ՓԱ, 2, 165)։ Խենթը մի քար գլորեց փոսը, հարյուր խելոքներ հավաքվեցան, չկարողացան դուրս հանել (Հայկ. առած.)։ Մոտ երկու շաբաթ էր անցել, Մելիք Բարսեղյանը չէր երևում (Շ, 257)։ Ասում եմ ճեկտարից սպասվում է միջև հարյուր ցենտներ, իրականում յոթանասունի էլ չի հասնում *(Ա. Սեկ., 579)։ Վերջին օրինակում ամբողջ նախադասության հակադրության նշանակության առկայությունը ավելի է ընդգծվում ասում եմ և իրականում անդամների հակադրությամբ։*

Այս խմբի մեջ պետք է մտցնել նաև այն անշաղկապ նախադասությունները, որոնց առաջին բաղադրիչի ստորոգյալը ցանկություն, մտադրություն, խնդիրք արտահայտող բայ է, իսկ երկրորդ բաղադրիչում տրված է այդ ցանկության, մտադրության խնդիրքի

և այլնի չկատարվելը, չիրագործվելը, (ըստ որում երբեմն նշվում է նաև չիրագործվելու պատճառը)։ Օրինակներ՝

Ո՞ւր այդպես, կինո՞։— Ուզում էինք, չհաջողվեց (Վերդ., ԻԳՆ, 348)։ Առաջարկեցին նրան դրվել գոնե ուսանողական դասձարանի անդամ—մերժեց (Շ, 2, 425)։ Հայերը աշխատեցին թեթել նրան իրանց կողմը—չեղավ, վրացիները փորձեցին—դարձյալ անհաջող (Ն.տ., 2, 425)։ Քանի անդամ բնակարան առաջարկեցին քաղաքում՝ մերժեց (ՄԱՊ, 595)։

բ) Հակադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունների երկրորդ բաղադրիչով կարող է սահմանափակում մտցվել առաջին բաղադրիչում ասվածի մեջ. օրինակ՝ շան հետ ընկերացիր, փետը ձեռիդ մի՛ գցիր (Հայկ. առած., 56)։ Մի ամբողջ թաղամաս ենք կառուցում բանվորների համար, անձրևը խանգարում է (Ե, 8/12—60 թ., էջ 3)։

Այս երկու տիպի հակադրական անշաղկապ բարդ նախադասությունները համապատասխանում են բայց կամ սակայն շաղկապներով միացած նույն իմաստային փոխհարաբերություններն արտահայտող բարդ համադասական նախադասություններին։

գ) Հակադրության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ նախադասությունների խմբի մեջ պետք է մտցնել նաև ժխտական-հակադրական նախադասությունները, որոնց առաջին բաղադրիչում ժխտվում է որևէ գործողություն, երևույթ, իրողություն, դեպք և այլն, իսկ երկրորդում հաստատվում է նրան հակադիր գործողություն, երևույթ և այլն։ Այս նախադասությունների առաջին բաղադրիչը միշտ ունենում է ժխտական կառուցվածք, երկրորդ բաղադրիչը՝ հաստատական։ Օրինակներ.

Ինձ մատնողը Շահենը չէր, ինձ մատնողը Թոլոն է եղել (ՆՋ, ՊՊՆ, 180)։ Նրանք ծնողներ չունեն, դու մայր ունես (Ն.տ., 198)։ Մենք ձեզ հետ միասին սոսկական ծառայողներ չենք, մենք գործ ունենք մարդկանց կյանքի հետ (Ա. Սեկ., 441)։ Իսկ դու եթե խելոք լինես, երկու ամիս չես սպասի այստեղ, կգնաս գյուղ ևեթ վաղը (Ն.տ., 11)։ Բավական չէ կանգնեցնել թշնամու տանկը՝ այն պետք է ոչնչացնել, իսկ անձնակազմը՝ ջնջել։ Նա այլևս մեզ հետ չէր, երազանքի մեջ էր՝ Տովինարի հետ (Ավ. Խ., 3, 76)։ Հողաշենում ձյուն հո չի գալիս՝ բուք է գալիս (ՄԱՊ, 104)։ Վերջին օրինակում առկա է երկու բաղադրիչների համար ընդհանուր հողաշենում տեղի պարագան, որի միջոցով ընդգծվում է հակադրվող երևույթների համատեղ կատարվելը, և ուժեղացվում է երկու բաղադրիչների կապը։

Այս նախադասությունները համապատասխանում են այլ շաղկապով միացած բարդ համադասական նախադասություններին։

Երբ հակադրական անշաղկապ բարդ նախադասություններում իրար են հակադրվում երկու անձեր կամ մի խումբ և մեկը, ինչպես նաև նրանց հետ կապված գործողությունները, որպես բառաքերականական միջոցներ հաճախ զուգահեռաբար հանդես են գալիս՝

1) մեկը–մյուսը, մի ֆանիսը–մյուսը, բոլորը... ոչ ոք և այլ զուգադիր դերանունները (նաև հոլովված ձևերով), որոնք սկսել են մոտենալ կապակցական դեր կատարող բառերին։ Օրինակներ.

... Ու շուրջ բոլորած վիճակ են հանում. ելնում է մեկին իր երազն ու սեր, մյուսի մուրազը սրտումն է մնում (ՀՔ, 2, 55)։ Դրանցից մի ֆանիսին միայն ներս ընդունեցին, մյուսներն առջև փակվեցին լայն դարպասները (Ա. Սեկ., 412)։ Մեկի գրպանում դրամն է գտնվում, մյուսի գլխում ծրագրերը, մեկը շահագրգռված է այդ գործում, մյուսի շահերին դա հարվածում է (Ա. Սահ., 324)։ Ոմանք ցանկանում էին անհապաղ քոչել, մյուսներն դեմ էին դրան (Սեհ, 1, 147)։ Ամենքը քննեցին, ես մնացի զարհուռն (ՀՔ, 3, 77)։ Մեկը ճկուն է և թեթևաոտն է և եղեգնամեջք, մյուսը խոնարհ՝ ինչպես ուռենին Այն գետեզերքի (ՍԳ, 1960, № 9, էջ 66)։

2) Անորոշ կամ ժխտական դերանունները մի կողմից, մյուս կողմից հոգնակիության նշանակություն ունեցող որևէ գոյական. բոլորը, ամենքը դերանունները կամ հոգնակի թիվ ունեցող գոյական և որևէ անձ ցույց տվող գոյական՝ եզակի թվով և այլն. օրինակ՝ Ամբողջ գյուղն այնտեղ էր, ոչ ոք չկարողացավ մոտենալ..., բոլորը ծիծաղում էին, Սոնան լաց էր լինում։ Երեխաները քնած էին, մայրը դեռ արթուն էր։

Շատ հազվադեպ հանդիպում են նաև տրոհական հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասություններ։ Այս դեպքում ևս անշաղկապ նախադասությունը որպես կանոն լինում է երկանդամ, այսինքն՝ բաղկացած է լինում երկու պարզ նախադասություններից։ Այն, ինչ որ հաղորդվում է առաջին նախադասության մեջ, բացառում է երկրորդում հաղորդվածի հնարավորությունը, այսինքն՝ տրոհական հարաբերություններ արտահայտող անշաղկապ նախադասություններում նկարագրվում են իրար բացառող երևույթներ, գործողություններ։ Անշաղկապ բարդ նախադասություններում հանդիպում ենք տրոհական կապակցության միայն մեկ ձևի՝ ամբողջ նախադասությունը լինում է հարցական. ըստ որում առաջին նախադասության դրական հարց կրող ստո-

րոգյալը երկրորդ նախադասության մեջ կրկնվում է ժխտական ձևով։ Բերենք մի քանի օրինակ՝

Ամենքն էլ միայն պատերազմի մասին են խոսում—կլինի՞, չի՞ լինի (Ի. էր., ՓԱ, 1, 9)։ Կտեսնի՞, չի՞ տեսնի, կհավանի՞, չի՞ հավանի և այլն։ Սրանք համապատասխանում են թե տրոհական շաղկապով կապակցված նախադասություններին։

ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն ասվել է, անշաղկապ բարդ նախադասությունների մի մասը, իր արտահայտած իմաստային փոխհարաբերությունների բնույթով համընկնում է շաղկապավոր բարդ ստորադասական նախադասություններին։ Սրանք այն անշաղկապ նախադասություններն են, որոնց բաղկացուցիչ մասերը ամբողջ բարդ նախադասության արտահայտած իմաստի համար հավասարազոր չեն, այլ մի մասը իր գովանդակությամբ կախված է մյուսից, ստորադասվում է վերջինիս և լրացնում է նրա միտքը։ Իհարկե, այստեղ էլ հարցին պետք է մոտենալ նույն վերապահությամբ, ինչ որ արել էինք բարդ համադասական նախադասությունների ժամանակ։ Այն է՝ անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները ևս, շաղկապավորների համեմատությամբ, պակաս պարզ ու հստակ են արտահայտում հատկացությունների, երևույթների, գործողությունների հարաբերակցությունը, ավելի պակաս որոշակիությամբ են տալիս մտքի տարբեր երանգները։ Իհարկե, միաժամանակ նրանք դիպուկություն, արտահայտչականություն են տալիս խոսքին, օժանդակում են մտքերը ավելի սեղմ ու ամփոփ արտահայտելուն։

Անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները շատ մեծ տարածում ունեն բանավոր խոսքում, որտեղ բարդ նախադասության մասերի իմաստային հարաբերությունների ճիշտ դրսևորմանը շատ է օգնում ինտոնացիան։ Ճիշտ է, գրավոր խոսքում ինտոնացիան արտահայտվում է կետադրության միջոցով, սակայն վերջինս չի տալիս ինտոնացիայի բոլոր նրբերանգները։ Գրավոր խոսքում ոճական նկատառումներով անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները համեմատաբար շատ են օգտագործվում գեղարվեստական գրականության մեջ, հատկապես երկախոսություններում, ինչպես նաև չափածո խոսքում։ Գիտական գրականության, ինչպես նաև հրապարակախոսության լեզվում, որտեղ անհրաժեշտ

է հանդես բերել մտքի առավել հստակություն, երևույթների, գործողությունների հարաբերակցությունների և փոխհարաբերությունների ավելի ճշգրիտ հաղորդում, անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունների գործածությանը շատ քիչ ենք հանդիպում. այնտեղ սովորաբար կիրառվում է նախադասությունների շաղկապավոր կապակցությունը։

Անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները ունեն կառուցվածքային հետևյալ ընդհանուր առանձնահատկությունները.

ա) Սրանք միշտ լինում են երկանդամ, այսինքն բաղկացած են լինում երկու մասից՝ գլխավոր և երկրորդական նախադասություններից, որոնցից երկրորդը լրացնում է առաջինի միտքը, ստորադասվում է նրան։ Այստեղ ևս չի բացառված, որ այդ մասերից մեկը հատկապես երկրորդական նախադասությունը, կամ երկուսն էլ լինեն բարդ (ըստ որում երբեմն նաև շաղկապավոր), սակայն բարդ ստորադասական նախադասության կազմում նրանք հանդես են գալիս իբրև մեկ միավոր՝ հարաբերակցության մեջ մտնելով մյուս մասի հետ. օրինակ՝ Իմացա. դու եկել ես այն ժամանակ, երբ ես տանը չեմ եղել։ Այստեղ երկրորդ բաղադրիչը՝ երկրորդական նախադասությունը իր հերթին բարդ ստորադասական նախադասություն է (Դու եկել ես այն ժամանակ, երբ ես տանը չեմ եղել), որը սակայն այստեղ հանդես է եկել որպես մեկ միավոր՝ ստորադասվելով անշաղկապ բարդ նախադասության առաջին բաղադրիչին և կատարելով նրա ուղիղ խնդրի պաշտոնը։

բ) Անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները ունենում են բացատրական կամ նախազգուշական ինտոնացիա, որով արտահայտվում է նրանց բաղկացուցիչ մասերի միջև առկա ստորադասական հարաբերությունը։

գ) Անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններում կառուցվածքային մեծ նշանակություն ունի բաղկացուցիչ մասերի շարադասությունը, որի միջոցով է շատ հաճախ որոշվում նախադասության արտահայտած իմաստային փոխհարաբերությունների բնույթը։ Այդ է պատճառը, որ երբ փոխում ենք բաղկացուցիչ մասերի շարադասությունը, կամ փոխվում են նաև նրանց միջև եղած իմաստային փոխհարաբերությունները և կամ կառուցվածքը դառնում է անկապ, նույնիսկ որոշ չափով անիմաստ։ Առաջինը՝ իմաստային փոխհարաբերությունների փոխվելը, վերաբերում է հատկապես պայմանային և պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասություններին։ Բերենք մեկ օրինակ՝ Այստեղ ցուրտ է, կմրսեմ *(Ի. էր., ՓԱ, 2, 13)*։

Այս նախադասության մեջ առկա է պատճառահետևանքային փոխհարաբերություն. ըստ որում առաջին մասում, որը հանդիսանում է գլխավոր նախադասությունը, նկարագրվում է մի երևույթ (պատճառ հանդիսացող), իսկ երկրորդ մասում նկարագրվում է նրանից որպես հետևանք սպասվող երևույթը, այսինքն՝ վերջինս հետևանքի երկրորդական նախադասությունն է: Երբ փոխում ենք այս բարդ նախադասության շարադասությունը (Կմրսենմ, այստեղ ցուրտ է), փոխվում է նաև մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունը. իհարկե, այն մնում է դարձյալ պատճառահետևանքային, սակայն այստեղ այլ է մասերի հարաբերակցությունը: Եթե առաջին դեպքում հետևանքը նկարագրվում էր գլխավոր նախադասության իմաստը ավելի լրիվ դարձնելու՝ պարզաբանելու համար, ապա այս դեպքում արդեն ամբողջ անշուշտակ բարդ նախադասության հիմնական նպատակը դառնում է հենց այդ հետևանքի մասին հաղորդելը, իսկ նրան հաջորդող և նրա պատճառը ցույց տվող նախադասությունը (որը առաջին դեպքում գլխավոր նախադասությունն էր) վեր է ածվում երկրորդական նախադասության և վատարում է առաջինի միտքը ավելի լրիվ, կատարյալ դարձնելու պաշտոն:

Մյուս դեպքերում անշուշտակ բարդ ստորադասական նախադասությունների շարադասությունը ուղղակի հնարավոր չէ փոխել, որովհետև դրանով երկու մասերի միջև եղած կապակցությունը բոլորովին կկորչի, և այն կդադարի մեկ ամբողջական, ավարտված միտք լինելուց. օրինակ՝ Հավանական է, ես այսօր չեմ կարողանա գալ: Սա անշուշտակ բարդ նախադասություն է, որի մեջ երկրորդ պարզ նախադասությունը առաջինի նկատմամբ կատարում է ենթակայի պաշտոն: Եթե փոխենք այս բարդ նախադասության մասերի շարադասությունը, ապա կկորչի երկու մասերի կապակցությունը, կմթագնվի նրանց հարաբերակցությունը, և այն կդադարի մեկ ամբողջական միտք արտահայտելուց՝ ես այսօր չեմ կարողանա գալ, հավանական է: Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն «ես այսօր չեմ կարողանա գալ» պարզ նախադասությունը «Հավանական է» նախադասության համար չի կատարում ենթակայի պաշտոն, այլ հանդես է գալիս որպես անկախ նախադասություն:

Ի տարբերություն շուշտակավոր բարդ ստորադասական նախադասությունների, որոնց մեջ երկրորդական նախադասությունը կարող է լինել ինչպես առաջադաս ու վերջադաս, այնպես էլ միջադաս, անշուշտակ բարդ ստորադասական նախադասություններում երկրորդական նախադասությունը լինում է կամ առաջադաս, կամ վերջադաս: Միջադաս այն հանդես չի գալիս. մի բան, որը պայմա-

նավորված է շաղկապի կամ հարաբերական բառի բացակայությամբ։

Սրանք են կառուցվածքային այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են բոլոր անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններին։ Բացի սրանցից, յուրաքանչյուր տիպի անշաղկապ բարդ ստորադասական նախադասություն ունի իր կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, որոնց մասին կխոսվի առանձին-առանձին։

Ըստ իրենց բաղկացուցիչ մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունների, անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի։

1. Նախադասություններ, որոնց մեջ բաղկացուցիչ մասերից մեկը մյուսի նկատմամբ կատարում է բացատրական դեր, այսինքն՝ բացատրում, բացահայտում է նրա որևէ անդամի բովանդակությունը կամ ինքը կատարում է որևէ անդամի պաշտոն։ Այս խմբի մեջ են մտնում ենթակա, որոշիչ և խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները։

2. Պարագայական հարաբերություններ արտահայտող նախադասություններ, որոնց բաղկացուցիչ մասերից մեկը մյուսի նկատմամբ կատարում է որևէ պարագայի պաշտոն. սրանք են՝ պայմանի, պատճառի և հիմունքի, հետևանքի, նպատակի, ղիջական երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները։

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն ասվեց, անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունների մի մասը ունի բացատրական բնույթ։ Սրանք այն նախադասություններն են, որոնք բացահայտում կամ լրացնում են գլխավոր նախադասության որևէ անդամը և կատարում են այդ նախադասության որևէ անդամի պաշտոնը։ Դրանք են՝ ենթակա, որոշիչ, ուղիղ խնդիր, անուղղակի խնդիր երկրորդական նախադասություններ պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները, որոնցից յուրաքանչյուրը ունի իր իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները։ Այս խմբի մեջ պետք է մտցնել նաև այն անշաղկապ նախադասությունները, որոնց մեջ երկրորդ բաղադրիչը ոչ թե լրացնում է առաջինի որևէ անդամը, այլ վերաբերում է ամբողջ նախադասությանը, բացատրում, պարզաբանում է նրա բովանդակությունը՝ նրա վերաբերյալ որևէ լրա-

ցուցիչ հաղորդում կատարելով։ Բացատրական անշաղկապ նախադասությունները ունեն այն ընդհանուր կառուցվածքային առանձնահատկությունը, որ եթե գլխավոր, բացատրվող մասը ունենում է սահմանափակ կառուցվածք (սովորաբար լինում է պարզ համառոտ նախադասություն), ապա ստորադաս՝ բացատրող մասը ունենում է ազատ կառուցվածք. կարող է լինել և պարզ ընդարձակ, և բարդ՝ տարբեր փոխհարաբերություններով, իսկ երբեմն էլ բացատրությունը կարող է չսահմանափակվել բարդ նախադասության սահմաններում, այլ շարունակվել կոնտեքստի շարունակության հաջորդ նախադասությունների մեջ։

ՆԵՐԱԿԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հայտնի է, ենթակա երկրորդական նախադասությունները կատարում են գլխավորի ենթակայի պաշտոնը, այսինքն նկարագրում, բացահայտում են նրա գործողության սուբյեկտը։

Այս նախադասությունները կապակցվում, միանում են գլխավոր նախադասությանը երկու եղանակով՝ հատուկ կապակցական բառերի (շաղկապներ, հարաբերական բառեր) միջոցով և առանց կապակցական բառի։ Այս երկու եղանակով միացած նախադասությունների տարբերությունն այն է, որ շաղկապավոր նախադասությունները արտահայտում են ավելի բազմազան իմաստային նրբերանգներ, քան անշաղկապները. մի բան, որ պայմանավորված է շաղկապների և հարաբերական բառերի առկայությամբ։

Այսպես՝ եթե շաղկապավոր ենթակա նախադասությունը կարող է բացահայտել նաև գլխավոր նախադասության անձ ցույց տվող ենթական, ապա անշաղկապ կապակցության ժամանակ ենթակա երկրորդական նախադասությամբ նկարագրվում է միայն որևէ երևույթ, դեպք, իրողություն, որը հանդես է գալիս որպես գլխավոր նախադասության գործողության սուբյեկտ։

Անշաղկապ կապակցության ժամանակ մեկ միասնական ամբողջություն կազմելուն շատ են օժանդակում միացվող մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերությունները։ Առաջին նախադասությունը, որը մեծ մասամբ գլխավորն է լինում, չի ունենում ենթակա, մի բան, որը հենց ենթադրում է մի այնպիսի նախադասության գոյություն, որը լրացնի առաջինի միտքը, այն դարձնի ամբողջական և արտահայտի մեկ ավարտված միտք (բարդ միտք). տվյալ դեպքում այդպիսին է հանդիսանում ենթակա երկրորդական նախադասությունը. օրինակ՝ Նվ բավական է, անարդ լծի տակ մենք

ստրուկ մնանք՝ ձեռներս շղթա (Ավ. Իս., 1, 142)։ Այստեղ առաջին նախադասության ոչ լրիվ լինելը հենց ենթադրում է երկրորդական նախադասության գոյությունը և դրանով օժանդակում նախադասությունների՝ մեկ ամբողջության մեջ միավորվելուն։

Ենթակա երկրորդական նախադասության առկայության դեպքում անշաղկապ բարդ նախադասության ինտոնացիան նախազգուշացնող բնույթ ունի, այսինքն՝ գլխավոր նախադասության վերջում ձայնը թեթև բարձրանում է (դրանով ցույց է տրվում նախադասության ավարտված չլինելը), որին հաջորդում է կարճ դադար, ապա արտասանվում է երկրորդ նախադասությունը։ Գրավոր խոսքում առաջին նախադասությունից հետո դրվում է ստորակետ կամ բութ։ Միայն երբեմն, երբ երկրորդական նախադասությունը լինում է առաջադաս, իսկ գլխավոր նախադասությունը սկսվում է ցուցական դերանվամբ (հարաբերյալով), նրանք կարող են բաժանվել նաև անջատման գծով, ստորակետ—գծով կամ միջակետով։ Օրինակներ.

Նվ թվում էր, ուշադիր զննում է նրան, ուսումնասիրում նրա յուրաքանչյուր շարժումը (ՍԶՊԲ, 18)։ Պատահում էր՝ խանումս մի ժամ առևտուր էր անում (ԴՍԲ, 15)։ Նա լավ տղա էր և մեզ դուր էր գալիս. դա էր գլխավորը (ՄԱՊ, 66). Պետք էր մի հույսով քաղցրացնել միամիտ տանտիկնոջ սիրտը,— այդ էր հարկավոր էֆենդուն (Ր, 3, 227)։

Երբեմն գլխավոր և ենթակա երկրորդական նախադասության իմաստային կապը այնքան է ուժեղանում, որ ամբողջ նախադասության բարդ լինելու գաղափարը սկսում է մթագնվել և այն դիտվում է իբրև պարզ նախադասություն։ Բանավոր խոսքում այդ արտահայտվում է նրանով, որ դադարը երկու մասերի միջև փոքրանում, համարյա վերանում է, իսկ գրավոր՝ նրանք չեն բաժանվում կետադրության նշաններով։ Օրինակներ.

Արդեն մի ամիս էր այնտեղ էի (Շ, 2, 409)։ Ռոլանդը ընդամենը երեք տարի է աշխատում է մեզ մոտ (Ա, 25—10—1960 թ., էջ 3)։ Թվում էր բոլոր մարդիկ նայում են նրան (Խեչ., ՄՄՀ, 167)։ Այս երևույթը ավելի շատ տարածված է ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասություններում։

Ենթակա երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից է նաև բաղկացուցիչ մասերի շարադասությունը։ Սովորաբար ենթակա երկրորդական նախադասությունը լինում է վերջադաս։ Օրինակներ.

Ավելի լավ է՝ եկ գնանք որևէ փոքրիկ ճաշարան (ՄԱՊ, 634)։ Հետաքրքիր է, ինչ են անում հիմա Կարինեն, Տիմոֆեևը (Վերդ., ԻԳե, 305)։ Միայն որոշ դեպքերում, ոճական նկատառումներով, երբ անհրաժեշտ է լինում շեշտել երկրորդական նախադասության բովանդակությունը, այն դրվում է առաջադաս։ Այդպիսի դեպքերում գլխավոր նախադասությունը ունենում է որևէ ձևական ենթակա՝ արտահայտված մեծ մասամբ ցուցական դերանվամբ, որ ամփոփում է առաջին նախադասության բովանդակությունը և օժանդակում նրա կապակցությանը գլխավոր նախադասության հետ։

Ենթակա երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները, ըստ գլխավոր նախադասության շարահյուսական կառուցվածքի, կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) նախադասություններ, որտեղ գլխավորի մեջ ենթական բոլորովին բացակայում է, և երկրորդական նախադասությունը անմիջապես կատարում է ենթակայի պաշտոն և 2) նախադասություններ, որտեղ գլխավորի մեջ առկա է դերանվամբ արտահայտված ենթակա, և երկրորդական նախադասությունը բացահայտում է նրա բովանդակությունը։ Օրինակներ.

Հետաքրքիր է, ճանաչե՞լ է իրեն, ի՞նչ է մտածում (Վերդ., ԻԳե, 44)։ Պարզ էր՝ նա այլևս երկար քայլել չէր կարող (ԳՍՔ, 2, 344)։ Մի բան հաստատ էր երկուսի համար էլ. հիմնովին կորած էր նրանց փոխադարձ հավատն ու վստահությունը (Ա. Սեկ., 510)։

Բերված օրինակներից երկուսում գլխավոր նախադասությունը ենթակա չունի. երկրորդական նախադասությունը կատարում է այդ ենթակայի պաշտոնը։ Վերջին նախադասության մեջ գլխավորում առկա է մի բան ենթական, որը հենց ենթադրել է տալիս մի այնպիսի նախադասություն, որ բացահայտի իր բովանդակությունը, այսինքն՝ կոնկրետ նյութական բովանդակություն տա իրեն (հենց դրանով էլ պայմանավորվում է ենթակա երկրորդական նախադասության բացատրական բնույթը)։ Որպես այդպիսին հանդես է գալիս երկրորդական նախադասությունը, որը և փաստորեն կատարում է գլխավոր նախադասության ենթակայի պաշտոն։

Անշաղկապ ենթակա երկրորդական նախադասություններ հանդիպում են հետևյալ դեպքերում.

ա) Երբ գլխավոր նախադասության ստորոգյալը բաղադրյալ է՝ կազմված ենթադրություն, կարծիք, եզրակացություն արտահայտող բառից և էական բայից։ Երկրորդական նախադասությունը բացահայտում, ցույց է տալիս, թե ինչին է վերաբերում այդ ենթադրությունը, կարծիքը։ Օրինակներ.

Հավանական է՝ Դու գնացքով կամ ավտոմեքենայով անցել ես Փամբակի գեղատեսիլ կիրճով, մի պահ կանգ առել Սպիտակավանում (Ա, 7/11—60 թ., էջ 3)։ Հետաքրքիր է, ինչ է մտածում նա (Վերդ., ԻԳՆ, 138)։ Բայց լավ է, նոպան անվտանգ անցավ, այլևս ոչինչ չի պատահի նրան (Ա. Սեկ., 22)։ Պարզ էր. նա չէր կամենում օրիորդների ներկայությամբ խոսել (Շ, 2, 342)։ Հասկանալի է, նա բոլորից շատ հոգնեց ճանապարհին (Գ. Ռշ. Մ, 67)։ Այդպես շատ է լինում, երբ մարդ խիստ հոգնում է, քունը մոտ չի գալիս (Վերդ., ԻԳՆ, 342)։ Այդպես է. միշտ էլ, երբ համն են հանում, ուղիղ հակառակ բան են ստանում (Պ. Սևակ, 91)։ Վերջին օրինակներում գլխավոր նախադասությամբ տրվում է եղրակացություն, հետևություն (պարզ է, հասկանալի է, այդպես է), երկրորդական նախադասությամբ բացահայտվում է, թե ինչ երևույթի, գործողության է վերաբերում այդ եղրակացությունը, հետևությունը։

Ինչպես երևում է բերված օրինակներից, երկրորդական նախադասությունը այս անշաղկապ բարդ նախադասություններում ունենում է ազատ կառուցվածք (կարող է լինել ընդարձակ, նույնիսկ բարդ), իսկ գլխավոր նախադասությունը սովորաբար բաղկացած է լինում միայն ստորոգյալից, որը ցույց է տալիս ենթադրություն, կարծիք, եղրակացություն։ Հենց այդ հանգամանքն է պատճառը, որ այս տիպի նախադասություններում գլխավոր նախադասությունը հաճախ կորցնում է իր՝ նախադասության իմաստը և վեր է ածվում եղանակավորող բառակապակցության, որով ցույց է տրվում խոսողի վերաբերմունքը մյուս նախադասությամբ հաղորդվածի նկատմամբ։ Դա վերաբերում է հատկապես ճիշտ է, միևնույն է բառակապակցություններին, որոնց նախադասություն լինելու իմաստը գրեթե լրիվ մթագնվել է, և դրանք արդեն վեր են ածվել եղանակավորող բառակապակցությունների. այսպես՝ Միևնույն է, էլ այսուհետև նրա գոռալը օգուտ չի տա (Շ, 1, 15)։ Ներեցեք, ճիշտ է, թենն էլ է գալիս (Շեքս., 1, 233)։ Այս բառակապակցությունները այժմ սկսել են գործածվել նախադասություններին զիջական երանգ տալու համար՝ հատկապես զիջական բարդ ստորադասական նախադասություններում։ Այսպես՝ ճիշտ է այսօր ցուրտ է, բայց ես վերարկու չեմ հագել կամ՝ Ինչքան էլ կարդաս, միևնույն է, բան չես հասկանա։ Բերված օրինակներում ճիշտ է և միևնույն է բառակապակցություններն արդեն չեն գիտակցվում որպես բաղադրյալ ստորոգյալներ և վեր են ածվել զիջական երանգ ունեցող եղանակավորող բառակապակցությունների։

Բերենք միայն բաղադրյալ ստորոգյալից բաղկացած գլխավոր

նախադասության՝ եղանակավորող բառակապակցության վերածվելու այլ օրինակներ.

Կարող է անձրևները շուտ գան (ՍՀ, 25/11—60 թ., էջ 2)։ Այստեղ կարող է-ն արդեն վեր է ածվել ենթադրություն ցույց տվող եղանակավորող բառակապակցության։ Նշանակում է՝ վաղվանից սկսե՞նք բերքի բաշխումը (Ա. Սեկ., 411)։ Այստեղ նշանակում է բայական ձևը վեր է ածվել հետևություն ցույց տվող բառակապակցության (համարժեք է ուրեմն-ին)։

բ) Բաղադրյալ ստորոգյալը կարող է ցույց տալ նաև դրություն, վիճակ։ Այս դեպքում երկրորդական նախադասությունը բացահայտում է այդ դրության, վիճակի բովանդակությունը. օրինակ՝ Կարգ էր՝ յուրաքանչյուր մրցությունից հետո բազմության ներկայությամբ պետք է բարձրաձայն հայտարարվեին հաղթողների և պարտվողների անունները (Դխ, 101)։

գ) Գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է արտահայտված լինել դրություն, վիճակ ցույց տվող չեզոք բայի եզակի երրորդ դեմքով, ինչպես նաև կրավորակերպ չեզոք բայով։ Օրինակներ.

Թվում էր՝ թռիչք ու թևեր ունենք, հնոցներ կային մեր կրծքում ասես (Ե. Չար., 6)։ Այո, որոշված է, ես կերթամ։ Ինձ ոչ ոք չի խանգարիլ (Մուր., 3, 256)։ Որոշված է, այսօր նա կգտնի Ռուբենին, կբարեկամանա, կառաջարկի յուր օգնությունը (Շ, 2, 254)։ Ստացվում է, չեք ուզում իսկապես օգնած լինել ձեր ռեսպուբլիկային (Խեչ., ՄՄՀ, 477)։ Պատահում էր, մայրն ու եղբոր կինը շվաքում երկար էին նստում (Ա. Սահ., 38)։ Զարմանալի է, ինչքան երևում էի նրանց շեմքին, մորաքույրս ինչ-որ բաներ էր քրթմնջում, անհծք թափում (Ա, 11/12—60 թ., էջ 3)։

Այս տարատեսակի կառուցվածքային առանձնահատկություններից է նաև այն, որ գլխավոր նախադասության ստորոգյալը սովորաբար դրվում է սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակներով (ներկա, անցյալ անկատար, հարակատար, վաղակատար). դա բացատրվում է նրանով, որ դրություն, վիճակ են ցույց տալիս երկարատև գործողություն նշանակող ժամանակները։ Անցյալ կատարյալ ժամանակի գործածությանը հանդիպում ենք շատ հազվադեպ. օրինակ՝ թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում, թվաց՝ երկինքը շողեր է շաղում (Պ. Սևակ, 21)։

Ա ն ո թ ու թ յ ու ն. — Թվում է ձևը ևս սկսել է կորցնել իր բայական նշանակությունը և վերածվել ենթադրություն ցույց տվող եղանակավորող բառակապակցության. գրավոր դա արտահայտվում

է նրանով, որ այն հաճախ մյուս նախադասությունից ստորակետով չի բաժանվում. վերանում է նաև դադարը երկու նախադասությունների միջև։ Օրինակ. Թվում է հասկանալի է այժմ, թե ինչու էին անտարբեր նրա ճակատագրի ու նրա հեռադրի նկատմամբ (Ա, 1/12—60 թ., էջ 3)։ Այստեղ թվում է բայական ձևը արդեն վեր է ածվել եղանակավորող բառի և համարժեք է կարծես-ին։

դ) Անշաղկապ ենթակա երկրորդական նախադասություն կարող է դրվել նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում շեշտել նախադասության որևէ անդամը (հավելադրությամբ ստեղծված անշաղկապ բարդ նախադասություններ)։ Այս կառուցվածքի բարդ նախադասությունները, ինչպես ասվել է «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում»[1] գրքում, ստեղծվել են զուտ ոճական նկատառումներով՝ պարզ նախադասության որևէ անդամը շեշտելու նպատակով։ Պետք է նշել, որ շաղկապի (որ կամ իճ) առկայության դեպքում ընդգծվում է նախադասության բարդ լինելը. սակայն հաճախ այսպիսի կառուցվածքները հանդիպում են առանց շաղկապի. շեշտվող անդամի մոտ դրվում է բայը, ապա ստորակետ կամ բութ, այնուհետև՝ նախադասության մյուս անդամները. օրինակներ՝

Մի ամսից ավելի է, հայրը անկողին է ընկել։ Քանի օր է, չի տեսել նրան (Վերդ., Ի-Ե, 387)։ Վաղուց է՝ չեմ լսել այդ երգը (Ավ. Իս., 3, 124)։ Պետք է ասել, որ մի շաբաթ էր արդեն, նա ուշադիր էր դեպի օրիորդը (Շ, 2, 463)։ Մի շաբաթ էր, ես նրանց չէի տեսել (Շ, 2, 490)։ Երկու ամիս է՝ բոլորովին չի երևացել (Վերդ., Ի-Ե, 384)։

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այս կառուցվածքի անշաղկապ բարդ նախադասություններ գործածվում են միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում շեշտել պարզ նախադասության ժամանակի պարագան։ Նախադասության այլ անդամներ շեշտելու նպատակով կիրառվում է այս կառուցվածքի շաղկապավոր ձևը (օժանդակ բայից հետո դրվում է որ շաղկապը)։

Երբեմն էական բայը կատարում է միայն շեշտելու դեր, նրան չի հաջորդում դադար (գրավոր խոսքում ստորակետ կամ բութ չի դրվում). դրա հետևանքով ամբողջ նախադասությունը դիտվում է իբրև պարզ նախադասություն. օրինակ՝ երկու շաբաթ է տուն չեմ գնացել (Մ. Դավթ., 53)։ Այստեղ էական բայի միջոցով շեշտվել է պարզ նախադասության ժամանակի պարագան, սակայն այն չի

[1] Ն. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961, էջ 27 և 33։

գիտակցվում իբրև բաղադրյալ ստորոգյալի ստորոգելիական հանգույց, հետևաբար պարզ նախադասությունը չի վերածվել բարդի։

ե) Անշաղկապ ենթակա երկրորդական նախադասություն դրվում է նաև հարցական գլխավոր նախադասությունների մոտ, որոնք կազմված են լինում որևէ հարցական դերանունից և էական բայի անցյալ ժամանակից, ըստ օրում մեծ մասամբ հանդես են գալիս ո՞վ, ի՞նչ, ե՞րբ հարցական դերանունները. օրինակներ՝ էն ե՞րբ էր՝ Անուշն իր կուժը առավ, Աղբյուրը գնաց ու ետ չդառավ (ՀՔ, 2, 51)։ Ո՞վ էր՝ գանչից, թե Առաքելը պիտի տանուտեր լինի (ԱՒ, 79)։ Այստեղ ևս երկրորդական նախադասությունը, որը դրվում է գլխավորից հետո, ունենում է ազատ կառուցվածք և ցույց է տալիս, թե ինչին է վերաբերում գլխավոր նախադասության հարցը։ Գլխավոր նախադասությունը, ընդհակառակը, բաղկացած է լինում միայն հարց պարունակող բաղադրյալ ստորոգյալից։ Միայն երբեմն գլխավոր նախադասության սկզբում կարող է հանդես գալ այն (էն) ցուցական դերանունը, որը այստեղ սկսել է կորցնել ձևական ենթակայի պաշտոնը և ավելի կապակցական դեր է կատարում՝ մատնանշելով, որ գլխավոր նախադասությունը ավարտված չէ, և նրան հաջորդելու է հաղորդում հարց հարուցող երևույթի կամ գործողության մասին (տես վերևի երկրորդ օրինակը)։

զ) Երբ երկրորդական նախադասությունը ունենում է հարցական կառուցվածք, որով կասկածի տակ է առնվում որևէ երևույթի, իրողության իրագործումը, իսկ գլխավոր նախադասությամբ արվում է եղրակացություն այդ իրողության ոչ հավաստի լինելու վերաբերյալ, երկրորդական՝ հարց պարունակող նախադասությունը սովորաբար լինում է առաջադաս. օրինակ՝

Կընդունե՞ր արդյոք յուր առաջարկությունը, թե ոչ, ճայտնի չէր (Մուր., 1, 244)։ Գարնան գիշե՞րն էր առիթը, ուղիղի երգն է՞ր դաշտերի մասին, թե՞ ծաղկամանն էր,— դժվար է ասել (ԱՒ, 173)։ Ո՞վ ասաց, ճայտնի չէ (Ա. Սեկ., 419)։ Ինչո՞ւ փակվեց կաֆեն, անհասկանալի մնաց շատերին (Ե, 26/11—60 թ.)։

Երբեմն այս տիպի նախադասությունները ունենում են նաև հակառակ շարադասություն, այսինքն՝ վերջադաս լինում է երկրորդական նախադասությունը. օրինակ՝ Լևոնը մոտեցավ գրքերի դարակին, մեջքը դարձրեց դեպի պառավը։ Չէր երևում՝ գրքերի՞ն է նայում, թե՞ ծաղկամանին (ԱՒ, 72)։ Սակայն այս դեպքում սովորաբար օգտագործվում է նախադասության շաղկապավոր ձևը, իսկ հարցումը լինում է անուղղակի։ Ինչպես երևում է բերված օրինակներից, այս տարատեսակի կառուցվածքային առանձնահատկությունն այն

է, որ գլխավոր նախադասությունը բաղկացած է լինում որևէ երևույթի հավաստի կամ ստույգ լինելը ցույց տվող բաղադրյալ ստորոգյալից (ճայտնի չէ, դժվար է ասել), իսկ երկրորդական նախադասությամբ նկարագրվում է այդ երևույթը, գործողությունը. ըստ որում այն (երկրորդական նախադասությունը) ունենում է հարցական կառուցվածք («կընդունե՞ր արդյոք յուր առաջարկությունը»): Եվ հաճախ ինքը իր հերթին լինում է բարդ կամ միավորյալ («Գարնան գիշե՞րն էր առիթը, ռադիոյի ե՞րգն էր դաշտերի մասին, թե՞ ծաղկմանն էր», «գլքերի՞ն է նայում, թե՞ ծաղկամանին»):

Ինչպես ասվեց վերևում, անշաղկապ ենթակա երկրորդական նախադասությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառ պարունակող, երբ երկրորդական նախադասությունը նյութական բովանդակություն է տալիս այդ հարաբերյալին և նախադասություններ, որոնց մեջ հարաբերյալ չկա, և երկրորդական նախադասությունը անմիջաբար կատարում է ենթակայի պաշտոն: Վերևում նկարագրված նախադասությունները պատկանում էին վերջին խմբին: Անհրաժեշտ է նշել, որ անշաղկապ կապակցության ժամանակ գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ սովորաբար չի դրվում, որովհետև հարաբերյալի առկայությունը ենթադրել է տալիս որևէ կապակցական բառ: Գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ կարող է գործածվել միայն այն դեպքում, երբ տրամաբանական շեշտը երկրորդական նախադասության վրա դնելու նպատակով վերջինս ընդունում է առաջադաս դիրք: Այդ դեպքում երկրորդական նախադասությանը հաջորդող գլխավոր նախադասությունը սկսվում է դա, այդ (երբեմն նաև այս) ցուցական դերանուններով, որոնք կատարում են գլխավոր նախադասության ենթակայի պաշտոնը, սակայն իրենց նյութական բովանդակությունը ստանում են առաջադաս երկրորդական նախադասությունից, ամփոփում են վերջինիս բովանդակությունը և օժանդակում ինչպես երկրորդական նախադասության բովանդակության շեշտավելման, այնպես էլ գլխավոր և երկրորդական նախադասությունների կապին: Օրինակներ.

Ես սիրում էի նրան. դա արդեն պարզ էր ինձ համար (Ավ. Իս., 3, 38): Պետք էր մի հույսով քաղցրացնել միամիտ տանտիկնոջ սիրտը,— այդ էր հարկավոր էֆենդուն (Ր, 3, 227): Նա լավ տղա էր և մեզ դուր էր գալիս. դա էր գլխավորը (ՄԱՊ, 66): Առաջին անգամ էր նա իր մասին ասում, որ լավ է. դա զարմացրեց Ջանոյին (Ա. Սեկ., 461): Իրար ձեռքից աղավնիներ էին խլում—սա էր աղավնի խաղացնելու հմայքը (Թոթ., 159): Ինչ էլ որ լիներ,— Թերթում

տպագրվեր բանվորներից մեկն ու մեկի նկարը կամ հոդվածը, երեխա ունենային, երիտասարդներն ամուսնանային,— այդ բոլորն ուրախացնում էր նրան (Ախ., ՄՄՀ, 103)։

Վերջին օրինակում որպես հարաբերյալ[1] հանդես է եկել այդ բոլորը բառակապակցությունը, որը բացատրվում է երկրորդական նախադասության բարդ լինելով և թվարկման նշանակություն ունենալով։ Երկրորդական նախադասության վերջադաս լինելու դեպքում գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ սովորաբար չի գործածվում, միայն երբեմն հանդիպում է մի բան բառակապակցությունը. օրինակ՝

Բայց նրանց հաջողվեց միայն մի բան. թույլ չտվին, որ միտինգում ընդունվի կռվի կոչ պարունակող որևէ բանաձև (ՆՋ, ՊՊՆ, 204)։ Նրան պարզ դարձավ մի բան՝ Օմախում այլևս չեն համաձակվի խաղալ ատոմային կրակի հետ (Ե, 29/10—60 թ.)։ Ինձ մի բան միայն շատ զարմանք էր պատճառում, եղբայրներս կռվի վայրում էին, մայրս ամբողջ օրը արցունք էր թափում, իսկ հայրս մեր հին գութանը հանել էր դուրս և մի անվերջանալի, միօրինակ երգ շրթունքից վախ՝ սուր ուրագով տաշում-տաշտշում էր գութանը (Ավ. Ին., 3, 21)։

Վերապահությամբ այս խմբի մեջ կարելի է մտցնել նաև այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնք թեև իրենց բնույթով բացատրական են, այսինքն՝ երկրորդ նախադասությունը բացահայտում է առաջինի անորոշ նշանակություն ունեցող ենթական, սակայն որոշ չափով տարբերվում են մյուս ենթակա երկրորդական նախադասություններից։ Օրինակ՝ Ահա մի բանի հոգի նստեցին աղբյուրի գլխին. դրանք երգ ասողներն են և դրանց մեջ է Գայանեն (Լեո, 21)։ Այստեղ երկու նախադասությունների միջև եղած կապը զգալի չափով թույլ է, սակայն դեռ այնքան թույլ չէ, որ սրանք համարվեն ինքնուրույն նախադասություններ։ Երկու նախադասությունների կապը որոշ չափով իրացվում է երկրորդ նախադասության սկզբում առկա դրանք դերանվամբ, որը փոխարինում է առաջինի մի բանի հոգի ենթակային։ «Յուրաքանչյուրի մոտ տարբեր ենթադրություններ էին ծագում և միայն մեկը դրանցից անկասկածելի էր՝ այո, այդպիսի հարսանիք Թեհրանում խնկապես որ

[1] *«Հարաբերյալ» տերմինը այստեղ (և ընդհանրապես անշաղկապ բարդ նախադասությունների վերաբերյալ) օգտագործվում է պայմանականորեն, որովհետև երկրորդական նախադասության մեջ չկա հարաբերական բառ. այստեղ ավելի ճիշտ կլինի ասել ընդհանուր-անորոշ նշանակություն ունեցող ենթակա, կամ կոնկրետ նյութական նշանակությունից զուրկ ենթակա, որի կոնկրետ նյութական բովանդակությունը բացահայտվում է երկրորդական նախադասության օգնությամբ։*

չէր եղել» (ԴՍՔ, 2, 93)։ Այստեղ երկրորդական համարվող նախադասությունը (Այո, այդպիսի հարսանիք Թեհրանում իսկապես որ չէր եղել) բացահայտում է առաջին նախադասության մեկը անորոշ դերանվամբ արտահայտված ենթական, ցույց է տալիս, թե ինչն է անկասկածելի։ Այս նախադասությունները կարելի է համարել նաև որոշիչ։

Առաջին նախադասության ենթական է բացահայտում նաև հետևյալ անշաղկապ բարդ նախադասության երկրորդ մասը՝ «Իսկ այս առավոտ չկային նռաճք—չկային նախարարական իշխանազն պատանիները» (Ր, 7, 438)։ Այս նախադասությունն ունի կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ առաջին մասի դերանվամբ (նռաճք) արտահայտված ենթական բացահայտելու համար երկրորդ մասում առաջինի ստորոգյալը վերկնվում է նոր՝ նյութական իմաստ ունեցող ենթակայով (նախարարական իշխանազն պատանիները), որով և այն բացահայտվում է։

ՈՐՈՇԻՉ-ՈՐՈՇՅԱԼԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշաղկապ բարդ նախադասությունների համակարգում շատ են հանդիպում այնպիսիները, որոնց բաղկացուցիչ մասերից երկրորդը բացահայտում, որոշում է առաջին մասի որևէ անդամի բովանդակությունը, այսինքն՝ նկարագրվում է այդ բառի բովանդակությունն ավելի ընդարձակ, հանգամանորեն։ Այս տեսակետից վերհիշյալ նախադասությունները իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով շատ մոտ են կանգնած որոշիչ երկրորդական նախադասություն պարունակող շաղկապավոր բարդ նախադասություններին, սակայն չեն նույնանում նրանց հետ հետևյալ պատճառով։ Որոշիչ երկրորդական նախադասությունը որոշում է գլխավոր նախադասության գոյականով արտահայտված որևէ անդամը՝ նրա որևէ հատկանիշը կամ նրա հետ կապված որևէ գործողություն, երևույթ նկարագրելու միջոցով. օրինակ՝ Ես մտա այն սենյակը, որտեղ նստած է նա կամ՝ Ես վերցրի այն գիրքը, որ դրված էր սեղանին և կարմիր գույն ուներ։ Այս նախադասություններից առաջինում գլխավոր նախադասության սենյակը անդամը որոշվել է նրա հետ կապված երևույթը նկարագրելու միջոցով (նրա այնտեղ նստած լինելը սենյակի հատկանիշը չէ, բայց տվյալ դեպքում որոշում, տարբերում է այդ սենյակը մյուսներից)։ Երկրորդ նախադասության մեջ արդեն գլխավոր նախադասության գիրքը բառը որոշվել է նրա

հատկանիշը (կարմիր լինելը) և դիրքը նկարագրելու միջոցով։ Բարդ նախադասության անշաղկապ կապակցության ժամանակ այսպիսի հարաբերություն սովորաբար չի հանդիպում։ Այստեղ երկրորդական նախադասությունը կարող է որոշել գլխավորի դրյականով կամ դրյականաբար գործածված բառով արտահայտված որևէ անդամը միայն նրա էությունը, բովանդակությունը բացահայտելու, նկարագրելու միջոցով. օրինակ՝ Իմ մեջ հարց առաջացավ—ինչո՞ւ նա չի եկել։ Այստեղ անշաղկապ բարդ նախադասության առաջին մասում գործածվել է ևարց բառը, որը բացահայտվելու կարիք է զգում. երկրորդ բաղադրիչը լրացնում է այդ բացը, բացահայտում է նրա բովանդակությունը (ցույց է տալիս, թե ի՞նչ հարց է առաջացել)։ Այս տեսակետից այս անշաղկապ նախադասությունները մոտենում են նաև բացահայտիչ երկրորդական նախադասություն պարունակող շաղկապավոր բարդ նախադասություններին։

Որոշիչ-որոշյալի իմաստային փոխհարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունները ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

ա) Անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչ մասերից առաջինում առկա է լինում այնպիսի բառ, որն իր բառային նշանակությամբ որոշվելու, պարզվելու կարիք է զգում։ Այդպիսի բառի առկայությունը ենթադրել է տալիս, որ նրան հաջորդելու է այլ նախադասություն, որի միջոցով բացահայտվելու, որոշվելու է այդ անդամի բովանդակությունը։ Հենց այդ էլ օժանդակում է անշաղկապ նախադասության կազմավորմանը։ Օրինակ՝ Այդ կողմերի լեռնային պայմաններում լավ բերք տվող աշնանացան ոսկրահինկան ուներ մի թերություն. հաճախ հնձից առաջ փչում էին տաք քամիները և արագացնում ցորենի հասունացումը...(ՍԽՀ, 1, 579)։

բ) Գլխավոր նախադասության մեջ, որպես կանոն, հարաբերյալ բառ հանդես չի գալիս։ Հարաբերյալ չպետք է համարել մի անորոշ դերանունը, որը դրվելով որոշվող բառի վրա, ցույց է տալիս նրա անորոշ նշանակությունը, բացահայտվելու կարիք ունենալը և միաժամանակ ամբողջ նախադասության տրամաբանական շեշտը բևեռում է այդ բառի վրա։

գ) Գլխավոր նախադասությունը, որի կազմի մեջ է մտնում որոշվող, բացահայտվող անդամը, սովորաբար լինում է առաջադաս. օրինակ՝ Նա հիշեց Միշոյի խոսքերը. միայն արյունով կարելի է շաղկապել խոսքն ու գործը (Ի. էր., ՓԱ, 1, 131)։

դ) Այս անշաղկապ նախադասությունները ունեն նախազգուշական-բացատրական ինտոնացիա, որն արտահայտվում է որոշյալ

բառի շեշտումով (նախադասության տրամաբանական շեշտը միշտ դրվում է որոշվող բառի վրա) և գլխավոր նախադասության վերջում ձայնի աննշան իջեցումով։ Դրան հաջորդում է կարճ դադար, ապա արտաբերվում է երկրորդական նախադասությունը։ Անշաղկապ բարդ նախադասության կառուցվածքային ամբողջությունը կազմելու համար մեծ նշանակություն ունի հատկապես առաջին բաղադրիչ մասի ինտոնացիան, որի միջոցով ընդգծվում է նախադասության ավարտված չլինելը։ Երկրորդ բաղադրիչի ինտոնացիան տարբեր նախադասություններում կարող է տարբեր լինել՝ ըստ նրա կառուցվածքի (այն կարող է լինել բաժանական, հակադրական և այլն)։

ե) Այս տիպի նախադասությունների երկրորդ բաղադրիչի կառուցվածքը հաճախ պայմանավորված է լինում առաջին բաղադրիչում առկա որոշվող բառի բառային իմաստով. այսպես, օրինակ՝ եթե բացահայտվող բառը բոլորը–ն է, ապա երկրորդ բաղադրիչը ունենում է թվարկման նախադասության կառուցվածք և թվարկման ինտոնացիա։ Եթե որոշյալ բառը երկուսից մեկն-է, երկրորդ բաղադրիչը ունենում է տրոհական (բաժանական) կառուցվածք և ինտոնացիա, եթե որոշվող բառը ճարց գոյականն է, երկրորդ բաղադրիչը ունենում է հարցական բնույթ և այլն։ Երկրորդ մասի բայական ձևերը ևս որոշ դեպքերում կախված են լինում առաջին մասի բացահայտվող բառից. այսպես՝ խնդիրf, ճրաման, խոռճուրդ բառերի մոտ երկրորդ բաղադրիչի ստորոգյալը սովորաբար դրվում է հրամայական եղանակով։

Այս անշաղկապ նախադասությունները, ըստ առաջին բաղադրիչ մասի՝ գլխավոր նախադասության մեջ առկա որոշվող բառի բնույթի, կարելի է բաժանել մի քանի խմբի։

1. Գլխավոր նախադասության մեջ առկա է լինում վերացական-ընդհանրական նշանակություն ունեցող գոյականով արտահայտված որևէ անդամ (ուսակություն, սովորություն, դժվարություն, նպատակ և այլն), որը բացահայտվելու, որոշվելու կարիք է զգում։ Որպես որոշիչ հանդես է գալիս երկրորդական նախադասությունը, որը բացահայտում է այդ գոյականի բովանդակությունը. օրինակներ՝

Վաղուց սովորություն էր դարձել արդեն. ամեն խաղողաքաղից անմիջապես հետո այգիների մեջ էին թողնում անասուններին (Ա. Սեկ., 153)։ Բայց այստեղ ծագում էր մի դժվարություն. ինչպե՞ս հավատացնեն, թե իրենք իրոք տառապում են տրախոմայով (ՆՋ, ՊՊՆ, 105)։ Ես այսօր գտա իմ տարակուսանքի պատճառը՝ չեմ

մտածել այն մարդկանց մասին, ովքեր պետք է աշխատեն նոր կառուցված ցեխերում (Խեչ. ՄՄՀ, 58)։ Արամը կլանված էր միայն մի ճոգսով. ի՞նչ պատասխան պիտի տա պարոն Պետրոսին (ՆՋ, ՊՊՆ, 292)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, որոշվող գոյականը կարող է հանդես գալ նախադասության տարբեր անդամների պաշտոնով։ Այն հաճախ ունենում է պարզ որոշիչ (կամ որոշիչներ)։ Դրանով տրվում է այդ գոյականի որևէ հատկանիշը, որով սակայն սպառիչ կերպով չի բացահայտվում նրա բովանդակությունը, մի բան, որ կատարվում է միայն երկրորդական նախադասության միջոցով։ Գոյականի վերջնականապես որոշված չլինելը ընդգծվում է մի անորոշ դերանվան օգնությամբ, որը միշտ հանդես է գալիս պարզ որոշիչի հետ։ Պարզ որոշիչը ևս այս դեպքում սովորաբար ունենում է ընդհանուր-անորոշ նշանակություն, այդ պատճառով բացատրության կարիք է զգացվում։ Օրինակներ՝

Նա մի զարմանալի ընդունակություն ուներ. մեկ օրվա մեջ երիտասարդանում էր կամ մի քանի տարով ծերանում (Ի. էր. ՓԱ, 2, 62)։ Վաղուց այդպիսի մի սովորություն կար իրենց գյուղում. հարեվանները գնում էին օգնելու այն ընտանիքներին, որոնք տղամարդ չունեին (Ա. Սեհ., 414)։

Երբեմն որոշվող բառի մոտ մի անորոշ դերանուն չի դրվում։ Այդ այն դեպքում, երբ այդ գոյականի պարզ որոշիչը ունենում է որոշակի ցուցական նշանակություն։ Ցուցական նշանակություն ունեցող պարզ որոշիչի առկայությունը այս տիպի անշաղկապ բարդ նախադասությունների համար հանդիսանում է բաղկացուցիչ մասերի կապակցությանն օժանդակող լրացուցիչ բառա-քերականական միջոց։ Օրինակներ՝

Գիտությունն հաստատեց երկու անվիճելի ճշմարտություն. առաջինը՝ մարդու կյանքը հաճախ ժամանակից շուտ է այս կամ այն հիվանդության պատճառով...։ Երկրորդ ճշմարտությունն այն է, որ կյանքի տևողությունը... (ՍՀ, 1/12—60 թ., էջ 4)։ Արամ Անտոնիչը նրան Մոսկվա ուղարկելով հասել էր երկու նպատակի միանգամից. նախ՝ ազատվել էր նրա հոգսից, երկրորդ՝ իր վերջին պարտքը դրանով հատուցած էր համարել իր ազգակցի հիշատակին (Ե. Չար., 339)։ Ծերունու բարյացակամությունը Վահանի նկատմամբ ավելի խոր ճիմք ուներ. այս ուշիմ, խոհուն գիմնազիստը նրա առաջին և միակ ընթերցողն էր (Ա. Սահ., 178)։ Մեր առջև դրված են հետևյալ խնդիրները...

Ինչպես երևում է առաջին օրինակից, որոշվող բառի բացա-

տրութիյունը երբեմն չի սահմանափակվում անշաղկապ բարդ նախադասութիյան երկրորդ մասով, այլ շարունակվում է կոնտեքստի մյուս նախադասութիյուններում, երբեմն ամբողջ պարբերութիյան մեջ։

Երբ որոշվող բառի կողքին որպես պարզ որոշիչ հանդես է գալիս որևէ ցուցական դերանուն (այդ, այդպիսի), այն որոշ չափով բացատրված է լինում նախորդ կոնտեքստով։ Այստեղ երկրորդական նախադասութիյունը տալիս է միայն լրացուցիչ բացատրութիյուն և դրանով վերջնականապես բացահայտում է որոշվող բառի բովանդակութիյունը։ Օրինակ՝ Հենց երեկ ճիշտ այդ դրութիյան մեջ էի. երեկոյան թեյը խմելուց հետո բաժակն այնպես շպրտեցի սեղանի վրա, որ գլորվեց, ընկավ հատակի վրա և փշրվեց (ՆԴ, 2, 162)։ Այստեղ նախորդ կոնտեքստում նկարագրված է մի դրութիյուն, վիճակ, որի մեջ գտնվում է հեղինակը։ Անշաղկապ բարդ նախադասութիյան երկրորդ մասով նկարագրված է այդ դրութիյան մեջ լինելու հետևանքով կատարված գործողութիյունը, դրանով ավելի ամբողջական դարձնելով պատկերացումը այդ դրութիյան մասին։

2) Անշաղկապ բարդ նախադասութիյան առաջին մասում առկա է լինում որևէ ասացական բայանուն՝ վերցված անորոշ առումով, երկրորդ մասում բացահայտվում է այդ բառի կոնկրետ բովանդակութիյունը. օրինակ՝

Մի առավոտ երկնահոսուլ ծխնելույզները երկաթ Կոչ նետեցին ղինվորին՝ ղինվորի դեմ չկռվես (Ե. Չար., 33)։ Ասված խոսք է՝ հյուրը տան տիրոջ ծառան է (ԳՍԲ, 2, 348)։ Երազ տեսա—ձեր տան առաջ Ջուլալ աղբյուր կբխեր, Ձենը մեղմիկ, քաղցրակարկաչ, չորս դին ծուփ-ծուփ ծաղկունք էր (Ավ. Իս., 1, 39)։

Բերված օրինակներում գլխավոր նախադասութիյունների մեջ հանդես են եկել կոչ, խոսք (երազ) բայանունները, որոնց բովանդակութիյունները բացահայտվել են երկրորդական նախադասութիյունների միջոցով։

3) Որոշվող բառը կարող է լինել նաև բացահայտվելու կարիք զգացող որևէ այլ գոյական։ Օրինակներ.

Ցեխի կոլեկտիվը պատվավոր առաջադրանք է ստացել. պետք է մասնակցի Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի ձևավորման աշխատանքներին (Ե, 3/I 62 թ.)։ Այստեղից բացվեցան իմ առջև նրաշալի տեսարաններ. երևում էին շրջակա լեռները իրենց գեղեցիկ հովիտներով, երևում էր քաղաքը իր կրկնակի պարիսպներով ու աշտարակներով, երևում էին քաղաքի բարձր, սյունաձև մինարեթները և հայոց եկեղեցիների գմբեթները (Ր, 5, 22)։ Մի կետում Բրեթելյն իրավացի է. երկիրը

պառակտվել է (Ի. էր., ՓԱ, 2, 60)։ Սակայն նա ուներ քաղաքական իդեալ—ուզում էր պահպանել այն երկիրը, որ ճանաչել էր մանկությունից (Ն.տ., 1, 33)։ Դուք գիտեք հայ վարժապետի դրությունը. ռոճիկս այնքան քիչ էր, որ հազիվ կարողանում էի չոր գլուխս պահել (Շ, 2, 396)։

Այս դեպքում ևս գոյականով արտահայտված անդամը կարող է ունենալ պարզ որոշիչներ, որոնք լրացնում, բացահայտում են նրա բովանդակությունը։ Երկրորդական նախադասությունը այստեղ գործածվում է, որպեսզի ավելի կատարյալ, լրիվ դարձնի պատկերացումը տվյալ գոյականով արտահայտված առարկայի, երևույթի մասին. ըստ որում որպես որոշյալ դիտվում է գոյականը պարզ լրացումների հետ։ Այսպես՝ բերված օրինակներից առաջինում երկրորդական նախադասությունը որոշել, բացահայտել է պատվավոր առաջադրանք բառակապակցությունը։ Այստեղ երկրորդական նախադասությունը ավելի շատ բացահայտում է պատվավոր որոշիչը, ցույց է տալիս այն պատճառը, որի հիման վրա առաջադրանքը համարվել է պատվավոր։ Երկրորդ օրինակում ևս երկրորդական նախադասությունը, որը իր հերթին բարդ է և նկարագրում է մի շարք երևույթներ, բացահայտում է, թե ինչու են տեսարանները հրաշալի կամ որոնք են հրաշալի տեսարանները։ Այլ կերպ ասած՝ այն ոչ թե լրացնում է միայն տեսարաններ բառը, այլ հրաշալի տեսարաններ բառակապակցությունը։ Այս դեպքում անշուշտակ բարդ նախադասության առաջին մասը կարող է լինել անվանական նախադասություն՝ բաղկացած միայն որոշման կարիք զգացող բառակապակցությունից։ Օրինակներ.

Եվ տարօրինակ բան. որ ժամին էլ լողալու լիներ բորիսովցիների նավակը գյուղերի մոտով, ափի վրա միշտ կանգնած էին լինում մարդիկ, որոնք դիմավորում էին այն (ՄԱՅ, 200)։ Ի՞նչ ուրախալի բան, ընդունվել է իր նոր նախագիծը (Ա. Սեկ., 18)։

4) Գլխավոր նախադասության մեջ որպես որոշյալ բառ կարող են հանդես գալ ոչ միայն գոյականները, այլ նաև գոյականաբար գործածված այլ խոսքի մասեր՝ մեծ մասամբ ցուցական դերանունները և ցուցական նշանակություն ունեցող ածականներ (հենց այդ ցուցականությունն էլ ենթադրել է տալիս, որ նախադասությունը դեռ ավարտված չէ, և նրան հաջորդելու է մեկ այլ նախադասություն)։ Օրինակներ.

Պետք է նկատի ունենալ հետևյալը. ես դեռ չեմ առողջացել և այդ պատճառով չեմ գալիս։ Ջիրականացվեց ամենակարևորը. չմեքենայացվեց աշխատանքի համարյա ոչ մի ձև (Ա. Սեկ., 569)։

Որոշումը մեկն էր՝ պետք է միանալ գործադուլավորներին (ԴՍԹ, 2, 342)։

5) Անշաղկապ որոշիչ երկրորդական նախադասությունների մեջ շատ հազվադեպ հանդիպում են նաև այնպիսիները, որոնք որոշում են առաջին բաղադրիչի (գլխավոր նախադասության) գոյականով արտահայտված որևէ անդամը ոչ թե նրա բովանդակությունը բացահայտելու միջոցով, այլ նրա կատարած մեկ այլ գործողությունը, նրա հետ կապված որևէ երևույթ, գործողություն կամ նրա որևէ հատկանիշը նկարագրելու միջոցով։ Օրինակներ.

Դա անտուն, անտեր արարածներից մեկն էր, ապրում էր երկնքի թռչունների պես (Լեո, 64)։ Տեսնում եմ քո դեմքը մշուշում ես, Մերթ փայլում է ու մերթ աղոտում (Գ. Սար., 78)։ Մի օր անտառից դուրս գալիս տեսա մի պախրա՝ ձագի հետ արածում էին դաշտում (Ե, 30/10—60 թ., էջ 3, Ա)։ Կարծես այդ մարդիկ անհաշտ թշնամիներ էին, շար ճակատագրի կամքով ստիպված էին դուրս եկել իրարուց վրեժ առնելու (Շ, 2, 163)։ Դաշտի վրա փռվել էր մուժ արյունամած՝ թույն էր կարծես բորբ արևի սրտից քամած (Ե. Չար., 17)։

Բերված օրինակներից վերջինը ունի համեմատության իմաստային երանգ, այսինքն բացահայտում է, որոշում է առաջին բաղադրիչի ենթական (արյունամած մուժ-ը) նրան համեմատելով մեկ այլ երևույթի հետ։ Մեկ օրինակ ևս. Ով կատաղում էր, որ մի մարդ չկար՝ յուր ցավն ափոփեր կամ գեթ հասկանար... (ՀԹ, 2, 23)։ Այստեղ երկրորդական նախադասությամբ որոշվել է մարդ գոյականը՝ նրա կատարելիք ցանկալի գործողությունը նկարագրելու միջոցով։

Այսպիսի իմաստային հարաբերություններ արտահայտող որոշիչ երկրորդական նախադասությունները սովորաբար միանում են գլխավորին հարաբերական բառերի և շաղկապների միջոցով։ Սրանց անշաղկապ կապակցությունը անհարթ է և առաջացել է շաղկապների ջեղչման միջոցով։

Այս ենթախմբի անշաղկապ բարդ նախադասությունների երկրորդ բաղադրիչում երբեմն հանդիպում են նա, այդ, այդպիսի դերանունները, որոնք փոխարինում են որոշվող բառին։ Այդ դերանունների գործածության դեպքում անշաղկապ բարդ նախադասության բաղադրիչների միջև եղած շարահյուսական կապը որոշ չափով թուլանում է, և նրանց կապակցությունը մոտենում է միավորական հավելական կապակցությանը։ Օրինակներ.

Դա Լյուսիենը հարցրեց, նա եռևից մոտեցել էր (Ի. էր., ՓԱ, 1, 12)։ Հետո նրա ուշադրությունը գրավեցին կոլտնտեսուհիները. դույլերն ու զամբյուղները ուսերին նրանք մոտենում էին կաղնուն

(Ա. Սեկ., 30)։ Դա մի խղճուկ թատրոն էր. այդպիսինները շատ կային Պոլսում (Վահր. Փափ., 1, 6)։

Ինչպես վերևում ասվել է, որոշիչ երկրորդական նախադասությունները անշաղկապ բարդ նախադասություններում լինում են վերջադաս։ Սակայն սակավաթիվ գոյականների որոշման ժամանակ, երկրորդական, կամ, այստեղ ավելի ճիշտ կլինի ասել, բացատրական նախադասությունները, լինում են առաջադաս։ Այդ նկատվում է հետևյալ դեպքում. բարդ նախադասության առաջին մասը իր հերթին լինում է բարդ և ունենում է թվարկման նշանակություն. նրան հաջորդում է երկրորդ բաղադրիչը, որն սկսվում է այս կամ այդ ցուցական դերանվամբ և նախորդ նախադասությունների (բաղադրիչների) բովանդակությունն ամփոփող բառով (գոյականով)։ Փաստորեն երկրորդ բաղադրիչի այդ բառի բովանդակությունը բացահայտվում, որոշվում է նախորդ նախադասությունների բովանդակությունների օգնությամբ։ Այս կառուցվածքի նախադասություններում կարող են հանդես գալ միայն սահմանափակ թվով գոյականներ. դրանք են՝ ճարց, խնդիր, առաջադրանք, եզրակացություն և այլն։ Օրինակ.

Ո՞վ էր նա, ո՞ւմ աղջիկն էր, որտե՞ղ կարելի էր տեսնել նրան, կամ ծանոթանալ նրա հետ, այս ճարցերը մեծ մտատանջություն էին պատճառում երիտասարդին (Մուր., 1, 214)։ Պետք է բարձրացնել բերքատվությունը, պայքարել ինքնարժեքն իջեցնելու համար, ահա այս խնդիրներն են դրված մեր առաջ։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կառուցվածքի նախադասություններում, այսպես կոչված, որոշյալը (ավելի ճիշտ կլիներ ասել առաջին բաղադրիչի բովանդակությունն ամփոփող բառը) դրվում է հոգնակի թվով, որով ընդգծվում է առաջին բաղադրիչի՝ թվարկման նշանակություն ունենալը։ Առաջին բաղադրիչը կարող է լինել նաև պարզ և արտահայտել որևէ հարցում, եզրակացություն, կամ որևէ առաջադրանք, խնդիր։ Երկրորդ բաղադրիչը այս դեպքում ևս սկսվում է այս, այսպիսի, այդ, այդպիսի ցուցական դերանուններով և առաջին բաղադրիչի բովանդակությունն ամփոփող բառով (գոյականով), որը կարող է հանդես գալ նախադասության տարբեր անդամների պաշտոնով։ Բերենք մի քանի օրինակ.

Ինչո՞ւ էր նա այդքան հուզված,—այս ճարցը երկար ժամանակ մտատանջում էր ինձ։ Նա անպայման այսօր կգա,— այս եզրակացությանը ես հանգեցի երեկվա դեպքից հետո։ Պետք է անմիջապես մեկնել—այս առաջադրանքը տվեց մեզ մեր ջոկատավարը։

Ինչպես երևում է բերված օրինակներից, առաջին բաղադրիչի

բովանդակությունն ամփոփող բառը երկրորդ բաղադրիչում սովորաբար լինում է առաջադաս (ցուցական դերանվան հետ միասին)։ Դրա հետևանքով ամբողջ բարդ նախադասության տրամաբանական շեշտը ընկնում է նրա վրա, որի օգնությամբ շեշտվում է նաև առաջին բաղադրիչի բովանդակությունը։ Այս տիպի նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից է նաև այն, որ երկու բաղադրիչ մասերի միջև եղած շարահյուսական կապը ղգալի թույլ է։ Այդ բանը դրսևորվում է ինտոնացիայի միջոցով. առաջին բաղադրիչի վերջում ձայնը ղգալի իջնում է (մոտենում է ավարտված նախադասության ինտոնացիային), որին հաջորդում է դադար, ապա ձայնի կտրուկ բարձրացումով արտասանվում է երկրորդ բաղադրիչը։ Գրավոր այսպիսի նախադասության մասերը իրարից բաժանվում են ստորակետ-գծով, անջատման գծով կամ միջակետով։

Սրանք են այն անշաղկապ բացատրական նախադասությունները, որոնց մեջ բաղադրիչ մասերից մեկը բացահայտում է մյուս բաղադրիչի ընդհանուր անորոշ նշանակությունն ունեցող անդամը, նրա նկատմամբ կատարում որոշչի պաշտոն։ Այս նախադասությունները շատ են տարածված ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում։ Ի տարբերություն մյուս անշաղկապ բարդ նախադասությունների, նախադասությունների այս տեսակը տարածված է նաև հրապարակախոսության լեզվում։

ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենում շատ է տարածված ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոն կատարող նախադասությունների անշաղկապ կապակցությունը։ Սրանք շատ են հանդիպում հատկապես գեղարվեստական գրականության մեջ։ Գիտական գրականության մեջ անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները սովորաբար չեն գործածվում։ Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների անշաղկապ կապակցություն հանդիպում է այն դեպքում, երբ գլխավոր նախադասության մեջ ստորոգյալը արտահայտված է լինում ներգործական սեռի բայով և գործողության կատարման համար պահանջում է օբյեկտ։ Այդ օբյեկտի դերը այստեղ կատարում է երկրորդական նախադասությունը։

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները ունեն հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները.

ա) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը սովորաբար լինում է վերջադաս, այսինքն դրվում է գլխավոր նախադասությունից հետո։ Եվ դա շատ բնական է, որովհետև շաղկապի բացակայության պայմաններում պետք է նախապես հաղորդվի այն նախադասությունը, որի բայը ներգործական է և պահանջում է գործողության օբյեկտ, այսինքն՝ գլխավոր նախադասությունը. օրինակ՝ Ես գիտեմ, ևս շատ ուրախ կլինեի ինձ տեսնելով (ԳՄԲ, 360)։ Այստեղ առաջին նախադասության մեջ առկա գիտեմ ստորոգյալի ներգործական բնույթը ենթադրել է տալիս, որ նախադասությունը ավարտված չէ և որ պետք է հաղորդվի նաև նրա օբյեկտի մասին։ Վերջինս, այս դեպքում, ոչ թե առարկա է, այլ իրողություն, երևույթ, եղելություն, այդ պատճառով տրվում է նկարագրության միջոցով և հանդես է գալիս երկրորդական նախադասության ձևով (ևս շատ ուրախ կլինեի ինձ տեսնելով)։ Երկրորդական նախադասությունը առաջադաս հանդես է գալիս միայն երբեմն, այն էլ այն դեպքում, երբ կամ երկրորդական նախադասությունը հարցական է և կամ գլխավոր նախադասության մեջ առկա է դերանվամբ արտահայտված ուղիղ խնդիր, որն իր նյութական բովանդակությունը ստանում է երկրորդական նախադասությունից։ Օրինակ՝ ինչո՞ւ ծնվեց նրա մեջ այդ ցանկությունը, ինքն էլ չգիտեր (ԱՒ, 64), կամ՝ Ուրիշ փոխադրությունների համար դուք ունեք ուրիշ մեքենաներ, ես դա լավ գիտեմ (ՄԱՊ, 687)։ Այս կառուցվածքի նախադասություններում ստորադասական կապակցությունը որոշ չափով թուլանում է, այն մոտենում է հավելական կապակցությանը։

Անշաղկապ բարդ նախադասությունների հետ չպետք է շփոթել այն նախադասությունները, որոնք թեև ձևով նման են ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասություններին, սակայն փաստորեն միջանկյալ նախադասություն պարունակող պարզ նախադասություններ են. այսպես, օրինակ՝ Իսկ մասնագետներ, դուք լավ գիտեք, մենք շատ ունենք (Ա. Սեկ., 542)։ Իսկ վերարկու, չէին հիշում, տեսե՞լ էին նրա հագին (Ն. տ., 420)։ Այս նախադասություններում դուք լավ գիտեք և չէին հիշում թեև ձևով նման են ուղիղ խնդիր պարունակող անշաղկապ բարդ նախադասությունների գլխավոր (գերադաս) մասին, սակայն իրականում միջանկյալ նախադասություն են, որովհետև նրանք շարահյուսորեն կապված չեն հաղորդման հիմնական նպատակը հանդիսացող նախադասության հետ, այլ սոսկ տալիս են լրացուցիչ տեղեկություն այդ նախադասությունների բովանդակությունների վերաբերյալ (առաջին դեպքում հավաստում են նկարագրված գոր-

ծողությունը՝ վկայակոչելով խոսակցին, երկրորդ դեպքում ընդգծում են հաղորդվածի ստույգ չլինելը)։

բ) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները ունեն բացատրական կամ նախազգուշական ինտոնացիա։ Առաջին՝ գլխավոր նախադասությունը արտասանվում է սկզբում ձայնի որոշ բարձրացումով, այնուհետև ձայնը աննշան իջնում է (սովորաբար շեշտվում է ստորոգյալը, որը լրացման կարիք է ունենում)։ Դրան հաջորդում է փոքր դադար, ապա արտասանվում է երկրորդ նախադասությունը։ Երբ երկրորդական նախադասությունը առաջադաս է լինում, այն արտասանվում է վերջում ձայնի զգալի իջեցումով, իսկ դադարը անշաղկապ նախադասության մասերի միջև ավելի մեծ է լինում։ Շատ հաճախ առաջադաս երկրորդական նախադասությունը ունենում է հարցական ինտոնացիա։ Գրավոր խոսքում գլխավոր նախադասությունից հետո դրվում է ստորակետ կամ բութ. (վերջինիս միջոցով ավելի է ընդգծվում երկրորդական նախադասության բացատրական բնույթը)։ Գլխավոր նախադասությունից հետո երբեմն դրվում է նաև միջակետ։ Դրանով ցույց է տրվում, որ անշաղկապ բարդ նախադասության մասերը հանդես են եկել որպես համեմատաբար ինքնուրույն միավորներ։ Այս դեպքում նրանց միջև եղած դադարը համեմատաբար մեծ է լինում։ Երբ առաջադաս է ուղիղ խնդրի պաշտոն կատարող երկրորդական նախադասությունը, նրանից հետո դրվում է ստորակետ կամ միջակետ (բայց ոչ երբեք բութ), իսկ երբեմն այդ մասերը իրարից բաժանվում են անջատման գծով (տես նախորդ, ինչպես նաև հաջորդ օրինակները)։

Այստեղ պետք է խոսել այն անշաղկապ նախադասությունների մասին, որոնց բաղկացուցիչ մասերի միջև եղած դադարը այնքան փոքր է (համարյա չկա), որ նրանք չեն դիտվում իբրև առանձին միավոր-նախադասություններ, այլ ընկալվում են որպես մեկ պարզ նախադասություն։ Այս տիպի նախադասություններ շատ են գործածվում բանավոր խոսքում, մասամբ նաև գեղարվեստական գրականության մեջ (հատկապես երկխոսություններում)։ Այստեղ կամ երկրորդ բաղադրիչի ստորոգյալի ստորոգման իմաստը այնքան է մթագնվում, որ այն հանդես է գալիս փաստորեն որպես պայման ցրացում՝ նման դերբայական դարձվածին, ցույց տալով գործողության կատարման օբյեկտը և կամ գլխավոր հանդիսացող մասըն է դադարում դիտակցվել որպես առանձին նախադասություն։ Գրավոր խոսքում այս երևույթը արտահայտվում է նրանով, որ անշաղկապ նախադասության մասերի միջև տրոհման որևէ նշան չի

դրվում (այս նախադասությունները չի էլ կարելի անշաղկապ բարդ նախադասություններ համարել)։ Բերենք մի քանի օրինակ.

Մեր ջերմ ողջույնները տարեք Միության աշխատավորությանը, ասացեք, որ խնդրում ենք մեզ չմոռանան (Ավ. Իս., 3, 144)։ Երբ մոտեցավ, ուզեց գրկի ետը՝ կամաց մի կողմ հրեց հայրը նրան (Ե. Չար., 98)։ Այդ դերվիշը —տեսե՛ք՝ նա նստած ուզում է ըմբռնի ու ետսնի. իր մտքի թևերին վստահ՝ ուզում է ըմբռնի ու ետսնի (Ն. տ., 171)։ Էլ գելը չի կարա մեր գեղին մոռենա (ՄԱՊ, 104)։

Բերված օրինակներում չմոռանան, գրկի, ըմբռնի, ետսնի, մոռենա բայերը այլևս չեն գիտակցվում որպես բայի խոնարհված ձևեր, մթագնված է նաև նրանց ստորոգման նշանակությունը։ Գրական լեզվում այդ ձևերի փոխարեն գործածվում է անորոշ դերբայի հայցական հոլովը (խնդրում եմ չմոռանալ, ուզեց գրկել, ուզում է ըմբռնել և այլն)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կառուցվածքներում գործածվում են միայն ըղձական եղանակի ձևերը, որոնք ուղիղ խնդրին տալիս են նպատակի իմաստային երանգ։ Նույն երևույթին ենք հանդիպում նաև այն դեպքերում, երբ անշաղկապ նախադասության առաջին մասը ժխտական է, իսկ երկրորդը պարունակում է անուղղակի հարցում։ Օրինակ՝

Չիմացավ սունկը թողնի՞ կրակի վրա, վազի մոր հետևից, թե՞ սունկն էլ հետը տանի (ԱՒ, 193)։ Ես մի քանի րոպե մնացի շվարած... չգիտեի ինչ անեմ, ուր վազեմ (Շ, 1, 4)։ Ինչպես երևում է, այստեղ ևս անորոշ դերբայի իմաստով գործածվել են ըղձական եղանակի բայեր (թողնի, վազի, անեմ, վազեմ, տանի)։ *Այս ձևերը հանդիպում են այն դեպքերում, երբ առաջին մասի ստորոգյալի և նրա օբյեկտը հանդիսացող գործողության սուբյեկտը նույնն է (տե՛ս վերևի օրինակները)։*

Ինչպես արդեն ասացինք, որոշ անշաղկապ նախադասություններում գլխավոր մասն է սկսել կորցնել իր՝ առանձին նախադասության իմաստը՝ վերածվելով եղանակավորող բառերի և բառակապակցությունների կամ մոռենալով նրանց։ Օրինակներ՝

Մեկ էլ տեսար պարզվեց, որ այդ... բարդ տերմինների տակ թաքնված է սովորական մի բան (Վերդ., ԻԳԲ, 335)։ Մեկ էլ տեսար վազելով ներս ընկավ մի երեխա (Ա. Սահ., 176)։ Ով գիտե ինչ էին մտաբերում ծերերը վազող ջրին նայելիս (ԱՒ, 522)։ Անցնում է նա անհույս, մենակ, հողմի գրկում, ո՞վ գիտե, ո՞ւր պիտի կանգնի ամպը մոլոր (Գ. Սար., 1, 19)։ Ես եմ սարքել՝ տեսնեմ կհավանե՞ս (Ա.

Սեկ., 119)։ Ասաց՝ գալիս եմ, ի՞նչ իմանամ, ուր գնաց (Ն. տ., 592)։ Տեսա ուշանում է, էլ չսպասեցի (*«Ավանգարդ», 5/2—59 թ. էջ 4)։*

Բերված օրինակներում Մեկ էլ տեսար և ով գիտե արդեն լրիվ վեր են ածվել եղանակավորող բառակապակցությունների (առաջինը ցույց է տալիս, որ խոսողը նկարագրված գործողությունը դիտում է իբրև հավանական, իսկ երկրորդը՝ որպես անհայտ, ոչ հավաստի գործողություն), իսկ տեսնեմ, ինչ իմանամ, տեսա ձևերը արդեն դադարել են գլխավոր նախադասություն գիտակցվելուց, մոտենում են եղանակավորող բառերին, բայց դեռևս լրիվ չեն վերածվել վերջիններիս։

գ) Առաջադաս գլխավոր նախադասության մեջ անշաղկապ կապակցության ժամանակ ձևական ուղիղ խնդիր սովորաբար չի լինում։ Գործողության օբյեկտի պաշտոնը անմիջաբար կատարում է բարդ նախադասության երկրորդ բաղադրիչը։ Միայն երբեմն, երբ անհրաժեշտ է լինում ընդգծել, որ գործողության օբյեկտը մեկն է և բարդ նախադասության տրամաբանական շեշտը դնել գործողության օբյեկտը նկարագրող մասի վրա, գլխավոր մասում հանդես է գալիս մի բան ձևական ուղիղ խնդիրը, որը ենթադրել է տալիս բացատրական մասի գոյությունը։ Դադարը անշաղկապ բարդ նախադասության մասերի միջև այս դեպքում լինում է ավելի երկար, որը գրավոր արտահայտվում է միջակետի միջոցով։ Մի բան-ը սովորաբար դրվում է գլխավոր նախադասության վերջում՝ ստորոգյալից հետո. օրինակ՝ ... Բայց հաստատապես գիտեր մի բան. հողին կյանք տվողը ջուրն է, մարդուն կյանք տվողը՝ հողը (Ա. Սահ., 311)։ Միայն երբեմն այն առավել շեշտելու նպատակով շրջուն շարադասությամբ դրվում է նաև ստորոգյալից առաջ. օրինակ՝ Ես մի բան կարող եմ ասել. դու այսօր չես կարողանա գնալ։

Անշաղկապ բարդ նախադասության ուղիղ խնդրի պաշտոնը կատարող մասի առաջադաս դրվելու դեպքում գլխավոր մասը կարող է սկսվել այդ, դա ցուցական դերանուններով կամ այդ բաները բառակապակցությամբ, որոնք ամփոփում են առաջին մասի բովանդակությունը և նպաստում բարդ նախադասության կառուցվածքային ամբողջության ստեղծելուն. օրինակ՝ Դու չես տեսել, այդ ես գիտեմ, կամ՝ Արամը չի կարող գնալ, զբաղված է. այդ բաները դու լավ հիշեցրիր։

Սրանք են հիմնականում ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունները։

Ուղիղ խնդիր անշաղկապ երկրորդական նախադասությունները

կարող են դրվել միայն շատ սահմանափակ թվով ներգործական սեռի բայերի մոտ։ Դրանք են՝

ա) Ասացական բայերը — ասել, կրկնել, հարցնել, բացատրել, ավանդել և այլն։ Ուղիղ խոսքի անշաղկապ նախադասություններ շատ են հանդիպում հատկապես ասել բայի մոտ և արտահայտում են հետևյալ իմաստային հարաբերությունները.

1. Հաղորդվում են ընդհանուր ճանաչում գտած և տարածված, ինչպես նաև ընդհանուր-անորոշ նշանակություն ունեցող երևույթների մասին։ Անշաղկապ բարդ նախադասության առաջին՝ գերադաս մասում ենթական սովորաբար չի լինում, իսկ ստորոգյալը, որը ասել բայն է, դրվում է ներկա (երբեմն նաև վաղակատար) ժամանակի հոգնակի 3-րդ դեմքով. այդ միջոցով է հենց դրսևորվում հաղորդվածի ընդհանուր-անորոշ նշանակություն ունենալը։ Այնուհետև հաջորդում է երկրորդ մասը, որով հաղորդվում է ընդհանուր ճանաչում գտած կամ ընդհանուր-անորոշ նշանակություն ունեցող երևույթի մասին։

Բերենք մի քանի օրինակ.

Այստեղ են ասել՝ գյուղը կանգնի՝ գերան կկոտրի (Գ. Ռշ. Մ., 282)։ Ասում են՝ միասին մեռնելն էլ մի մխիթարություն է (Հ. Իկվ, 45)։ Ասում են՝ այն օրվանից, երբ Սալվարդը ոտք է դրել Արինոք, Նասրի տան քուրդը սկսել էր ավելի ջերմությամբ վերաբերվել հայերին (Դ, Խ, 51)։ Ասում են՝ գլուխը մարդու նման է (Մ. Ման., 113)։ Ասում են, կարելի է շատ հոգսից ծերության օրերում խելքից էլ գրկվի (Շ, 1, 52)։

Բերված օրինակներից առաջին երկուսում հաղորդվում են ընդհանուր ճանաչում գտած, տարածված դատողություններ, իսկ հաջորդ երեքում խոսողի նպատակն է հաղորդել այնպիսի երևույթ, իրողություն, որի մասին ինքը լսել է, սակայն հավաստի չի համարում։

2. Երբ խոսողը ցանկանում է ընդգծել, շեշտել իր համոզվածությունը հաղորդվածի ճշտության վերաբերյալ, որպես գլխավոր նախադասության ստորոգյալ հանդես է գալիս ասել բայը՝ առաջին դեմքով։ Օրինակներ՝

Ես ասում եմ՝ աշխարհը կդառնա մի հանուր խնդության փողոց (Ն. Զար., 44)։ Բայց ես մի բան կասեմ, որբի ծիծաղը չի կարելի խանգարել (ՆՋ, ՊՊՆ, 16)։ Ախր ես ասացի քեզ՝ նա լավ ճաշակ ունի (ՄԱՊ, 633)։ Ուղղակի ասեմ՝ անձամբ ինձ նա վստահություն չի ներշնչում (Ի. էր., ՓԱ, 2, 160)։ Բայց կրկնում եմ, խնդիրն այդ չէ (Ն. տ., 2, 160)։ Վերջին օրինակում նույն իմաստով գործածվել է կրկնել բայը։

3. Ասացական բայերից ասել-ին և հա.ցնել-ին *լրացնող անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները կարող են լինել անուղղակի հարցում. Օրինակ՝*

Արություն ապեր, ուզո՞ւմ ես ասեմ, *ինչի ես եկել ինձ մոտ (ԱԲ, 136)։ Հարցնում ենք՝ ինչպես է առողջությունը (ՍԱ, 1, 1960, 27)։*

Սակայն ավելի հաճախ այս բայերի մոտ անշաղկապ երկրորդական նախադասությամբ արտահայտված հարցը լինում է ուղղակի. դա ավելի կենդանի, անմիջական, դիպուկ է դարձնում խոսքը և այդ պատճառով շատ գործածական է երկախոսությունների մեջ։ Օրինակներ՝

Ինչ որ տեսել ես դարերի շեղջում, Ասա, հայտնիր, հարցնում եմ՝ *ի՞նչն է մարդկային կյանքի երջանկությունը (Ավ.Իս., 3, 163)։ Մենք միայն հարց ենք տալիս. ինչո՞ւ համար դուք յոտ լցրիք հրդեհի վրա (ՆՋ, ՊՊՆ, 96)։ Ասա, ի՞նչ եփեմ քեզ համար, թանապո՞ւր, խավի՞ծ, փլա՞վ...* ասա, *ի՞նչ է ուզում սիրտդ (ՀԻԿՎ, 37)։ Հիմա* ասա՝ *այսօր դու նախաճաշին ազա՞տ ես (Ի. էր., ՓԱ, 1, 35)։ Ասացեք խնդրեմ, ինչո՞վ է տանից պակաս (ՀՔ, 3, 94)։ Էդ թողնենք, դու էն* ասա, *ամսական ի՞նչ ես ստանում (Դ. Ռշ. Մ., 50)։ Վերջին օրինակում էն ցուցական դերանվան միջոցով ընթերցողի ուշադրությունը կենտրոնացվում է հարց պարունակող երկրորդական նախադասության վրա։ Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը և ինչպես երևում է բերված օրինակներից,* ասել *բայի մոտ ուղղակի հարց պարունակող անշաղկապ ուղիղ խնդրի պաշտոն կատարող երկրորդական նախադասություն է դրվում այն դեպքում, երբ խոսողը դիմում է խոսակցին և պահանջում է տրված հարցի պատասխանը. այդ իսկ պատճառով* ասել *բայը այս դեպքում սովորաբար դրվում է հրամայական եղանակով—հրամանի իմաստը մեղմելու համար շատ հաճախ* ասել *բայի մոտ դրվում են* խնդրեմ, տեսնեմ *բայերը (*ասա տեսնեմ, ասացեք խնդրեմ*), որոնք այստեղ կատարում են միայն եղանակավորող բառի դեր (փաստորեն կորցրել են իրենց բայական հատկանիշները). օրինակ՝* Ասացեք, տեսնեմ, *որտե՞ղ եք գտնվում (Ա. Սեկ., 580)։ Կամ՝ Բայց ինձ* ասա տեսնեմ, *ինչպիսի՞ աղջիկ է (ՆԴ, 2, 419)։*

Երբեմն հարցական կարող է լինել ամբողջ անշաղկապ բարդ նախադասությունը։ Պարզ է, որ այս դեպքում ասել *բայը չի դրվում հրամայական եղանակով. այն դրվում է կամ ըղձական, կամ պայմանական եղանակով, իսկ ենթական լինում է անձնական կամ հարցական (ո՞վ) դերանուն. օրինակ՝ Եվ ո՞վ, ո՞վ կասի՝ նեռե՞լ է ար-*

դյոք մեկը աշխարհում Այսօրվա կարմիր, կարմիր ձեր երթին ողջույն—ավելի առնական, արի (Ն. Զար., 24)։

Երբ խոսողը հնարավոր չի համարում տրված հարցին պատասխանելը կամ կասկածի տակ է առնում այդ հնարավորությունը, հարց պարունակող երկրորդական նախադասությունը մեծ մասամբ դրվում է առաջադաս և հանդիսանում է վերջադաս գլխավոր նախադասության՝ կարող է միադիմի ստորոգյալի կամ կարողանալ բայի մոտ դրված ասել ուղիղ խնդրի լրացումը. ըստ որում ստորոգյալը կամ դրվում է ժխտական ձևով և կամ առկա են լինում նաև դժվար, հազիվ եղանակավորող բառերը (հաճախ թե-ի հետ)։ Վերջիններիս միջոցով արտահայտվում է հարցին պատասխանելու հնարավորության կասկածի տակ առնվելը։ Օրինակներ՝

Աղջիկը, իրոք որ, շատ տգեղ էր։ Իսկ թե ինչո՞վ էր տգեղ, ինչո՞ւ էր տգեղ՝ չեմ կարող ասել (ՄԱՊ, 571)։ Ի՞նչ կար նրա մեջ այդպես թովիչ՝ ոչ ոք չէր կարող ասել (Ն. տ., 481)։ ... Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին, հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,—դժվար է ասել (Պ. Սևակ, 7)։

4. Ուղիղ խնդիր պարունակող անշաղկապ բարդ նախադասություններով կարող է հաղորդվել նաև ուրիշի ուղիղ խոսքը. դա լինում է հատկապես այն ժամանակ, երբ խոսողը վերապատմում է անցյալում կատարված իրողությունների, խոսակցությունների մասին։ Բերենք մի քանի օրինակ.

Ինձ ճանանչ մի դուքանչի ասում էր՝ շաֆարը շուտ կքանկի, նմանապես կտորը (ԱԲ, 533)։ Երբ փողոցում երևում էր Ալեքսանդրա Տիմոֆեևնան, ապա հարևանները զարմացած ասում էին՝ նոր, փառհեղ տուն ունի, իսկ ինֆը հնամաշ շորեր է հագնում (Ե, 25/12—1960 թ., էջ 4)։ Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա (ՀԹ, 3, 138)։ Եկա ասի՝ Աբգար, արջի բուն եմ գտել, արի գնանֆ արջին բնիցը հանենֆ (Ն. տ., 81)։ Այս ձևը շատ է տարածված նաև առածների, ասացվածքների մեջ. օրինակ՝ Պուտուկն ասաց՝ իմ տակ ոսկի ա, շերեփն ասաց՝ ես հո՞ւտ կուզամ (Հայկ. առած., 63)։

Ասացական պետք է համարել նաև երգել բայը հետևյալ անշաղկապ բարդ նախադասության մեջ՝ Նա պիտի երգի՝ ինչ է կամեցել իր մոխրակալած-հրակեզ հոգին (Պ. Սևակ, 7)։

Կառուցվածքային նույն առանձնահատկություններն ունեն նաև մյուս ասացական բայերի մոտ դրված ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ անշաղկապ բարդ նախադասությունները։ Օրինակներ՝

Բացատրիր, խնդրեմ, ինչով կվերջանա այս ամենը (Ի. էր., ՓԱ,

1, 116)։ Կարճ էր հասակը, քե բարձր., թավ էր ձայնը, քե բարակ, և գիտեր նա սրինգ նվագել...,—այդ բոլորն ինձ չավանդեց իմ ընկեր Ավագը (ԱՔ, 239)։

բ) Ուղիղ խնդրի պաշտոն կատարող անշաղկապ նախադասություններ դրվում են նաև իմացական, ինչպես նաև իմաստով նրանց հարող բայերի մոտ—դրանցից են՝ գիտենալ՝ իմանալ, գուշակել, ճասկանալ, ըմբռնել, հիշել, լսել և այլն։ Օրինակներ՝

Ես գիտեմ, նա շատ ուրախ կլինի ինձ տեսնելով (ԴՄե, 360)։ Հիշում եմ՝ օրը լուսավոր էր, երկինքը չինջ ու անհատակ (ե. Չար., 196)։

Հատկապես շատ են տարածված գիտենալ բայի լրացումը հանդիսացող անշաղկապ ուղիղ խնդիր նախադասությունները, որոնք ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

1. Անշաղկապ բարդ նախադասության գերադաս մասը հաստատական է, ունի պատմողական բնույթ, ստորոգյալն է գիտենալ բայը, որի սեռի պահանջով հանդես է գալիս երկրորդական նախադասություն։ Ինչպես նախորդ տեսակի անշաղկապ բարդ նախադասություններում, այստեղ ևս երկրորդական նախադասությունը ունենում է ազատ կառուցվածք. կարող է լինել պարզ, ընդարձակ, բարդ։ Բերենք մի քանի օրինակ.

Ես գիտեմ հիմա—ամենքի նման մի սովորական աղջիկ էիր դու (ՎՏ, երկ., 120)։ Բայց ևա գիտեր՝ գլխավոր ինժեներն իր վճիռներից երբեք ետ չէր կանգնում (Խեչ., ՄՄՀ, 61)։

Նույնանման կառուցվածք ունեն նաև իմանալ բայի մոտ դրված մի շարք նախադասություններ. այսպես՝

Գնա և իմացած եղիր՝այսուհետև իմ ճանապարհը ազատության պողոտան է (ԴՍԲ, 2, 350)։ Իմացավ՝ մոտենում ենք—շտապով ետ-ետ գնաց, ներս մտավ, թաքնվեց (ՀԲ, 3, 94)։ Սաղն ինչ կիմանա, կաղն ինչ ա (Հայկ. առած., 141)։

Երբեմն գլխավոր մասում գործածվում է մի քանի բառակապակցությունը, որը կատարում է ձևական ուղիղ խնդրի պաշտոն և ընդգծում է երկրորդական նախադասության բովանդակությունը, միաժամանակ ավելի տերտ դարձնելով գլխավոր և ստորադաս մասերի կապակցությունը. Օրինակ՝ Բայց ճաստատապես գիտեր մի բան. հողին կյանք տվողը ջուրն է, մարդուն կյանք տվողը՝ հողը (Ա. Սահ., 311)։ Մյուս կողմից մի քանի բառակապակցությունը ավելի կոնկրետ է դարձնում իմացության օբյեկտը։ Հաճախ իմացության օբյեկտի կոնկրետ, որոշակի լինելը ընդգծելու համար երկրորդական նախադասությունը շրջուն շարադասությամբ լինում է առաջադաս, իսկ

գլխավորի մեջ հանդես է գալիս այդ (երբեմն նաև դա) ցուցական դերանունը, որը սովորաբար դրվում է գլխավոր նախադասության սկզբում, երբեմն նաև ենթակայից հետո, բայց միշտ ստորոգյալից առաջ։ Իմացության օբյեկտ հանդիսացող երկրորդական նախադասությունը այս դեպքում սովորաբար ունենում է եղրակացության, եղրահանգման նշանակություն։ Ահա օրինակներ։

Անառիկ է այդ բերդը—ամենը այդ գիտեն (Ե. Չար., 300)։ Արշակը գնաց Արամի հաճախած սրճարանը, դռնից նայեց ներս. Արամը չկար. իհարկե դեռ չպիտի լիներ, այդ լավ գիտեր ինքը, (Ավ. Իս., 3, 101)։ Դու անվանի մարդ ես, այդ մենք գիտենք, ամբողջ շրջանը գիտի (Սեբ., 1, 11)։ Նրանք սիրում էին միմյանց. այդ գիտեր բազումին (Մուր., 3, 244)։ Ուրիշ փոխադրություններների համար դուք ոմանք ուրիշ մեքենաներ, ես դա լավ գիտեմ (ՄԱՊ, 687)։ Հետևանք ես դու, իմաստուն,—այս մեկը դու լավ իմացիր... (Ե. Չար., 171)։ Վերջին օրինակում որպես գլխավոր մասի իմացական բայով արտահայտված ստորոգյալի ձևական ուղիղ խնդիր հանդես է եկել այս մեկը բառակապակցությունը։ Իմացության օբյեկտի որոշակի, հավաստի լինելը ընդգծելուն օժանդակում է նաև լավ, հաստատապես, հաստատ մակբայների գործածությունը ձևական ուղիղ խնդիրների մոտ (տե՛ս վերևի օրինակները)։

Երբ գլխավոր նախադասությունը հարցական է կամ ժխտական, օբյեկտ հանդիսացող երկրորդական նախադասությունը միշտ արտահայտում է հարցում, ըստ որում հարցումը լինում է կամ անուղղակի, կամ ուղղակի։ Բերենք մի քանի օրինակ։

Քաշում են տանից, քաշում են դռնից, ու չես իմանում՝ որ կողմը թռչես (ՀԹ, 2, 38)։ Դարերի մշուշից է բուսել նա. չգիտեմ՝ երբ է ծնկված, ում ձեռքով (Ավ. Իս., 3, 141)։ Ով գիտե՝ ինչ մարդիկ կան այնտեղ (ԴՍԹ, 2, 339)։ Չգիտեմ՝ որտեղից է գալիս Ջութակի հեկեկանքը տրտում (ՎՏ, երկ., 119)։ Ո՞վ գիտե՝ ինչ էին երազում (Ավ. Իս., 3, 124)։ Այս օրինակներում երկրորդական նախադասությունը պարունակում է անուղղակի հարցում։

Ո՞վ գիտե արդյոք՝ բերե՞լ է մեկը այսօր աշխարհում խառնելու ձեր մեծ ու հզոր երգին Մի երգ—ավելի ըմբոստ ու արի (Ե. Չար., 24)։ Ես չգիտեմ՝ ո՞ւր են տանում հեռավոր Ուղիների ժապավենները անհամար (ՎՏ, երկ., 62)։ —Ծանոթացանք, բարեկամացանք, հիմա բաժանվում ենք. ո՞վ գիտե՝ տեսնելո՞ւ ենք մեկ էլ իրար (Ավ. Իս., 3, 143)։ Ո՞վ գիտե՝ ո՞վ է վառել հուրը, հրդեհն այս հսկա. ես գիտեմ՝ դու ես վառել հուրը, հրդեհն այս հսկա (Ե. Չար., 133)։ Այս օրինակներում արդեն իմացության օբյեկտը ուղղակի հարցում է։

Մանրություն—ո՞վ գիտե գլխավոր նախադասությունը ունի ընդհանուր-անորոշ նշանակություն և այդ պատճառով սկսում է դադարել որպես նախադասություն գիտակցվելուց և վեր է ածվում եղանակավորող բառակապակցության։

Շատ հաճախ այս նախադասությունները (հարց պարունակող նախադասությունները) ոմնենում են հակառակ շարադասություն—այսինքն՝ սկզբում հաղորդվում է հարցը, ապա գլխավոր նախադասությունը, որը դարձյալ լինում է կամ ժխտական, կամ հարցական. օրինակ՝

Ո՞ւր ես, ո՞ւր ես՝ չըգիտեմ (ՎՏ, Երկ., 159)։ Եվ ինչո՞ւ եկան, և ինչո՞ւ անցան—Մենք չենք իմանում աշխարհում անդուռ (Ե. Չար., 139)։ Ի՞նչ էր գտել նա իմ մեջ, չգիտեի (Մուր., 3, 66)։ Արդյոք այդ մոայլ, կամարապատ անկյուններով իրար կպած խցիկները կայի՞ն պարիսպները շինվելուց առաջ, թե՞ հետո շինեցին, չգիտեմ (Մ. Մանւ., 202)։ Ո՞վ էր այդ մարդը, մենք չգիտեինք (ԱԲ, 134)։

Անշաղկապ բարդ նախադասության վերջադաս գլխավոր մասը այս դեպքում ևս երբեմն սկսվում է այդ կամ դա ցուցական դերանուններով. օրինակ՝

Ի՞նչ ցեղից էր նա—այդ ո՞վ կիմանար (Ե. Չար., 5)։ Ինչո՞ւ հացը պակասեց, մենք այդ չհմացանք (ԴՄԵ, 483)։ Ինչպե՞ս սկսվեցավ նրանց սերը, այդ ոչ ոք չգիտեր (Մուր., 3, 246)։

Երբեմն, ժխտական կառուցվածք ունենալու դեպքում, գլխավոր նախադասության ենթակայի և խմացական բայով արտահայտված ստորոգյալի միջև դրվում է էլ եղանակավորող բառը, որով ավելի է ընդգծվում նրա ժխտական նշանակությունը. օրինակ՝

Ինչո՞ւ ծնվեց նրա մեջ այդ ցանկությունը, իճճե էլ չգիտեր (ԱԲ, 64)։ Ինչո՞ւ էին վախենում, իրենք էլ չգիտեին (Մ. Մանւ., 112)։ Ի՞նչն էր նրա մտախոհության և տխրության պատճառը,—իճճե էլ չգիտեր և բոլորովին չէր էլ աշխատում իմանալ (ՆԴ, 2, 246)։

Առաջադաս գործածվելու դեպքում հարցում պարունակող նախադասության ստորադաս բնույթը որոշ չափով մթագնվում է, նրա վրա է դրվում նախադասության տրամաբանական շեշտը, իսկ երկրորդ՝ գերադաս մասը ստանում է ամփոփող, եզրափակող նշանակություն։

Կառուցվածքային նման առանձնահատկություններ ունեն այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց մեջ երկրորդական նախադասությունը հանդիսանում է գլխավորի հասցեական բայի օբյեկտը։ Բերենք օրինակներ։

Մոր ու տատի բարձրացրած ողբից Վաճաը *հասկացավ... դա իր հայրն էր (Ա. Սահ., 4)։ Տիգրանը հասկացավ՝ Հասրաթին հյուրասիրության պատրաստություն է տեսնում (ԴՍԲ, 2, 347)։ Ես հասկացա, Միքայելն իսկական ստեղծագործող ինժեներ է (Խեչ., ՀՄՀ, 356)։—Այս օրինակներում երկրորդական նախադասություններդ վերջադաս են և ունեն եղրակացության, եղրահանգման նշանակություն։*

—Բայց ես մի բան լավ եմ հասկացել. հզոր տերությունները փոքր ազգերին չեն հարցնում՝ կամենո՞ւմ են նրանք դառնալ թնւանոթի միս, թե ոչ (ՆՋ, ՊՊՆ, 96)։ Այստեղ մի բան բառակապակցությամբ ուժեղանում է անշաղկապ նախադասության մասերի կապը, շեշտվում է օբյեկտ հանդիսացող մասի բովանդակությունը։ Այդ բանին օժանդակում է նաև լավ մակբայի առկայությունը գլխավոր մասում՝ հասկանալ *բայի մոտ։*

Ա՜խ, մարդ չի հասկանում, ինչո՞ւ են մեռնում այդպիսի մեծ մարդիկ (Ավ. Իս., 3, 14)։ Սակայն նա չէր կարողանում հասկանալ մի բան. ով և ինչ հիմքերով էր պաշտպանում այդ նախագահին (Ա. Սեկ., 469)։ Նա չէր հասկանում՝ սիրո՞ւմ էր, թե ատում այդ մարդուն (ՆՂ, 2, 62)։ Այստեղ գլխավոր մասը ժխտական է, իսկ ստորադասը՝ հարցական։

Գլխավոր մասի ժխտական լինելու դեպքում, երբեմն, ստորադաս մասը կարող է լինել հաստատական և ցույց տալ, նկարագրել մի երևույթ կամ գործողություն (սովորաբար ընդհանրացնող կամ եղրակացության նշանակությամբ), որը չի ըմբռնվել՝ հասկացվել գլխավոր նախադասության ենթակայի կողմից. այդ նշանակության դեպքում գլխավոր նախադասության մեջ սովորաբար հանդես է գալիս մի բան բառակապակցությունը՝ որևէ որոշիչի հետ. օրինակ՝

Դուք չհասկացաք հասարակ մի բան. մարդ կարող է փոխել իր բնակարանը և հայրենիքը, բայց ազգը չի կարող նույնը անել (ՆՋ, ՊՊՆ, 95)։ Ի՞նչ էր նշանակում «բարձում» բառը, ես չէի հասկանում (ՀԻԿվ, 24)։ Արդյոք ում պատկերներն էին, ես հասկանալ չկարողացա (Ր, 5, 10)։ Տաք տներից ելնում են դուրս և խևի պես ուր են գնում—ուր են գալիս՝ չես ըմբռնում (Պ. Սևակ, 115)։ Ինչո՞ւ էր այդպես՝ ես չէի ըմբռնել (Թոթ., 128)։ Այստեղ ժխտական կառուցվածք ունեցող գլխավոր նախադասությունը վերջադաս է, իսկ նրա օբյեկտի պաշտոնը կատարող հարցական կառուցվածք ունեցող երկրորդական նախադասությունը՝ առաջադաս։

Երբ գլխավոր նախադասության՝ բայով արտահայտված ստորոգյալը դրված է լինում երկրորդ դեմքով, երկրորդական նախադա-

սությունը կարող է հաստատական լինել նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասությունը հարցական է, օրինակ՝ Հասկանո՞ւմ եք՝ քարի մեջ փորել է հրաշալի դեմքեր (Ե. Չար., 302)։

Իր իմաստով իմացական բայերի մոտ է կանգնած ճիշել բայը, որի մոտ ևս հաճախ դրվում է անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն։ Վերջինիս միջոցով նկարագրվում է այն գործողությունը, իրողությունը, եղելությունը, երևույթը, որը կատարվել, տեղի է ունեցել անցյալում, սակայն մտաբերվում, վերականգնվում է գլխավոր մասի ենթակայի կողմից՝ հանդիսանալով նրա գործողության օբյեկտը։ Ճիշել բայի մոտ անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունն դրվում է սովորաբար հետևյալ դեպքերում՝

ա) Երբ գլխավոր նախադասության ենթական խոսողն է կամ հեղինակը. այսինքն՝ երբ ճիշել բայը դրված է առաջին դեմքով։ Այս դեպքում անշաղկապ բարդ նախադասությունը ունենում է հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները—գերադաս մասը դրվում է բարդ նախադասության սկզբում, նրա ստորոգյալը սովորաբար դրվում է ներկա ժամանակով (երբեմն նաև անցյալ կատարյալով), հարաբերյալ բառ, այսինքն՝ ձևական ուղիղ խնդիր բոլորովին հանդես չի գալիս։ Ճիշել բայի մոտ դրված երկրորդական նախադասությունները նախորդների համեմատությամբ ունեն միայն այն առանձնահատկությունը, որ պարունակում են նկարագրություններ անցյալում կատարված երևույթների, գործողությունների մասին. այդ պատճառով նրանցում գործածվում են միայն բայի անցյալ ժամանակները։ Բերենք մի քանի օրինակ։

—Ճիշում եմ. հնչեց զանգը միջանցքում, և ես ներս մտա հին սենյակը քո (Ե. Չար., 139)։ Էսօրվա պես ճիշում եմ. գոմշովով մի թեռ կորեկ էր բերել աղալու (Դխ, 23)։ Լավ հիշում եմ, ձմեռ էր, ցուրտ (Ա, 1/12—1960 թ., էջ 3)։ Ճիշում եմ. երկու օր էր ինչ Մարզպետունի իշխանը ներացել էր մեր ամրոցից (Մուր., 3, 55)։

բ) Երբ գլխավոր նախադասության ենթական խոսակիցն է, որին հարցով դիմում է խոսողը կամ հեղինակը՝ երկրորդական նախադասության մեջ նկարագրված երևույթը կամ գործողությունը (իրողությունը) հիշելու առթիվ, կամ հորդորում է հիշել այն։ Ճիշել բայը այս դեպքում դրվում է երկրորդ դեմքով և լինում է կամ հարցական, կամ հրամայական։ Երկրորդական նախադասությունը նախորդի համեմատությամբ ունի կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ երբ գլխավոր նախադասությունը հրամայական է, կարող է վերաբերել և անցյալին, և ներկային, և ապագային։ Օրինակներ՝

Հիշո՞ւմ ես, դու հոգնել էիր ու թեքել սիրուն գլուխդ դեպի ուսս (Մ. Ման., 303)։ Արդյոք հիշո՞ւմ ես, աճտառ էր, առու... հեքիաթի պես էր—երազի նման (ՎՏ, երկ., 25)։ Մի հուսահատվեք և հիշեցեք՝ մենք ճանաչում ենք ժամանակավոր, նահանջի մեջ նույնիսկ, մենք նախապատրաստում ենք հաղթանակը (ՄԱՊ, 646)։

Իմացական բայերին լրացնող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունը. երբ գերադաս մասում առկա է լինում ստորոգյալին լրացնող ձևի պարագա, այն (գերադաս մասը) ձեռք է բերում որոշ ինքնուրույնություն, ներդործական բայը կարծես լրացման խիստ պահանջ չի ղգում, և երկրորդական նախադասությունը հանդես է գալիս սոսկ բացատրական դերով։ Դա երևում է հատկապես ինտոնացիայից. ձայնը որոշ չափով իջնում է, մեծանում է դադարը առաջին և երկրորդ մասերի միջև, ըստ որում առանձնահատուկ շեշտվում է այդ ձևի պարագան։ Գրավոր խոսքում այս անշաղկապ նախադասության մասերը բաժանվում են մեծ մասամբ միջակետով։ Բերենք մի քանի օրինակ.

Նա ճիշտ էր գուշակել. Ջանոն հազիվ էր պահում իրեն, որպեսզի դուրս չլիներ այդ վտանգավոր ծերունուն (Ա. Սեկ., 464)։ Ես շատ լավ գիտեմ. նա այսօր չի կարողանա գնալ։ Այս անշաղկապ նախադասությունների բաղկացուցիչ մասերի կապակցությունը կարելի է համարել նաև հարակցական։

3) Անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն դրվում է նաև մտածական բայերի մոտ—մտածել, ուրոշել, վճռել և այլն։ Այս դեպքում երկրորդական նախադասության մեջ նկարագրվում է այն երևույթը, գործողությունը, իրողությունը, որը հանդիսանում է գլխավոր նախադասության ենթակայի մտածության օբյեկտը։ Մտածական բայերը ունեն այն առանձնահատկությունը, որ պահանջում են գործողություն ցույց տվող լրացում։ Այդ պատճառով էլ նրանց լրացումը արտահայտված է լինում կամ անորոշ դերբայով, կամ երկրորդական նախադասությամբ։

Երբ անշաղկապ բարդ նախադասության գլխավոր մասի ստորոգյալը մտածել բայն է, այն (անշաղկապ նախադասությունը) իր կառուցվածքով նման է լինում ասացական բայեր պարունակող անշաղկապ բարդ նախադասություններին։ Միայն ի տարբերություն ասացական բայերի, մտածել բայի մոտ դրված անշաղկապ ուղիղ խնդիր նախադասությունները անուղղակի հարցում չեն պարունակում (հարցումը միշտ լինում է ուղղակի), օրինակ՝

Ես հոտ եմ քաշում և մտածում եմ,—որտե՞ղ եմ լսել այս ծանոթ բարբառը (ԳՄե, 478)։ Անբախտ պառավ, գոնե տեսա՞ր քո երկրորդ աղջկա բախտավորությունը, մտածում էի ես (Շ, 2, 477)։ Այսօր նրանք ժողով չունեին, ինչո՞ւ ուշացավ՝ մտածում էր նա (ՄԱՊ, 40)։

Մտածել բայի ժխտական ձևի մոտ անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն սովորաբար չի դրվում։ Այս դեպքում գործածվում է կապակցության շաղկապական ձևը։

Կարծել բայի մոտ անշաղկապ երկրորդական նախադասություն հանդիպում է այն դեպքում, երբ այն դրված է լինում առաջին կամ երկրորդ դեմքերով, այլ կերպ ասած՝ երկխոսությունների ժամանակ, երբ խոսողը հայտնում է իր կարծիքը կամ հարցնում է խոսակցի կարծիքը։ Երկրորդ դեպքում երկրորդական նախադասությունը ունենում է հարցական բնույթ։ Երկրորդական նախադասությունը այստեղ ունենում է վերջադաս շարադասություն։ Առաջադաս հանդես է գալիս շատ հազվադեպ, այն էլ երբ կարծել բայը դրված է լինում ժխտական ձևով։ Վերջին դեպքում երկրորդական նախադասությունը արտահայտում է որևէ եզրակացություն, դատողություն։ Օրինակներ՝

Ես կարծում էի—այնտեղ, Ռումբերի ահեղ որոտում կգտնեմ քո դեմքը լուսե (Ե. Չար., 47)։ Ես կարծում եմ՝ հնարավոր է (Ա, 1/12—59 թ., էջ 3)։ Դու կարծում ես՝ այդ թղթերը կփրկե՞ն քեզ (Վերդ., ԻԳե, 313)։ Դու կարծում ես՝ դեռ կարող եմ ժպտալ ու սիրե՞լ (Մ. Ման., 312)։— Մենատնտեսի հոգի ունես դու— չէի կարծում (ՀՔ, 97)։

Ինչպես երևում է 3-րդ և 4-րդ օրինակներից, երկրորդ դեմքով դրված կարծել բայի պահանջով հանդես եկող երկրորդական նախադասությունը թեև ունենում է հարցական բնույթ, սակայն հաճախ ցույց է տալիս, որ, ըստ հեղինակի, նկարագրված երևույթը կամ գործողությունը իրականում գոյություն չունի, ռեալ չէ՝ չնայած գլխավոր նախադասության ենթակայի ցույց տված անձի հակառակ կարծիքին։

Վճռել, որոշել բայերի մոտ դրված անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները ունեն այն առանձնահատկությունը, որ նրանց ստորոգյալները մեծ մասամբ դրվում են ապառնի ժամանակներով (հատկապես ըղձական)։ Դա բխում է որոշել, վճռել բայերի բայիմաստից. նրանք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը կապված է ապագայում կատարվելիք այլ գործողության հետ։ Օրինակներ՝

էլ ճար չկար։ Տեսավ՝ տեղ չեն տա իրենց, եվ որոշեց՝ ամի ինչ էլ լինի (Ն. Չար., 100)։ Հիշում էր անցած օրերը, մորը, հորը, նրա ա-սածները ու մտքում վճռում՝ երբ դուրս գա, անպատճառ գտնի Շու-շիկին (Մ. Ման., 210)։ Ի՞նչ էր դրա պատճառը, մինչև հիմա էլ նա չէր կարողանում որոշել (Սեհ, 1, 8)։ Բայց որո՞նք էին սարահարթի սահմանները գյուղի աջ և ձախ կողմերում կամ հետևում, ի՞նչ կերպ էր կապված գյուղը ներքևի հետ—այդտեղից, կապից, դժվար էր որո-շել (ՄԱՊ, 546)։ Վերջին երկու օրինակում երկրորդական նախա-դասությունը առաջադաս է, որովհետև հարցական բնույթ ունի։

Անհրաժեշտ է նշել, որ այս բայերի մոտ անշաղկապ ուղիղ խնդիր նախադասությունները հազվադեպ են հանդիպում։ Նրանք կամ միանում են շաղկապով և կամ լրացումը լինում է անորոշ դեր-բայով արտահայտված դերբայական դարձված, բայց ոչ անշաղկապ նախադասություն. օրինակ՝ Ամբողջ այդ ժամանակ նա մի բան մի-այն կարողացավ որոշել. անպայման հանդիպել Գասպարյանին, խո-սել հետը (Ա. Սեկ., 404)։

4) Անշաղկապ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն-ներ կարող են դրվել նաև մի շարք զգացական բայերի մոտ՝ տեսնել, նկատել, լսել և այլն։

Հատկապես հետաքրքիր են տեսնել բայի մոտ դրված երկրորդա-կան նախադասությունները։ Վերջիններս սովորաբար նկարագրում են այն իրողությունը, գործողությունը, որը դիտվում և ընկալվում է գլխավոր նախադասության ենթակայի կողմից։ Օրինակ՝

Վազեցինք, տեսանք՝ մեռած ընկած է ծառի տակին (ՀՔ, 3, 73)։ Լուսաբացին արտասուքը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տորրի հողը, տեսնի՝ խո՞րն է ծծել ջուրը (ԱՔ, 98)։ Տես՝ ոնց է հալվում ու կաթում կտուրներին (ՆՋ, ՊՊՆ, 260)։ Ասել էին, թե երբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով է, ինչ է ուզում (ՀՔ, 3, 40)։ Նա տեսնում էր, ով ինչպես է ապրում (ԱՔ, 161)։ Տե-սավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրում (ՀՔ, 3, 142)։

Սակայն տեսնել բայ պարունակող գլխավոր նախադասությու-նը, անշաղկապ կապակցության ժամանակ, շատ հաճախ վեր է ածվում եղանակավորող, երանգավորող կապակցության՝ դադարեց-լով գիտակցվել որպես նախադասություն և ցույց տալով խոսողի վերաբերմունքը երկրորդական նախադասությամբ հաղորդված գոր-ծողության նկատմամբ։ Այսպես՝ մեկ էլ տեսար, մի որ էլ տեսար, տեսար բառակապակցությունները ցույց են տալիս՝ ա) որ խոսողը հավանական է համարում երկրորդական նախադասությամբ տրված գործողության հանկարծակի կատարվելը։ Երկրորդական նախադա-

սուբյան ստորոգյալը այս դեպքում սովորաբար դրվում է անցյալ կատարյալ ժամանակով, որը գործածվում է ապառնու նշանակությամբ։ Օրինակներ՝

— Ի՞նչ կարող ենք անել։ Ոչինչ։ Մի օր էլ տեսար՝ ավին, ջարդեցին ֆիքն ու մոութներդ արյունոտեցին, տարան զնդան (ԳՍԹ, 2, 159)։ Մեկ էլ տեսար, Գարեգինը եկավ (ՍհՀ, 1, 40)։ Մեկ էլ տեսար՝ Մարսելլը ավին նրանց (Ի. էր., ՓԱ, 2, 72)։

բ) Խոսողը հաղորդում է սովորաբար հանկարծակի, անսպասելի կատարվող գործողությունների մասին. օրինակ՝

Մեկ էլ տեսար՝ սկսեց իր անգիր շարահյուսությունները (ԴՄե, 340)։ Շիվ-աղջկա թևիկները, աղավնու պես, մեկ տեսնում ես, քիչ է մնում թառեն գետնին,... մեկ էլ տեսար՝ վեր են սուրում, ճախր են տալիս (Պ. Սևակ, 128)։ Տեսար՝ մի զգեզ թռավ (ԴՄե, 318)։

Այն, որ այս բառակապակցությունները արդեն չեն գիտակցվում իբրև դերավոր նախադասություն, երևում է նաև նրանից, որ տեսար բայը այստեղ կորցրել է նաև իր դիմային նշանակությունը (երկրորդ դեմքը չի գիտակցվում)։

Հետաքրքիր կառուցվածք ունեն հետևյալ նախադասությունները՝ Մոտեցա՝ տեսնեմ մեկն ընկել է, էն մեկն էլ արյան թելը քարշ տալով քողել գնացել է ձորը (ՍհՀ, 2, 74)։ Մի առավոտ էլ վեր կացա տեսնեմ՝ բոլոր տանեցիք տխուր են (ՀՔ, 3, 66)։ Մեկ էլ տեսնեմ՝ շուրջս մարդ չկա (ԴՍԹ, 2, 121)։

Այս նախադասությունների դերավոր մասի ստորոգյալը դրված է ըղձական եղանակի ապառնի ժամանակով, սակայն ունի անցյալ կատարյալի նշանակություն։ Այս տիպի նախադասությունները շատ են գործածվում խոսակցական լեզվում, երբ խոսողը պատմում է անցյալում կատարված գործողությունների, եղելությունների մասին, որոնց ինքը ականատես է եղել և ցանկանում է ավելի կենդանի, պատկերավոր դարձնել իր պատմածը։ Նախադասությունների այս ձևը գեղարվեստական գրականության մեջ գործածվում է կամ այն ժամանակ, երբ հեղինակը, որպես ականատես, առաջին դեմքով շարադրում է անցյալում կատարված դեպքերի, եղելությունների մասին, կամ էլ երկխոսությունների մեջ։

Այս նույն նշանակությունն ունի հետևյալ նախադասությունը՝ Մին էլ էն տեսանիմ՝ առաջի երկու ոտը վեր դրավ, դառավ չորքոտանի (ՀՔ, 3, 52)։ —Այստեղ գլխավոր նախադասության մեջ հանդես է եկել էն ձևական ուղիղ խնդիրը, որն օժանդակում է անշաղկապ բարդ նախադասության մասերի կապակցությանը և մեկ ամբողջություն կազմելուն։

Երբ տեսնել բայը դրվում է երկրորդ դեմքով և հարցական է, ցույց է տալիս, որ խոսողը երկրորդական նախադասությամբ հաղորդված գործողությունը, եղելությունը դիտում է իբրև հաստատ կատարված կամ կատարվող և խոսակցի ուշադրությունը դարձնում է դրա վրա, հաճախ որևէ հետևության հանգելու նպատակով։ Օրինակներ.

Տեսնո՞ւմ ես՝ դուք թվանքներդ առել եք ետևներիցն ընկել, մենք էլ ուրախացել ենք, թե ինչ ա մի պախրա կսպանենք, կուտենք (ՀՔ, 3, 75)։ Տեսնո՞ւմ ես, բան չի ստացվում (Վերդ., ԻԹ, 348)։ Բայց դու տեսնո՞ւմ ես, Նատաշա, ծառն արդեն կուլ է տալիս մեր անունները (Ալ., ՀԱ, 147)։

Երբեմն տեսնում ես ստորոգյալը չի լինում հարցական, այլ նրա կողքին հանդես է գալիս էլի եղանակավորող բառը, որը նախադասությանը տալիս է նույն իմաստային երանգը. օրինակ՝ Քո բարի աչքով տեսնում ես էլի, Տկլոր ու սոված էսպես տարին բուն քարիհողի հետ կռիվ ենք տալի (ՀՔ, 2, 38)։

Տեսնում ես (եմ) ստորոգյալը ևս սկսել է կորցնել նախադասության գլխավոր անդամի իր նշանակությունը և արդեն վեր է ածվում շաղկապական բառի՝ բանի որ նշանակությամբ, կապելով հիմունքի նախադասությունը գլխավոր նախադասության հետ (այն դադարում է դիտակցվել որպես անշաղկապ բարդ նախադասության գլխավոր մասի ստորոգյալ). օրինակ՝ Հանգիստ թողնք դրան, թողնք շորերը փոխի. տեսնո՞ւմ եմ՝ լաց է լինում (Մ. Մահ., 16)։ Կամ՝ Տեսնում ես ճնած եմ, ինչո՞ւ ես խանգարում։

Իրենց նյութական իմաստը սկսել են կորցնել նաև անշաղկապ բարդ նախադասության մեջ որպես գլխավոր նախադասություն հանդես եկող տեսնել բայի ըղձական և պայմանական եղանակի ապառնու ձևերը. օրինակ՝

Տեսնեմ, երբ են նիստ նշանակում (Դ. Ռշ. Մ., 174)։ Դե հիմա կտեսնեմ, իմ մի աչքն է սո՞ւր, թե՞ ձեր երկու աչքը,—պատասխանեց Չատոն (Դխ, 197)։ Ասա տեսնեմ, ուր էիր գնացել։ Գնացի տեսնեմ, ինչու չէր եկել։ Տեսնեմ, ինչ է ասելու։

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, տեսնել բայի պահանջով դրված անշաղկապ երկրորդական նախադասությունները լինում են վերջադաս և բաժանվում են գլխավորից ստորակետով, բութով, երբեմն նաև՝ միջակետով։

Մյուս ղգացական բայերի մոտ դրված անշաղկապ ուղիղ խնդիր նախադասությունները իրենց կառուցվածքով նման են իմացական բայերի պահանջով դրված նախադասություններին։ Բերենք մի քանի օրինակ.

Երբեմն նկատում էի՝ նրա մոտ գալիս էին անծանոթ անձինք, տարօրինակ հագուստներով... (Ր, 5, 33)։ Բաց արա սիրտդ իմ առաջ, աղա, մի չլուծված հանելուկ կա քո մեջ, ես էդ վաղուց եմ նկատել (Դխ, 285)։ Ինչպե՞ս էր անում. նա այդ, հետաքրքիր է լսել (Մուր., 1, 305)։ Ստեփանին էլ շատ բարև կանես։ Լսել եմ՝ հովիվ է սև սարերում (Դխ, 18)։ Ջգո՞ւմ ես՝ հոգիս, հոգիդ ու նրա—հեռու, անծանոթ ընկերոջ հոգին—նույն արեգակնական խորհրդով է լի (Ծ. Ջար., 26)։

Այստեղ անհրաժեշտ է միայն նշել, որ լսիր բայաձևը ևս որոշ դեպքերում սկսել է կորցնել իր նյութական իմաստը և վեր ածվել կոչական բառի. օրինակ՝ Լսիր, գուցե իսկապես այնքան էլ վատ չի այնտեղ (Ա. Սեմ., 11)։ Ամբողջ նախադասությունը այս դեպքում ևս չի գիտակցվում իբրև բարդ նախադասություն։

5) Անշաղկապ ուղիղ խնդիր նախադասություն է դրվում նաև սահմանափակ թվով այլ ներգործական սեռի բայերի մոտ. դրանցից են՝ խնդրել, բացատրել, ուզենալ, թողնել, խոստովանել, ճավատացնել։

Խնդրել, ուզենալ, ցանկանալ, թողնել *բայերի պահանջով դրված անշաղկապ ուղիղ խնդիր նախադասությունները ունենում են նպատակի իմաստային երանգ. օրինակ՝*

Կխորտակեմ կամարները երկնային, ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս... (Ավ. Իս., 2, 125)։ Ուզում եմ՝ ես էլ գամ ձեզ հետ (ՀՔ, 3, 46)։ Խնդրում եմ քեզ՝ մի վիրավորվիր, որ ես չգրեցի այն ժամանակ (ՄԱՊ, 566)։ Կուզեիր՝ երկա՞ր շարունակվեր այս հիմար պատմությունը (Վերդ., ԻԳՆ, 379)։

Երկրորդական նախադասության ստորոգյալը այս դեպքում սովորաբար դրվում է ըղձական եղանակով, իսկ խնդրել բայի մոտ՝ նաև հրամայական եղանակով։

Պահանջել *բայի մոտ կարող է դրվել նաև ուրիշի ուղիղ խոսքը. այսինքն՝ այս բայը կարող է գործածվել որպես ասացական բայ։ Այսպես՝ Կգնա ու կպահանջի՝ զորացրվել եմ, պարտավոր եք ձարմար աշխատանք տալ (Վերդ., ԻԳՆ, 6)։*

Մյուս բայերի մոտ դրված ուղիղ խնդիր նախադասությունները ունեն նույն կառուցվածքային առանձնահատկությունները, ինչ որ նկարագրված են վերևում։ Ահա մի քանի օրինակ.

Խոստովանում եմ, *այդ մասին ես չէի մտածել (Շ, 2, 466)։ Համրում էին՝ քանի՞ օր է, ինչ գործադուլ են անում (Ի. էր., ՓԱ, 1, 134)։ Բայց դուք գուցե էս էլ եք փորձել. ուզել եք գտնել, տեսնել մեր փոքրիկ երգչին ու չեք կարողացել (ՀՔ, 3, 93)։ Երևի նա սուզում*

էր՝ կա՞ արդյոք որևէ նմանություն իր դեմքի և այդ առարկայի միջև (ՆՋ, ՊՊՆ, 92)։ Չեմ ուզում թաքցնել ձեզնից, դրությունը լուրջ է, քիչ առաջ մոտն էի (Ա. Սեկ., 448)։

Սրանք են ներգործական սեռի բայերի պահանջով կազմված անշաղկապ բարդ նախադասությունները և նրանց կառուցվածքային առանձնահատկությունները։

ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐՔ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում համեմատաբար քիչ են այն անշաղկապ նախադասությունները, որոնց գլխավոր մասի ստորոգյալի և անշաղկապ միացած երկրորդական նախադասության միջև գոյություն ունեն անուղղակի խնդրի իմաստային հարաբերություններ։ Ըստ որում պարզ անուղղակի խնդրի և ստորոգյալի միջև եղած բազմազան իմաստային փոխհարաբերությունների համեմատությամբ՝ անշաղկապ բարդ նախադասություններում դրանք հանդես են գալիս շատ սահմանափակ քանակով։ Այս անշաղկապ նախադասությունները ևս իրենց բնույթով բացատրական են, որովհետև բացահայտում են գլխավոր մասի ստորոգյալի հետ կապված որևէ հանգամանք։ Ի տարբերություն անշաղկապ ուղիղ խնդիր նախադասությունների, անուղղակի խնդիր նախադասությունները դրվում են ոչ թե բայ-ստորոգյալի սեռի պահանջով, այլ նրա բայիմաստի պահանջով, այդ իսկ պատճառով նրանք կարող են դրվել նաև չեզոք սեռի բայերի մոտ։

Անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները.

ա) Գերադաս մասը դրվում է անշաղկապ նախադասության սկզբում, երկրորդական՝ անուղղակի խնդրի պաշտոն կատարող մասը լինում է վերջադաս։ Առաջին մասում եղած չեզոք բայը իր բայիմաստով լրացվելու կարիք է զգում. այդ դերով հանդես է գալիս երկրորդ մասը, որը կատարում է լրացման՝ անուղղակի խնդրի պաշտոնը։ Ստորադասական կապակցությունը այստեղ հենց դրանով էլ հիմնականում դրսևորվում է (ինտոնացիայի հետ միասին)։

բ) Ամբողջ անշաղկապ բարդ նախադասությունը այս դեպքում ևս ունենում է բացատրական ինտոնացիա, այսինքն՝ առաջին մասի վերջում ձայնը անկշռան բարձրանում է, դրան հաջորդում է դադար, որը այս դեպքում ավելի փոքր է, քան ուղիղ խնդիր երկրորդական

նախադասությունների առկայության ժամանակ. ապա ձայնի որոշ իջեցումով արտասանվում է երկրորդ մասը։

գ) Գլխավոր մասում սովորաբար ձևական անուղղակի խնդիր (այսպես կոչված հարաբերյալ) հանդես չի գալիս։

Բարդ նախադասության մասերի անշաղկապ կապակցության ժամանակ կարող են հանդես գալ անուղղակի խնդրի հետևյալ իմաստային հարաբերությունները։

1) Երկրորդական նախադասությամբ նկարագրվում է այն առարկան, երևույթը, որին ուղղված է գլխավոր մասի գործողությունը, այսինքն՝ երկրորդական նախադասությունը կատարում է հանգման անուղղակի խնդրի պաշտոն. օրինակ՝

Մայրիկ, ճայիր, արևն ինչպես դեղնել է, ցուրտ է ինչպես (Ավ. Իս., 1, 60)։ Հավատա ինձ, որ անզոր եմ տիրել իմ հոգուն, ճավատա ինձ, իմ սիրելի, էլ չեմ դիմանա (Գ. Սար., 18)։ Հավատա, առանց աղի մարդ կմեռնի (Լեո, 284)։ Սպասում էր, արդյոք յուր տերը կբարեհաճե՞ր ջուր պահանջել (Ր, 7, 34)։ Սպասի, հրես հերդ կժերը կտանի գետը (ԱՒ, 151)։

Ծանոթություն—Սպասել բայի մոտ դրված անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները սովորաբար միաժամանակ ունենում են նպատակի իմաստային երանգ (տես վերջին երկու օրինակը)։

2) Երկրորդական նախադասությամբ նկարագրվում է այն առարկան, երևույթը, որը սկզբնապատճառ է հանդիսացել գլխավոր մասի ենթակայի գործողության համար. օրինակ՝ *Մինչդեռ անհրաժեշտ էր, պետք էր մի տեղ տաքացնել փայտացած անդամները, այլ կերպ վախենում էր տեղ չհասներ (ԳՍՔ, 2, 6)։ Յուրաքանչյուրը վախենում էր մի գուցե լուրը հասնի միլիոնների ժառանգին (Շ, 4, 20)։* Ինչպես երևում է բերված օրինակներից, այս նախադասությունները ունեն պատճառի իմաստային երանգ և նկարագրում են այն գործողությունը, որի կատարվելու հնարավորությունը գլխավոր նախադասության ենթակայի մոտ առաջացնում է վախենալու (տվյալ դեպքում) զգացողությունը։

3) Անշաղկապ անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները կարող են արտահայտել նաև վերաբերության հարաբերություններ. այսինքն՝ նկարագրել այն երևույթը, գործողությունը, որին վերաբերում է գլխավոր նախադասության գործողությունը։ Այս նախադասությունները իրենց արտահայտած իմաստով մոտ են ասացական բայերին լրացնող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններին, դրվում են նույնպես մեծ մասամբ ասացական

բայերի մոտ (պատասխան տալ, պատմել, խոսել և այլն) և կարելի է համարել նրանց շարահյուսական համանիշը։ Սրանց միջև կա միայն այն նուրբ տարբերությունը, որ ուղիղ խնդրի դեպքում հիմնականում հաղորդվում է որևէ երևույթի մասին ամբողջությամբ, որպես գործողության օբյեկտ, իսկ վերաբերության անուղղակի խնդրով հաղորդվում, պատմվում է որևէ երևույթի, դեպքի, գործողության մասին ոչ որպես գործողության օբյեկտ, այլ իբրև լրացուցիչ տեղեկություն։ Օրինակներ.

Թող պատասխան տան. պատերազմից հետո ե՞րբ են նրանք այդքան բերք ստացել (Ա. Սեկ., 575)։ Ի՞նչպես եք ապրում, դու ձեզնից պատմի (ՀԹ, 2, 37)։ Որտեղի՞ց էր ինքը՝ այդ մեծ տատը, ո՞ւր էր մնացել նրա տունը, այդ մասին ճաստատ բան ճայտնի չէր (Լեո, 67)։ Իսկ ի՞նչ բան էր սովետական իշխանությունը, ոչինչ չգիտեր Տիգրանը (ՍՀ, 1/X, 61 թ., էջ 4)։

Վերաբերության անուղղակի խնդիր պետք է համարել նաև կասկածել, ճամոզված լինել, ճավատացած լինել, ճավատացնել բայերի մոտ բայիմաստի պահանջով դրված երկրորդական նախադասությունները։

Բերենք մի քանի օրինակ.

Բայց ես ճամոզված էի այլևս, ոչ մի անասուն այդ գործը չի ստանձնի և ավելորդ է դրա մասին մտածել (Թոթ., 281)։ Չենք կասկածում, ցուցահանդեսները կգոհացնեն նաև մեր արվեստագետներին (ՍԱ, 2, 1960, էջ 4)։ Չէ, ճավատացնում եմ քեզ, Միքայել, նա շատ կրթված աղջիկ է (ՆԴ, 2, 429)։ Եթե չօգնի, գոնե չի խանգարի, ճավատացնում եմ (Վերդ., ԻԳԵ, 395)։ Վերջին օրինակում գլխավոր նախադասությունը վերջադաս է, մի բան, որն այս տիպի նախադասությունների համար անսովոր կառուցվածք է։

4) Անուղղակի խնդիր պետք է համարել նաև քիչ մնալ, սիրտ անել հարադրությունների և կա բայի մոտ դրված երկրորդական նախադասությունները. այսպես՝

Քիչ է մնում ինձ ներքև շպրտեմ ու կտոր-կտոր անեմ իմ ընկերոջ դուշմանին (ՎԱԼԿ, 30)։ Ճիվ-աղջկա թևիկները, աղավնու պես, մեկ տեսնում ես՝ քիչ է մնում թառեն գետնին,... մեկ էլ տեսար՝ վեր են սուրում (Պ. Սևակ, 128)։ Լսեցի, որ թուրքերի արշավանքի ժամանակ գյուղումն են եղել. ինչպե՞ս սիրտ արիր՝ մնացիր (Ավ. Իս., 3, 84)։ Երեք օրն է դեռ անց կացել, Չորս օր էլ կա՝ քունը առնի (ՀԹ, 18)։

Քիչ մնալ և կա բայերի մոտ դրված անուղղակի խնդիր նախա-

դասույթյունները նկարագրում են ապագայում կատարվելիք գործողություն, այդ պատճառով էլ նրանց ստորոգյալները դրվում են ըղձական եղանակով։ Երբ գլխավոր մասի բայ-ստորոգյալը արտահայտված է լինում անցյալ ժամանակներով, երկրորդականի մեջ գործածվում է ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակը, իսկ երբ ներկա ժամանակով են դրված՝ ապառնի ժամանակը։

Ծանոթություն—Քիչ մեալ-ը ևս արդեն սկսել է վերածվել եղանակավորող բառի, ցույց տալով հնարավոր, բայց չկատարված գործողություն։

Երբեմն անշաղկապ անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն է դրվում նաև բայանուն գոյականների մոտ. այսպես՝ Աւրեր վկա՝ նա իր կյանքում այդպիսի աղջիկ չէր տեսել (ԴԲՆ, 363)։

Ինչպես երևում է ուսումնասիրությունից և բերված օրինակներից, անշաղկապ անուղղակի խնդիր նախադասությունները ունեն այն ընդհանուր առանձնահատկությունը, որ դրվելով վերջադաս՝ ցույց են տալիս գլխավոր մասի ենթակայի հարաբերությունը որևէ գործողության, երևույթի, իրողության հետ։ Պետք է նշել, որ նրանք, որպես կանոն, անձ ցույց չեն տալիս։

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշաղկապ բարդ նախադասությունների համակարգում որոշակի տեղ են գրավում այն նախադասությունները, որոնց բաղկացուցիչ մասերի միջև առկա են պարագայական հարաբերություններ։ Հատկապես տարածված են պայմանային և պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունները, ինչպես նաև ժամանակի անշաղկապ նախադասությունները։ Մյուս պարագայական հարաբերությունները (տեղի, ձևի համեմատության և այլն) անշաղկապ կապակցության ժամանակ հազվադեպ են հանդիպում։

Ուսումնասիրենք դրանցից յուրաքանչյուրը առանձին։

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունները կարող են լինել և բարդ համադասական, և բարդ ստորադասական։ Առաջին դեպքում նկարագրվում են միաժամանակ կատարվող (կատարված) կամ իրար հաջորդող երե-

վուլթներ, գործողություններ, որոնք դիտվում են որպես համեմատաբար ինքնուրույն և հավասարազոր միավորներ։ Իհարկե, ինչպես ասվել է «Անշաղկապ բարդ համադասական նախադասություններ» բաժնում, նրանք ևս կազմում են մի ամբողջություն։ Երկրորդ դեպքում արդեն ոչ թե սոսկ հաղորդվում են իրար հաջորդող գործողություններ, այլ առաջին մասի գործողությունը բերվում է երկրորդ մասի գործողության ժամանակը պարզելու, ճշտելու, ավելի որոշակի դարձնելու նպատակով։

Ժամանակային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ միշտ ստորադաս, երկրորդական է համարվում առաջին բաղկացուցիչ մասը, որի միջոցով բացահայտվում է երկրորդ բաղկացուցիչ մասում նկարագրված գործողության ժամանակը։ Մյուս առանձնահատկությունն այն է, որ երկու մասերն էլ (հատկապես առաջին՝ ստորադաս մասը) կարող են իրենց հերթին բարդ լինել (շաղկապավոր կամ անշաղկապ). օրինակ՝ իմացավ՝ մոտենում ենք—շտապով ետ-ետ գնաց, ներս մտավ, թաքնվեց (ՀԹ, 3, 94)։ Այստեղ գլխավոր նախադասությունը (շտապով ետ-ետ գնաց, ներս մտավ, թաքնվեց) միավորյալ է, իսկ ժամանակի պարագայի պաշտոն կատարող երկրորդական նախադասությունը իր հերթին անշաղկապ բարդ նախադասություն է (իմացավ՝ մոտենում ենք)։ Այսպիսի դեպքերում առաջին անշաղկապ նախադասության՝ ամբողջ բարդ ստորադասական նախադասության մեկ միավորը համարվելուն օժանդակում է ինտոնացիան։ Նրա մասերի միջև եղած դադարը դառնում է շատ աննշան (իմացավ՝ մոտենում ենք), նախադասության վերջում ձայնը որոշ չափով բարձրանում է, դրան հաջորդում է զգալի դադար, ապա արտասանվում է երկրորդ մասը։

Ժամանակային հարաբերություններ նշող անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները ևս ունեն նախազգուշացնող բացատրական ինտոնացիա, այսինքն՝ առաջին մասի վերջում ձայնը բարձրանում է (դրանով ցույց է տրվում, որ նախադասությունը չի ավարտվել), դրան հաջորդում է որոշ դադար, ապա սովորական իջնող ինտոնացիայով արտասանվում է երկրորդ մասը։

Անշաղկապ ժամանակի երկրորդական նախադասությունները բաժանվում են գլխավոր մասից ստորակետով, բութով (մեծ մասամբ), երբեմն նաև անջատման գծով։ Վերջինս սովորաբար օգտագործվում է այն դեպքերում, երբ ժամանակի երկրորդական նախադասությունը իր հերթին բարդ է և նրա ու գլխավոր նախադասության միջև եղած դադարը համեմատաբար երկար է։ Իմաստային

տեսակետից անշաղկապ ժամանակի երկրորդական նախադասությունները տարբերվում են շաղկապավոր ժամանակի երկրորդական նախադասություններից նրանով, որ միանում են գլխավորին հիմնականում ժամանակային հաջորդականության նշանակությամբ, հազվադեպ նաև՝ մասնակի միաժամանակության նշանակությամբ։

Այսպիսով՝ անշաղկապ կապակցության ժամանակ կարող են հանդես գալ հետևյալ ժամանակային հարաբերությունները.

1. Ժամանակային հաջորդականության հարաբերություններ.

Ի տարբերություն այս նույն հարաբերություններն արտահայտող շաղկապավոր բարդ ստորադասական նախադասությունների, որոնց մեջ գլխավոր նախադասության գործողության ժամանակը կարող է բացահայտվել ինչպես նրան նախորդող, այնպես էլ հաջորդող գործողություններ նկարագրելու միջոցով, անշաղկապ կապակցության ժամանակ գլխավոր նախադասության գործողության ժամանակը բացահայտվում է միայն նրան նախորդող մի այլ գործողության նկարագրելու միջոցով։ Գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները այս տիպի անշաղկապ նախադասություններում իրենց ժամանակներով սովորաբար համաձայնում են։

Երբ նկարագրվում են անցյալում կատարված՝ իրար հաջորդած գործողություններ, անշաղկապ բարդ նախադասության մեջ գրծածվում է բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը։ Սա ժամանակի երկրորդական նախադասությունների անշաղկապ կապակցության ամենատարածված ձևն է։ Բերենք օրինակներ.

Տեսավ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում, ինքն էլ մեկնվեց քաղքի մեյդանում (ՀՔ, 2, 32)։ Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ ուարաև Դիքորին (ՀՔ, 3, 42)։ Արհեստանոց իսկույն վազեց ու պատվիրեց չորս հատ ակնոց...Սևով նայեց՝ արևն անգամ նրան թվաց մի սառցագունդ (ԴԲ, 94)։ Այդ օձը մեր տան բախտի պահպանողն էր. սպանվեց օձը, դժբախտություններն սկսվեցին մեկը մյուսի հետևից (ԴՄՆ, 322)։ Ա՛յ գեներալ էր,—ասաց մի զինվոր,—որ այստեղ էր, կոծես վրանը լցվել էր, գնաց՝ վրանը դատարկվեց (ՀՔ, 275)։

Վերջին օրինակում ժամանակային հարաբերություն ցույց տվող անշաղկապ բարդ նախադասությունը իր հերթին հանդիսանում է համադասական անշաղկապ բարդ նախադասության երկրորդ բաղադրիչը (առաջին բաղադրիչը դարձյալ ժամանակային հարա-

բերություն ցույց տվող բարդ նախադասություն է, սակայն շաղկապական կապակցությամբ)։

Այս տիպի անշաղկապ բարդ նախադասությունների առաջին բաղադրիչները սովորաբար ունենում են պատճառի իմաստային երանգ, այսինքն նկարագրում են այնպիսի գործողություն, որը նախորդելով գլխավոր նախադասության գործողությանը՝ միաժամանակ կարծեք պատճառ է հանդիսանում վերջինիս կատարման համար (տես վերևի օրինակները)։

Անցյալ կատարյալ ժամանակով ժամանակի հարաբերություն ցույց տվող անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները տարածված են նաև ժողովրդական առածների, ասածվածքների մեջ, սակայն այս դեպքում նրանք ցույց են տալիս ոչ թե կոնկրետ ժամանակում իրար հաջորդած գործողություններ, այլ գործածվում են ընդհանուր-անորոշ նշանակությամբ։

Օրինակներ՝

Գիլի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ շուտ արեք, ոչխարը սարն անց կացավ (Հայկ. առած., 74)։ Խոջին տեսան, աղքատ մոռացան (Ն. տ., 7)։ Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չը հավատացին (Ն. տ., 79)։ Չկամին կամ լծեցին, եզները ճանեց սարերը (Ն. տ., 139)։

բ) Ժամանակային հաջորդականություն նշող անշաղկապ բարդ ստորադասական նախադասություններում գործածական են նաև ըղձական և պայմանական եղանակները։ Այս դեպքում գլխավոր նախադասությամբ նկարագրվում է ապագայում կատարվելիք գործողություն, որի կատարվելու ժամանակը ավելի որոշակի է դառնում, բացահայտվում է նրանից առաջ կատարվելիք մի այլ գործողություն նկարագրելու միջոցով։ Ըստ որում կամ և գլխավոր, և երկրորդական նախադասություններում գործածվում է պայմանական եղանակը և կամ գլխավոր նախադասության պայմանական եղանակին երկրորդականի մեջ համապատասխանում է ըղձական եղանակը (երկու դեպքում էլ ստորոգյալները ժամանակներով համաձայնում են. սովորաբար երկուսն էլ դրվում են ապառնի ժամանակով)։ Բերենք օրինակներ յուրաքանչյուր դեպքի համար։

Չէ, հավատացնում եմ քեզ, Միքայել, նա շատ կրթված աղջիկ է։ Այ, կգնաճ, ինձդ կտեսնես (ՆԴ, 2, 429)։ Պարզ է՝ ռազմական գաղտնիք է... Կգա ժամանակը՝ կիմանաք (ՄԱ, 3, 280)։ Այսօր, վաղը կվերանա, կտեսնեք (Գ. Ռշ., Մ., 70)։ Այս նախադասությունները իրենց կապակցության բնույթով շատ մոտ են համադասությանը։

Բայց աշունը վերջանա, մի անգամ կգամ Թեհրան (Ն. տ., 109)։ Էս տարի բերքը բարով-խերով հավաքենք, աշնանը մարդ կուղարկեմ ձեր տուն, խնամախոս (Ա. Սահ., 32)։ Գնամ, վերադառնամ՝ կմտածենք այդ մասին (Գ. Ոշ. Մ., 52)։

Այս կառուցվածքի նախադասություններում երբեմն նկարագրվում են սովորաբար իրար հաջորդող գործողություններ. օրինակ՝ Մի ուռի տեսնի՝ կկանգնի, աչքի պոչով կնայի, մտքում կհաշվի, թե քանի տախտակ դուրս կգա (ԱԲ, 73)։

Այստեղ երկրորդ՝ գլխավոր մասը իր հերթին ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ համադասական նախադասություն է։ Այն, որ առաջին մասը հավասարազոր չէ մյուսներին և ստորադասված է նրանց, երևում է անշաղկապ բարդ նախադասության կառուցվածքից. առաջին մասում ստորոգյալը դրված է ըղձական եղանակով, իսկ մյուսներում՝ պայմանական. այնուհետև՝ երկրորդ մասի բաղադրիչների ինտոնացիան թվարկման է, իսկ առաջին մասի և երկրորդի միջև եղած ինտոնացիան՝ բացատրական։

Հազվադեպ և՛ գլխավոր, և՛ երկրորդական նախադասություններում գործածվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակը. օրինակ՝ —Ո՞ւր,—հարցրեց Տիմոֆեևը։—Տորերս հագնեմ՝ գամ (Վերդ., ԻԳԵ, 367)։ Իսկ երբեմն էլ, երկրորդական նախադասության մեջ պայմանական եղանակի գործածության դեպքում, գլխավոր նախադասությունը լինում է անվանական. օրինակ՝ Տեղդ ծանր նստիր։ Կլուսանա, հեղեղները կիջնեն, նոր բարի ճանապարհ (ՍխՀ, 1, 94)։

Ըղձական և պայմանական եղանակների անցյալ ապառնի ժամանակները ևս ժամանակային հարաբերություններ արտահայտող նախադասություններում երբեմն ունենում են անցյալ անկատար ժամանակի իմաստ և ցույց են տալիս սովորաբար իրար հետ կրկնվող գործողություններ. օրինակ՝ Նրանք սև ասեին, պ. Մարուքեն կասեր սպիտակ. նրանք հա ասեին, պ. Մարուքեն կասեր՝ չէ— (Ե. Չար., 337)։ Անտառում գայլ կհարձակվեր մեզ վրա՝ մենք միասին էինք, եղնիկի ձագ բռնեինք, թե նապաստակի՝ միասին («Ավանգարդ», 5/2—59 թ.)։

Ապագայում կատարվելիք գործողություն նշելիս, ժամանակի երկրորդական նախադասությունները ունենում են պայմանի իմաստային երանգ, այսինքն՝ տրվում է նաև այն, որ երկրորդական նախադասության գործողությունը՝ կատարվելով գլխավոր նախադասության գործողությունից անմիջապես առաջ, պայման է հանդի-

սանալու գլխավոր նախադասության գործողության կատարման համար։ Սակայն այս նախադասությունները տարբերվում են պայմանի երկրորդական նախադասություններից նրանով, որ եթե վերջիններիս միջոցով տրվում է ենթադրվող գործողություն, որի կատարման համար անհրաժեշտ է որևէ այլ գործողության կատարում, ապա այս դեպքում նկարագրվող երևույթները դիտվում են իբրև հաստատ կատարվելիք գործողություններ, որոնք իրար հետ կապված են ժամանակային հաջորդականության նշանակությամբ (տե՛ս վերևի օրինակները)։

Ներկա ժամանակը այս նախադասություններում գործածվում է երկու դեպքում.

ա) Երբ կիրառվում է իբրև պատմական ներկա, այսինքն՝ նկարագրվում են անցյալում կատարված գործողություններ. օրինակ՝ Կռանում, բարձրացնում են քարը —բացվում է նրանց առաջ մի մութ ներքնահարկ (ծ. Ջար., 303)։ Դնում է Թաթոն ոտքը ջրաղացքարի վրա. շարժվում է (ծ. Ջար., 303)։

բ) Ավելի հաճախ՝ երբ նկարագրվում են սովորաբար իրար հաջորդող նախադասություններ. օրինակներ՝

Մանասը ուրիշ բան է։ Մենք միայն նրան ենք հավատում։ Տեսնում է մեզ, ասում է՝ ինչ որ արդար ու ճիշտ է (Լեո, 281)։

...Ու չեն էլ նկատում։ Ասում ես՝ զարմանում են... բացատրում ես՝ խեթում են (ծ, 10/2—61 թ., էջ 2)։ Դեպի բարձր նայում ես, քեզ հովանավորում է պարզ, աստղազարդ երկինքը (Ր, 5, 12)։ Քարը վատ է, շատ է բթանում, մի որ բանեցնում ես, այլևս ոչինչ չի կըտրում, պետք է միշտ սրել (Ր, 7, 215)։ Բերան կա հաց չկա, հաց կա, բերան չկա (Հայկ. առած., 2)։ Հազար կը մեռնի՝ մեկ չի շվարի, մեկ կը մեռնի՝ հազար կը շվարի (Հայկ. առած., 1)[1]։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս տիպի ժամանակի նախադասությունները հանդես են գալիս հիմնականում բարդ կազմով անշաղկապ բարդ նախադասություններում, որպես զուգադրողական անշաղկապ նախադասության բաղադրիչներ։

Երբ կրկնվող գործողությունների նկարագրությունը վերաբերում է անցյալին, գլխավոր և երկրորդական նախադասություններում գործածվում է սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակը. օրինակ՝

Մենք զարմանում էինք, որ նա այդպես փոխվել է, ճարցնում

---

1 Վերջին օրինակը բարբառային է. նրա բայ-ստորոգյալների ձևերը ներկայի ձևեր են։

էիճ, հազիվ էր պատասխանում (Մ. Ման., 42)։ Երբեք նրան այնքան վիրավորական, այնքան անտանելի չէր թվացել նրա դրությունը, որքան այժմ։ Հանդիպում էր յուր ծանոթներին—ոչ ոք չէր մոտենում նրան (Շ, 2, 433)։ Լավ մայթե՞ր էին անցկացնում՝ դրանք նույնպես «Զարզանդի մայթեր» էին (ՄԱՊ, 691)։

Վերը նկարագրված նախադասություններում ստորադասական կապակցությունը արտահայտվում է ինտոնացիայի միջոցով, որով և այս նախադասությունները տարբերվում են ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող համադասական նախախադասություններից։ Առաջին դեպքում անշաղկապ նախադասության ինտոնացիան նախազդուշական-բացատրական է, իսկ երկրորդ դեպքում՝ թվարկման։

Որոշ դեպքերում անշաղկապ նախադասությունների ստորադասական կապակցության դրսևորմանը օժանդակում են բառաքերականական միջոցները, որոնք միաժամանակ իմաստային նրբերանգներ են տալիս ժամանակային հաջորդականության նշանակությանը։ Այսպես՝ ժամանակային հարաբերությունը ստանում է անմիջական հաջորդականության նշանակություն, երբ՝ ա) առաջին մասի սկզբում (կամ կազմում) հանդես է գալիս հազիվ մակբայը. օրինակ՝ Հազիվ ծանրացան արտևանունքները—քնեց աբեղան յուր կոշտ անկողնում (ՀՔ, 2, 22)։ բ) Առաջին մասի ստորոգյալը կրկնվում է ժխտական ձևով, օրինակ՝ Հովակին թաղեցինք–չթաղեցինք՝ դու էլ ծովեցիր, լղարել, հենց չուի ես դառել (Մ. Ման., 43)։ գ) Առաջին մասի ինտոնացիան մոտենում է հարցական ինտոնացիային, երկրորդ մասը սկսվում է իսկույն մակբայով (օրինակ՝ Նոր, հսկայական ավտոբուսնե՞ր էր ստանում քաղաքը, իսկույն դրանք մկրտում էին «Զարզանդի ավտոբուս» անունով (ՄԱՊ, 691), կամ առաջին մասի ստորոգյալը դրվում է ըղձականի անցյալ ապառնի ժամանակով, երկրորդ մասը դարձյալ սկսվում է իսկույն-ով, իսկ ստորոգյալը (երկրորդ մասի) դրվում է անցյալ անկատար ժամանակով. օրինակ՝ Գյուղը մի նոր գիրք մտներ՝ իսկույն հոտն առնում էր (Ա. Սահ., 136)։

Երբեմն իսկույնը կարող է բացակայել, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է լինել բաղադրյալ (անցյալ ժամանակով դրված հանգույցով). օրինակ՝ Գարունը բացվեր՝ մինչև խոր աշուն, քեռի Վարդանը արտերի մեջ էր (Դե, 95)։

Նույն հարաբերությունն է արտահայտված նաև հետևյալ նախադասության մեջ՝ Չես հասցնում հայացիդ շրջել, տեղն արդեն ակոսված է («Երևան», 16/5, 59 թ.)։

Այս ձևերը գործածվում են սովորաբար իրար անմիջապես հաջորդող գործողություններ նկարագրելու համար, կամ ընդհանուր դատողություններ անելիս։ Վերջին դեպքում անշաղկապ նախադասությունը կարող է ունենալ նաև հետևյալ կառուցվածքը. առաջին մասի ստորոգյալը դրվում է անցյալ կատարյալ ժամանակի երկրորդ դեմքով, իսկ երկրորդ մասի ստորոգյալը լինում է բաղադրյալ և ցույց է տալիս այդ գործողության անմիջական հետևանքը. օրինակ՝

Խոսքը քանի բերանդ է՝ քունդ է, բերնեդ ելավ՝ ֆունդ չէ (Հայկ. առած., 128)։ Ի՞նչ է, ներկարարի կարա՞ս է՝ շորը գցեցիր մեջը, պատրաստ է (Վերդ., ԻԳԵ, 333)։ Աչքդ թեքեցիր՝ բանիդ տերը չես (ՀԹ, 2)։

Հաղվադեպ ժամանակային հաջորդականություն ցույց տվող անշաղկապ բարդ նախադասություններում լինում են ժամանակային հակառակ հաջորդականության հարաբերություններ. այսինքն՝ գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը որոշվում է նրան հաջորդած այլ գործողություն նկարագրելու միջոցով. երկրորդական նախադասությունը դարձյալ լինում է բացառապես առաջադաս (դրանով ավելի է ընդգծվում այս նախադասության ստորադասական լինելը, որովհետև համադասության ժամանակ առաջին մասում միշտ նկարագրվում է նախորդ գործողությունը)։ Այս նախադասությունները նախորդներից տարբերվում են կառուցվածքային այն առանձնահատկությամբ, որ ժամանակային փոխհարաբերությունները արտահայտելու համար շարադասության և ինտոնացիայի հետ միասին անպայման հանդես են գալիս բառաքերականական այլ միջոցներ։ Դրանք են՝

ա) Երկրորդական նախադասությունը, այսինքն՝ անշաղկապ բարդ նախադասության առաջին մասը սկսվում է դեռ մակբայով (դեռ-ը երբեմն կարող է դրվել ենթակայից հետո, բայց միշտ՝ ստորոգյալից առաջ), ստորոգյալը դրված է լինում անցյալ վաղակատար ժամանակի ժխտական ձևով, որի միջոցով նկարագրվում է այնպիսի գործողություն, որը ոչ թե ընդհանրապես չի կատարվել, այլ չէր կատարվել մինչև գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողության կատարումը. գլխավոր նախադասության ստորոգյալը միշտ դրվում է անցյալ կատարյալ ժամանակով. օրինակ՝

Դեռ ճաշ չէր եղել, ճասաճ Միաճե (Գ. Ռշ. Մ., 160)։ Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խազեինի ապտակների տեղերը, դեռ նոր էր լռել աղջիկ պարոնի ձենը—շվշվացնելով ներս մտավ Վասոն (ՀԹ, 3, 43)։

Վերջին նախադասությունը ունի բարդ կառուցվածք — այստեղ

հանդես են եկել երեք ժամանակի երկրորդական նախադասություններ, որոնցից յուրաքանչյուրը ունի տարբեր ժամանակային նշանակություն. 1-ին նախադասությունը ունի վերը նկարագրված ձևը՝ ցույց է տալիս գլխավոր նախադասության գործողությունից հետո կատարված գործողությունը (ընդգծվում է նրա կատարված չլինելը՝ մինչև գլխավոր նախադասության գործողության տեղի ունենալը)։ Երկրորդ նախադասությունը ունի մասնակի միաժամանակության նշանակություն՝ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը դեռ շարունակվում էր, երբ տեղի էր ունեցել գլխավոր նախադասության գործողությունը։ Այդ իմաստը տրվում է բայի անցյալ անկատար ժամանակի միջոցով։ Երրորդ նախադասությունը ունի դարձյալ ժամանակային հաջորդականության նշանակություն, սակայն ոչ թե նկարագրում է հաջորդած նախադասություն, ինչպես առաջինում է, այլ անմիջապես նախորդած գործողություն. դա արտահայտվում է անցյալ վաղակատար ժամանակի հատատական ձևով և նոր մակբայով՝ դեռ-ի մոտ (դեռ նոր)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս կառուցվածքի բարդ նախադասությունների անշաղկապ կապակցությունը բնազբոսիկ է, ոճական տեսակետից անհարթ։ Ավելի ճիշտ և օրինաչափական է այս նախադասությունների շաղկապավոր կապակցությունը (Դեռ ճաշ չէր եղել, երբ հասան Միանե և այլն)։

բ) Անշաղկապ բարդ նախադասության առաջին՝ ստորադաս մասի սկզբում դրվում է ես եց այն է, այն է, (բրբ. էն է) բառակապակցությունները, ստորոգյալը հանդես է գալիս անցյալ անկատար ժամանակով, իսկ երկրորդական մասի ստորոգյալը՝ անցյալ կատարյալ ժամանակով։ Գլխավոր նախադասության գործողության կատարման ընթացքում դեռևս չկատարված գործողությունը երբեմն տրվում է երկրորդական նախադասության ստորոգյալի մոտ դրված անորոշ դերբայի միջոցով. օրինակ՝ Հենց այն է, կամենում էր վեր կենալ և գնալ մառան, նկատեց դիմացը ծառի բնին հենված Դժխոչին (ԴԴ, 3, 128)։ Նշան ես բռնում և էն է՝ ուզում ես կրակել, մեկ էլ տեսար խշշկոտելով չքվեցին (ՍԽՀ, 1, 149)։

Վերջին նախադասությունը ունի սովորաբար տեղի ունեցող գործողությունների նշանակություն։ Այդ նշանակությունը արտահայտվել է երկրորդ դեմքի ներկա ժամանակի օգտագործումով երկրորդական նախադասության մեջ։

Ինչպես երևում է վերը նկարագրվածից, անշաղկապ բարդ ստորադասական նախադասությունները կարող են ունենալ նաև մասնակի միաժամանակության նշանակություն։ Այս դեպքում երկ-

րորդական նախադասության ստորոգյալը ցույց է տալիս անցյալում դրսևորված որևէ դրություն, վիճակ, որի հետևանքով կամ լինում է բաղադրյալ (ստորոգելիական հանգույցը դրված է լինում անցյալ ժամանակով), կամ դրություն ցույց տվող բայի անցյալ անկատար, անցյալ հարակատար ժամանակներով արտահայտված պարզ ստորոգյալ։ Ստորոգյալի մոտ, որպես օժանդակ միջոց, հանդես է գալիս դեռ, երբեմն նաև (սակավ դեպքերում) տակավին մակբայը։ Գլխավոր նախադասության ստորոգյալը միշտ դրվում է անցյալ կատարյալ ժամանակով. օրինակ՝

Ես միամիտ մանուկ էի տակավին, հոգիս ցնցեց գողտրիկ մի ձայն երկնային (Հովհաննիսյան)։ ...Դեռ այրվում էին խաղեհինի ապտակների տեղերը... —շշվացնելով ներս մտավ Վասոն (ՀՔ, 3, 43)։

Ստորադասական պետք է համարել նաև ժամանակային հարաբերություն արտահայտող հետևյալ անշաղկապ նախադասությունը՝ էս ա հա, էս կուժն էլ պրծնեմ, վեր եմ կենալու (ԱՔ, 144)։ Այս նախադասությունը տարբերվում է ժամանակային հաջորդականության նշանակություն ունեցող անշաղկապ բարդ համադասական նախադասություններից նրանով, որ ունի բացատրական ինտոնացիա, և՛ առաջին և՛ երկրորդ բաղկացուցիչ մասերում գործածված են տարբեր ժամանակներ (համադասության ժամանակ բոլոր մասերում սովորաբար գործածվում է նույն ժամանակը)։

Սրանք են ժամանակային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց միջոցով դրսևորված իմաստային երբերանգները։

ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անշաղկապ բարդ նախադասությունների համակարգում հատուկ տեղ են գրավում նրանք, որոնց բաղկացուցիչ մասերի միջև առկա են պատճառահետևանքային հարաբերություններ, այսինքն՝ բաղկացուցիչ մասերից մեկով նկարագրվում է որևէ երևույթ, գործողություն, իսկ մյուսով՝ նրա առաջացման, երևան գալու պատճառը, հիմնավորումը։ Այս նախադասությունները իրենց կառուցվածքով բաժանվում են երկու խմբի՝ պատճառի նախադասություններ, երբ անշաղկապ նախադասության առաջին՝ հիմնականը համարվող մասով տրվում է որևէ գործողություն, երևույթ, իսկ երկրորդով նրա

առաջացման պատճառը և հետևանքի նախադասություններ՝ երբ առաջին մասով հաղորդվում է պատճառ հանդիսացող գործողությունը, եղելությունը, երևույթը, իսկ երկրորդ մասով տրվում է նրանից առաջացած հետևանքը։ Այս երկու դեպքերում էլ նախադասության մասերի միջև գոյություն ունի նույն հարաբերությունը (պատճառահետևանքային), սակայն մի դեպքում հաղորդման նպատակն է լինում նկարագրել հետևանք հանդիսացող երևույթը, իսկ պատճառը տրվում է որպես լրացում (պատճառի երկրորդական նախադասություններ), իսկ մյուս դեպքում հիմնական նպատակն է լինում հաղորդել պատճառ հանդիսացող երևույթի մասին, իսկ հետևանքը նկարագրվում է որպես պարզաբանող մաս, լրացում (հետևանքի երկրորդական նախադասություններ)։ Որովհետև այս տարատեսակներից յուրաքանչյուրը ունի իր կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, ապա պատճառով սրանք պետք է քննարկել առանձին-առանձին։

1. ՊԱՏՃԱՌԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն ասվեց, պատճառի երկրորդական նախադասությունների միջոցով տրվում է այն երևույթը, գործողությունը, որը պատճառ է հանդիսանում գլխավոր նախադասության գործողության կատարման համար։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունները։

Երկրորդական՝ պատճառ ցույց տվող նախադասությունը լինում է վերջադաս, այսինքն՝ լինում է անշաղկապ նախադասության երկրորդ բաղադրիչը։

Պատճառային հարաբերություններ պարունակող անշաղկապ բարդ նախադասություններում ինտոնացիան բացատրական է։ Այդ է պատճառը, որ այս դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունները շատ հաճախ բաժանվում են իրարից ոչ թե ստորակետով, այլ բութով կամ անջատման գծով։ Գլխավոր նախադասությունը արտասանվում է բարձր տոնով, նախադասության վերջում ձայնը մի փոքր իջնում է, դրան հաջորդում է կարճատև դադար, ապա արտասանվում է երկրորդական նախադասությունը՝ ցած տոնով։ Շնորհիվ այս տիպի ինտոնացիայի մեր ուշադրությունը բևեռվում է առաջին նախադասության բովանդակության վրա, որը և հանդիսանում է գլխավորը։

Ըստ իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերու-

թյունների այս նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ բուն պատճառի և հիմունքի։

1. Բուն պատճառի նախադասությունների առկայության դեպքում անշաղկապ բարդ նախադասության մեջ նկարագրվում են ռեալ իրականության մեջ կատարված կամ կատարվող գործողություններ, իրողություններ։ Անշաղկապ նախադասության առաջին՝ հիմնական մասում նկարագրվում է արդեն կատարված կամ կատարման ընթացքի մեջ գտնվող որևէ գործողություն, երկրորդ մասում նկարագրվում է այն երևույթը, իրողությունը, որը պատճառ է հանդիսացել գլխավոր նախադասության գործողության կատարման համար։ Այդ իսկ պատճառով բուն պատճառի բարդ նախադասություններում հիմնականում գործածվում են սահմանական եղանակի ձևերը։ Գլխավոր նախադասության մեջ շատ է տարածված հատկապես անցյալ կատարյալ ժամանակի գործածությունը։ Երկրորդական նախադասության գործողությունը սովորաբար նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը, սակայն կարող է լինել նաև անցյալում սկսված և գլխավոր նախադասության գործողության կատարման ընթացքում շարունակվող գործողություն, եղելություն։ Այդ պատճառով երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտված լինել անցյալ կատարյալ, անցյալ անկատար, անցյալ վաղակատար ժամանակներով և կամ լինել բաղադրյալ՝ անցյալ ժամանակի հանգույցով։ Օրինակներ՝

Դահլիճով շարժում անցավ, Ավերյան Օլեսինը ձեռքը դրեց զանգին, բայց զանգահարելու ևարկ չեղավ. հետաքրքրությունից լարված կոլտնտեսականները նորից վերաճաստատեցին լռությունը (ՄԱ3, 283)։ Ես այդ բանը հորս հայտնել չկարողացա. լեզուս կարկամել էր ուրախությունից (Մուր., 3, 80)։ Ես կամենում էի, որ ավելի մեծագին ընծաներով պարգևատրեին նրան, բայց ևորս ոչինչ չասացի, խնդիրն ինձ էր վերաբերում, ամաչում էի (Ն. ա., 80)։ Բանակայինները եկան, անցան մեր կողքով, և մենք չհամարձակվեցինք ոչինչ հարցնել. վախենում էինք լսել իրողությունը (ՄԱՊ, 648)։ Տիգրանը հայացքն էլ չքեռնց ձայնի կողմը. նա այդքան ուժ չուներ (Ա. Սեկ., 490)։ Տղերքը օդը ճեղքոտեցին մտրակներով, բայց սլանալ չհաջողվեց՝ ճանապարհը նեղ էր, ոլորապտույտ (ՄԱՊ, 3, 230)։ Դենիզն ասաց գլխին եկած առաջին բանը—չէր ուզում ժողովի մասին պատմելով վշտացնել մորը (Ի. էր., ՓԱ, 1, 61)։ Պ. Մարուքեն չպատասխանեց. տրամադրությունը վատ էր՝ գիշերը չէր քնել (Ե. Չար., 328)։ Կայարանում նրան շատ սիրեցին, աշխարաց էր, աշխատասեր (Մ. Ման., 225)։ Հուզված Սեդան դեմքը դարձրեց դե-

պի լուսամուտը և մնաց զարմացած. կաթնագույն լույսով էին ողողվել ապակիները (Ա. Սեկ., 28)։

Բաղադրյալ ստորոգյալ ունեցող երկրորդական նախադասությունները կարելի է համարել նաև հիմունքի, քանի որ նրանցով հիմնավորվում է գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողությունը (տե՛ս վերևի օրինակները)։

Երբ նկարագրվում է անցյալում կատարված տևական գործողություն, գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է անցյալ անկատար ժամանակով։ Երկրորդական նախադասության մեջ հանդես են գալիս դարձյալ նույն ժամանակները։ Օրինակներ՝

Սնվելու մասին նա չէր էլ մտածում. խաղողը ճասել էր, և դա էլ պաճում էր նրան (Ա. Սեկ., 430)։ Շատերը լալիս էին... բժիշկն էր մենակ խաղաղ. սովորական բան էր նրա համար (ԱՔ, 35)։ Որևէ բանով հյուրասիրել չէր կարող, մայրն ու տատը կալումն էին (Ա. Սահ., 139)։ Լողորդը ցած գնալու համար այլևս ոչ մի ուժ չէր գործադրում. ջուրն ինքն էր տանում նրան (Ա. Սեկ., 557)։ Ես դեռ պատճառի հետևանքների մասին մտածելու կարողություն չունեի, տարիքս չէր ներում (Հիկվ, 42)։

Բուն պատճառի նախադասություններում կարող են գործածվել նաև սահմանական եղանակի ներկայի ձևերը, որոնցով տրվում են պատճառահետևանքային հարաբերությունները ներկա ժամանակակետի հարաբերությամբ. օրինակ՝

Մենք փող չունենք, մեզանից հեռու է փախչում, վախենում է պարտք խնդրենք (Շ, 2, 426)։ Ով սրտերում մեր—տրտունջ չկա. Մենք հավատում ենք հիմա կյանքին (Ե. Չար., 107)։ Բայց ես խնդրում եմ հրամանը տալ երկու ամսից հետո, ես ուզում եմ մի քիչ հանգստանալ (Ա. Սեկ., 7)։

Բուն պատճառի նախադասություններին շատ մոտ են կանգնած այն նախադասությունները, որոնց կապակցությունը գլխավոր մասի հետ մոտենում է հարակցությանը և որոնք ունեն բացատրական բնույթ։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ առաջին նախադասության ինտոնացիան մոտենում է ինտոնացիոն ամբողջականություն ունեցող, այսինքն՝ ինքնուրույն, ավարտված նախադասությունների ինտոնացիային. ձայնը առաջին մասի վերջում զգալի իջնում է (դեռևս չի հասնում ավարտված նախադասության ինտոնացիային), դադարը ևս երկու մասերի միջև ավելի մեծ է լինում, քան վերևում նկարագրված դեպքերում։ Գրավոր դա արտահայտվում է միջակետի միջոցով։ Բարդ նախադասության երկրորդ մասում, որպես լրացուցիչ

հաղորդում՝ բացատրություն, նկարագրվում է այն երևույթը, գործողությունը, որը պատճառ է հանդիսացել գլխավոր մասի գործողության կատարման համար։ Բերենք օրինակներ.

Վահրամն արագացրեց քայլերը. նա ուզում էր րոպե առաջ հասնել տուն և խոսել մոր հետ (Ա. Սեկ., 76)։ Արփիկը նոր միայն վախ զգաց. այդպիսի անձրևը հողի տակից էլ սերմեր կհաներ (Ն. տ., 98)։ Գարեգինի դեմքը պայծառացավ. համագյուղացի որսկանի երևալը մի քիչ զվարթացրեց նրան (Սխշ, 1, 73)։ Բաղալյանը շատ կօգներ. նա միշտ շփման մեջ է բանվորների հետ (Վերդ., ԻԳՆ, 381)։ Իսկ չանչերը հարկավոր էր մի կողմ քաշել. դրանցից ամենաընտիր օդին էր ստացվում (Ա. Սեկ., 415)։ Դոդին ձին դոմում կապելուց իսկույն վազել էր ու դրան մոտ կանգնել. նրան էլ մի բան պիտի հասներ (ԱԲ, 477—478)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս անշաղկապ նախադասությունների մասերին հաճախ համեմատաբար ինքնուրույնություն է տալիս անձնական կամ ցուցական դերանունների գործածությունը երկրորդ մասում, որոնք (անձնական կամ ցուցական դերանունները) փոխարինում են առաջին մասի ենթակային, սակայն երկրորդ մասում կարող են հանդես գալ զանազան պաշտոններով (տես վերևի օրինակները)։ Այն, որ այս նախադասությունները իրենց բնույթով պատճառի են, պարզ երևում է նրանից, որ երկու բաղադրիչների արանքում կարելի է դնել որովհետև շաղկապը, որով նախադասության իմաստը բոլորովին չի փոխվի։

2. Շատ ավելի տարածված են այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց երկրորդ բաղադրիչը ունի հիմունքի նշանակություն, այսինքն՝ այն նախադասությունները, որոնց առաջին մասում տրվում է որևէ դատողություն, իսկ երկրորդ մասով հիմնավորվում է այն։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային և իմաստային հետևյալ առանձնահատկությունները.

ա) Անշաղկապ բարդ նախադասության առաջին մասը պարունակում է որևէ գործողություն կատարելու հրաման, հորդոր, իսկ երկրորդ մասով հիմնավորվում է այդ պահանջը, այսինքն՝ նկարագրվում է այն պատճառը (կամ պատճառները), որը հիմք է հանդիսացել այդ պահանջը, հրամանը, հորդորը տալու։ Օրինակ.

Կանգնիր, քարավանս, ինձի կրթվա, թե հայրենիքես ինձ մարդ կը կանչե (Ավ. Իս., 1, 140)։ Զարթեմ, երգեր իմ, ժամ է հնչելու, Զինելու նորից գնդերը ցրիվ (ՎՏ, Երկ., 206)։

Այս նախադասությունների գերադաս մասում ստորոգյալը դրվում է հրամայական եղանակով, որով արտահայտվում է խո-

սակցին տրված հրամանը, պահանջը։ Երկրորդ՝ հիմունքի երկրորդական նախադասության ստորոգյալը սովորաբար դրվում է սահմանական եղանակի ձևերով, որով ընդգծվում է հիմնավորման ռեալ լինելը. երբեմն գործածվում է նաև պայմանական եղանակի ապառնի ժամանակը, որը, սակայն, այս դեպքում չի ունենում պայմանի նշանակություն, այլ ցույց է տալիս ռեալ կատարվելիք գործողություն։

Երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է լինել նաև բաղադրյալ, որով նկարագրվում է այն երևույթը, իրողությունը (ոչ գործողություն), որը հիմք է հանդիսացել գլխավոր նախադասության ենթակային առաջադրված հրամանի համար։ Օրինակներ.

Սև աչերեն շատ վախեցիր,—էն մութ, անծեր գիշեր է (Ավ. Իս., 1, 58)։

Տղաս, վերցրու պարկը քեզ հետ, Պարկը տանը պետք կգա (Ավ. Իս., 2, 118)։ Պատվիր, պատվիր կարուսել, ես քո երգը վաղուց եմ լսել (ՎՏ, Երկ., 200)։ Փախիր, քարն ընկավ (ԱԲ, 487)։ Գնա, նա սպասում է քեզ (Ավ. Իս., 3, 270)։ Գնացեք կշեռքի մոտ. սկսում ենք աշխօրերի բաժանումը (Ա. Սեկ., 412)։ Ավո ջան, իմ մանգաղն էլ դու վերցրու, վաղուց է հունձ չես արել, հավեսդ կհանես (Ա, 5/2—59 Թ.). Եմիր այս բաժակը, աղաչում եմ, նա կհանգստացնե սիրտդ (Մուր., 3, 34)։

Երբեմն գլխավոր նախադասության մեջ գործածվում է ոչ թե բուն հրամայական եղանակը, այլ ըղձական եղանակի ապառնի ժամանակը՝ հրամայական եղանակի իմաստով։ Այս դեպքում գլխավոր նախադասությամբ տրվում է կամ համատեղ որևէ գործողություն կատարելու հորդոր, կամ անուղղակի հրաման (հրամանը վերաբերում է ոչ թե խոսակցին, այլ մի երրորդ անձնավորության)։ Օրինակներ.

Ես գնամ. *այս մարդկանց երեսը հազար անգամ տեսել եմ և ձանձրացել (Շ, 2, 165)։ Այս վայրկյանիս լծվի իմ կառքը, ես առանց րոպե ուշանալու պիտի գործարան հասնեմ (Շ, 1, 4)։ Գնամ ներս, նա կուշանա (Ա. Սեկ., 13)։* Գնամ գլխավոր բժշկի մոտ, գուցե ձեղնից հարկ լինի ստորագրություն վերցնել (Ն. տ., 448)։

Վերջին նախադասության մեջ երկրորդական նախադասությունը, հիմունքի նշանակությանը զուգընթաց, ունի նպատակի իմաստային երանգ (դա արտահայտվում է ըղձական եղանակի գործածությամբ՝ ճարկ լինի)։

Երկրորդական նախադասությամբ տրված հիմնավորման ռեալ

և արդեն առկա լինելը ընդգծելու համար նրա (երկրորդական նախադասության) սկզբում կարող է դրվել տեսնո՞ւմ ես բառակապակցությունը, որը միաժամանակ օժանդակում է գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությանը. օրինակ՝ —է՛յ,... մի քիչ էն կողմ քաշվիր, տեսնո՞ւմ ես սառած մարդ կա (ԴՄԲ, 2, 13)։ Կամ՝ Դե գնա, տեսնում ես ինքն էլ եկել է (Վերդ., ԻԳԾ, 341)։

Հիմնավորման հավանական, ոչ ռեալ լինելու դեպքում երկրորդական նախադասությունը սկսվում է գուցե բառով և լինում է հարցական. օրինակ՝ «Կամաց գնա, գնացք, գուցե աճա այս առվի մեջ մի տղա՞ է խեղդվում» (ԴՄԾ, 414)։

Գլխավոր նախադասությամբ կարող է տրվել խոսողի ցանկությունը, իղձը որևէ գործողության կատարման կամ որևէ երևույթի երևան գալու վերաբերյալ։ Այս դեպքում նրա (գլխավոր նախադասության) ստորոգյալը դրվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով, որից առաջ երբեմն հանդես է գալիս թող եղանակավորող բառը։ Այդ ցանկության առաջացման հիմնավորումը հանդիսացող երկրորդական նախադասության ստորոգյալը դարձյալ դրվում է սահմանական եղանակի ձևերով. օրինակ՝ — Կյանքդ երկար լինի, Վարդիթեր, սիրտս հովացավ (ՍԽՀ, 1—39)։ Իմ մանգաղը թող վերցնի, ես արդեն հոգնել եմ (Ա, 5/2—59 թ.)։

Երբ գլխավոր նախադասությամբ տրվում է հրաման, հորդոր, պահանջ որևէ գործողություն չկատարելու վերաբերյալ, ստորոգյալը դրվում է ժխտական ձևով։ Երկրորդական նախադասության ստորոգյալի ժխտական կամ հաստատական լինելը կախված է հիմնավորման բնույթից՝ անկախ գլխավոր նախադասության ստորոգյալի ժխտական կամ հաստատական լինելուց։ Սրանց առանձնահատկությունը միայն այն է, որ ստորոգյալը սովորաբար արտահայտված է լինում պայմանական եղանակի ապառնի ժամանակով կամ լինում է բաղադրյալ։ Սահմանական եղանակի ձևերը այս դեպքում հանդես են գալիս հազվադեպ։ Բերենք օրինակներ.

Դու Նատալյային մի մեղադրի, Դաշա, նա աղնիվ աղջիկ է (Ալ., ՀԱ, 120)։ —Դե սկսիր, աղջիկս, մի ամաչի, այստեղ բոլորը մերոնք են (ՍԽՀ, 1, 112)։ — Մի վախենա, չեմ մրսի, տունը տաք է, (ՍԽՀ, 1, 140)։ Էշ մի սատկի, գարուն կը գա յոնճա կը կանաչի (Հայկ. առած., 169)։ —Մի մտահոգվիր, մենք նրան ցույց կտանք ճշմարտությունը (Խեչ. ՄՄՀ, 144)։ —Դու մի վախեցիր, որդի, մենք քաղցած չենք մնա (ՀԻԿՎ, 125)։ Մի անմայր մանուկ, հեկեկանքներից հոգնած ու բեկված ննջել է ուզում. մի՛ վրդովեք դուք, մի՛ տանջեք նո-

բից, մի՛ տանջևք նորից—ևանգչել է ուզում (ՎՏ, Նրկ., 117)։ Թող ոչ ոք ոչինչ չկասկածի. ինքը շատ խաղաղ սրտով է ընդունել բաժնի վարիչի առաջարկը (Ա. Սեկ., 11)։

Այս հիմունքի նախադասությունները սովորաբար լինում են վերջադաս. միայն հաղվադեպ, երբ շեշտվում է հիմունքը և այդ նպատակով դրված է լինում հարցական ձևով, որը, սակայն, ունենում է հաստատական նշանակություն և ավելի է ընդգծում հիմնավորման ռևալ լինելը, հիմունքի երկրորդական նախադասությունը կարող է դրվել նաև առաջադաս. օրինակ՝ Յավը մարդը պիտի քաշի, հո քարը քաշելու չէ, տղամարդ չե՞ս, դիմացիր (Ավ. Իս., 3, 18)։ Այս նախադասությունը հավասարազոր է ...Քանի որ տղամարդ ես, դիմացիր նախադասությանը, այսինքն՝ տղամարդ չե՞ս հարցական նախադասությունը հիմունքի երկրորդական նախադասություն է։ Անամպ երկինք, սիրուն գիշեր, լուսնի շողեր ու աստղեր. ես տխուր եմ, սփոփեցեք, մոայլ սիրտս վշտաբեկ (Ավ. Իս., 1, 23)։ Այստեղ ևս հիմունքի երկրորդական նախադասությունը՝ ես տխուր եմ առաջադաս է։ Բերված տիպի անշաղկապ նախադասություններում երկրորդական՝ ստորադաս է առաջին բաղկացուցիչ մասը, որովհետև հաղորդման նպատակը երկրորդ մասով տրված հրամանը, հորդորը, կամ պահանջն է։ «Ով գիտի՝ պարկում շնալի՞ր չկար, Ա՞ղ էր հարկավոր ոչխարի համար, ուզեց ղոքանչի ձվաձեղ ուտել, թե նշանածին շատ էր կարոտել—ոչխարը թողել՝ գնացել է տուն» (ՀԹ, 2, 12)։

Այստեղ ևս գլխավոր մասը ետադաս է, իսկ առաջին մասով, որը իր հերթին բարդ է, տրված են գլխավոր նախադասության գործողության կատարման հնարավոր պատճառները։

բ) Անշաղկապ բարդ նախադասության առաջին մասը որևէ իրողության, երևույթի հաստատումն է կամ եզրակացություն, իսկ երկրորդ մասում տրվում է այդ հաստատման կամ եզրակացության հիմնավորումը։ Գլխավոր նախադասության ստորոգյալը այս դեպքում սովորաբար լինում է բաղադրյալ, իսկ երկրորդական նախադասության մեջ, նախորդի նման, գործածվում են սահմանական եղանակի ձևերը, երբեմն նաև պայմանական եղանակը։ Օրինակներ՝

Դու իրավացի էիր, Ալեքսեյ, չպետք է շտապել վատ մտածել մարդկանց մասին (ՄԱՊ, 666)։ Այդպես ավելի լավ էր. երկար ու կենտրոնացած կմնար իր մտքերի, երազանքների հետ (Ա. Սեկ., 529)։ Քո վիճակը լավ է, երեխաներ չունես (Ի. էր., ՓԱ, 1, 42)։ Մի խոսքով սա վերացական խոսակցություն է— միևնույն է, ինձ չեն

ընարի (Ն. տ., 1, 41)։ Դուք կարող եք պարծենալ ձեր հայրենակցով, նա տաղանդավոր է (Շ, 2, 456)։

Երբ դլխավոր նախադասությունը պարունակում է եղրակացություն որևէ գործողության կատարման անհնարինության մասին, այդ գործողությունը ցույց տվող բայը անորոշ դերբայի ձևով դրվում է չի կարելի, չի լինի, հնարավոր չէ և նման ստորոգյալների մոտ։ Օրինակներ՝

— Նա այդ չի կարող անել, *մենք թույլ չենք տալ նրան (Մուր., 3, 232)։* Ուշանալ չի կարելի. *փոքր ինչ դանդաղեցիր՝ կխախտվի վառարանի ջերմային ռեժիմը, կընկնի կարբիդի որակը (Ե, 17/11—60 թ.)։ Մի ծառ, որ խորին և հաստատուն կերպով արմատ չի ձգել մայր հողի մեջ, չէ կարող դիմանալ աշխարհի փոթորիկներին,— փչեց քամին, կատաղի մրրիկը նրան դուրս կխլե արմատից և կձգե կորստյան անդունդի մեջ (Ր, 3, 313—314)։ Բայց ոչ. նրան հուդա անվանել չի կարելի. Հուդան խիղճ ուներ, սիրտ ուներ (Մուր., 3, 42)։*

Ինչպես երևում է բերված օրինակներից, հիմունքի երկրորդական նախադասությունը, իր հերթին, կարող է լինել բարդ (շաղկապավոր կամ անշաղկապ)։

դ) Անշաղկապ բարդ նախադասության գլխավոր մասում կարող է տրվել որևէ հարց, իսկ երկրորդական նախադասությամբ նկարագրվել այն երևույթը, գործողությունը, որը հիմք է հանդիսացել այդ հարցի առաջացման համար։ Գլխավոր նախադասության մեջ այս դեպքում առկա է լինում որևէ հարցական դերանուն, ամբողջ նախադասությունը արտասանվում է հարցական ինտոնացիայով, դրան հաջորդում է ոչ մեծ դադար, ապա սովորական իջնող ինտոնացիայով արտասանվում է երկրորդական նախադասությունը։

Այս նախադասությունները ունեն կառուցվածքային և իմաստային այն առանձնահատկությունը, որ թեև գլխավոր նախադասությունը ձևով, բնույթով հարցական է, բայց ունի հաստատական իմաստ, այսինքն՝ ցույց է տալիս որևէ գործողության կատարման հնարավոր կամ ոչ հնարավոր լինելը։ Այստեղ նախադասության հարցական բնույթն ունի սոսկ ոճական նշանակություն։ Օրինակներ.

Ինչպե՞ս գնանք, *էս ծով ճակնդեղը որ տեսնում ենք, սրտներս էլ է ծովանում (Ա, 17/11—60 թ.)։* Ի՞նչ կարող է անել. *բերքը քիչ ստացվեց, աշխօրին էլ շատ չի հասնում (Ա. Սեկ., 573)։* Ի՞նչ պիտի անես—*Ջվարթն ամեն ինչ կարգադրել է (Ն. տ., 589)։* Ի՞նչ մեղավոր

եմ, արել եմ այն, ինչ գրված է եղել կոլտնտեսության կանոնագրքում (ն. տ., 586)։

Բերված օրինակներում հարցական նախադասության ձև ունեցող գլխավոր նախադասությունները իրենց արտահայտած իմաստով հավասարազոր են չեմ կարող գնալ, ոչինչ չեմ կարող անել, ոչինչ չես կարող անել, մեղավոր չեմ ժխտական բնույթի նախադասություններին։ Ընդհանրապես այս կառուցվածքի անշաղկապ բարդ նախադասություններում եթե հարցական նախադասության ստորոգյալը ունենում է դրական ձև, ապա ամբողջ նախադասությունը ցույց է տալիս նկարագրված գործողության կատարման անհնարինությունը (տե՛ս վերևի օրինակները), իսկ եթե ստորոգյալը ունենում է ժխտական ձև՝ ապա հավասարազոր է լինում հաստատական (դրական) բնույթի նախադասություններին. օրինակ՝ Ինչպե՞ս չըգնամ. Նա ինձ սպասում է, կամ՝ Վաղը չէի՞ կարող գալ, այսօր խիստ զբաղված եմ (Վերդ., ԻԳՆ, 306)։ Ես ինչպե՞ս Ձեզ չսիրեմ.— դուք արվեստ եք ու հոգի (Ն. Ջար., 154)։ Այստեղ գլխավոր նախադասությունները հավասարազոր են Պետք է գնամ, Եկեք վաղը, Ես ձեզ սիրում եմ նախադասություններին։ Գլխավոր նախադասության այսպիսի կառուցվածք ունենալու դեպքում երկրորդական նախադասությունը երբեմն լինում է առաջադաս։ Օրինակներ.

Ուրիշները տասնյակներով թթենիներ ունեն, ինչո՞ւ իր մի հատիկ ծառը պիտի չորանա (Մ. Ման., 122)։ Ազատվել են, էլ ինչի՞ ես լաց ըլում, ամոթ չի՞ (ՀՔ, 3, 88)։ Դու անուն չունես, ես ինչպե՞ս կանչեմ (ՎՏ, երկ., 186)։

Այն, որ այս նախադասություններում գլխավոր՝ գերադաս է երկրորդ մասը և ոչ թե առաջինը, երևում է ինտոնացիայից. առաջին մասը արտասանվում է իջնող ինտոնացիայով, իսկ երկրորդ մասը արտասանվում է բարձրացող ինտոնացիայով, որով ցույց է տրվում, ընդգծվում է, որ հաղորդման հիմնական նպատակը այդ հարցը տալն է։ Վերջադաս կիրառության դեպքում գլխավոր նախադասությունը կարող է ունենալ բուն հարցական նշանակություն. օրինակ՝ Նանի, ճամփորդ մարդ եմ, գիշերս ինձ հյուր կընդունե՞ս (Ավ. Իս., 2, 115)։ —Հովիկ, թափառական հովիկ,—աղերսեց պատանին,—հեռուներից ես գալիս, չե՞ս տեսել այն աղջկան, որի սիրով սիրտս հատնում է (Ավ. Իս., 3, 270)։

Երբեմն հիմունքի երկրորդական նախադասության սկզբում դրվում են այնքան կամ այնպես դերանունները, որոնք մի կողմից ձևի, չափի պարագայի իմաստային երանգ են տալիս երկրորդական նախադասություններին, մյուս կողմից օժանդակում են գլխա-

վոր և երկրորդական նախադասությունների կապակցությանը։ Սրանք որոշ չափով կատարում են նաև շաղկապական դեր և այս տեսակետից սկսել են մոտենալ շաղկապներին. օրինակ՝

Նա պատրաստ էր ամենքին էլ սեղմելու կրծքին, համբուրելու. այնքան երջանիկ էր նա (Մ. Ման., 229)։ Նա բոլորի ներկայությունը միանգամից չէր կարողանում նկատել, այնպես էր ուրախությունից իրեն կորցրել (Ա. Սահ., 184)։ Եթե անգամ ես ցանկանամ հաշտվել Շապուհի հետ, իմ ժողովուրդը չի հաշտվի՝ այնքան է լցված վրեժի զգացմունքով (ՍՋ ՊԹ, 196)։ Հասոն քամու լեզուն անգամ հասկանալ կարող էր, այնքան հաճախ էր գործ ունեցել նրա հետ՝ (ՎԱՀԳ)։ Մտիկ արա հայելուն, քեզ ճանաչել չի լինում, այնքան փոխվել ես (Շ, 2, 319)։

Բերված օրինակներում երկրորդական նախադասությունների սկզբում դրվել են այնքան, այնպես դերանունները, որոնցով ցույց է տրվում այդ նախադասությունների գործողությունների կամ հատկանիշների դրսևորման այն աստիճանը, որը հիմք է ծառայել գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողության կատարման համար։

2. ՀԵՏԵՎԱՆՔԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրենց իմաստային փոխհարաբերություններով պատճառի երկրորդական նախադասություններին շատ մոտ են հետևանքի երկրորդական նախադասությունները։ Երկու դեպքում էլ անշաղկապ բարդ նախադասության մասերի միջև գոյություն ունեն պատճառահետևանքային փոխհարաբերություններ, այսինքն՝ բաղկացուցիչ մասերից մեկում նկարագրվում է որևէ գործողություն կամ երևույթ, որը հիմք, պատճառ է հանդիսացել մի այլ գործողության կատարման համար, իսկ մյուս մասում նկարագրվում է այնպիսի գործողություն կամ եղելություն, որը առաջացել է կամ առաջանալու է որպես հետևանք մյուս մասում նկարագրված գործողության։

Այս երկու տիպի նախադասությունների կառուցվածքային տարբերությունը միայն շարադասությունն է։ Առաջին դեպքում՝ պատճառի երկրորդական նախադասության առկայության դեպքում, ինչպես վերևում ասվեց, անշաղկապ բարդ նախադասության առաջին մասով նկարագրվում է հետևանք հանդիսացող երևույթը (չի ընդգծվում նրա հետևանք լինելը), իսկ երկրորդ մասով տրվում է այն գործողությունը, երևույթը, որը հիմք, պատճառ է հանդիսա-

ցել առաջին մասի գործողության համար։ Երկրորդ դեպքում արդեն, որպես գլխավոր, հիմնական մաս հանդես է գալիս ոչ թե հետևանքը, այլ պատճառը (առաջադաս), իսկ երկրորդ՝ ստորադաս մասով տրվում է նրանից առաջացած հետևանքը։ Այս նախադասություններն էլ արտասանվում են բացատրական-նախազգուշացնող ինտոնացիայով և ունեն հետևյալ ենթատեսակները՝

ա) Գլխավոր մասում (առաջադաս) նկարագրվում է մի գործողություն, երևույթ, իսկ ստորադաս մասով նկարագրվում է այն երևույթը, գործողությունը, որը առաջինի հետևանքն է։ Օրինակ՝

Երգի բառերը պարսկերեն էին, բան չէի հասկանում, *սակայն մեղեդին հասկանալի լեզվով խոսում էր սրտիս հետ (Ավ. Իս., 3, 124)։ —Ի՞նչ անեմ, խնդիրը fո ապագա բախտին էր վերաբերում, չկարողացա լուրյան տալ (Մուր., 3, 53)։ Իրենք էլ միջոց չունեն մշակ բռնելու. ուզենան–չուզենան պիտի աշխատեն (Ավ. Իս., 3, 132)։ Բնակարանը ինձ դուր եկավ, սակարկեցի ու վճարեցի (Գ. Ռշ., Մ., 13)։*

Կրակը թշշաց ու մարեց, վառոցքն անցած էր (Ա. Սեկ., 587)։ Շատ շոգ էր այնտեղ, հագիվ խոսfս ավարտեցի (Ի. Էր., ՓԱ, 1, 12)։

Այս նախադասություններում ստորոգյալները կամ արտահայտվում են բայի սահմանական եղանակի ձևերով, կամ լինում են բաղադրյալ։

2) Անշաղկապ բարդ նախադասության առաջին մասով նկարագրվում է որևէ իրողություն, երկրորդով՝ նրանից բխող եզրակացությունը. օրինակ՝

Երեխան հայր ունի, անունն էլ նա է դնելու *(Ա. Սեկ., 457)։ Կաթից բերանն էրվել է, մածունը փչելով է ուտում (Հայկ. առած., 1951, 166)։ Այստեղ* ցուրտ է, կմրսեf *(Ի. Էր., ՓԱ, 2, 13)։ Շաբաթ օր է, երևի արդեն սպասված կլինեն տոմսերը (Վերդ., ԻԳՆ, 346)։ Գիշերը երկար է. ես չպիտի կարողանամ fնել (Մուր., 3, 32)։ Այն մեկը հորանջում է, երևի ժուռնալիստ է (Ի. Էր., ՓԱ, 1, 10)։ Դժվար է, ամենիը չեն կարող (Ե, 17/11—60 թ.)։ Արջը գիտե վարազի ժանիքի թափը, նախանձածակ չի լինում (ԱՔ, 3)։*

Այս հետևանքի նախադասությունների ստորոգյալը կամ լինում է բաղադրյալ, կամ արտահայտված է լինում բայի ընդհանրական-տևական գործողություն նշանակող ժամանակով, որովհետև եզրակացությունը չի վերաբերում որևէ կոնկրետ ժամանակի։

3) Առաջին նախադասությամբ նկարագրվում է որևէ երևույթ, գործողություն, երկրորդով՝ նրա առկայության հետևանքով առաջացած որևէ հարց. օրինակ՝

Մեկը նրան ցորեն էր պարտ, մյուսը մի քանի արշին կտոր պիտի առներ խանութից, մի գրվանքա շաքար,—ո՞վ էր գժվել նրան նակառակ գնար (ԱԲ, 17)։ Հայրս սայլապան էր, իսկ մայրս մետաքսի գործարանի բանվորուհի, ես ինչպե՞ս կարող էի մանկապարտեզ հաճախել (ՀԻԿՎ, 11)։ Կնանիք, վարդավառ է, ի՞նչ եք բառամել, վեր թափվել (Ա. Սեկ., 549)։

Պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունների մասերի միջև, հատկապես, երբ առաջին մասով տրվում է պատճառը, երկրորդով՝ հետևանքը, դժվար է տարբերակել ստորադասությունը, որոշել, թե որ մասն է գլխավորը, որը՝ ստորադաս. այս իմաստով նրանք ընդհուպ մոտենում են համադասությանը։

3. ՆՊԱՏԱԿԻ ԱՆՇԱՂԿԱՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատճառահետևանքային նախադասությունների խմբի մեջ են մտնում նաև նպատակային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունները։ Այս նախադասությունների երկրորդ մասում նկարագրվում է ապագայում կատարվելիք գործողություն, որի իրագործմանն է ուղղված առաջին մասի գործողությունը։ Այլ կերպ ասած, երկրորդ՝ նպատակ հանդիսացող գործողությունը միաժամանակ պատճառ է հանդիսանում գլխավոր նախադասության գործողության կատարման համար։

Այս նախադասություններում ևս ինտոնացիան բացատրական է. առաջին մասը արտասանվում է բարձրացող ինտոնացիայով, դրան հաջորդում է կարճատև դադար, ապա իջնող ինտոնացիայով արտասանվում է երկրորդ նախադասությունը։ Երբեմն, երբ առաջին և երկրորդ մասերում ենթական նույնն է, երկու մասերի կապը դառնում է շատ սերտ, երկրորդ մասում ենթական զեղչվում է, և երկրորդական մասը փաստորեն դադարում է գիտակցվելուց իբրև առանձին նախադասություն (այն կատարում է պարզ նպատակի պարագայի պաշտոն)։ Այս երևույթը հատուկ չէ գրական լեզվին. այն շատ է տարածված խոսակցական լեզվում, որից էլ անցել է գեղարվեստական գրականության երկխոսություններ մեջ։ Օրինակներ՝

Մայիսի 4-ի երեկոյան դեմ ես գնացել էի մեր բաղի քանդված պատը նորոգեմ (ԱԲ, 381)։ Ջաղացները լռում են, ջաղացպանը վառած լապտերը ձեռքին գիշերը մոտենում է գետին՝ տեսնի չի՞ բռրակել (Ն. տ., 146)։ Հաց ու ջրից կըկտրվի, Կգա ձեր տուն՝ դառնա մշակ (Պ. Սևակ, 1)։ Գնացել էի Վարդուշենց տնից ալրի մաղը բե-

rեմ (Սով. գրակ. անթոլոգիա, էջ 27)։ Նստել եմ կարմիր նժույգ, գալիս եմ՝ բռնեմ (ԳՄԵ, 33)։ Աստիճանների վրա նստած գյուղացիները նրան տեղ տվին անցնի (ԱԲ, 139)։

Վերջին օրինակում անցնի բայածևի սուբյեկտը ոչ թե առաջին մասի ենթական է, ինչպես մյուս օրինակներում է, այլ նրան անուղղակի խնդիրը։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս դեպքում նախադասության մասերի կապը այնքան սերտ է, և նրանց միջև եղած դադարը այնքան կարճ, որ հաճախ նրանց միջև տրոհման նշան չի դրվում (երբեմն միայն կարող է դրվել բութ)։ Այս նախադասություններում որոշ չափով մթագնվել է նաև ըղձական եղանակով դրված բայի խոնարհված լինելու իմաստը. այն հավասարազոր է անորոշ դերբայի տրական հոլովին (համմտ.՝ Նստել եմ կարմիր նժույգ, գալիս եմ բռնելու)։

Նպատակի պարագա երկրորդական նախադասությունների կառուցվածքային մյուս առանձնահատկությունն այն է, որ նրանում միշտ գործածվում է ըղձական եղանակի բայ՝ անկախ գլխավոր մասի ստորոգյալի ժամանակից և եղանակից։ Հենց այդ եղանակի շնորհիվ էլ երկրորդական նախադասությունը ձեռք է բերում նպատակի իմաստ, ցույց է տալիս կատարվելիք ցանկալի գործողություն, որի իրագործմանն է ուղղված առաջին նախադասության գործողության կատարումը։ Նպատակի անշաղկապ նախադասությունները որպես կանոն լինում են ետադաս։ Ժամանակակից հայերենում հատկապես շատ են հանդիպում նպատակային հարաբերություններ արտահայտող այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց առաջին մասը պարունակում է հորդոր, հրաման, իսկ երկրորդ մասով տրվում է այն նպատակը, որի իրագործման համար հրամայվում է առաջին մասի ենթակային կատարել որևէ գործողություն. օրինակ՝

Է՛յ լա՛վ կենաք, ակա՛նջ արեք, մի բան պատմեմ հիմի ձեզ (ՀԲ, 2)... Նստել է մեր շնչի վրան. Տա՛ր, կորցրու՝ աղատվիմ (Ավ. Իս., 2, 117)։ Աստղե՛ր, ծածկեցե՛ք ձեր վառ բոցերը, լույսը չտեսնե՛ սև ու խոր իղձերս (Շեքս., 1, 221)։ Բավական է, վերջ. մենք էլ չենք ուզում Սիրո երգ, անրջանք, վայելք ու հուզում, Վե՛ր կաց, իմ ընկեր, վեր կաց, մարմնդ առ, նոր կյանք, նոր վայելք կտենք մեզ համար (ՎՏ, երկ., 104)։

Այս տիպի նախադասությունների առաջին՝ գերադաս մասի ստորոգյալը դրվում է հրամայական եղանակով (տես վերևի օրինակները) կամ հորդոր, հրաման նշանակող այլ ձևերով (մեծ մա-

սամբ ըղձական եղանակով). օրինակ՝ Ձեզնից ո՞վ ալյուր կծախի, մի չափ ալյուր տա՝ գնամ (ՀԲ, 3, 63)։

Երբեմն հրամանը մեղմելու համար հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալի մոտ կարող է դրվել տեսնեմ եղանակավորող բառը. օրինակ՝ Ի՞նչ կա քաղաքում, դե պատմիր տեսնեմ, իմանամ, ես էլ ուրիշին ասեմ (ՀԲ, 2, 37)։

Երբ նպատակը բխում է գլխավոր նախադասության գործողության որևէ ձևով կատարվելուց, վերջինիս ստորոգյալի մոտ դրվում է որևէ ձևի պարագա։ Այս դեպքում նպատակի երկրորդական նախադասությունը վերաբերում է ոչ միայն գլխավոր մասի ստորոգյալին, այլ ստորոգյալին և ձևի պարագային միասին վերցրած. օրինակ՝ Դե առ, տեղի տակին քարուն կեր, խաղեինը չիմանա (ՀԲ, 3, 44)։

Հազվադեպ այս նախադասությունների երկրորդ մասի ստորոգյալը դրվում է ոչ թե ըղձական, այլ պայմանական եղանակով. օրինակ՝

Սպասիր, իսկույն կբերի (Մ. Ման., 137)։ Լավ, սպասեցնեք, ես հենց հիմա անցաթուղթ կիջեցնեմ (Վերդ., ԻԳ, 306)։ Ժամանակ ունենաք՝ անցեք ինձ մոտ, մենք կզրուցենք արվեստի մասին (Ե, 6/8—60 թ.)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս դեպքում նպատակի իմաստային երանգը որոշ չափով մթագնվում է, ավելի ընդգծվում է պատճառի իմաստը. այդ պատճառով այս նախադասությունները կարելի է անվանել նաև պատճառի՝ նպատակի իմաստային երանգով։

Գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել տարբեր ժամանակներով՝ նայած ներկային, անցյալին, թե՞ ապառնուն է վերաբերում գլխավոր նախադասության գործողությունը։ Բոլոր դեպքերում երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է ըղձական եղանակով և նշանակում է գլխավոր նախադասության գործողության նկատմամբ ապառնի, դեռևս չկատարված գործողություն։ Օրինակներ՝

Մարդը քրտինք է թափել, հերկել, մշակել է խոպանը. հիմա դու եկել ես, խլե՞ս (ՍԽՀ, 1, 220)։ Նախրապանն է, որ նախիրը գյուղում ցրելուց հետո ժողովատեղին է եկել, մնացողներից մի բան իմանա (ԱՒ, 75)։ Թե՞ մնում ես, վիզդ հաստանա (Ն. տ., 543)։ Ես հենց հիմա կգնամ, տեսնեմ ինչո՞ւ են ուշացնում (Վերդ., ԻԳ, 335) Ես վերադարձա, որ Սառայի ծնողներին ճեռագիր տամ՝ գան (ՆԴ, 2, 538)։ Դուրս եկա հայաթը, ասի ծխեմ (Ա. Սեկ., 503)։

Վերջին օրինակում երկրորդական նախադասության սկզբում հանդես եկած ասի բայաձևը արդեն սկսել է կորցնել իր բայական նշանակությունը և վեր է ածվում որոշում, նպատակ ցույց տվող շաղկապական բառի։ Բերենք այլ օրինակներ՝ Վազեցի, ասի հասնեմ նրան, Դուրս եկա փողոց, ասի մաքուր օդ շնչեմ, Պառկեցի, ասի հանգստանամ։ Այս դեպքում անշաղկապ նախադասության գերադաս մասի ստորոգյալը դրված է լինում անցյալ կատարյալ ժամանակով, ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվել է որոշակի նպատակով (տրված երկրորդական նախադասությամբ), որը սակայն (նպատակը), չի իրագործվել կամ ընդհատվել է մի այլ գործողությամբ։ Այդ մասին պատմվում է կոնտեքստի շարունակության մեջ։ Այսպիսի երկրորդական նախադասություններ դրվում են մեծ մասամբ շարժում ցույց տվող բայերի մոտ (տես վերևի օրինակները)։

ՊԱՅՄԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում հատկապես շատ են տարածված պայմանի անշաղկապ նախադասությունները։ Նրանք շատ են հանդիպում գեղարվեստական գրականության և հատկապես բանավոր խոսքի մեջ։ Այս նախադասությունները տարբերվում են շաղկապավոր պայմանի նախադասություններից նրանով, որ ավելի անմիջական, պատկերավոր, դիպուկ և սեղմ են դարձնում խոսքը։ Պայմանի իմաստային հարաբերությունները արտահայտելու համար այստեղ չեն գործածվում կապակցության հատուկ միջոցներ՝ շաղկապներ, այդ պատճառով ստորադասական հարաբերությունը, որը այս նախադասություններում ակնհայտ է, արտահայտվում է նրանով, որ որևէ գործողության իրականացման՝ կատարման հնարավորությունը կախման մեջ է դրվում ուրիշ գործողությունից։ Ստորադասական կապակցությունը այս նախադասություններում իրացվում է քերականական-կառուցվածքային հետևյալ միջոցներով.

1. Որպես կանոն պայմանի երկրորդական նախադասությունները անշաղկապ կապակցության ժամանակ դրվում են առաջադաս. այսպես՝ Եթե մանեք ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կբերեմ կուտեք (ՀՔ, 3, 118)։ Չլիներ այս ձյունակույտը, երկուսն էլ կչախջախվեին (ՍԳ, 59, 3)։ Եվ դա բնական է։ Եթե շաղկապական կապակցության ժամանակ շաղկապի առկայության շնորհիվ շարադասությունը որոշիչ դեր չի կատարում (շաղկապով միացած պայմանի երկրորդական նախադասությունը կարող է լինել նաև վերջադաս),

ապա այստեղ անշաղկապ կապակցությունը պահանջում է, որ բարդ նախադասության մասերը ունենան որոշակի շարադասություն։ Պայմանի հարաբերություն արտահայտելու համար առաջին մասում միշտ պետք է նկարագրվի այն գործողությունը, իրողությունը, որը պայման է հանդիսանալու (կամ հանդիսացել է) երկրորդ՝ գլխավոր մասով տրված գործողության իրագործման համար։ Եթե փոխենք շարադասությունը, կխախտվի ամբողջ բարդ նախադասության կառուցվածքային ամբողջականությունը։

2. Պայմանային հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասությունները ունենում են հետևյալ ինտոնացիան. երկրորդական նախադասությունը, որը, ինչպես ասվեց, հանդես է գալիս առաջադաս, արտասանվում է նախադասության վերջում բարձրացող ինտոնացիայով, ըստ որում առանձնապես շեշտվում է ստորոգյալը։ Դրան հաջորդում է փոքր դադար, ապա արտասանվում է գլխավոր նախադասությունը (սովորական իջնող ինտոնացիայով)։ Երկրորդական նախադասության բարձրացող ինտոնացիայի միջոցով ցույց է տրվում, որ նախադասությունը դեռևս ավարտված չէ. հենց դա էլ հանդիսանում է բարդ նախադասություն կազմելու օժանդակ միջոց։ Համաձայն, ինչպես կտեսնենք, անշաղկապ կապակցության ժամանակ պայմանի երկրորդական նախադասությունը ունենում է հարցական ինտոնացիա, իսկ գլխավոր նախադասությունը՝ պատասխանի։ Գրավոր խոսքում ինտոնացիան արտահայտվում է կետադրության միջոցով։ Պայմանի երկրորդական նախադասությունը բաժանվում է գլխավորից ստորակետով, բութով, երբեմն նաև միջակետով (վերջին դեպքում գլխավոր, և երկրորդական նախադասությունների կապը որոշ չափով թուլանում է)։ Երբ երկրորդական նախադասությունը ունենում է հարցական ինտոնացիա, նրա ստորոգյալի վրա դրվում է հարցական նշան (տես նախորդ, ինչպես նաև հաջորդ օրինակները)։

3. Պայմանի երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից ամենակարևորը բայի եղանակների և ժամանակների հաջորդականությունն է, որի միջոցով ոչ միայն իրացվում է կապը գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև, այլև նրանց միջև եղած պայմանի հարաբերությանը տրվում է տարբեր իմաստային երանգներ։ Գլխավոր նախադասության մեջ բայի եղանակների և ժամանակների գործածությունը ազատ չէ և կախված է այն բանից, թե ինչ եղանակ և ժամանակ է գործածված առաջադաս պայմանի նախադասության մեջ։

Տեսնենք, թե ժամանակների ինչպիսի հաջորդականություն կարող է լինել պայմանի անշաղկապ նախադասություններում և դրանցից յուրաքանչյուրը ընդհանուր պայմանային հարաբերությունների ֆոնի վրա ինչպիսի իմաստային երանգներ կարող է ունենալ։

ա) Պայմանի անշաղկապ բարդ նախադասություններում (ինչպես նաև շաղկապական նախադասություններում) շատ է տարածված ըղձական և պայմանական եղանակների հարաբերական կիրառությունը։ Երկրորդական նախադասության ստորոգյալը, որով նկարագրվում է գլխավոր նախադասության գործողության կատարման համար անհրաժեշտ պայմանը, դրվում է ըղձական եղանակով, իսկ գլխավոր նախադասության մեջ նրան համապատասխանում է պայմանական եղանակը։ Վերջինս ցույց է տալիս, որ գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողության կատարման համար անհրաժեշտ է որոշ պայման՝ տրված երկրորդական նախադասությամբ։ Գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները այս դեպքում ժամանակներով համաձայնում են, այսինքն՝ երկուսն էլ դրվում են կամ ապառնի, կամ անցյալի ապառնի ժամանակներով։ Օրինակ՝ Ձյունը մի քանի րոպե էլ էս թափով գա, մի մետր կնստի (ՆՋ), Սովորական եղանակով լիներ, մենք դժվարություն չէինք զգա (Լեո)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ գործածվում են ըղձական և պայմանական եղանակների ապառնի ժամանակները այն դեպքերում, երբ նկարագրվում է որոշ պայմանի առկայության դեպքում ապագայում կատարվելիք հնարավոր գործողություն. այլ կերպ ասած՝ երբ գլխավոր նախադասության մեջ նկարագրվում է այնպիսի գործողություն, որը պետք է կատարվի ապագայում, բայց դրա համար անհրաժեշտ է, որ նախ կատարվի երկրորդական նախադասությամբ տրված գործողությունը. օրինակներ՝

Մի անգամ էլ ասեք, կպարեմ (ԳՄԲ, 449)։ Է, ասեմ՝ բոց կլինի, չասեմ՝ խոց կլինի (Ա. Սեկ., 463)։ Բարձր ձայնով խոսեմ, կնեղանաս (Մ. Դավթ., 21)։ Համբերենք մինչև լուսաբաց.... Ջոհրապին դիմենք, նա մի հնար կգտնի (Վահր. Փափ., 1, 279)։

Այս նախադասություններով երբեմն նկարագրվում են ոչ թե կոնկրետ գործողություններ, այլ արվում են ընդհանուր դատողություններ որևէ պայմանի առկայության դեպքում հնարավոր կատարվելիք գործողության մասին, ըստ որում երկրորդական նախադասության ստորոգյալը հաճախ դրվում է եզակի երկրորդ դեմքով,

որը սակայն ունենում է ոչ թե երկրորդ դեմքի նշանակություն, այլ ընդհանուր անորոշ. օրինակ՝

Մերն էլ չէն ա՞. Վառես՝ խանձահոտ չի գա (ԱԲ, 42)։ Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի, թքես մի ծերից, մյուս ծերը կընկնի (ՀԹ, 2, 39)։ Մենք հյուր ենք, հյուրին երես տաս, գլխիդ կնստի կատակեց Դանիելյանը (Մ. Դավթ., 59)։ Հիբանի հողերը բաժանք անես, ամենայն մի շնչի մին գավաթ չի հասնի (ԱԲ, 449)։

Ընդհանուր-անորոշ նշանակություն ունենալն է պատճառը, որ այս կառուցվածքի նախադասությունները շատ են տարածված հատկապես ժողովրդական առածների, ասացվածքների մեջ. այսպես՝ «Գեղ կանգնի, գերան կկոտրի», «Տուն փոխես՝ տնով մեկ կըքանդվես, գեղ փոխես՝ գեղով մեկ», «Լեզուն չըլնի, ագռավները աչքերը կհանեն», «Կժին չըխփես, ձեն չի տա», «Աչքը տեսնի, սիրտը կուզե», «Մեկ տուն երկու տանտիկին էլնի, տախտն անավել կըմնա» և այլն (Հայկ. առած.)։

Այս նախադասությունների միջև եղած իմաստային փոխհարաբերությունները կարելի է անվանել պայմանահետևանքային, որովհետև գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողությունը դիտվում է որպես երկրորդական նախադասության գործողությունից բխող հնարավոր հետևանք (տե՛ս վերևի օրինակները)։

Երկրորդական նախադասության ըղձական եղանակի ապառնի ժամանակին գլխավոր նախադասության մեջ կարող են համապատասխանել սահմանական եղանակի ներկա կամ հարակատար ժամանակները, որով ընդգծվում է գլխավոր նախադասության գործողության իրագործելի լինելը (պայմանի կատարման դեպքում). օրինակ՝

Ուժներս տա, անելու շատ բան կա (ԱԲ, 490)։ Կողովը լցնեմ, չես կարող շալակել, ծանր է,— ասաց Տիգրանը (Թոթ., 140)։ Քարոտ սարը բարձրանանք՝ փրկված ենք (ՍԶՀԲ, 61)։

Գլխավոր նախադասությունը կարող է պարունակել նաև հորդոր որևէ գործողություն կատարելու վերաբերյալ՝ դարձյալ երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողությունը իրագործվելու պայմանով։ Այս ժամանակ երկրորդական նախադասության ըղձական եղանակին գլխավորի մեջ համապատասխանում է հրամայական եղանակը. օրինակ՝ *Ժամանակ ունենաք՝ անցեք ինձ մոտ, մենք կզրուցենք արվեստի մասին (Ե, 6/8—60 թ.)։*

Անշաղկապ պետք է համարել նաև այն պայմանի երկրորդական նախադասությունները, որոնց սկզբում դրվում է թող եղանակավորող բառը։ Վերջինս այս դեպքում նախադասությանը տալիս է

սպառնալիքի իմաստային երանգ. օրինակ՝ Թող փորձի այս անգամ էլ մերժել, ես նրա հետ կխոսեմ (Մ. Դավթ., 140)։ Գլխավոր նախադասության սկզբում կարող է հանդես գալ տես բայածևը, որը մի կողմից ուժեղացնելով բարդ նախադասության մասերի կապը, մյուս կողմից ավելի է ընդգծում թող-ի իմաստը. օրինակ՝ «Թող չգա, տես ինչ կանեմ» կամ «Թող չգրի, տես ինչպես կպատժեմ»։ Վերջին դեպքում գլխավոր նախադասության մեջ առկա են լինում ինչ, ինչպես հարաբերական դերանունները։

Ըղձական և պայմանական եղանակների անցյալի ապառնի ժամանակները գործածվում են այն ժամանակ, երբ պատմվում է անցյալում՝ որոշակի պայմանի առկայության դեպքում հնարավոր, բայց չիրագործված, տեղի չունեցած գործողության մասին, այսինքն՝ երբ ցույց է տրվում, որ գլխավոր նախադասության գործողությունը չի կատարվել, դրա համար պայման հանդիսացող գործողության չիրականանալու հետևանքով։ Այս ժամանակները գործածվում են նաև այն դեպքում, երբ գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողության կատարումը համարվում է անհնար՝ դրա իրագործման համար անհրաժեշտ պայմանի բացակայության պատճառով. վերջինս տրվում է երկրորդական նախադասության միջոցով։ Օրինակներ.

Սրտներս սևացել էր. դանակ տայիր՝ արյուն չէր կաթիլ (ՀԹ, 3, 109)։ Աշխարհքը իրան տայիր՝ աչքը էլի մրջյունի տարած մեկ գարի հատիկի վրա կլներ (Ավ. Իս., 3, 71)։ Է՞, քեզ նման ջան ունենայի, մի տարում երկու տուն կարքեի (ԱՒ, 464)։ Ուրիշ տեղ կոռած լիներ, կգտնեի (Մ. Դավթ., 274)։

Նույն իմաստն արտահայտելու համար գլխավոր նախադասության մեջ կարող է գործածվել նաև սահմանական եղանակի անցյալ վաղակատար ժամանակը (երկրորդական նախադասության ստորոգյալի՝ ըղձական եղանակի անցյալի ապառնիով դրվելու դեպքում)։ Այս միջոցով ավելի է ընդգծվում գլխավոր նախադասության գործողության կատարման հնարավոր եղած լինելը։ Օրինակ՝ Քո խաղողն ինձ տված լինեին, հիմի մի կով էի առել (Ա. Սեկ., 530)։ Գլխավոր նախադասության մեջ կարող է հանդես գալ այն ժամանակ հարաբերյալը, որով մի կողմից ավելի սերտ է դառնում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև եղած կապը, մյուս կողմից ընդգծվում է նրանց՝ պայմանի իմաստային փոխհարաբերության հետ ժամանակի իմաստային երանգ ունենալը։ Ընդհանրապես բոլոր պայմանի նախադասություններն էլ ունեն ժամանակային հաջորդականության իմաստային երանգ, որովհետև

ենթադրվում է, որ գլխավոր նախադասության գործողությունը միշտ հաջորդելու է երկրորդական նախադասության գործողությանը. օրինակ՝ Հանդիստ լիներ խիղճս, արդար լիներին իմ գործերը, այն ժամանակ թեկուզ բոլոր աշխարհը կանգներ իմ դեմ, ես չէի ընկճվիլ (Մուր., 3, 309)։

Երբ երկրորդական նախադասության մեջ գործածվում է ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակը, իսկ գլխավորի մեջ նրան համապատասխանում է պայմանականի անցյալի ապառնին կամ վերջինիս նշանակությամբ սահմանական եղանակի անցյալ վաղակատարը կամ անցյալ հարակատարը, գլխավոր և երկրորդական նախադասությունների ժխտական կառուցվածք ունենալու դեպքում ցույց է տրվում իրականության մեջ արդեն կատարված գործողություններ։ Այս կառուցվածքի նախադասությունները համապատասխանում են հիմունքի նախադասություններին, այսինքն ցույց են տալիս, որ երկրորդական նախադասության գործողության կատարումը հիմք է հանդիսացել գլխավոր նախադասության գործողության կատարման համար. օրինակ՝ Չլիներ Ցլիկ Ամրամը, Գուգարքն ու Տայքը չէին բաժանվի հայոց թագավորից (Մուր., 1, 403—404)։ Այստեղ գլխավոր նախադասությունը ցույց է տալիս արդեն կատարված գործողություն, որի կատարումը անհնար կլիներ, եթե տեղի չունենար կամ եթե առկա չլիներ երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողությունը, երևույթը, որը պայման՝ հիմք է հանդիսացել գլխավոր նախադասության գործողության կատարման համար։ Այս նախադասությունը իր արտահայտած իմաստային փոխհարաբերությամբ հավասարարժեք է «Գուգարքն ու Տայքը բաժանվեցին հայոց թագավորից, որովհետև կար Ցլիկ Ամրամը» նախադասությանը։ Սրանց միջև եղած տարբերությունը կառուցվածքային է և ոճական։

Երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի գործածության դեպքում գլխավոր նախադասությունը կարող է ունենալ հարցական բնույթ։ Դրանով ցույց է տրվում, որ նրանում նկարագրված գործողությունը կատարվել է, տեղի է ունեցել, բայց չէր կատարվի, եթե իրագործվեր երկրորդական նախադասությամբ տրված պայմանը. օրինակ՝

Գլուխը քարը, գոնե փող լիներ, էլ ինչո՞ւ էսման մարդ գանգատ կաներ (ՀԹ, 2, 33)։ Տոմս ունենայի, ինչո՞ւ ճեզ կդիմեի։ Այդ մասին նրան հարցրած լինեի, ինչո՞ւ հիմա կգայի։

Բերված օրինակներից առաջինում առկա գոնե և էլ եղանակավորող բառերը էլ ավելի են ճշգրտում անշաղկապ բարդ նախադա-

սության մասերի միջև եղած իմաստային փոխհարաբերություննե-
րը։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային նաև այն առանձնահատկությունը, որ երկրորդական նախադասության ստորոգյալը մեծ մասամբ դրված է լինում երկրորդական բաղադրյալ ժամանակով (ըղձական եղանակի անցյալ ապառնի ժամանակով դրվում է լինել բայը), կամ լինում է ուղղակի բաղադրյալ, երբ որպես հանգույց հանդես է գալիս լինել բայը (տես վերևի օրինակները)։

Ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակի ժխտական ձևին գլխավորի մեջ կարող է համապատասխանել սահմանական եղանակի անցյալ հարակատար ժամանակը, որն այստեղ գործածվում է ոչ թե իր բուն նշանակությամբ, այլ պայմանական եղանակի անցյալի ապառնու։ Այստեղ ընդգծվում է, որ գլխավոր նախադասության մեջ տրված գործողությունը չի կատարվել կամ չի կատարվում միայն երկրորդական նախադասությամբ տրված պայմանի առկայության հետևանքով. օրինակ՝ Չլինեին իմ ընկերները թեկուզ մի օր, նա կորած էր անդառնալիորեն (Վ. Անանյան)։ Այս նույն իմաստն է արտահայտվում գլխավոր նախադասության մեջ պայմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը գործածելու դեպքում. օրինակ՝ Չլիներ նրա սառնասրտությունը, տեղից կբարձրանար, դուրս կտաներ որդուն (ԳՍԲ, 2, 272)։ Պատերազմ չլիներ, ոսրիշ բան, կշարունակեիր կրթությունդ (Խչ., ՄՄՀ, 34)։ Միայն առաջին դեպքում (սահմանական եղանակի անցյալ հարակատար ժամանակը գործածվելիս) ընդգծվում, շեշտվում է գլխավոր նախադասության գործողության հավանական, բայց կատարված չլինելը։

Երբ շեշտվում է գլխավոր նախադասության գործողության կատարման հնարավոր եղած լինելը, գլխավոր նախադասության մեջ գործածվում են կարող էր, կարելի էր միադիմի ստորոգյալները՝ գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի հետ. օրինակ՝ Գործերը չլինեին, կարելի էր ավելի մնալ (ԳՍԲ, 1, 257)։

Երբ ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակին համապատասխանում է պայմանականի անցյալի ապառնու ժխտական ձևը, բարդ նախադասությունը արտահայտում է հետևյալ իմաստային փոխհարաբերությունը—գլխավոր նախադասությամբ նկարագրվում է անցյալում տեղի ունեցած, արդեն կատարված գործողություն, որը չէր կատարվի, եթե կատարվեր երկրորդական նախադասությամբ տրված պայմանը (չիրագործված). օրինակ՝ Գոսցե դու մոտս լինեիր, ես այնպես մենակ, դժբախտ չլինեի (Մ. Ման.)։ Սովորական եղանակ լիներ, մենք դժվարություն չէինք զգա (Լեո, 276)։

Գլխավոր նախադասության մեջ սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակի գործածության դեպքում ամբողջ նախադասությունը ստանում է ընդհանուր-անորոշ նշանակություն. օրինակ՝

Ոտ ու ձեռից ընկած, անճար, Հաց չտային, չէր ուզում (Ավ. Իս., 2, 116)։ Իրենք չգնային, ոչ ոք չէր նետաքրքրվում դրանով։

Երբ գլխավոր նախադասությամբ նկարագրվում է մի գործողություն, որի կատարման հնարավորությունը ենթադրվում է որոշակի պայմանի առկայության դեպքում, նրանում որպես ստորոդյալ հանդես է գալիս կարող է միադիմի ստորոդյալը գործողություն ցույց տվող բայի անորոշ դերբայի հետ։ Երկրորդական նախադասության ստորոդյալը դարձյալ դրվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակով. օրինակ՝ Քար վերցնեն խփեն, տիկին Բերսաբեն կարող է վիրավորվել, շնկրի վրա ուշադրություն չդարձնեն, կարող է պատռել մեկն ու մեկի շալվարը (ՆՉ, ՊՊՆ, 79)։

բ) Երբ գլխավոր նախադասությամբ տրվում է եզրակացություն՝ որոշակի պայմանում կատարվելիք գործողության մասին կամ հորդոր՝ անհարժեշտ պայմանի առկայությամբ կատարվելիք գործողության մասին, պայմանի երկրորդական նախադասության ստորոդյալը դրվում է պայմանական եղանակի ապառնի ժամանակով, որին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է պայմանական եղանակի ապառնի ժամանակով դրված ստորոդյալ (առաջին դեպքի համար) կամ հրամայական եղանակ (երկրորդ դեպքի համար)։ Երկրորդական նախադասությունը այս դեպքում հաճախ ունենում է հարցական ինտոնացիա, որի միջոցով ավելի սերտ է դառնում երկրորդական նախադասության և գլխավորի կապը։ Օրինակներ՝

— Կկատարվի խնդիրս—լավ, չի՞ կատարվի— խոմ ինձանից մի բան չի պակսիլ (Շ, 1, 33)։ Կլինի՝ կտան, չի՞ լինի, իրենց փոխարեն կտան հարուստ կոլտնտեսությունները (Ա. Սեկ., 398)։ Գերան կպատահի, տախտակ կմաշենք, ճանճի բանի համար յաշչիկ կշինենք։ Չի՞ պատահի, կրահող կշինենք, ուզողին կտանք, (ԱՔ, 490)։ Կուզենա՝ մի անգամ էլ կգա ծանոթ փողոցը (ԱՔ, 182)։ Կնայացնեն՝ ասացեք, որ հին ենթակայանի վրա եք աշխատում (Վերդ., ԻԳե, 325)։ Կընդունե՞ք Վիէմ-ի սխեման, գործն առաջ կմղվի հարյուր մղոնանոց քայլերով, չե՞ք ընդունի, ուրեմն կսնվեք միայն... անպտուղ երազներով՝ (Վերդ., ԻԳե, 254)։ Վերջին օրինակում գլխավոր նախադասության սկզբում դրված ուրեմն եզրափակող բառը մի կողմից ավելի սերտ է դարձնում գլխավոր և երկրորդական նախա-

դասությունների կապը, մյուս կողմից ընդգծում է այս պայմանի երկրորդական նախադասությունների՝ հիմունքի իմաստային երանգ ունենալը, որի իրագործումից, որպես հետևանք, պիտի առաջանա, կատարվի գլխավոր նախադասության գործողությունը։

Հիմունքի ուժեղ իմաստային երանգ ունեն նաև այն պայմանի երկրորդական նախադասությունները, որոնք ունեն հարցական բնույթ, ստորոգյալը դրված է պայմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակով, և վերջինիս գլխավորի մեջ համապատասխանում է դարձյալ պայմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը։ Այս կառուցվածքի նախադասություններում ևս նկարագրվում են չիրագործված և պայմանի իրագործելի չլինելու հետևանքով անհավանական համարվող գործողություններ. օրինակ՝ Մռնչում էին նրանք քաղցի մոլուցքից և ո՞վ կհանդգներ անցնել նրանց միջով, վայրկյանի մեջ պատառ-պատառ կանեին (Ավ. Խ., 3, 270)։

դ) Սահմանական եղանակի ձևերը պայմանի երկրորդական նախադասություններում գործածվում են այն դեպքերում, երբ նրանցում նկարագրված պայմանը, ենթադրությունը վերաբերում է ներկային կամ անցյալին։ Երբ խոսելու պահին ենթադրվող պայմանի առկայության դեպքում ցանկալի կամ անհրաժեշտ է համարվում գլխավոր նախադասությամբ տրված գործողության կատարումը, երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է սահմանական եղանակի ներկա ժամանակով, որին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում են ըղձական, պայմանական կամ հարկադրական եղանակների ապառնի ժամանակները։ Օրինակներ՝

Ով գալիս ա՝ բարով, հազար բարի, բան ա ուզում՝ փող բերի՝ տանի (ՀԹ, 3, 64)։ Իմ խելքով, բարկանում ես՝ պիտի խփես, էլ մի կես ժամ երգելը ո՞րն ա... (ՍՀ, 25/11—60 թ.)։ Ուզո՞ւմ ես՝ բռնեմ հոգիդ այսօրվա... ու նետեմ... դեպի կյանքը գալիք (Ե. Չար., 43)։ Կուզե՞ս, ես պատմեմ Գնունի իշխանների... նահատակության պատմությունը (Մուր., 3, 38)։

Վերջին երկու օրինակում Ուզո՞ւմ ես և կուզես պայմանի երկրորդական նախադասությունները սկսել են կորցնել իրենց՝ նախադասության նշանակությունը և վեր են ածվում եղանակավորող բառերի։

Ավելի հաճախ գլխավոր նախադասությամբ հորդորվում, հրամայվում է կատարել որևէ գործողություն՝ երկրորդական նախադասության մեջ նկարագրված՝ խոսելու պահին արդեն առկա կամ ենթադրվող պայմանի պատճառով։ Այս ժամանակ երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է դարձյալ ներկա ժամանակով,

իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը՝ հրամայական եղանակով։ Պայմանի երկրորդական նախադասությունը այս դեպքում հաճախ ունենում է հարցական ինտոնացիա։ Օրինակներ՝

Թագավորն է քո թշնամին, կռի՞վ ուներ, իր հետ առա (ՀԹ, 2, 126)։ Փող ուներ՝ տար քեզ բարեբար մարդոց հետ գործ արա (ԱՐ, 480)։ Հեքիաթ ես ուզում, երեկոներն արի այստեղ և նայիր վառվող այդ լույսերին (ե, 10/3—61 թ.)։ —Մի բան գիտես—ասա՝ ի՞նչ ես պոչդ գետնովը տալիս (ե. Չար., 337)։ Այս երկրորդ նամակն էլ... վերցրի Պետրոսի եղբորից, որ ձեզ ցույց տամ։ Ուզում եք—կարդացեք (Շ, 2, 440)։ Կա՞ հնարավորություն, օգտվիր (Ալ., ՀԱ, 150)։ Ես մի գին ասացի, վերջացրի։ Կամենո՞ւմ եք՝ տվեք, չե՞ք կամենում, բարով եկիք (Մուր., 1, 92)։

Հորդորի, հրամանի իմաստն արտահայտելու համար գլխավոր նախադասության մեջ երբեմն հրամայական եղանակի փոխարեն գործածվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակը։ Այս դեպքում գլխավոր նախադասության սկզբում կամ ստորոգյալից առաջ դրվում է թող եղանակավորող բառը, որով ընդգծվում է ըղձական եղանակի՝ հորդորի նշանակություն ունենալը. օրինակ՝ Եվ նրանք, որ դեռ աշխարհում չկան, որ դեռ նոր պիտի ապրեն աշխարհում, դեռ նոր պիտի գան,—կարո՞ղ են, թող մեր թռիչքն այսօրվա անձկորեն չզգան (ե. Չար., 27)։ Երկրորդական նախադասության ստորոգյալը այս դեպքում կարող է դրվել նաև հարակատար ժամանակով. օրինակ՝ — Ես մոլորված եմ, հորեղբայր։ — Մոլորված ես, տանդ ճամփան գտիր... ի՞նչ ես ուրիշների դռները ծեծում (ԳՍԹ, 2, 11)։

Անշահկապ պայմանի նախադասությունների այս տարատեսակը ևս շատ է տարածված ժողովրդական առածների, ասացվածքների մեջ. օրինակ՝ «Խելք ուներ՝ քեզ համար պահիր», «Փարա կուզի՞ս ունենալ, քեսեդ (քսակ) ծակ մի պահիր», «Ցորեն հաց չունիս, ցորեն լեզու ունեցիր», « Կուզեք կռիվ տեսնեք, գնացեք աղքատի տոնն», «Շատ գիտես, քիչ խոսա», «Կուզես առամի ցավեն ազատվիս, արմատը արեգակին ցույց տուր», «Կաթ կուզես՝ կով պահի» (Հայկ. առած.)։

Երբ բարդ նախադասությամբ պատմվում է մի այնպիսի երեւույթի մասին, որը սովորաբար երևան է գալիս երկրորդական նախադասությամբ տրված պայմանի առկայության դեպքում, վերջինիս ստորոգյալը դրվում է ներկա ժամանակով, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը՝ պայմանական եղանակի ապառնի

ժամանակով, օրինակ՝ Կովդ առատ կաթ է տալիս, աչքով կտան, կցամաքի (Աղավնի)։

Ընդհանուր դատողություններ անելիս գլխավոր նախադասության ստորոգյալը հաճախ լինում է բաղադրյալ. օրինակներ՝

«Ջոմխս—շոմ խս», «Մարաք ունիս, կարաք ունիս», «...Փուշ շատ ունե, սրտի վարք է» (Հայկ. առած.)։ Ձմեռը քիչ ձյուն է գալիս—ցավ է. անժամանակ ցուրտ, գարնանային անչափ անձրևներ—դարձյալ ցավ (Լեո, 419)։ Վերջին օրինակում պայմանի երկրորդական նախադասությունը ունի ժամանակի իմաստային երանգ։

Երբ երկրորդական նախադասության ստորոգյալը դրված է լինում ներկա ժամանակով, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը՝ սահմանական եղանակի որևէ անցյալ ժամանակով, նախադասությունը ունենում է հիմունքի ուժեղ իմաստային երանգ. այսպես՝ Քի՞չ է վերադարձնում, ուրեմն պարզ է՝ քիչ է ստացել (Ա, 17/1—61 թ.), կամ՝ դե, դե, ձայնդ երկինք մի՛ հանիր։ Ասում եմ՝ այդքան էր, վերջացավ (ՍԽՀ, 1, 70)։

Անշաղկապ պայմանի երկրորդական նախադասություններում շատ է տարածված սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի գործածությունը, որին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է պայմանական եղանակի ապառնի ժամանակը։ Այստեղ անցյալ կատարյալ ժամանակը գործածվում է ոչ թե իր բուն նշանակությամբ, այլ ըղձականի ապառնու և տալիս է պայման հանդիսացող այն երևույթը կամ գործողությունը, որի առկայությամբ ենթադրվում է գլխավոր նախադասության գործողության իրականացումը։ Օրինակներ՝

Մի լավ բան ընկավ ձեռքը, ծոցում կթաքցնի (ՆԶ, ՊՊՆ, 41)։ Նա չեղավ՝ ուրիշ կառավարիչ կուղարկեն, բաժինները կավելացնի— (Ն. տ., 136)։ Նա ուզեց՝ կլինի, չուզեց չէ (Գ. Ոչ., Մ., 265) ...Սերը չեղավ, ծախսով, ծաղով ուրախությամ չի լինի (ՆԶ, 4, 13)։ Հորթը կովի առաջն ընկավ, գիլի բաժին կդառնա (Հայկ. առած., 61)։

Գլխավոր նախադասության ստորոգյալը այս դեպքում կարող է լինել բաղադրյալ, որով ավելի ուժեղ է դարձվում նկարագրվող երևույթը. օրինակ՝ Աշխարհը գութանի վրա է հիմնված, ողջ մնացինք, գութանը մեզ ճարկավոր է ու ճարկավոր, մեռանք՝ ով որ տանի, կարելի է արդար աշխատանքի սեր զարթնի մեջը (Ավ. Իս., 3, 22)։ Թե Մանուկը մի բանով օգնեց՝ լավ, չօգնեց՝ իր գործն է (Դև, 141)։ Հարևանդ դուռդ եկավ, յա աղ ա պակաս, յա մաղը (Հայկ. առած., 9)։

Հաճախ երկրորդական նախադասության՝ անցյալ կատարյալով արտահայտված ստորոգյալը դրվում է երկրորդ դեմքով, որի միջո-

ցով ցույց է տրվում ընդհանրապես որևէ ենթադրվող պայմանի առկայության դեպքում տեղի ունեցող գործողություն (որպես նրա հետևանք)։ Գլխավոր նախադասության մեջ գործածվում է կամ պայմանական եղանակի ապառնի ժամանակը, կամ ստորոգյալը լինում է բաղադրյալ։ Վերջինի միջոցով նկարագրվում է այն հետևանքը, որ կարող է առաջանալ երկրորդական նախադասությամբ տրված գործողության կատարումից։ Ահա մի քանի օրինակ՝

Աշքդ բեճեցիր—բանիդ տերը չես (ՀԹ, 2, 38)։ Արաքսն անցար՝ Պարսկաստանն է (Մ. Դավթ., 288)։ Մեկ համրանք ուշացար՝ էլ չկա համը (ԴԴՎ)։ —Զկարողացար՝ կխայտառակվի բոլորի ներկայությամբ (Վերդ., ԻԳԵ, 134)։ Ուշանալ չի կարելի. փոքր ինչ դանդաղեցիր՝ կխախտվի վառարանի ջերմային ռեժիմը, կընկնի կարբիդի որակը (Ե, 17/11—60 թ.)։ Յոթ սարի ետև էլ լինես՝ փորձանքի մեջ ընկար՝ Շնկոն կողքիդ է (Դխ, 19)։

Երկրորդական նախադասության մեջ անցյալ կատարյալ ժամանակի գործածության դեպքում գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել նաև հարկադրական եղանակով կամ հրամայական եղանակով։ Վերջինս այս դեպքում գործածվում է ոչ թե իր բուն նշանակությամբ, այլ հարկադրական եղանակի։ Այս կառույցվածքի նախադասություններում շեշտվում է երկրորդական նախադասության պայմանի առկայության դեպքում գլխավոր նախադասության գործողության անհրաժեշտաբար, անպայման կատարվելու գաղափարը։ Օրինակներ՝

Աշխարհի կարգն է էդպես։ Ծլեցիր՝ պիտի ծաղկես, ծաղկեցիր՝ պիտի պտուղ տաս (Դխ, 422)։ Դա նման է ապակու, փշրեցի՞ր. էլ մի մտածիր փշրանքները միացնելու մասին (ՍԳ, 1960, № 9, էջ 34)։ Բանը էքուցվա մնաց, իմացիր՝ կորավ գնաց (Հայկ. առած.)։ —Տերության ինչ հոգն է, թե ձեռքդ նեղումն է։ Հրաման հանեց՝ տուր, տուր (ԱԲ, 533)։

Պայմանի երկրորդական նախադասությունում գործածվում է սահմանական եղանակի վաղակատար ժամանակը, երբ գլխավոր նախադասությամբ հորդորվում է կատարել մի գործողություն, որի իրագործման համար անհրաժեշտ պայմանը իրականության մեջ արդեն գոյություն ունի։ Գլխավոր նախադասության ստորոգյալը այս դեպքում դրվում է հրամայական եղանակով։ Օրինակներ.

Ձորս ընկերներ որոշել եՃ պաշտպանել հայրենիքը, դուք էլ մեզ հրացան տվեք (ՆԶ, ՊՊՆ, 209)։ Հիվանդանոցի՞ց ես դուրս գրվել՝ ուրեմն ստացիր քո փայը, հանգստացիր մի քիչ (ՄԱՅ, 183)։ Ձեռքդ խաղող է ընկել, ուրեմն նստիր տանը ու ամբողջ օրը կեր (Ա-

դավնի)։ Վերջին օրինակներում գլխավոր նախադասության մեջ հանդես է եկել ուրեմն եզրափակող բառը, որով մի կողմից ավելի սերտ է դառնում գլխավոր և երկրորդական նախադասությունների կապը, մյուս կողմից ընդգծվում է նրանց միջև եղած հիմունքի իմաստային երանգը։ Այս կառուցվածքի անշաղկապ բարդ նախադասություններում հիմունքի իմաստային երանգը այնքան ուժեղ է, որ դժվար է որոշել, թե այստեղ երկրորդական նախադասությունները պայմանի՞ են, թե՞ հիմունքի։

դ) Անշաղկապ պայմանի երկրորդական նախադասություններում շատ է հանդիպում նաև հրամայական եղանակի գործածությունը։ Վերջինս ևս, անցյալ կատարյալ ժամանակի երկրորդ դեմքի նման, նախադասությանը տալիս է ընդհանուր-անորոշ նշանակություն։ Գլխավոր նախադասության մեջ հրամայական եղանակին կարող են համապատասխանել կամ պայմանական եղանակ, կամ բաղադրյալ ստորոգյալ։ Օրինակներ.

Մտիր ակումբ հիմա, մտիր թատրոնն ու կաֆեն՝ հազար արքա ու Արա կճանդիպես ժպտադեմ (Ե. Չար., 149)։ Ամառն ինչքան կարաս կա Այգեձորում... իսկ հիմա՝ նոյեմբերին շրջիր գյուղը՝ ոչ մի կարասի չես ճանդիպի (Վ. Անանյան)։ Շրջիր բոլոր ընտրական տեղամասերը, խոսիր բոլոր ընտրողների հետ, ամենուր նույն խանդավառություն է (Ե, 17/3—59 թ.)։ Աշխարհում էս հողի պես հող չկա. մենակ թե դու ջուր տուր նրան, դիմացը բուռեբուռ ոսկի կըստանաս (Ա. Սահ., 189)։ Գնա մինչև հին Բաբելոն, ելամների աշխարհը, մինչև Աղի լիճը և Միջագետքի խանձված դաշտերը, ամեն տեղ կտեսնես այս բիբլիական կավը (ԱԲ, 238)։ Հապա ինձ նման սիրիր աշխատանքը, տես կմոռանաս թե չէ (Շ. 2, 277)։ Վերջին նախադասության մեջ գլխավոր և երկրորդական նախադասությունների կապին օժանդակում են նապա եղանակավորող բառը և տես բայածևը (վերջինս այստեղ կատարում է սոսկ շաղկապական բառի դեր)։ Այս նախադասությունը տարբերվում է նախորդներից նաև նրանով, որ ցույց է տալիս ոչ թե ընդհանուր անորոշ գործողություն, այլ որոշ չափով կոնկրետ գործողություն։

Երկրորդական նախադասության հրամայական եղանակին երբեմն գլխավոր նախադասության մեջ կարող է համապատասխանել ըղձական եղանակի ապառնի ժամանակը. այս դեպքում ընդգծվում է նաև նրանց միջև եղած նպատակային հարաբերությունը. օրինակ՝ Շոր տուր՝ շնորհք տամ, հաց տուր՝ ռանգ տամ (Հայկ. առած., 48)։

Պայմանի անշաղկապ նախադասություն պետք է համարել նաև այն բարդ նախադասությունները, որոնցով արտահայտվում է կաս-

կած որևէ գործողության իրագործելիության վերաբերյալ՝ դրա համար անհրաժեշտ պայմանի անհավանական լինելու հետևանքով։ Այս նախադասությունները ունենում են հետևյալ կառուցվածքը. գլխավոր նախադասության ստորոգյալը դրվում է հրամայական եղանակով, իսկ երկրորդական նախադասության ստորոգյալը լինում է բաղադրյալ, ըստ որում հաճախ ստորոգելիական վերադիրը լինում է նույն բայի ենթակայական դերբայը։ Օրինակներ՝

Փրկող ես՝ *դու նրան* փրկիր *(Ա. Սահ., 307)*։ Ձեռդ ճզոր է՝ *գըլխիդ* քսե *(Հայկ. առած., 133)*։ *—Գիլու բերնից կըհանե՞ս միս փախցնել։* Տղամարդ ես, էգուց գնա, բոյդ տեսնենք *(Ավ. Իս., 3, 75)*։ *Լավն է, դու վերցրու։ Ծղնիկ կա էնտեղ, այծյամ ու պախրա,* կարող ես—գնա *էնտեղ որս արա (ՀԹ, 2, 111)*։ *Սա վաննայից հանած ապակի է, վեց հարյուր աստիճանի ջերմությամբ...* կարո՞ղ ես, մոտեցիր *(Ալ., ՀԱ, 261)*։ *Վերջին երկու օրինակներում* կարո՞ղ ես *պայմանի երկրորդական նախադասությունը սկսել է վերածվել եղանակավորող բառի և ցույց է տալիս խոսողի թերահավատությունը գլխավոր նախադասությամբ տրված գործողության իրագործելի լինելու վերաբերյալ։ Պայմանի երկրորդական նախադասությունները այս դեպքում ևս հաճախ ունենում են հարցական ինտոնացիա։*

ԶԻՋԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանային հարաբերություններ են արտահայտում նաև զիջական երկրորդական նախադասություն պարունակող անշաղկապ բարդ նախադասությունները։ Այս նախադասությունների բաղադրիչ մասերից առաջինում տրվում է որևէ պայման, իսկ երկրորդում մի գործողություն, որը կատարվում է հակառակ այդ պայմանի, այլ կերպ ասած, գլխավոր նախադասությամբ նկարագրվում է մի գործողություն, որը հակադիր է երկրորդական նախադասությամբ տըրված պայմանից սպասվող գործողությանը։

Այս տեսակետից զիջական անշաղկապ նախադասությունները շատ մոտ են պայմանի նախադասություններին, սակայն ի տարբերություն վերջիններից, նրանք ժամանակակից հայերենում սակավ են գործածվում։

Իրենց իմաստային առանձնահատկություններով զիջական անշաղկապ նախադասությունները շատ մոտ են նաև հակադրության նշանակություն ունեցող համադասական անշաղկապ նախադասություններին, սակայն իրենց շարահյուսական հարաբերությունների բնույթով որակապես տարբերվում են նրանցից։ Եթե հակադրության

նշանակություն ունեցող անշաղկապ նախադասության մասերը հավասարազոր են իրար և ունեն համեմատաբար ավելի շատ ինքնուրույնություն, ապա դիջական հարաբերություններ արտահայտող անշաղկապ բարդ նախադասության մասերից մեկը ստորադասվում է մյուսին, իմաստային կախվածության մեջ է նրանից և հավասարազոր չէ նրան։ Ինտոնացիայով ևս այս նախադասությունները տարբերվում են իրարից։ Հակադրության նշանակություն ունեցող անշաղկապ համադասական նախադասությունների բաղկացուցիչ մասերը ունեն տրամաբանական հավասար շեշտվածություն, իսկ դիջական նախադասությունները ունեն պայմանի նախադասությունների նման ինտոնացիա, այսինքն՝ բացատրական ինտոնացիա։ Դիջական նշանակությունը անշաղկապ բարդ նախադասություններում արտահայտվում է հետևյալ քերականական միջոցներով.

1. Դիջական երկրորդական նախադասության ստորոգյալը կրկնվում է՝ երկրորդ անգամ դրվելով ժխտական ձևով։ Գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալները այս դեպքում սովորաբար համաձայնում են։ Եթե նկարագրվում է անցյալում կատարված գործողություն, որ կատարվել է չնայած նրան հակասող պայմանի առկայությանը, և՛ ստորադաս, և՛ գլխավոր նախադասությունների ստորոգյալները դրվում են անցյալ ժամանակներով, իսկ եթե նկարագրվում է ապագայում կատարվելիք գործողություն, որը անպայման կկատարվի, եթկուզ դրան հակասող պայման գոյություն ունենա, երկու մասում՝ էլ գործածվում են ապառնի ժամանակներ։ Օրինակներ՝

Տատիկս ինչ արեց–չարեց, *նա գրքերի ու տետրակների համար վարձատրություն* չվերցրեց *(ԱՇ, 192)։ Ինչ* արիճ–չարիճ, *չեկավ հավատի (ՀԹ, 10)։* Ուզենա–չուզենա—*ինձ մոտ պիտի* թողնի *(ՆՉՀ, 12)։ Աշխենը* լիներ, չլիներ—*եղբայրս դարձյալ կգնար այնտեղ, ուր գնաց և զոհվեց (ՆԴ, 3, 590)։*

Միայն երբեմն գլխավոր նախադասության ստորոգյալը լինում է բաղադրյալ, որով տրվում է այն երևույթը, որը գոյություն ունի՝ անկախ նրան հակասող պայմանի առկայությունից. օրինակ՝ Ուտե, չուտե, *կաղապարն էդ է (Հայկ. առած., 16)։*

2. *Երկրորդական նախադասության ստորոգյալը դրվում է հրամայական եղանակով (մեծ մասամբ) կամ ըղձական եղանակի ապառնի ժամանակով, որոնց գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է պայմանական կամ հարկադրական եղանակների ապառնի ժամանակով դրված ստորոգյալ։*

Երկրորդական նախադասության մեջ հանդես են գալիս ինչ ուզում է, ուր ուզում է բառակապակցությունները, որոնց միջոցով երկրորդական նախադասությանը տրվում է ղիջական երանգ։ Օրինակներ.

Ինչ ուզում ես ասա՝ իմ նախազգացումը ինձ չի դավաճանի (ՔԹՊ, 7)։ Ինչ ուզում ես մտածիր, ես պետք է գնամ (Ն. տ., 115)։ —Դուք մեր բուժակին ճանաչո՞ւմ եք... ինչ տեսակ հիվանդ ուզում է լինի՝ մի օրում ոտքի կկանգնեցնի (ՄԱ, 3, 118)։

Այս կառուցվածքի նախադասություններում գլխավոր նախադասության մեջ ներկա ժամանակի կիրառությունը ամբողջ բարդ նախադասությանը տալիս է սովորության կամ ընդհանուր դատողության նշանակություն. օրինակ՝ Դու ինչ ուզում ես ասա, նա իր էշն ա ջրում (Հայկ. առած., 81)։ Ինչ կուզես ասա, դրա վրա առանձնապես հույս դնել չի կարելի (ԴՍԲ, 2, 69)։

Սովորաբար կրկնվող գործողության կամ երևույթի նշանակություն ունեն նաև ղիջական հարաբերություն արտահայտող այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց ստորադաս մասում (առաջին բաղադրիչում) ստորոգյալը լինել բայի ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակն է (կամ որպես անկախ, առանձին ստորոգյալ կամ որպես երկրորդական բաղադրյալ ժամանակի բաղադրիչ), իսկ գերադաս մասի ստորոգյալը դրված է սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակով։ Օրինակներ՝

—Քթոցը շալակին դարման կրելիս լիներ նա, թե այգին փորելիս... միշտ և ամենուր նույն երազն էր տեսնում (Ա. Սահ., 1, 140)։ Լիներ հավաքույթներում, փողոցում կամ հանրային վայրերում, ջլապինդ ու փոքրիկ այդ կինը, միշտ կռիվ փնտրող հավալուսնի պես, պողպատյա ցոլքերով փայլող իր կանաչ աչքերով, ման էր ածում իր ծեքծեքոտն շալվարը (Վահր. Փափ., 18)։

Այս նախադասությունները ունեն կառուցվածքային նաև այն առանձնահատկությունը, որ ղիջական մասը կամ լինում է իր հերթին բարդ՝ տրոհական նշանակությամբ, կամ ունենում է բազմակի անդամներ՝ թվարկման նշանակությամբ, որոնց միջոցով թվարկվում, նկարագրվում են այն պայմանները, որոնցից անկախ կատարվում է գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողությունը (տես վերևի օրինակները)։ Երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է դրված լինել նաև որևէ բայի ըղձական եղանակի անցյալի ապառնի ժամանակով (և ոչ թե երկրորդական բաղադրյալ ժամանակով). օրինակ՝ Պարտապանը դուռը զար, թե գրիչը, բանակցությունները նրա հետ էր վարում (Ա. Սահ., 87)։

Այս կառուցվածքի նախադասությունները ցույց են տալիս կոնկրետ կատարվելիք գործողություն, երբ երկրորդական նախադասության մեջ գործածվում է ըղձականի ապառնի ժամանակը, իսկ գլխավորի մեջ՝ պայմանականի ապառնի ժամանակը. այսպես՝ Հորում լինեն քառասուն գաղ խոր, թե չաղացի քարի տակին,—կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր, Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին (ՀԲ, 2, 135):

3) Երկրորդական նախադասության ստորոգյալի մոտ երբեմն դրվում է էլ եղանակավորող բառը, որով ընդգծվում է նախադասության գիշական բնույթը: Օրինակներ.

Քառասուն աստիճան ցուրտ էլ լինի, ձեզ համար ոչինչ է. (ԳՍԲ, 2, 63): Ջերաժարվեին էլ՝ Երվանդը նրանց բան տվող չէր (Ավ. Իս., 3, 83): Ջտաենե էլ, գնալու եմ (Մ. Ման., 289):

Այս կառուցվածքի նախադասություններում ընդգծվում է, որ գլխավոր նախադասության գործողությունը անհրաժեշտաբար, անպայման պիտի կատարվի կամ պիտի կատարվեր, նրան խանգարող ինչպիսի պայման էլ որ առկա լինի:

Երկրորդական նախադասության ստորոգյալը դրված է լինում ըղձական եղանակի ապառնի կամ անցյալի ապառնի ժամանակով: Վերջին դեպքում ցույց է տրվում անցյալում գլխավոր նախադասության գործողության կատարմանը խոչընդոտող, սակայն չիրականացած մի պայման, որի իրականանալու դեպքում ևս կկատարվեր գլխավոր նախադասության գործողությունը: Գլխավոր նախադասության ստորոգյալը կամ արտահայտված է լինում պայմանական եղանակով, կամ լինում է բաղադրյալ:

Վերը նշված իմաստը արտահայտվում է նաև միևնույն է միջանկյալ բառակապակցության միջոցով, որը դրվում է երկրորդական նախադասության սկզբում կամ վերջում: Միևնույն է բառակապակցությունը և էլ եղանակավորող բառը կարող են հանդես գալ նաև միաժամանակ: Այդ դեպքում էլ-ը դրվում է երկրորդական նախադասության ստորոգյալից հետո, ապա դրվում է միևնույն է, որին հաջորդում է գլխավոր նախադասությունը: Օրինակներ.

Միևնույն է, այսօր տվաղեն, վաղը կթափվի (Գ. Ռշ., Մ., 216): Գնամ կանչեմ, միևնույն է, չի գալու: Բարձր խոսեմ էլ, միևնույն է, չի լսի:

4. Անշաղկապ գիջական նախադասությունները կարող են արտահայտել նաև հետևյալ իմաստային հարաբերությունը. գլխավոր նախադասությամբ շեշտվում է, որ չի կատարվում կամ չի կատարվի երկրորդական նախադասությամբ տրված պայմանից սպասվող հետևանքը: Այս իմաստը տրվում է քերականական հետևյալ միջոցով՝

եթե երկրորդական նախադասությունը հաստատական բնույթ ունի, այսինքն ցույց է տալիս անցյալում կատարված կամ ապագայում կատարվելիք գործողություն, գլխավոր նախադասությունն ունենում է ժխտական կառուցվածք, որով ցույց է տրվում, որ չէր կատարվելու, կամ չի կատարվի առաջին նախադասությունից բխող հետևանքը. օրինակ՝ Վազեմ էլ, չեմ հասնի։ Պառկեմ, միևնույն է, չեմ հանդստանա։ Տեսնեի էլ, չէի ճանաչի և այլն։ Իսկ երբ երկրորդական նախադասությունը ունենում է ժխտական կառուցվածք, գլխավոր նախադասությունը լինում է հաստատական։ Այս դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև առկա է լինում հետևյալ իմաստային փոխհարաբերությունը՝ ցույց է տրվում, որ գլխավոր նախադասության գործողությունը անհրաժեշտաբար կատարվել է կամ կատարվելու է, եթե նույնիսկ չիրագործվեր կամ չիրագործվի դրա համար անհրաժեշտ պայմանը։ Օրինակներ՝ Ձվազեմ էլ, կեսասեմ։ Զգեայի էլ, նա կգար։ Նա չասեր էլ, ես գլխի էի ընկնելու և այլն։

Այս նախադասությունները իրենց իմաստային հարաբերությունների բնույթով շատ մոտ են պայմանի անշաղկապ նախադասություններին։ Զիջական երանգը այս նախադասություններին տրվում է միայն էլ եղանակավորող բառի միջոցով։

5) Անշաղկապ բարդ նախադասություններում զիջական հարաբերություններ արտահայտելու օժանդակ միջոց են նաև էլի կամ դարձյալ մակբայները (հատկապես առաջինը), որոնք դրվում են գլխավոր նախադասության սկզբում։ Այս դեպքում սովորաբար նկարագրվում է ընդհանրապես տեղի ունեցող գործողություն կամ արվում է ընդհանուր դատողություն՝ անկախ իրեն հակասող պայմանների առկայության որևէ գործողության կատարման կամ երևույթի առկայության մասին. օրինակ՝

— Հավին հարյուր հետ կուտ տու, էլի կտուցը գետնին կը քսի (Հայկ. առած., 87)։ ...Էսքան տանջվելով քրտինք ենք անում, էլ էն սևերեսն, էլ էն սովածն ենք (ՀՔ, 2, 36)։ Հինգ վեց անգամ կարդալ եմ տալիս, դարձյալ չի սովորում։ Երկրորդ օրինակում էլ–ը ունի էլի–ի նշանակություն։

Երբեմն այս իմաստային հարաբերությունը արտահայտվում է առանց որևէ օժանդակ միջոցի, ուղղակի գլխավոր և երկրորդական նախադասությունների ստորոգյալների հարաբերակցության միջոցով. օրինակ՝ Հազար կնիկ ճավաֆվեն, ցավը ծենդկանիճե ա (Հայկ. առած., 13)։

Անշաղկապ կարելի է համարել նաև հետևյալ և նման կառուց-

վածք ունեցող նախադասությունները՝ ճիշտ է, Սեդան հիմա չի կարող մեքենա նստել, գոնե դո՞ւ գայիր (Ա. Սեկ., 437)։ Այս կառուցվածքի նախադասություններում բարդ նախադասության մասերի կապակցության համար որպես օժանդակ միջոցներ հանդես են գալիս ճիշտ է միջանկյալ նախադասությունը և գոնե եղանակավորող բառը։

7. Ձիջական երկրորդական նախադասությունները անշաղկապ կապակցության ժամանակ սովորաբար լինում են առաջադաս։ Միայն հազվադեպ հանդիպում ենք նրանց վերջադաս գործածությանը. այսպես՝

Մարդամեջի մարդ ունենամ, հազար թուման պարտ ունենամ (Հայկ. առած., 2)։ Դև որ չես սիրել, չես էլ հասկանա—հազար նկարագրեմ (ՆԴ, 2, 420)։ Վատ բան է չքավորությունը, լինի նա մշտական քե առժամանակյա (Շ, 2, 238)։

Այս դեպքում անշաղկապ բարդ նախադասության մասերի միջև եղած ստորադասական կապակցությունը որոշ չափով թուլանում է. այն մոտենում է հարակցությանը։

ԶԵՎԻ ԵՎ ՁԱՓԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենում ձևի պարագա անշաղկապ նախադասություններ հանդիպում են շատ հազվադեպ։ Նրանք քնորոշում են գլխավոր նախադասության գործողությանն կատարման ձևը համեմատության կամ նրանից առաջացած հետևանքը նկարագրելու միջոցով։ Այս նախադասությունները, որպես կանոն, լինում են վերջադաս, իսկ գլխավոր նախադասության մեջ առկա է լինում այնպես հարաբերյալը, որի միջոցով երկրորդական նախադասությունը ստանում է ձևի պարագայի իմաստ։ Օրինակ՝

Թափանցիկ մաշկով ձեռքը՝ երեմնակի ցնցվում էր այնպես, թվում էր մեկը հրում էր նրան (ՍՁ, ՊԹ, 57)։ Քայլում էին այնպես երկյուղած, թվում էր մեկը հետապնդում էր նրանց (Ն. տ. 5)։

Երկրորդ օրինակում երկրորդական նախադասությունը լրացնում է ոչ թե անմիջապես գլխավոր նախադասության ստորոգյալին, այլ նրա՝ դերբայով արտահայտված ձևի պարագային (բոլոր պարագայական նախադասություններն էլ կարող են լրացնել ինչպես գլխավոր նախադասության ստորոգյալին, այնպես էլ դերբայական դարձվածին, սակայն անշաղկապ կապակցության ժամանակ նրանք մեծ մասամբ լրացնում են ստորոգյալին)։

Այստեղ ձևի պարագայի պաշտոն կատարող երկրորդական նախադասությունների սկզբում դրվել է թվում էր բայը, որը ասես, կարծես ձևերի նման սկսել է կորցնել իր բայական հատկանիշները և վեր ածվել շաղկապական բառի՝ երկրորդական նախադասությանը տալով համեմատության իմաստային երանգ. այս տեսակետից վերոբերյալ նախադասությունները մոտենում են շաղկապավոր բարդ նախադասություններին:

Երբեմն անշաղկապ ձևի պարագա նախադասությունը ունենում է ընդհանուր-անորոշ նշանակություն. օրինակ՝ Նստել էին՝ ով ինչպես ուզում էր (ԱՌ, 289): Կամ՝ Երգում էին՝ ով ինչպես կարող էր: Այս նախադասություններն ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ ձևի պարագա երկրորդական նախադասության ենթական, որով սկսվում է այն (երկրորդական նախադասությունը) ով հարաբերական դերանունն է, բացի դրանից, երկրորդական նախադասության կազմում հանդես է գալիս ինչպես դերանունը, որը թեև այստեղ չի կատարում շաղկապական դեր, սակայն երկրորդական նախադասությանը տալիս է ձևի պարագայի իմաստ:

Նման կառուցվածք ունեցող երկրորդական նախադասությունները կարող են կատարել տարբեր շարահյուսական պաշտոններ՝ նայած թե ինչ հարաբերական դերանուն է առկա նրանցում (բոլոր դեպքերում ենթական «ով»-ն է), այսինքն՝ երկրորդական նախադասության բնույթը կախված է հարաբերական դերանվան բնույթից, տեսակից: Բերենք օրինակներ.

Կերան, ով ինչ կան ուզեց—չափի պարագա երկրորդական նախադասություն:

Գնացին, ով ուր ուզեց, Նստեցին, ով որտեղ ցանկացավ—տեղի պարագա երկրորդական նախադասություններ: Վերցրին, ով ինչ տեսավ—ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն:

Այստեղ հարաբերական դերանունները թեև դեռևս վերածված չեն շաղկապական բառերի, սակայն որոշ չափով կատարում են նաև գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցողի դեր:

Շատ հազվադեպ անշաղկապ բարդ նախադասություններում երկրորդական նախադասությունը կատարում է չափի պարագայի պաշտոն՝ հետևանքի իմաստային երանգով: Այս բնույթի անշաղկապ երկրորդական նախադասությունները լինում են առաջադաս, իսկ գլխավոր նախադասությունները սկսվում են այնքան հարաբերյալով. օրինակ՝ Դե թող հիմի գնա՝ խավար հորում փտի, էնքան մնա (ՀԹ, 35):

ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՇԱՂԿԱՊ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Անշաղկապ բարդ նախադասությունների ստորադասական կապակցության մեջ հատուկ տեղ են բռնում, այսպես կոչված, հարակցական կապակցությամբ միացած անշաղկապ բարդ նախադասությունները։ Սրանք տարբերվում են մյուս ստորադասական նախադասություններից նրանով, որ թեև անշաղկապ բարդ նախադասության բաղկացուցիչ մասերի միջև եղած կախվածությունը (երկրորդ մասի կախվածությունը առաջինից) ակնբախ է, սակայն նրանք համեմատաբար ինքնուրույն են և այս տեսակետից որոշ չափով մոտենում են համադասությանը։ Ինտոնացիայով ևս այս նախադասությունները տարբերվում են մյուս անշաղկապ նախադասություններից. սրանց առաջին բաղադրիչը ունի վերջում մի փոքր իջնող ինտոնացիա, որով այն որոշ չափով մոտենում է ինքնուրույն, անկախ նախադասություններին։ Դադարը ևս երկու մասերի միջև սովորականից մի քիչ երկար է. այդ պատճառով էլ գրավոր լեզվում այս տիպի անշաղկապ նախադասությունների բաղադրիչ մասերը մեծ մասամբ բաժանվում են միջակետով, երբեմն նաև բութով կամ գծիկով։ Վերջիններիս դեպքում ընդգծվում է երկրորդ բաղադրիչի բացատրական բնույթ ունենալը (տես հաջորդ օրինակները)։

Հարակցական կապակցության ժամանակ անշաղկապ նախադասության երկրորդ մասը, ի տարբերություն մյուս ստորադասական նախադասությունների, չի կատարում գլխավոր նախադասության որևէ անդամի պաշտոն, չի լրացնում որևէ անդամի, այլ կամ բացատրում է ամբողջ գլխավոր նախադասության բովանդակությունը՝ նրա առաջացման պատճառը կամ նրանից առաջացած հետևանքը նկարագրելու միջոցով և կամ պարունակում է լրացուցիչ հաղորդում գլխավոր մասով հաղորդված գործողության մասին. երբեմն էլ երկրորդ մասով խոսողը հայտնում է իր վերաբերմունքը առաջին մասում հաղորդված գործողության մասին։ Ըստ անշաղկապ նախադասության երկրորդ մասի՝ գլխավոր նախադասության բովանդակության, հատկապես ստորոգյալի հետ ունեցած իմաստային հարաբերության, հարակցական կապակցությամբ միացած անշաղկապ բարդ նախադասությունները կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

ա) Անշաղկապ նախադասության առաջին մասի ստորոգյալը լինում է մեծ մասամբ սահմանական եղանակով դրված չեզոք սեռի բայ, որը ցույց է տալիս ընկալում կամ ընկալման նպատակով կա-

տարված գործողություն։ Երկրորդ մասում նկարագրվում է այն գործողությունը, երևույթը, որը ընկալվում է գլխավոր նախադասության ենթակայի կողմից։ Օրինակներ՝

Մին էլ ետ նայեց. գյուղը ծածկվել էր բլուրի ետև (ՀՔ, 3, 35)։ Սառնություն զգալով, Սեդան նայեց ցած. ցողից կարգին թացացել էին իր ոտքերը (Ա. Սեկ., 29)։ Վահրամը մի նայացք նետեց չորս բոլորը. գետինը ճաքճքվել էր ծարավից (Ա. Սեկ., 85)։ Ես ետ դարձա նայեցի նրանց. կորացած էին նրանց մեջքերը, անտեսանելի ծանր բեռի տակ կորացած (Ավ. Իս., 3, 47)։ Վեր թռա քնից, դուրսը նայեցի. Արևը ուրախ զարկել էր սարին, բնությունն անհոգ, թարմ ու նաղելի Զուգվում էր ժպտում մանուկ արևին (ՀՔ, 2, 75)։ Նայում եմ՝ օրերի մեջ, հրի մեջ երևում է, երերում է պատկերդ (Ե. Չար., 135)։ Նայիր՝ մի՞թե, մի՞թե դեռ ունեմ անխոց տեղ (ՎՏ, երկ., 239)։ Ականջ եմ դնում՝ ներսից ինչ որ աղմուկ է գալիս։

Այս կառուցվածքի նախադասություններում երկու բաղադրիչ մասերի միջև բացակայում է մի օղակ՝ ընկալում նշանակող բայը (բերված օրինակներից առաջիններում՝ տեսնել բայը, վերջին օրինակում՝ լսել), որը զորությամբ հասկացվում է և որին հենց փաստորեն լրացնում է անշաղկապ բարդ նախադասության երկրորդ մասը։

Առաջին բաղադրիչի ստորոգյալը կարող է լինել նաև շարժում ցույց տվող չեզոք բայ (դարձյալ սահմանական եղանակով), որի ցույց տված գործողությունը ևս կատարվել է կամ կատարվում է ընկալման նպատակով։ Երկրորդ բաղադրիչում նկարագրվում է այն երևույթը, գործողությունը, որը ընկալվում է առաջին մասի գործողությունը կատարվելուց հետո (որպես այդ գործողության հետևանք)։ Օրինակներ.

Հասավ հացթուխի խանութին. փակ էր (Մ. Ման., 63)։ Ես վազեցի դեպի պատուհանը. ջուլհականոցը շրջապատված էր կրակե լեզվակներով (ԳՄԲ, 359)։ Քարտուղարուհին բացեց դուռը, սպասող չկար (Վերդ., ԻԳԲ, 30)։ Ճաշին վազում եմ մոտը՝ տանն է (Լեո, 468)։ Կամ մտնում եմ ներս—վարսավիր է բաց պատուհանի առաջ, անկյունում, ակնոցավոր մի մարդ սեղանի դեմը նստած՝ ժամացույցներ է տնտղում (Ե. Չար., 314)։

Այստեղ ևս բաց է թողնված, բայց զորությամբ հասկացվում է ընկալում ցույց տվող բայը՝ տեսնել։

Երբեմն այս կառուցվածքի նախադասությունների առաջին մասի ստորոգյալը կարող է լինել նաև ներգործական բայ, որը դարձյալ ցույց է տալիս ընկալման նպատակով կատարված գործողություն.

օրինակ՝ Նա վախեցած բռնեց մի այծի, սա էլ էր կթված (Ա. Սեկ., 538)։ Գրինեն ստուգեց. չորս հոգի չէին եկել (Ի. էր., ՓԱ, 1, 122)։

Երբեմն անշաղկապ բարդ նախադասության մասերի միջև բացակայում է ոչ թե ընկալում նշանակող բայը, այլ ասացական կամ մտածական բայ. այսինքն՝ երկրորդական նախադասությունը (ավելի ճիշտ՝ բարդ նախադասության երկրորդ բաղադրիչը) նկարագրում է այն գործողությունը կամ եղելությունը, որի մասին մտածում կամ ասում է առաջին բաղադրիչի ենթական՝ դարձյալ որպես հետևանք իր կատարած գործողության. օրինակներ.

Նա ուղեց իր որդու երեկվա ախոյանների կովերը ջոկի տավարից, բայց խիղճը չտվավ. անելզու անասունն ի՞նչ մեղք ունի (ԱԲ, 19)։ Միաժամանակ և հիացավ Լյուսիենի վրա—գեղեցիկ դեմք ունի (Ի. էր., ՓԱ, 1, 14)։ Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կովվրն ինչո՞վ կվերջանա (ԱԲ, 204)։ ...Կողքին կանգնած աղջիկները մի տեսակ կատածանքով նայեցին իրար. որի՞ն էր վերաբերում այդ խոսքերը (Ա. Սեկ., 420)։

Այս կառուցվածքի նախադասությունները գործածվում են անցյալում կատարված կոնկրետ գործողություններ նկարագրելիս՝ դրանք ավելի պատկերավոր, շոշափելի դարձնելու նպատակով։ Այդ պատճառով առաջին մասի ստորոգյալը մեծ մասամբ դրվում է սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակով. երկրորդական մասի ստորոգյալը կարող է դրվել տարբեր անցյալ ժամանակներով կամ լինել բաղադրյալ՝ կախված հաղորդվածի բովանդակությունից։ Առաջին մասում ներկա ժամանակը գործածվելիս՝ այն կամ լինում է պատմական (ցույց է տալիս անցյալում կատարված գործողություն), կամ ունենում է սովորության նշանակություն (տես վերևի օրինակները)։

բ) Անշաղկապ բարդ նախադասության առաջին մասը կարող է լինել որևէ ընդհանուր դատողություն, բնորոշում, որը մասնավորվելու, պարզեցվելու կարիք է զգում։ Այդ բանը կատարվում է երկրորդական նախադասության միջոցով, որը փաստորեն առաջին մասի բովանդակության նկարագրությունն է. օրինակ՝

Զգույշ է միրճավը. քուջուջ անելիս ձգում է վիզը, աջ ու ձախ կռանում և ապա նորից երկարում է վիզը, չորս կողմը նայում (ԱԲ, 233)։ Մշակված պտղատու այգուց այժմ ճամարյա ոչինչ չի մնացել. պատերը քարուքանդ, այգու դռները վաղուց գողացվել էին (Մ. Ման., 119)։ Այնպես բուռն ատելություն ունեի՝ անզուսպ, վայրագ, նախկին հզոր սիրո փոխարեն, որ ունեի դեպի երվանդը, հիմա սիրտս եփվում էր նախանձով ու ատելությամբ նույն չափ հզոր,

ավելի հզոր (Ավ. Իս., 3, 46)։ Տիգրանը ընդունակ տղա էր, միտքը ճկուն էր, բռնածը հեշտությամբ բաց չէր թողնում (Ա. Սեկ., 517)։

Երբեմն երկրորդ մասով մասնավորվում, բացահայտվում է առաջին բաղադրիչի մի մասը. օրինակ՝ Իսկ մենք նրանից ավելի խոռամանկ կլինենք—ընտրությունները կջարդենք աջերին (Ի. էր., ՓԱ, 1, 39)։ Իր եղբորը նա շատ էիշ էր նմանե. միջահասակ էր, ցորենագույն դեմքով, խնամքով ետ սանրված ալիքաձև մազերով (ԳՍԹ, 2, 75)։ Ամեն ինչ հին է, և այդ ճիշը ճոգածությամբ պահում են. բազկաթոռներին ծածկույթ է հագցված, բուֆետում կոտրուստը կպցրած թասեր կան (Ի. էր., ՓԱ, 1, 6)։ Դրանդելը երիտասարդ էր և չափազանց գրավիչ—նուրբ դեմք, փոքրիկ սապատով քիթ, կապուտակ, երազուն աչքեր. նա նման էր Սեն-Ժյուստի նկարներին (Ի. էր., ՓԱ, 2, 9)։ Վերջին նախադասությունը ունի բարդ կառուցվածք—երկրորդ բաղադրիչը, որը հարակցական կապի մեջ է առաջինի հետ, անվանական է և լրացնում, բացատրում է առաջին մասի չափազանց գրավիչ մասը (ցույց է տալիս ինչու է գրավիչ)։ Երրորդ մասը՝ որը դարձյալ հարակցական կապով է միացած, վերաբերում է ամբողջ առաջին մասին և պարունակում է լրացուցիչ դատողություն՝ արված խոսողի կողմից։

դ) Անշաղկապ նախադասության առաջին մասում արվում է որևէ դատողություն կամ եզրակացություն, երկրորդ մասով տրվում է նրա հիմնավորումը։ Այս նախադասությունները տարբերվում են պատճառի և հիմունքի երկրորդական նախադասություններից նրանով, որ համեմատաբար ինքնուրույն են. դադարը երկու մասերի միջև ավելի մեծ է, առաջին մասի վերջում ձայնը որոշ չափով իջնում է, թեև առաջին մասը դեռևս չունի ավարտված նախադասության ինտոնացիա։ Բերենք մի քանի օրինակ.

Խոսքով փլավ չի եփվիլ՝ յուղ ու բրինձ է հարկավոր (Հայկ. առած., 105)։ Սուփի քեռակինը կպատմի. նա գաղտնիք պահել չի իմանում (Մ. Դավթ., 185)։ Սակայն նրա ուժերը սպառվում էին. դժվարությամբ էր ոտքերը հանում ձյան միջից, հազիվ էր կարողանում դիմադրել բքի մոլեգին հարվածներին (ՍԳ, 1959 թ., № 3)։ Հայրն էլ էր տխուր, աչքերը մթագնած էին (Ա. Սահ., 4)։ Այս նախադասությունների կապակցությանը օժանդակում է նաև նրանց բառային կազմը։ Երբ գլխավոր և երկրորդական նախադասությունների ենթական նույնն է (իսկ մեծ մասամբ այդ այդպես է), երկրորդ մասում այն զեղչվում է. միայն երբեմն այն կրկնվում է դերանվան ձևով, որով ավելի է ընդգծվում կապակցության հարակցական բնույթ ունենալը (տես երկրորդ օրինակը)։

դ) Անշաղկապ բարդ նախադասության առաջին մասի ստորոգյալը ցույց է տալիս անցյալում կատարված կոնկրետ գործողություն. երկրորդ մասը բացահայտում է նրա բովանդակությունը։ Օրինակ.

Իմ հետաքրքրությունը շարժվել էր. կամենում էի իմանալ այդ լուռ տեսարանների պատճառը (Շ, 2, 468)։ Ամեն տեղ տիրեց մեռելային լռություն. մարդիկ չէին համարձակվում նույնիսկ շունչ քաշել (Լեո, 147)։ Իսկ ամբոխը գիտեր իր բանը,—սպասում էր վերջին գործողության (Լեո, 149)։ Նա միայն լրիվ չէր պատկերացնում Ստեփանյանի նպատակը՝ ի՞նչ էր ուզում ասել այդպիսի կեղտոտ դրպարտություն շպրտելով իր երեսին (Ա. Սեկ., 576)։ Բոլորը ճանկարծ լռեցին. ծիծաղ ու աղմուկ դադարեց, շունչները պահած ընկուղին էին նայում (ՀՔ, 3, 29)։ Առաջին անգամ ժողովուրդը իր առաջ տեսավ պատերազմի ուրվականը. Գերմանիան զորք էր մըտցըրել սահմանամերձ հռենոսյան մարզը (Ի. էր., ՓԱ, 1, 6)։

ե) Առաջին մասով հաղորդվում է որևէ գործողության կամ եղելության մասին. երկրորդ մասով հաղորդողը տալիս է լրացուցիչ տեղեկություններ կամ դատողություններ, եզրակացություններ՝ կապված առաջին մասի բովանդակության հետ։ Օրինակ՝

Վարոս ամուն ես մոտիկ էի—նա մեր ընտանիքի հին բարեկամն էր և լավ դրացին (Ավ. Իս., 3, 149)։ Ճաշում էինք լուռ... Ոչ մի ծիծաղ, ոչ մի խոսք. այսպես էր պահանջում հայրս (Բոթ., 19)։ Հայր ու մայր նրա առջևը չոմած, արտասուքն աչքերին խնդրում էին, որ նա գոնե մի ամիս իրենց մոտ մնա.—այդ նրանք իրենց ամենամեծ երջանկությունն էին համարում (ՆԴ, 2, 14)։ Պարզ տեսնում էի, որ սուտ էր ասում, ուզում էի մի կերպ արդարացնել իրենց տարօրինակ հյուրընկալությունը (ՆԴ, 2, 433)։ Քիչ հետվից լսվում էին մուրճերի ճամաչափ զարկերը, քար էին տաշում (Վերդ., ԻԳՆ, 6)։ Եվ լճակի մեջ էլ չէր նայում պատանին,—անրջական աղջկա պատկերը իր հոգումն էր հիմա ցոլցլում գիշեր ու ցերեկ (Ավ. Իս., 3, 260)։ Էս միտքն անելիս մին էլ էն տեսա՝ գլուխը բերավ գլխիս վրա դրավ, շունչը իրեն խաշեց. ականջ է դրել (ՀՔ, 3, 54)։

զ) Անշաղկապ բարդ նախադասության երկրորդ մասով խոսողը անում է ենթադրություն առաջին մասի բովանդակության վերաբերյալ։ Այս նախադասությունները ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ երկրորդ մասի սկզբում սովորաբար դրվում է ենթադրություն ցույց տվող որևէ եղանակավորող բառ (երևի, հավանաբար և այլն)։ Օրինակ՝ ...Ու ձեռքով մի ժեստ արեց՝ ոտքից մինչև գլուխ. երևի ակնարկում էր իր գեղեցկությունը (Ա,

29/11—60 թ.)։ Նրա կարճ խուզած մազերին, գորշագույն հագուստին փոշի էր նստել. հավանաբար արտերից, այգիներից էր բերել այն (Ա. Սեկ., 41)։ Եվ մայրը դուրս գալ՝ երևի խոհանոց գնաց (Ա. Սեկ., 436)։

է) Երկրորդ՝ հարակցվող մասով խոսողը արտահայտում է իր վերաբերմունքը առաջին մասում հաղորդված գործողության, եղելության, երևույթի նկատմամբ, կամ կարծիքը դրա մասին։ Օրինակներ.

Ֆետրե գլխարկով մարդը տեսավ այդ ժպիտը. ինչո՞ւ ծանոթ էր (ԱՒ, 195)։ Իսկ եթե որևէ մեկը համարձակվեր շեմքից ներս անցնել, ապա նրան կդիմավորեր ածգահա շունը— փորձի՞ր անցնել (Ե, 25/11—60 թ.)։ Իմ ամեն մի ներս մտնելը անզուսպ ուրախություն էր պատճառում. կարո՞ղ էի շուտ-շուտ ներս չմտնել (Լեո, 296)։ Ուզում էր մենակ փայլել, դուք լավ չգիտեք նրան (Վերդ., ԻԳե, 368)։ Որդին ժպտաց, ի՞նչ ասեր (ԱՒ, 15)։

ը) Հարակցություն պետք է համարել նաև մի շարք ներգործական բայերի մոտ դրված նախադասությունները։ Այս նախադասությունները տարբերվում են ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններից նրանով, որ եթե վերջիններիս առկայության դեպքում ընդգծվում է առաջին նախադասության բայ-ստորոգյալի սեռը և այն պահանջում է գործողության օբյեկտը նկարագրող նախադասություն, ապա այստեղ կամ դերավոր նախադասության մեջ արդեն կա ուղիղ խնդիր, և երկրորդական նախադասությամբ բացահայտվում է նրա բովանդակությունը, տրվում է լրացուցիչ տեղեկություն գործողության օբյեկտի մասին և կամ դերավոր նախադասության ստորոգյալը թեև ներգործական է, սակայն անմիջական լրացում չի պահանջում. երկրորդ մասով դարձյալ միայն լրացուցիչ կերպով հաղորդում է տրվում օբյեկտի մասին։ Վերջին դեպքում կամ առաջին մասը ունենում է հարցական բնույթ և կամ նրա բայ-ստորոգյալը ունենում է մեկ այլ լրացում՝ մեծ մասամբ պարագա։ Այստեղ հաղորդման հիմնական նպատակը գործողության կատարման ձևը, տեղը և այլն հաղորդելն է, իսկ օբյեկտի մասին խոսվում է միայն լրացուցիչ կերպով։ Օրինակներ՝

Դու չե՞ս փորձել. շատ բան մարդ տեսնում է զգալով (ՆԴ, 2, 428)։ Ես իսկույն ճանաչեցի—դա այն ծերունին էր, որին պատահել էինք մի փոքր առաջ շուկայում (Շ, 1, 34)։ Երազի նման հիշում եմ առուն, մենք նստել էինք կանաչ եզերքին, մեր շուրջը ծաղիկ, մեր շուրջը գարուն, Ունկնդրում էինք ջրերի երգին (Գ. Սար., 27)։ Յարս

ձեռա գրկում տեսա՝ համբույր կառներ ու կուտար. Ախ, ինձ ափին մեռած տեսա՝ ուրին վրաս լուռ կուլար (Ավ. Իս., 2, 54):

Սրանք են այն անշաղկապ բարդ նախադասությունները, որոնց բաղկացուցիչ մասերի միջև եղած կապակցությունն կարելի է համարել հարակցական:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐ—*Ակսել Բակունց, երկեր, Երևան, 1955:*
Ավ. Իս.—*Ավետիք Իսահակյան, երկերի ժողովածու, հ. 1, 2, 3, 1950—1951:*
ԱՇ—*Աղավնի, Շիրակ, Երևան, 1954:*
Ա. Սեկ.—*Անահիտ Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Երևան, 1958:*
Ա. Սահ.—*Անահիտ Սահինյան, Ծարավը, Երևան, 1955:*
Ալ. ՀԱ—*Ալազան, Հյուսիսային աստղ, Երևան, 1956:*
ԳՄԵ—*Գուրգեն Մահարի, երկեր, Երևան, 1954:*
ԳՍՓ—*Գարեգին Սևունց, Թեհրան, հ. 1, 2, Երևան, 1953:*
Գ. Սար.—*Գեղամ Սարյան, երկեր, Երևան, 1956:*
ԳԲ—*Գ. Բանդուրյան, Ջրվեժի երգը, Երևան, 1959:*
ԳԲՆ—*Գարեգին Բես, Նովելներ, Երևան, 1954:*
Գ. Ռշ. Մ.—*Գագիկ Ռշտունի, Մագիլների մեջ, Երևան, 1959:*
ԴԴ—*Դերենիկ Դեմիրճյան, երկերի ժողովածու, հ. 3, 4, 1956:*
Դես—*Եսայիկ Դաշտենց, Խոդեդան, Երևան, 1956:*
Ե. Ջար.—*Եղիշե Ջարինց, Ընտիր երկեր, Երևան, 1955:*
Ի. էր., ՓԱ—*Ի. էրենբուրգ, Փարիզի անկումը, հ. 1, 2, Երևան, 1944:*
Լեո—*Լեո, Գեղարվեստական երկեր, Երևան, 1959:*
Թոր.—*Վ. Թորոսենց, երկեր, Երևան, 1957:*
Խեչ., ՄՄՀ—*Խեչումյան, Մեզ մոտ հարավում, Երևան, 1955:*
Հայկ. առած.—*Հայկական առածանի, 1951:*
ՀԹ—*Հովհաննես Թումանյան, երկերի ժողովածու, հ. 1, 2, 3, Երևան, 1949—1950 թթ.:*
ՀՔ—*Հրաչյա Քոչար, Մեծ տան զավակները, Երևան, 1952:*
Հ Իկվ.—*Հ. Հրահան, Իմ կյանքի վեպը, հ. 1, Երևան, 1958:*
ՄԱՊ—*Մկրտիչ Արմեն, Պատմվածքներ, Երևան, 1957:*
ՄԱՅ—*Մկրտիչ Արմեն, Ցասվա, Երևան, 1953:*
Մ. Մաե. —*Մ. Մանվելյան, երկեր, Երևան, 1959:*
Մուր.—*Մուրացան, երկերի ժողովածու, հ. 1 և 3, Երևան, 1952:*
Մ. Դավթ.—*Մ. Դավթյան, Երբ ծագում է արևը, Բաքու, 1954:*
ՄԽՍՏ—*Մ. Խերանյան, Սասմա տուն, Երևան, 1958:*
ՆՋ—*Նաիրի Զարյան, երկեր, հ. 4, 1949:*
ՆՋՀ—*Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1949:*
ՆՋ, ՊՊՆ—*Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսն ու իր նախարարները, Երևան, 1958:*
ՆՌ—*Նար-Դոս, երկերի ժողովածու, հ. 1, 2, 3, Երևան, 1955:*
Շ—*Շիրվանզադե, երկերի լիակատար ժողովածու, հ. 1—4, 1950:*
Շեքս.—*Շեքսպիր, Ընտիր երկեր, հ. I, 1951:*

Պ. Սևակ—*Պ. Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1959։*
Սհ2—*Սերո Խանզադյան, Հողը, Երևան, 1954։*
ՍՀ ՀԲ—*Ստ. Զորյան, Հայոց բերդը, Երևան, 1959։*
ՍՀ ՊԹ—*Ստ. Զորյան, Պապ թագավոր, Երևան, 1944։*
ՎՏ, երկ.—*Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1956։*
Վեդ. ԻԳՆ—*Բ. Վերդյան, Ինչպես է գալիս երջանկությունը, Երևան, 1957։*
Վաեր. Փափ.—*Վահրամ Փափազյան, Հետադարձ հայացք, հ. 1, Երևան, 1956։*
ՎԱԿ—*Վախտանգ Անանյան, Լեռնային կածաններով, Երևան, 1956։*
Ր—*Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 5, 7, Երևան, 1956։*
ՔԹՊ—*Ք. Թափալչյան, Պատերազմ, հ. 1, Երևան, 1946։*
Ե—*«Երևան», օրաթերթ։*
Ա—*«Ավանգարդ», երիտասարդական թերթ։*
ՍՀ—*«Սովետական Հայաստան», օրաթերթ։*
ՍԱ—*«Սովետական արվեստ», ամսագիր։*
ՍԳ—*«Սովետական գրականություն», ամսագիր։*
Ն. տ.—*Նույն տեղում։*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ Ց Ա Ն Կ

1. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912։

2. Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1953։

3. Ռ. Մկրտչյան, Անշաղկապ բարդ ստորադասական նախադասության մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), 1956, № 3։

4 **Виноградов В. В.** Русский язык, Москва, 1947.

5 «Вопросы синтаксиса современного русского языка», Москва, 1950.

6 «Грамматика русского языка», изд. АН СССР, Москва, 1954.

7 «Грамматика русского языка», под ред. Щербы, Москва, 1953.

8 **Пешковский М.** Русский синтаксис в научном освещении, изд. 6-е, Москва, 1938.

9 «Русский язык в школе», 1939—1962 гг. *(առանձին համարներ).*

10 «Современный русский язык, Синтаксис», под ред. Галкиной-Федорук, Москва, 1958.

Իվ. Ի. ՇԻԼԱԿԱԶԵ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Տպագրության հանձնելով Թբիլիսիի պետական համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ, գիտությունների թեկնածու, դոցենտ Իվանե Շիլակաձեի սույն ուսումնասիրությունը՝ խմբագրությունը արժեքավոր ու հետաքրքրական է համարում հեղինակի հարցադրումը, նրա օբյեկտիվ փաստարկումները, հայերենի բայական կատեգորիաների գնահատման թարմությունը։ Խոնարհման կարգերի ինքնատիպ գնահատմամբ հեղինակը դուրս է գալիս հայ քերականական մտքի ավանդական ուղուրից և քննադատական դիրք բռնում նրա նկատմամբ, ինչպես այդ կատարել են անցյալում Ն. Յա. Մառը («Грамматика древне-армянского языка», 1903 թ.), Տեր Մատթևոսյանը և Ստ. Լիսիցյանը։ Հարգարժան հայագետի այս նոր հետազոտությունը մտքերի աշխույժ բախում կառաջացնի իր կոնկրետ առաջարկություններով ու տեսական դրույթներով և օբյեկտիվորեն կնպաստի հայ քերականական մտքի հետագա զարգացմանը։

Գ. Սևակ

Ա. Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Սույն աշխատության մեջ ամփոփ ձևով տրված են հայոց լեզվի ուսումնասիրության արդյունքները, որը մենք սկսել ենք տասնյակ տարիներ առաջ։

Այդ ընթացքում հայերենից վրացարեն ենք թարգմանել հայ դասական և սովետական գրականության նմուշներ։ Թարգմանություններ կատարելու ժամանակ որպես լեզվաբան դիտել և իրար հետ համեմատել ենք հայերեն և վրացերեն բայաձևերը և գտել, որ այդ ձևերը մեծ մասամբ ճշտորեն համապատասխանում են իրար։ Իսկ հայոց լեզվաբանական գրականության ուսումնասիրությունից պարզվեց, որ հայոց լեզվի մեջ կան մի քանի քերականական կատեգորիաներ, որոնք չեն նկատվել ուսումնասիրողների կողմից, թեև լեզվաբանները նշում են, որ որոշ բայաձևեր ցույց են տալիս մյուս ձևերից տարբեր բովանդակություն։ Օրինակ՝ ասում են, որ գրել է խմբի բայաձևերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարմանը ականատես չի եղել խոսողը, բայը, չնայած դրան, գրել է խմբի բայաձևերը բոլորի կողմից ընդունված են որպես մի առանձին ժամանակ արտահայտող բայաձև։ Նույնպես՝ կգրեմ խմբի ձևերի մասին ասում են, որ այս ձևերի համար հիմնական չէ ոչ պայմանականությունը, ոչ ենթադրության արտահայտությունը, բայց և այնպես, կգրեմ խմբի ձևերը բոլորի կողմից ընդունված են որպես պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր։ Այսպես, նաև մյուս ձևերը։

Ինչպես երևում է, աշխարհաբարի խոնարհման կատեգորիաները դեռևս բավականին ուսումնասիրված չեն և այդ պատճառով ժամանակի, կերպի և եղանակի կատեգորիաների հետ խառնված են մի քանի այլ կատեգորիաներ։

Մեր կողմից ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիաները խոնարհման մյուս կատեգորիաներից զատելուց հետո հեշտացավ մնացած կատեգորիաները (ժամանակի, եղանակի և կերպի) ճշտելու գործը։ Պարզվեց, որ աշխարհաբարում բայաձևերով արտահայտվում են միայն երեք ժամանակ (ներկա, անցյալ և ապառնի). ոչ անցյալի ապառնի, ոչ վաղակատար, ոչ էլ անցյալի վաղակատար, հարակատար և անցյալի հարակատար ժամանակները ժամանակի առանձին հատվածներ չեն ցույց տալիս։ Նրանք ցույց են տալիս առանձին քերականական կատեգորիաներ կամ ենթակատեգորիաներ։ Այսինքն, հայոց լեզուն հարուստ է ոչ թե ժամանակներով, ինչպես կարծում են հայոց լեզվի ուսումնասիրողները, այլ քերականական կատեգորիաներով, և սրանից է, որ հայոց լեզուն այնքան ճկուն է և իսկապես հարուստ արտահայտչական ձևերով։

Ուսումնասիրության արդյունքները միանգամայն փոխում են հայոց լեզվի խոնարհման կատեգորիաների մասին գոյություն ունեցող կարծիքները։

Սա մի տեսակ համարձակություն է մեր կողմից, քանի որ ստիպված ենք առարկել ընդունված դրույթների դեմ, բայց ստիպված ենք՝ ելնելով գիտության շահերից, որը միշտ ձգտում է դեպի ճշմարտությունը։ Հույս ունենք, որ այս ի նկատի ունենալով մեր հայ կոլեգաները ներողամիտ կլինեն, որ մենք քննադատորեն ենք մոտեցել նրանց կարծիքներին։ Թող չկարծեն, թե մենք ուզում ենք նսեմացնել նրանց նվաճումները։ Մենք շատ լավ գիտենք այդ նվաճումների արժեքը, բայց չի կարելի կարծել, թե ամեն բան արդեն ուսումնասիրված է և նոր սերունդների համար ոչինչ չի մնացել՝ ուսումնասիրելու։ Ընդհակառակը, գիտության մեջ ձեռք բերած այդ նվաճումները մեզ մղում են դեպի նորանոր բացահայտումներ։

Աշխատել ենք մասնավորապես որևէ ուսումնասիրողի մասին չխոսել, քանի որ քննադատում ենք այնպիսի դրույթներ, որոնք ընդունված են բոլորի կողմից, բայց այդ հնարավոր չէ, որովհետև բոլորի կողմից ընդունված այդ դրույթները պիտի հիշեցնենք ընթերցողին, իսկ հիշեցնել կարելի է միայն այն դեպքում, եթե որևէ մեկի աշխատությունից վերցնենք այդ դրույթները։ Այդ դրույթները հիմնականում վերցրել ենք Արարատ Ղարիբյանի «Հայոց լեզվի դասագրքից» և Հ. Խ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատությունից։ Առաջինը վերցրել ենք որպես դասագիրք, այսինքն այնպիսի աշխատություն, որի մեջ շարադրվում է միայն բոլորի համար ընդունելի դրույթներ, իսկ երկրորդը՝ որպես

վերջին տարիներին հրատարակված աշխատություն (1953), որի մեջ ամփոփված են աշխարհաբարի խոնարհման կատեգորիաների մասին եղած կարծիքները։ Ճիշտ է, առանձին հարցերում հայ լեզվաբանների կարծիքները տարբերվում են միմյանցից, բայց տվյալ դեպքում դրանք վերաբերում են երկրորդական կամ երրորդական հարցերին։ Հիմնական հարցերում նրանք համաձայնում են իրար հետ։ Օրինակ՝ բոլորն ընդունում են, որ աշխարհաբարում ոչ թե երեք, այլ տասնվեց դերբայներ կան, որ վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար, անցյալի ապառնի և մյուս ձևերը առանձին-առանձին ժամանակներ են արտահայտում։ Ընդունում են նաև, որ աշխարհաբարում միայն դերբայից և օժանդակ բայից կազմված ձևերն են արտահայտում բայի կերպ և որ աշխարհաբարում կան կատարվող, կատարյալ, կատարելի և պարզ կերպեր։ Կամ որ կ մասնիկավոր բայաձևերը ընդհանրապես պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր են, որ աշխարհաբարը ունի միայն դեմքի, թվի, ժամանակի, եղանակի, կերպի և սեռի կատեգորիաներ և ոչ ոք չի խոսում ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիաների գոյության մասին։

Ինչպես ասացինք, այս աշխատության մեջ մենք ամփոփում ենք մեր ուսումնասիրության արդյունքները։ Այդ պատճառով էլ չենք տալիս քննարկվող հարցերի պատմությունը և համակողմանի տեսությունը։ Դա ավելորդ համարեցինք, որովհետև, մեր կարծիքով, աշխարհաբարի քերականության համար շատ կարևոր են թվում մեր այս ուսումնասիրության հատկապես արդյունքները։ Եթե արդարացվեն մեր դրույթները, եթե մեր այս ուսումնասիրությունը թեկուզ բոլորովին չնչին չափով իսկապես հարստացնի հայագիտությունը՝ դա մեզ կպատճառի մեծ բավականություն, որովհետև դրանից հետո կկարողանանք ասել, որ ինչպես հայ և վրաց ժողովուրդների նախնիները գործով (և ոչ միայն խոսքով) օգնում էին միմյանց, հարստացնում իրար կուլտուրան, ես նույնպես այդ մեծ գործի մեջ իմ կարողության չափ իմ փոքրիկ լուման եմ մտցրել։

1957 թվականին, երբ Երևանի համալսարանում տոնվում էր Վրաստանում սովետական կարգերի հաստատման տարելիցը, ես առիթ ունեցա այդ համալսարանի հարգելի աշխատողների առաջ ասել. «Վերջին տարիներին մենք շատ ենք խոսում, ընդհանրապես, ժողովուրդների և հատկապես հայ և վրաց ժողովուրդների բարեկամության մասին, բայց ավելի կարևոր է մեր ժողովուրդների պատմական բարեկամությունը ամրապնդել գործերով։ Իմիջիայլոց, մեր

նախնիները համարյա բոլորովին չէին խոսում բարեկամության մասին, բայց այդ ժողովուրդները, նրանց առաջավոր դեմքերը հազարավոր տարիների ընթացքում միշտ օգնում էին իրար գործերով և այդ օգնության շնորհիվ մեր ժողովուրդները հաղթեցին իրենց թշնամիներին։ Մենք էլ մեր պապերի նման պիտի աշխատենք գործով օգնել իրար»։

Եթե այս իմ խղճը իրագործվի, եթե իմ սիրելի հայ ժողովրդի գիտությունը թեկուզ ամենափոքր չափով հարստանա նաև իմ գործով, դրանից ավելի երջանկություն չի կարող լինել ինձ համար, որովհետև դա նշանակում է, որ մի փոքր բանով կհարստանա նաև ինձ պարծանք պատճառող վրաց ժողովրդի գիտությունը, քանի որ գիտությունը համաժողովրդական է։

Իհարկե, մենք չենք կարծում, որ մեր բոլոր դրույթները վերջնական են։ Ոչ։ Մենք նոր տեսանկյունով ենք դրել հարցերը և եթե հայոց լեզուն ուսումնասիրողները ուշադրություն դարձնեն դրանց վրա, եթե մեր այդ տեսակետից էլ ուսումնասիրեն այդ հարցերը, մեր կարծիքով, կկարողանանք է՛լ ավելի խորանալ հայոց լեզվի բնույթի մեջ։ Այսպիսով, եթե մեր այս աշխատությունը հայագետների առաջ նոր հարցեր դնի, մենք կարող ենք մեր նպատակն իրագործված համարել, որովհետև գիտության մեջ ամեն մի «ինչո՞ւ» վաղ թե ուշ կվերլուծվի։

Ի վերջո, ես ներողություն եմ խնդրում հայոց լեզվից, որովհետև անվարժ, աշակերտական լեզվով է գրված աշխատությունս, բայց միտքը, իմ կարծիքով, հասկանալի կլինի։ Ներիր մեղանչումներս, հայոց լեզու, որովհետև եթե քեզ չսիրեի, այսքանն էլ չէի կարողանա անել։

Թբիլիսի, 1958 թ.

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

1. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ.

Ի՞նչ է կատեգորիան ընդհանրապես։ Վլադիմիր Իլիչ Լենինը կատեգորիան որոշում է այսպես՝ «Познание есть отражение человеком природы. Но это не простое, не непосредственное, не цельное отражение, а процесс ряда абстракций, формулирования, образования понятий, законов etc., каковые понятия, законы etc... и охватывают условно, приблизительно универсальную закономерность вечно движущейся и развивающейся природы. Тут, действительно, объективно три члена: 1) природа; 2) познание человека—мозг человека (как высший продукт той же природы) и 3) форма отражения природы в познании человека. Эта форма и есть понятия, законы, категории etc.»[1].

Այստեղ մեզ առանձնապես հետաքրքրում է կատեգորիայի սահմանումը։ Ինչպես տեսնում ենք այդ սահմանումից, կատեգորիան մարդու հասկացության մեջ բնության արտացոլման ձևն է։ Մյուս կողմից կատեգորիան՝ աբստրակցիա է, որը օգնում է մեզ ավելի խորաթափանց լինելու երևույթի էության մեջ։ Այս առթիվ Լենինն ասում է. «...Категории—суть ступеньки выделения, т. е. познания мира, узловые пункты в сети, помогающие познавать ее и овладевать ею».[2]

Դիալեկտիկական մատերիալիզմի կատեգորիաները՝ մատերիա, շարժում, ժամանակ, տարածություն, որակ, փոխադարձ կապ, հա-

[1] Ленин В. И., Философские тетради, 1947, *էջ 156—157։*

[2] *Նույն տեղում, էջ 67։*

կատեգորիան և այլն՝ համընդհանուր կատեգորիաներ են, որովհետև սրանց մեջ արտացոլված է այն, ինչ հատուկ է ամեն մի երևույթի։ Գիտության առանձին ճյուղերը նույնպես ունենում են իրենց սեփական ընդհանրացումները, որովհետև առանց ընդհանրացումների գիտություն չի կարող լինել։ Օրինակ, մենք խոսում ենք ֆիզիկայի, քիմիայի, քաղաքատնտեսության, կենսաբանության և ուրիշ գիտությունների կատեգորիաների մասին։ Իհարկե, այս առանձին գիտությունների կատեգորիաները չեն կարող ունենալ այնպիսի լայն նշանակություն, ինչպիսին ունենում են դիալեկտիկական մատերիալիզմի կատեգորիաները, բայց տվյալ գիտության շրջանում առանց այս կատեգորիաների չի կարելի գործել։

Քերականությունն էլ, որպես առանձին գիտություն լեզվի կառուցվածքի մասին, ունի իր սեփական կատեգորիաները, այսինքն ընդհանրացված գաղափարներ քերականական երևույթների մասին։ Սակայն, ինչպես հայտնի է, գոյություն չունի համընդհանուր քերականություն, որովհետև քերականությունը գիտություն է լեզվի կառուցվածքի մասին, իսկ իրականության մեջ չկա համընդհանուր լեզու, այլ կան միայն առանձին-առանձին լեզուներ իրենց քերականական կառուցվածքներով։ Չի կարելի գտնել որևէ երկու լեզու, որ միևնույն քերականական կառուցվածքն ունենան։ Սա նշանակում է, որ մի լեզվի քերականական կատեգորիաները չեն համընկնում մյուս լեզվի քերականական կատեգորիաների հետ։

Բայց չպետք է մոռանանք մի շատ կարևոր հանգամանք ևս, դա այն է, որ լեզուն կապված է մտածողության հետ, իսկ մարդու մտածողությունն արտացոլում է օբյեկտիվ իրականությունը։ Նշանակում է՝ մարդու մտածողության կողմից արտացոլված օբյեկտիվ աշխարհն անմիջապես արտացոլվում է և լեզվի մեջ։ Այս է պատճառը, որ քերականության մեջ հանդիպում ենք ընդհանուր կատեգորիաների, որոնք գոյություն ունեն փիլիսոփայության մեջ՝ այսինքն դիալեկտիկական մատերիալիզմի մեջ։ Օրինակ, ժամանակի կատեգորիա ունենք և՛ քերականության, և՛ փիլիսոփայության մեջ։ Բայց, պետք է նշել, որ զանազան լեզուների ժամանակի կատեգորիաներն էլ սովորաբար չեն համընկնում իրար հետ։ Իհարկե, լեզվի և դիալեկտիկական մատերիալիզմի ժամանակի կատեգորիաները ևս միևնույնը չեն։

Այնուամենայնիվ, քանի որ լեզվի մեջ արտացոլվում է մտածողության ընդհանրացնող աշխատանքը ևս, իսկ զգացողության գործողությունը չի տարբերվում ըստ լեզուների, մի շարք միևնույն քերականական կատեգորիաների հանդիպում ենք տարբեր լեզունե-

րի մեջ, բայց տարբեր նշանակությամբ և տարբեր ձևավորումով։ Օրինակ՝ թվի, դեմքի, ժամանակի, եղանակի և այլ քերականական կատեգորիաներ կան զանազան լեզուների քերականությունների մեջ, թեև դժվար չէ նկատել, որ տարբեր լեզուների մեջ այս կատեգորիաները և՛ տարբեր վերպով են արտահայտվում, և՛ տարբեր նշանակություն ունեն։ Այսպես, օրինակ՝ վերցնենք թվի կատեգորիան ռուսերենում, արաբերենում, հայերենում, վրացերենում։ Այս թված լեզուներից միայն արաբերենն ունի երեք թիվ՝ եզակի, երկակի և հոգնակի. մնացածներն ունեն միայն երկու թիվ՝ եզակի և հոգնակի։ Այստեղ կարելի է հիշել և այն, որ հին ռուսերեն լեզուն ևս ունեցել է երկակի թիվ։

Վերցնենք երկրորդ օրինակը ևս. սեռի կատեգորիա ունեն ռուսերենն և ֆրանսերեն լեզուները, բայց ռուսերենում զանազանվում է երեք սեռ, իսկ ֆրանսերենում՝ միայն երկու սեռ։ Ֆրանսերենում չեզոք սեռ չկա։

Դարձյալ մի օրինակ՝ դեմքի կատեգորիա ունենք հայերենում, ռուսերենում, վրացերենում և շատ ուրիշ լեզուներում, բայց թվարկած լեզուներից միայն վրացական բայը կարող է միաժամանակ արտահայտել երեք տարբեր դեմք՝ սուբյեկտի (ենթակայի դեմք), ուղիղ և անուղղակի խնդիրների դեմքերը։

Նման օրինակները բազմաթիվ են, սակայն բերված օրինակներն արդեն բավական են եզրակացնելու, որ թեև տարբեր լեզուներով խոսող մարդկանց մոտ հասկացության պրոցեսը միևնույնն է, բայց օբյեկտիվ իրականության արտացոլումը նրանցից ամեն մեկի մոտ արտահայտվում է քերականական տարբեր ձևերով։ Այդ պատճառով էլ ոչ մի կերպ չի կարելի դատել մի որևէ լեզվի կատեգորիաների մասին մի ուրիշ լեզվի կատեգորիաների օրինակով։

Չնայած դրան, տարբեր լեզուների քերականությունների մեջ հանդիպում ենք քերականական կատեգորիաների մասին այնպիսի դատողություններ, որպիսիք գոյություն չունեն տվյալ լեզուների մեջ, կամ՝ այդ լեզուների մեջ այդպիսի կատեգորիա կա, սակայն չի համընկնում մյուս լեզվի նման կատեգորիայի հետ։ Քերականներին այսպիսի սխալների մեջ է գցում տերմինների փոխառնումը, որովհետև տերմինները երբեմն կարող են թյուրիմացության մեջ գցել նույնիսկ մասնագետին։ Օրինակ՝ երբ գործածում ենք ապագայի վաղակատար ժամանակ տերմինը, մենք անպատճառ երևակայում ենք, որ քերականական այս ձևերը (գրել էր, կարդացել էր...) ցույց են տալիս մի առանձին ժամանակ, այսինքն մի ժամանակ, ո՛ւ արդեն անցել է և նույնիսկ անցել է մի որևէ անցյալից էլ առաջ (վաղ)։

Այսպիսով, ստացվում է սխալ պատկերացում, իբր թե հայերեն լեզուն ունի ոչ թե մեկ, այլ մեկից ավելի անցյալ ժամանակ։ Այդ տեսակետից պրոֆ. Ա. Շանիձեն միանգամայն արդարացի նկատում է, որ ավելի լավ կլիներ, եթե այս տրադիցիոն տերմինները բոլորովին դուրս գցեինք և նրանց փոխարեն գործածեինք զանազան չեզոք տերմիններ, ասենք՝ ծառերի անուններ...[1]։

Եվ իսկապես, ինչպես կհամոզվենք ստորև, անցյալի վաղակատար ժամանակի ձևերը հայերենում ժամանակների որևէ նոր իմաստ չեն տալիս. այս ձևերում արտահայտված է իսկական անցյալ ժամանակ, այսինքն խոսքի մոմենտից առաջ ավարտված գործողություն և ուրիշ ոչ մի ժամանակ։ Ստորև ավելի մանրամասն կանգ կառնենք աշխարհաբարում առկա խոնարհման կատեգորիաների մասին։ Վերադառնանք մեր հարցին՝ ի՞նչ են քերականական կատեգորիաները։

Ինչպես արդեն ասացինք, կատեգորիան երևույթի ամենաէական, ամենաընդհանուր կողմերի արտացոլումն է մարդու հասկացության մեջ։ Նշանակում է՝ քերականական կատեգորիաներն էլ այն ընդհանրացումներն են, որոնք արտացոլում են այս կամ այն քերականական երևույթի ավելի ընդհանուր, ավելի էական կողմերը։

Այսպես օրինակ, օբյեկտիվ աշխարհը լի է գործողություններով, շարժումներով։ Մտածող մարդը նկատում է, որ այդ շարժումները, գործողությունները կատարվում են հիմքում ունենալով որևէ դրդապատճառ։ Նույն այդ մտածող մարդը նկատում է նաև այն, որ իրեն շրջապատող իրականության մեջ երբեմն այդ նույն երևույթները չեն գործում, չեն էլ շարժվում, այլ գտնվում են անշարժ վիճակում։ Դրությունն, վիճակ լինի, թե շարժում, գործողություն, միևնույն է, անպատճառ վերաբերում է որևէ երևույթի, որևէ առարկայի։

Բացի այդ, որոշ շարժումներ (գործողություններ) կարող են կապված լինել կամ այն անձին, որը խոսում է այս գործողության մասին, կամ նրան, որի հետ խոսում է խոսողը, կամ ոչ մեկին, ոչ էլ մյուսին, այլ որևէ երրորդի, որը ոչ խոսողն է, ոչ էլ խոսակիցը։

Նկարագրված վերաբերմունքը շատ լեզուների քերականությունների մեջ արտացոլվում է դեմքի քերականական կատեգորիայի մեջ։ Նշանակում է՝ դեմքի կատեգորիայի մեջ արտացոլված է այն երևույթի էական կողմը, որ տեղի է ունենում լեզվի մեջ և որն իր կողմից արտացոլում է իրականությունը։

Դեմքի կատեգորիա ունի և աշխարհաբարը, և գրաբարը, բայց

[1] Ա. Շանիձե, Վրացերենի քերականության հիմունքներ, Թբիլիսի, 1953, էջ 221 (վրացերեն)։

աշխարհաբարում դեմքի կատեգորիան երբեմն արտացոլվում է այլ կերպ, քան գրաբարում. աշխարհաբարում դիմավոր ձևերը հաճախ արտահայտվում են անալիտիկ սիստեմով (դերբայ+օժանդակ բայ), իսկ գրաբարում միշտ սինթետիկ ձևով։

Այսպիսով, քերականական դեմքը քերականական այնպիսի ընդհանրացում է, որը հնարավորություն է տալիս որոշելու բոլոր կոնկրետ դեպքերում, թե ով է կատարում գործողությունը կամ ով (ինչ) է գտնվում բայով արտահայտված տվյալ վիճակում։ Դեմքի կատեգորիան հայոց լեզվի մեջ ընդհանրացնում է երեք դեմք եզակիում և երեք դեմք հոգնակիում, թեև յուրաքանչյուր դեպքում գործող դեմքը լինում է միայն մեկը այս երեք դեմքերից։ Վրացերեն լեզվի մեջ սովորաբար կազմվում են նաև այնպիսի բայաձևեր, որոնց մեջ միաժամանակ արտահայտվում են բոլոր երեք դեմքերը միասին՝ დამიწერე դամիծէրէ «Դու որևէ բան գրեցիր ինձ համար»։ Այս նշանակում է, որ վրացերեն լեզվի բայը դեմքի կատեգորիայի մեջ ընդհանրացնում է ոչ միայն գործողի (սուբյեկտի) դեմքը, այլև ուղիղ և անուղղակի խնդիրների դեմքերը։ Նշանակում է, որ տարբեր լեզուների մեջ դեմքի կատեգորիան կարող է ունենալ տարբեր արտահայտություն, չնայած այն բանին, որ ամեն դեպքում և ամեն լեզվի մեջ դեմքի կատեգորիան արտացոլում է իրականությունը։

Եթե վերցնենք այս երեք դեմքերից որևէ մեկը, ասենք առաջին դեմքը, կտեսնենք, որ սա էլ ընդհանրացման արդյունք է, թեև նա մտնում է դեմքի ընդհանուր կատեգորիայի մեջ։ Այսպես է, որովհետև, երբ խոսում ենք քերականական առաջին դեմքի մասին, մենք չենք ենթադրում որևէ կոնկրետ դեմք, այլ ընդհանրապես առաջին դեմք, այն դեմքը, որի դեմ գտնվում են երկրորդ և երրորդ դեմքերը, թեև լեզվի մեջ առաջին դեմքի ձևը արտահայտվում է միշտ որևէ կոնկրետ դեմքով։ Այստեղ է թաքնվում ընդհանուրի և կոնկրետի դիալեկտիկական վերաբերումը։ Սրանից երևում է, որ քերականական կատեգորիան՝ ինքը լեզվի փաստ չէ, լեզվի մեջ ունենք միայն առանձին-առանձին լեզվական փաստեր, որոնց ընդհանրացումով քերականությունը ստեղծում է կատեգորիաներ, ճիշտ այնպես, ինչպես մյուս գիտությունները և փիլիսոփայությունը։

Այսպիսով, հայոց լեզվի քերականության դեմքի կատեգորիայի մեջ մտնում են երեք դեմք և այս կատեգորիան գոյություն ունի միայն այն պատճառով, որ այս երեք դեմքերը միմյանց հակադրված են։ Եթե չլիներ դեմքերի այսպիսի հակադրումը, չէինք ունենա դեմքի կատեգորիա, որովհետև քերականական կատեգորիա-

ները ընդհանրապես սահմանվում են հակադրված ձևերի և բովանդակությունների առաջադրմամբ[1]։

Քանի որ երեք դեմքերը միասին ստեղծում են դեմքի կատեգորիան, նրանցից ամեն մեկը կարելի է ընդունել որպես ենթակատեգորիա, որովհետև նրանցից ամեն մեկը քերականական ընդհանրացման արդյունք է։ Բայց, պետք է ավելացնել, որ ամեն մի քերականական ընդհանրացում չի բարձրանում մինչև քերականական կատեգորիայի աստիճանը։ Վերցնենք մի հասարակ օրինակ՝ տարբեր լեզուների քերականությունների մեջ հաճախ գործածվում են այսպիսի գաղափարներ՝ արմատ, հիմք, նախդիր, մասնիկ և այլն։ Սրանք ավելի շուտ հասկացություններ են (понятия) քան կատեգորիաներ։

Այս և սրանց նման տերմինները նույնպես ընդհանրացման արդյունքներ են, բայց չի կարելի այս տերմինները ընդունել որպես կատեգորիաներ։ Ինչո՞ւ։ Որովհետև այս գաղափարները սահմանված են ոչ թե մյուս արմատների, հիմքերի, նախդիրների և այլ գաղափարների հետ հակադրելու միջոցով, այլ բառի մյուս մասերի հետ հակադրելով։

Դեմքի քերականական կատեգորիան, ինչպես տեսանք, սահմանվում է դեմքերի միմյանց հետ հակադրման շնորհիվ։ Նույն ձևով սահմանվում են նաև թվի, եղանակի, ժամանակի, կերպի, սեռի և այլ քերականական կատեգորիաները։ Այս կատեգորիաների ենթակատեգորիաները հակադրվում են իրար և այս հակադրումը հնարավորություն է տալիս սահմանել զանազան քերականական կատեգորիաներ։

Քերականական մյուս ձևերը, որոնց մեջ չկան ենթակատեգորիաներ և, իհարկե, չեն հակադրվում իրար, ավելի ընդարձակ ընդհանրացման հնարավորություններ չեն տալիս։ Այս է պատճառը, որ ամեն մի քերականական ձև չի կարելի ընդունել առանձին քերականական կատեգորիա։

Այսպիսով, քերականական կատեգորիան լեզվական կոնկրետ երևույթների մտավոր ընդհանրացումն է։ Ինչպես օբյեկտիվ աշխարհում գոյություն չունի մատերիա ընդհանրապես, այլ կան միայն մատերիայի առանձին ձևեր, ինչպես՝ քար, ծառ, ջուր, աստղ և այլն, նույնպես լեզվի մեջ չկան ընդհանրապես դեմք, թիվ, եղանակ, ժամանակ և այլն, այլ կան միայն լեզվական առանձին երևույթներ, որոնք միշտ արտահայտում են մի որևէ կոնկրետ դեմքի, թվի և այլի վերաբերումը մի որևէ կոնկրետ երևույթի հետ. օրինակ՝ երբ

[1] Ա. Շանիձե, Վրացերենի քերականության հիմունքները, էջ 392, 394։

ասում ենք գրում եմ, կարդում են և այլն, այս ձևերի մեջ ամեն դեպքում ենթադրվում է միայն մի կոնկրետ մոմենտ։ Բայց գիտությունը (քերականությունը) կատարում է այս կոնկրետ դեպքերի ընդհանրացում և ստեղծում է կատեգորիաներ, որպեսզի ավելի խոր ուսումնասիրենք լեզուն, որպես որոշ սոցիալական երևույթ։ Այսինքն քերականության մեջ էլ նույնպիսի ընդհանրացումներ ունենք, ինչպես մյուս գիտությունների մեջ՝ օրինակ. մենք ասում ենք՝ «Սիրում եմ միրգ ուտել»։ Բայց ինչպես ճշմարտացիորեն նկատում էր Հեգելը, ոչ ոք երբեք չի ճաշակել միրգը, այլ միայն այս կամ այն տեսակի կոնկրետ պտուղը որևէ մրգեղենից։ Այս կոնկրետ երևույթների ընդհանրացման շնորհիվ ստեղծվել է մրգի հասկացողությունը։ Առանց այսպիսի ընդհանրացումների չենք կարող մեր մտքերը միմյանց հաղորդել։

Այսպիսով, քերականական կատեգորիաները ինչպես նաև մյուս գիտությունների կատեգորիաները, սերտորեն կապված են մարդու մտածողության հետ։ Քերականական կատեգորիաները կապված են մտածողության հետ նաև այն պատճառով, որ ստացվում են լեզվական երևույթների ընդհանրացումից, իսկ լեզուն առանց այն էլ սերտորեն կապված է մտածողության հետ։ Հետևապես, քերականական կատեգորիաների զարգացումը կարելի է բացատրել ու հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրենք մտածողության հետ ունեցած կապի մեջ։

Քերականական կատեգորիաների զարգացումը արտահայտվում է լեզվական երևույթների ընդհանրացման ճշտումներով, որի ընթացքում երբեմն լեզվից հեռանում են առաջվա ընդհանրացումները կամ եղած ընդհանրացումներին ավելանում են նորերը, կամ էլ ճշտվում են եղած ընդհանրացումները, երբեմն էլ փոխվում են միայն կատեգորիայի արտահայտության ձևերը և այլն։

Դժվար է որոշել, թե ինչ կոնկրետ պատճառով է պայմանավորված լեզվի մեջ այս կամ այն փոփոխությունը, սակայն դժվար չէ հասկանալ լեզվի զարգացման ընթացքը, եթե բաց չթողնենք ուշադրությունից այն փաստը, որ լեզուն գոյություն ունի միայն հասարակության մեջ և զարգանում է այդ հասարակության հետ միասին։

Միաժամանակ չպետք է մոռանանք, որ լեզուն կապված է նաև մտածողության հետ, իսկ մտածողությունն էլ իր հերթին գոյություն ունի միայն հասարակության մեջ ու զարգանում է նրա հետ միասին։

Մեր այս աշխատության մեջ լեզվի և քերականական կատեգո-

րիների զարգացման մասին խոսելու կարիք չկա, որովհետև այստեղ մենք սահմանափակվում ենք միայն աշխարհաբարում եղած խոնարհման կատեգորիաների հարցով՝ ուզում ենք սահմանել, թե խոնարհման ինչպիսի կատեգորիաներ ունենք աշխարհաբարում։ Իհարկե, այս կատեգորիաները մշակված են լեզվի և քերականության զարգացման ընթացքում և մենք նախատեսում ենք տվյալ հետազոտության մեջ ևս, առանց մանրամասնությունների մեջ մտնելու, որովհետև այն առայժմ հեռու է մեր նպատակներից. այստեղ մենք ուզում ենք միայն սահմանել, թե ինչ ունենք, որպեսզի հետո կարողանանք խոսել նրա զարգացման մասին։

Բայց տեղի՞ն է արդյոք հայոց լեզվի քերականության զարգացման այժմյան էտապում հարցի տակ դնել աշխարհաբարում եղած խոնարհման կատեգորիաների քանակը, կամ այս կատեգորիաների որոշումը։ Մեր կարծիքով՝ տեղին է, իսկ թե ինչո՞ւ, կպարզվի ստորև։

2. ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐԵԼԻ Է ՈՐՈՇԵԼ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆ

Քերականական կատեգորիան երբեմն ունենում է իր սեփական նշանը, որևէ ածանց, բայց ոչ միշտ։ Օրինակ՝ աշխարհաբարում ունենք կերպի խոնարհման կատեգորիա, բայց այս կատեգորիան չի նշվում որևէ ածանցով։ Նույնպես՝ կան դեպքեր, երբ չի գործածվում որևէ նշան դեմք ցույց տալու համար։ Օրինակ՝ գրեց ձևը ցույց է տալիս երրորդ դեմք (նա գրեց), բայց այստեղ դեմքի նշան չկա։ Նույնը կարելի է ասել և խոնարհման այլ կատեգորիաների մասին։ Այդ դեպքում ինչպե՞ս որոշել, որ այս կամ այն քերականական ձևի մեջ արտահայտված է այս կամ այն կատեգորիան, երբ տվյալ քերականական ձևի մեջ կատեգորիայի նշան չկա։

Մինչև այս հարցին պատասխանելը, պետք է ընթերցողի ուշադրությունը հրավիրենք մի հանգամանքի վրա։ Եթե վերցնենք բայի որևէ քերականական ձևը, կտեսնենք, որ վերցված ձևը միաժամանակ արտահայտում է ոչ թե մեկ, այլ մի քանի քերականական (խոնարհման) կատեգորիա. օրինակ՝ վերցնենք անցյալ կատարյալի երրորդ դեմքի ձևը՝ *գրեց. այս ձևի մեջ արտահայտված են ոչ միայն 1) ժամանակի (անցյալ) 2) կերպի (կատարյալ) և 3) դեմքի (3-րդ դեմք) կատեգորիաները, ինչպես ցույց է տալիս իր անունը (անցյալ կատարյալի 3-րդ դեմք), այլ նաև 4) թվի կատեգորիան (եզակի թիվ), 5) եղանակի կատեգորիան (սահմանական եղանակ), 6) սեռի կատեգորիան (ներգործական սեռ), 7) ակտի կատեգորիան (ցույց*

է տալիս այնպիսի գործողություն, որ տեսել է կամ չի տեսել խոսողը)։ Այս ձևը երբեմն կարող է ցույց տալ նաև հաջորդականության կատեգորիան (հաջորդություն), երբ նախադասության մեջ անցյալի կատարյալի ձևով արտահայտված գործողության դիմաց ունենք անցյալ վաղակատարի ձևով արտահայտված գործողություն, որը սովորաբար արտահայտում է միայն առաջ ավարտված գործողություն (նախորդություն)։ Օրինակ՝ «Գրեց այնպես, ինչպես ուսուցիչը պահանջել էր»[1]։ Այստեղ գրեց բայը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ կատարվել է ուսուցչի պահանջից հետո։

Վերցված բառը (գրեց) բաղկացած է հինգ հնչյունից՝ գըրեց։ Այս հինգ հնչյունից առաջին երեքը (գըր-գր)՝ բառի արմատն են խոնարհման յոթ (ութ) կատեգորիաները արտահայտելու համար մնում է երկու հնչյուն (եց), բայց այս երկու հնչյուններն էլ վերը թվարկված յոթը կատեգորիաներից ոչ մեկը չեն արտահայտում՝ վերջին հնչյունով՝ (ց) կազմվում է պարզ բայերի երկրորդ (անցյալի) հիմքը իսկ ե-ն խոնարհիչն է։

Այսպիսով, վերցված օրինակի մեջ խոնարհման ոչ մի կատեգորիայի ոչ մի նշան չկա։ Եթե վերցնենք մի ուրիշ քերականական ձև, համարյա նույնպիսի արդյունք կտա նրա վերլուծությունը, այսինքն կպարզվի, որ խոնարհման կատեգորիայի նշանը քերականական ձևերի մեջ հայտնվում է ոչ ամեն անգամ։

Սրանից հետո կարելի է պատասխանել մեր հարցին՝

Ինչո՞վ են արտահայտվում խոնարհման կատեգորիաները բայաձևում, երբ շատ անգամ նյութական ոչ մի արտահայտություն չկա այդ ձևերում։

Խոնարհման կատեգորիանները, որոնք տվյալ ձևերում ոչ մի նշան չունեն, արտահայտվում են ամենից առաջ նրանով, որ լեզվի մեջ տվյալ ձևին համադրվում են ուրիշ ձևեր, որոնք երբեմն հակառակ նշանակությամբ ածանցներ ունեն։ Սա նշանակում է, որ այդ նյութական կողմը թաքնված է լեզվի սիստեմի մեջ։

Պարզելու համար բերենք մի օրինակ.

Գրեց գաղափար է տալիս երրորդ դեմքի մասին նրանով, որ այս ձևի հանդեպ հայոց լեզվի մեջ կա՝ գրեցի, գրեցիր..., որոնք գաղափար են տալիս առաջին և երկրորդ դեմքերի մասին։ Նկատենք, որ այս վերջին ձևերը ունեն դեմքի նշաններ՝ -ի (գրեց-ի) առաջին դեմքի համար և -իր (գրեց-իր) երկրորդ դեմքի համար, իսկ երբեմն

---

1 Օրինակը վերցված է պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» գրքից, Երևան, 1954, էջ 62։

երրորդ դեմքն էլ ունի իր սեփական նշանը՝ -ր (գրբ.՝ գրեմ <գրէր <գրե-յմ)։

Նույն գրեց ձևը գաղափար է տալիս եղակի թվի մասին, որովհետև նրա հանդեպ ունենք գրեցիմ, գրեցիմ, գրեցին, որոնք ունեն նաև թվի նշաններ։

Գրեց ձևը գաղափար է տալիս ներգործական սեռի մասին նրանով, որ նրա հանդեպ ունենք գրվեց, որն արտահայտում է կրավորական սեռ և ունի կրավորականի նշանը՝ -վ (գր-վ-եց)։

Գրեց գաղափար է տալիս անցյալ ժամանակի մասին ևս, որովհետև նրա հանդեպ կան ղանաղան ձևեր, որոնք գաղափար են տալիս ներկայի կամ ապառնիի մասին։ Այսպես՝ գրում եմ, նստած եմ (ներկա) գրելու եմ, կգրեմ (ապառնի)։ Նկատենք, որ այս ձևերում էլ ժամանակ ցույց տվող ածանցներ չկան։

Գրեց գաղափար է տալիս սահմանական եղանակի մասին, որովհետև լեզվի մեջ կան նաև այլ ձևեր, որոնք ցույց են տալիս ուրիշ եղանակների գաղափար։ Այսպես՝ գրեմ, գրես, գրի... (ըղձական եղանակ), գրեի, գրեիր, գրեր... (պայմանական), գրի՛ր (հրամայական)։ Այստեղ էլ նկատենք, որ սրանք էլ եղանակ կազմելու համար որևէ նշան չունեն։

Գրեց գաղափար է տալիս ավարտված գործողության մասին, որովհետև հայոց լեզվի մեջ կան բայաձևեր, որոնք ցույց են տալիս անավարտ գործողություն, օրինակ՝ գրում եմ... գրում էի... գրելու եմ...

Այսպիսով, գրեց կատարյալ կերպի ձևն է, իսկ գրում եմ, գրում էի՝ անկատար կերպի։ Կերպի կատեգորիա ցույց տվող նշան նույնպես չկա տվյալ ձևերում։

Վերջապես, գրեց բայաձևը գաղափար է տալիս այնպիսի գործողության մասին, որին ականատես է եղել խոսողը և սա էլ պայմանավորված է նրանով, որ հայոց լեզվի մեջ կան այնպիսի ձևեր, որոնք ցույց են տալիս գործողություն, որին խոսողը ականատես չի եղել՝ գրել է... գրել էր...։ Թեև արդի հայերենի մեջ չկինեին այս վերջին ձևերը, մենք չէինք կարող խոսել ակտի կատեգորիայի մասին, թեև հայերենում կան ձևեր, որոնք արտահայտում են այնպիսի գործողություններ, որոնց ականատես է եղել խոսողը՝ գրում է, գրում էր...

Հայերենում ակտի կատեգորիան նույնպես որևէ ածանցով չի արտահայտվում։

Բերված օրինակները ցույց են տալիս, որ քերականական կատեգորիաները միմյանցից անջատել չի կարելի։ Դեռ ավելին՝ որևէ

քերականական ձև, որի մեջ միաժամանակ արտահայտված են մի քանի քերականական կատեգորիաներ, չի կարելի զատել տվյալ լեզվի ամբողջ սիստեմից և դիտել առանձին։ Լեզվի մեջ, ինչպես և բնության մեջ, բոլոր ձևերը կապված են միմյանց հետ և փոխադարձ պայմանավորվածության մեջ են գտնվում։ Բայց որպեսզի ավելի ճիշտ պատկերացնենք այս ձևերի փոխհարաբերությունները, այդպիսիները չպիտի խառնենք միմյանց հետ։ Իսկ այսպես վարվել կարելի է միայն այն ժամանակ, երբ բոլոր կողմերից ուսումնասիրենք այս փոխադարձաբար պայմանավորված ձևերը, ասել է՝ ամեն մի ձև ու կատեգորիա ուսումնասիրենք առանձին-առանձին, չմոռանալով, որ առանձին ուսումնասիրված ձևերը շատ հանգույցներով կապված են նաև մյուս ձևերի ու կատեգորիաների հետ։ Իսկ լեզվի մեջ եղած կատեգորիաները առանձնացնել ավելի խոր ուսումնասիրելու նպատակով կարելի է միայն այն ժամանակ, երբ չանտեսենք լեզվական ձևերի կապերը և կարողանանք այս ձևերը միմյանց հետ համեմատել։

3. ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԳԱՄՄԱՆ

Քերականական կատեգորիաները և՛ բաժանում են լեզվի զանազան ձևերը միմյանցից, և՛ միացնում իրար հետ։ Օրինակ՝ գրեցի, գրեցիր, գրեց ձևերը միմյանցից տարբերվում են դեմքով։ Այս նշանակում է, որ այստեղ դեմքի կատեգորիան բաժանում է միմյանցից քերականական ձևերը, բայց այս դեմքով (և միայն դեմքով) տարբերված ձևերը միացած են իրար հետ թվի կատեգորիայով, որովհետև բոլոր տվյալ ձևերը արտահայտում են եզակի թիվ։ Թվի կատեգորիան միացնում է ոչ միայն այս ձևերը, այլև բոլոր ուրիշ ձևերը, որոնց մեջ արտահայտված է եզակիություն, օրինակ՝ գրում եմ, գրում ես, գրում է... գրել եմ, գրել ես, գրել է... կգրեմ, կգրես, կգրի... և այլն։ Նույնը կարելի է ասել նաև հոգնակիության մասին։

Վերցնենք այսպիսի օրինակ՝ գրում ես, գրում էիր, գրեցիր, գրել ես, գրես, կգրես, գրիր... նույնպես զանազան քերականական ձևեր են, բայց սրանք նույնն են դեմքով և թվով (սրանցից մի քանիսը ունեն նաև ուրիշ ընդհանուր կատեգորիաներ՝ եղանակի, սեռի, ակտի)։ Ստացվում է, որ դեմքի կատեգորիան, որը առաջին օրինակի մեջ (գրեցի, գրեցիր, գրեց) միմյանցից բաժանում էր այն բայաձևերը, որոնք ուրիշ կատեգորիաներով բոլորովին նույնն էին, այս օրինակի մեջ միացնում է իրար հետ այնպիսի ձևեր, որոնք ուրիշ կատեգորիաներով մեծ մասամբ տարբերվում են միմյանցից։

Վերցնենք դարձյալ մի օրինակ. գրում էիր, գրել եմ, գրից. բոլորովին տարբեր ձևեր են և միմյանցից տարբերվում են զանազան կատեգորիաներով, բայց, ընդ սմին, ժամանակի կատեգորիայով նրանք նույնն են. այս բոլոր ձևերը արտահայտում են անցյալ ժամանակ։

Վերևում ասվածը միայն աշխարհաբարին չի վերաբերում։ Դեմքի, թվի, ժամանակի, եղանակի և այլ կատեգորիաներ ունեցող բոլոր լեզուների քերականական ձևերի մեջ կարելի է նկատել նույնպիսի փոխհարաբերություններ։ Միևնույն ձևի մեջ միաժամանակ հանդիպում ենք մի քանի քերականական կատեգորիաների, որոնք շատ սերտ կապ ունեն միմյանց հետ և որոնց անկարելի է անջատել միմյանցից։ Բայի դիմավոր մի ձևի մեջ արտահայտված կատեգորիաների կապերն այնքան սերտ են, որ դրանք առանց որևէ դժվարության կարելի է խմբավորել ըստ այդ կապերի և իսկապես քերականները խմբավորում են այս ձևերը և տալիս են դրանց սեփական անունները՝ գլխավորապես ըստ ժամանակի կատեգորիայի։ Օրինակ՝ երբ այդ խմբերն անվանում են ներկա ժամանակ, անցյալի անկատար ժամանակ, անցյալի կատարյալ ժամանակ և այլն, դա նշանակում է, որ քերականական ձևերը մեզ համար ժամանակի կատեգորիա արտահայտող ձևեր են, բայց դրանց մի խումբն արտահայտում է ժամանակի մի հատված (ներկա), մյուսը՝ մի այլ հատված՝ (անցյալ) և այլն։

Քանի որ ժամանակի կատեգորիան արտահայտվում է բոլոր բայաձևերի մեջ (ինչպես և դեմքի, թվի, եղանակի կատեգորիաները արտահայտված են բոլոր բայաձևերի մեջ), իսկ ուրիշ կատեգորիաները (օրինակ. ակտի, ստատուսի, կերպի, հաջորդականության...) կարող են բայաձևերի ոչ բոլոր խմբերի մեջ արտահայտված լինել, այստեղից քերականները եզրակացնում են, որ ուշադրության արժանի է միայն ժամանակի կատեգորիան և այս բայաձևերի խմբերը անվանում են միայն ժամանակի կատեգորիայով։

Այս է պատճառը, որ ժամանակի կատեգորիայի մեջ հաճախ շփոթում են ուրիշ կատեգորիաներ, որով և աղավաղվում է գործի էությունը։ Բանն այն է, որ լեզվի մեջ արտահայտված ժամանակի կատեգորիան իրականության արտացոլումն է, իսկ իրականության մեջ գոյություն ունի միայն մի ժամանակ, որը չափվում է նրա մեջ (ժամանակի) եղած շարժումով, ինչպես նշում է Ֆ. Էնգելսը՝ «Согласно Г. Дюрингу, время существует только вследствие изменения, а не изменение существует во времени и при посредстве времени. Именно потому, что время отлично, незави-

симо от изменения, его можно измерять посредством изменения, ибо для измерения всегда требуется нечто отличное от того, что подлежит измерению»[1]: Բայց այս վերաբերում է ֆիզիկական ժամանակին, որ բոլորովին այլ բան է, քան քերականական ժամանակի կատեգորիան:

Քերականության մեջ չափման ելակետը խոսքի մոմենտն է, որը ինքնըստինքյան մի մոմենտ է այս անվերջ շարժումների մեջ: Քերականության մեջ այն գործողությունը, որը համընկնում է խոսքի մոմենտին, կլինի ներկա, խոսքի մոմենտից առաջ կատարված գործողությունը կլինի անցյալ, իսկ խոսքի մոմենտից հետո եկող գործողությունը՝ ապառնի: Պիտի նկատենք և այն, որ քերականական ժամանակը չի կարող ավելի ճշտորեն ցույց տալ գործողության ժամանակը. հակառակ ֆիզիկական ժամանակի՝ քերականական ժամանակը չի չափվում: Քերականության մեջ խոսքի մոմենտից միլիոնավոր տարիներ առաջվա, կամ մի րոպե առաջվա անցյալ ժամանակը՝ անցյալ է և ուրիշ ոչինչ. նույնպես և ապառնին: Այսպիսով, լեզուների մեջ սովորաբար տարբերվում են միայն երեք ժամանակներ՝ ներկա, անցյալ և ապառնի: Բայց զանազան լեզուների մեջ երեքից ավելի բայաձևերի խմբեր կան և երբ այս խմբերը միայն ժամանակի կատեգորիայով են անվանում, իհարկե, ստիպված են լինում պատկերացնել երեքից ավելի ժամանակ: Այս է պատճառը, որ զանազան լեզուների քերականությունների մեջ հանդիպում ենք ոչ միայն անցյալ ժամանակ արտահայտող բայախմբերի, այլև անցյալի անցյալների, կամ անցյալի ապառնիների, մի բան, որը ճիշտ չի արտացոլում իրականությունը:

Այս հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց Ա. Շանիձեն, որը բոլորովին արդարացիորեն քննադատեց հայտնի լեզվաբաններ Վանդրիեսին և Ոսպերսենին, որոնց կարծիքով ֆրանսերեն լեզվի մեջ գոյություն ունի ժամանակների գամմա: «Վանդրիեսը գտնում է, որ ֆրանսերեն լեզուն կարող է արտահայտել ապառնին անցյալ ժամանակում և անցյալ ժամանակը՝ ապառնում և ավելացնում է, որ դժվար է ժամանակներով հարուստ մի ուրիշ այնպիսի լեզու գտնել, ինչպիսին ֆրանսերեն լեզուն է»[2]:

Ա. Շանիձեն շարունակում է՝ «Մի՞թե կարելի է խոսել անցյալ ժամանակի մեջ պարունակվող ապառնի ժամանակի մասին, կամ ընդհակառակը՝ ապառնի ժամանակի մեջ պարունակվող անցյալ ժամանակի մասին: Եթե այդ այդպես է, այն ժամանակ ի՞նչ է

[1] Ֆ. Энгельс, Анти-Дюринг, 1948, էջ 50:

[2] Ա. Շանիձե, Վրացերենի քերականության հիմունքներ, էջ 218:

ապառնի ժամանակը և ի՞նչ է անցյալ ժամանակը... Երբեք չի եղել և չի կարող լինել, որ անցյալ ժամանակում արտահայտվեր ապառնի և ապառնիում՝ անցյալ ժամանակ...

Բայց, եթե այս այսպես է, այն ժամանակ ինչո՞վ է բացատրվում ժամանակների ամբողջական գամման ֆրանսերենի մեջ: Սա բացատրվում է նրանով, որ հեղինակը ժամանակի և հաջորդականության կատեգորիաները շփոթում է միմյանց հետ: Եթե այս երկու կատեգորիաները իրարից անջատենք, կտեսնենք, որ «ապառնին անցյալ ժամանակում» նույն անցյալ ժամանակը կլիներ (և ոչ ապառնի) և «անցյալ ժամանակը ապառնիում» նույն ապառնին կլիներ (և ոչ անցյալ ժամանակ):

Այսպիսով, եթե հաջորդականության կատեգորիան բաժանենք ժամանակի կատեգորիայից, կտեսնենք, որ ժամանակների գամման կանհետանա ոչ միայն ֆրանսերենում, այլև մյուս լեզուներում: Դրանից հետո հարկ չի լինի խոսել գլխավոր և երկրորդական ժամանակների մասին, ինչպես այդ արվում է դանիացի լեզվաբանի աշխատության մեջ»[1]:

Այստեղ մենք չէինք հիշատակի Ա. Շանիձեի այս դատողությունը, եթե հայերեն քերականական գրականության մեջ էլ նույնպիսի դրույթ չլիներ: Հայոց լեզվի քերականության մեջ էլ բայածևերի մի խումբը մյուսից անջատվում է համարյա միշտ ժամանակի կատեգորիայով. այսպես օրինակ՝ սահմանական եղանակի բայածևերի խմբերը, որոնք արտահայտում են անցյալ ժամանակ անվանում են այսպես՝

1. *Անցյալի անկատար ժամանակ (Նստում էր...)*
2. *Անցյալի կատարյալ ժամանակ (Նստեց...)*
3. *Վաղակատար ժամանակ (Նստել է...)*
4. *Անցյալի վաղակատար ժամանակ (Նստել էր...)*
5. *Հարակատար ժամանակ (Նստած է...)*[2]
6. *Անցյալի հարակատար ժամանակ (Նստած էր...)*
7. *Անցյալի ապառնի (Նստելու էր...)*

Էլ չենք խոսում ուրիշ եղանակների անցյալ ժամանակների մասին:

Ինչպես տեսնում ենք, միայն առաջին երկուսը (անցյալի անկատար և անցյալի կատարյալ) միմյանցից տարբերվում են ոչ թե ժամանակով, այլ կերպով՝ երկուսն էլ անցյալ են, բայց սրանցից

---

1 Ա. Շանիձե, Վրացերենի քերականության հիմունքները, էջ 218—219:

2 Թեև սա ժամանակով ներկա է և ոչ թե անցյալ, ինչպես ճիշտ էին դատում ոմանք,— բայց հիմա արդեն ընդունված է, որ այս ձևը անցյալ ժամանակ է արտահայտում:

մեկը կերպով (գործողության կատարման տեսակետից) անկատար է, մյուսը՝ կատարյալ, եթե դատենք ըստ նրանց անունների։ Այսինքն, բայաձևերի այս երկու խումբը քերականությունների մեջ տարբերված է կերպով, բայց պիտի ավելացնենք, որ քերականությունների մեջ սա գիտակցված չէ, որովհետև այս քերականություններով «պարզ ժամանակները, որոնք դերբայներով չեն կազմվում և հետևաբար գործողության վիճակի վրա ուշադրություն չեն դարձնում, անկերպ են»[1]։ Այսինքն, այս երկու ձևերն էլ ուսումնասիրողների համար միմյանցից և ուրիշ բայաձևերի խմբերից տարբերվում են նույնպես ժամանակով, թեև քերականական այս խմբերի անունների մեջ այդ տարբերությունը չի երևում։

Մնացած ձևերի անունները պարզ ցույց են տալիս, որ քերականները այդպիսիները տարբերում են միմիայն ժամանակներով։ Առանց այդ էլ՝ լեզվաբանական ամեն մի աշխատության մեջ, որ հայոց լեզվին է վերաբերում, բայաձևերի յուրաքանչյուր խումբը հիշատակվում է որպես առանձին ժամանակի ձև։ Այսինքն, հայ քերականների և լեզվաբանների կարծիքով հայոց լեզվի բայաձևերի խմբերը միմյանցից տարբերվում են միայն ժամանակով։ Սա ճիշտ չէ։ Վերև բերված բոլոր օրինակները (բացի հարակատարից) արտահայտում են միայն անցյալ ժամանակ, խոսքի մոմենտից առաջ կատարված գործողություն, այսինքն ըստ ժամանակի նրանք չեն տարբերվում միմյանցից։

Բայաձևերը միայն ժամանակի կատեգորիայով անվանելը թյուրիմացության մեջ է գցում և՛ մեր քերականներին, և սովորողներին, որոնք պարզ պատկերացում չեն կազմում այս ձևերի բովանդակության մասին։ Այսպես՝ բոլորի կողմից ընդունված է, որ ժամանակը է «грамматическая категория, выражающая отношение действия или состояния к моменту речи»[2], բայց նույնիսկ այնպիսի լուրջ աշխատության մեջ, ինչպիսին է ընկ. Բարսեղյանի՝ հիշատակած գիրքը, ժամանակի կատեգորիան որոշված է մի քիչ այլ կերպ, այն է. «...Բայի ժամանակ ասելով պետք է հասկանալ գործողության հարաբերումը խոսքի մոմենտին կամ սրա նկատմամբ վերցված որևէ անցյալ կամ ապառնի ժամանակակետին»[3]։ Իհարկե, ժամանակի կատեգորիայի այսպիսի սահմանումը պայմանավորված է

---

[1] Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 151։

[2] БСЭ, II изд., том 9, стр. 276.

[3] Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 139 (ընդգծումը մերն է—Ի. Շ.)։

նրանով, որ անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար և նման տերմիններով կոչված բայաձևերի խմբերը ընդունում են առանձին ժամանակների ձևերով։ Բերված սահմանումով արդեն գիտնականների կողմից կանոն է դարձվում, որ բայաձևերի խմբերը միայն ժամանակով են տարբերվում միմյանցից։

Իհարկե, ժամանակի կատեգորիայի այսպիսի ըմբռնմամբ, անպատճառ կստացվի ժամանակների գամմա։

Հարց է ծագում՝ եթե այս բայաձևերի խմբերի մեջ ըստ ժամանակի տարբերություն չկա, ապա ինչո՞վ են նրանք միմյանցից տարբերվում։ Կպատասխանենք՝ տարբերվում են զանազան քերականական կատեգորիաներով։ Օրինակ՝ գրում էր և գրեց—միմյանցից տարբերվում են միայն կերպի կատեգորիայով, առաջինը (գրում էր) անկատար կերպ է արտահայտում, երկրորդը (գրեց)՝ կատարյալ կերպ։ Մյուս կատեգորիաներով նրանք համընկնում են. երկու ձևերն էլ ցույց են տալիս երրորդ դեմք, եզակի թիվ, սահմանական եղանակ, տեսած ակտ. անցյալ ժամանակ, ներգործական սեռ։

Այնուհետև՝ գրել է խմբի ձևերը բոլոր մյուս ձևերից (բացի գրել էր խմբի ձևերից) տարբերվում են միայն ակտի կատեգորիայով. գրել է արտահայտում է չտեսած գործողություն, իսկ մյուսները (բացի գրել էր խմբի ձևերից) ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որոնց ականատես է եղել ինքը, խոսողը։

Այնուհետև՝ գրել էր խմբի բայաձևերը արտահայտում են նույն անցյալ ժամանակը։ Սրանք ակտի կատեգորիայով էլ նույնն են, ինչ գրել է խմբի բայաձևերը, բայց բոլոր մյուս բայաձևերից (նրանց մեջ և գրել է խմբի ձևերից) տարբերվում են հաջորդականության կատեգորիայով։ Գրել էր խմբի բայաձևերը արտահայտում են այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես չի եղել (սրանով նրանք նմանվում են գրել է խմբի բայաձևերին), բայց միաժամանակ արտահայտում են այնպիսի գործողություններ, որ կատարվել են մի որևէ գործողությունից առաջ։ Հետո կատարված գործողությունները նախադասության մեջ սովորաբար արտահայտվում են անցյալ կատարյալի ձևերով (գրեց) և ոչ վաղակատարի (գրել է) ձևերով, ինչպես կարելի է կարծել՝ ելնելով անվանումից (անցյալի վաղակատար)։ Օրինակ՝ «Գրեցի այնպես, ինչպես ուսուցիչը պահանջել էր»։ Այսինքն՝ գրել էր խմբի բայաձևերը տարբերվում են մյուսներից նրանով, որ այս ձևերով հայոց լեզվի մեջ արտահայտվում են հաջորդականության կատեգորիան։ Ավելի ճիշտ՝ այս ձևը ցույց է տալիս նախընթաց (նախորդ) գործողությունը, այսինքն այն գործողությունը, որը ուրիշ գործողությունից առաջ է կատարվել,

բայց սա ինքնըստինքյան նշանակում է, որ մյուս գործողությունը կատարվել է նախընթաց գործողությունից հետո:

Այսպիսով, ստացվում է իսկական հաջորդականություն:

Այնուհետև՝ ենսած էր խմբի բայաձևերը բոլոր ուրիշ խմբերից (բացի ենսած է խմբի ձևերից) տարբերվում են նրանով, որ նրանք արտահայտում են այնպիսի «գործողություն» (եղելություն), որը գտնվում է անշարժ, ստատիկ վիճակում: Ըստ ժամանակի ենսած է ներկա է, ենսած էր՝ անցյալ: Այսինքն, ենսած է և ենսած էր խմբերի ձևերը արտահայտում են ստատուսի կատեգորիան և միայն սրանով են տարբերվում մյուս բոլոր ձևերից:

Եթե մեր այս դիտողությունը ճիշտ է, ուրեմն «ժամանակների գամման» վերանում է նաև արդի հայերենի մեջ: Իսկ ճի՞շտ է, թե՞ ոչ մեր դատողությունը, կպարզվի ստորև:

4. ՇԱՐՔԻ ԹԵՈՐԻԱՆ

Եթե վերցնենք բայի որևէ դիմավոր ձևը, կտեսնենք, որ այս ձևի հետ սերտ կերպով կապված են և այլ դիմավոր ձևեր, օրինակ՝ վերցնենք գրեց դիմավոր ձևը: Հայոց լեզուն իմացողը իսկույն կհիշի հետևյալ ձևերն էլ՝ գրեցի, գրեցիր, գրեցինք, գրեցիք, գրեցին, որոնք անբաժան կերպով կապված են գրեց ձևի հետ: Ճիշտ է, մենք զգում ենք, որ այս ձևերը տարբերվում են միմյանցից, բայց մեր իմացության մեջ բայաձևերի այս խումբը հակադրվում է բոլոր մյուս ձևերի խմբերին, օրինակ՝ գրեց խմբի ձևերը չեն շփոթվում գրել եմ, գրել ես, գրել է... ձևերի հետ, ոչ էլ գրել էի, գրել էիր... ձևերի, կամ գրում էի, գրում էիր... և ոչ էլ մի այլ խմբի ձևերի հետ:

Այստեղից հետևում է, որ բայաձևերը, որոնք միմյանցից տարբերվում են միայն դեմքով և թվով, իսկ ուրիշ կատեգորիաներով միանգամայն նույնն են, մեր իմացության մեջ պատկերվում են որպես մի առանձին խումբ: Եթե աշակերտին տանք, օրինակ, գրել եմ բայաձևը և ասենք, որ շարունակի խոնարհել, նա չի շարունակի այսպես՝ գրում ես, գրեց, գրելու ենք, գրում էինք, գրված են, այլ միայն այսպես՝ գրել ես, գրել է, գրել ենք, գրել եք, գրել են: Ինչո՞ւ: Որովհետև գրել եմ ձևի հետ մեր իմացության մեջ բայաձևերը խմբավորվում են միայն այսպես:

Այսպիսով՝ խոնարհման ժամանակ մեր իմացության մեջ խմբավորվում են միայն այն ձևերը, որոնք միմյանցից տարբերվում են միայն դեմքով և թվով, իսկ մյուս կատեգորիաներով կարող են իրար նմանվել և սովորաբար նմանվում են, թեև երբեմն տար-

բերվում են այս վերջին կատեգորիաներով նույնպես։ Բայաձևերի խմբերի մեջ սովորաբար մտնում են վեցական ձևեր՝ երեք ձև եզակիում, երեք՝ հոգնակիում։ Եթե լեզուն ունի սեռի կատեգորիա (իգական, արական, չեզոք), այն ժամանակ ձևերի քանակը խմբի մեջ եռապատիկ է դառնում։

Չնայած, որ խմբի մեջ մտնող ձևերը տարբերվում են միմյանցից, բայց և այնպես, կա մի ինչ որ բան, որով նրանք միավորվում են իրար հետ։ Մյուս կողմից՝ բայի որոշ ձևերը միմյանց հետ միավորող կատեգորիան միևնույն ժամանակ հանդիսանում է բայաձևերի տվյալ խումբը բոլոր մյուս՝ խմբերից տարբերող կատեգորիա։ Այսինքն՝ ամեն մի քերականական (խոնարհման) կատեգորիա բայաձևերը և՛ տարբերում է իրարից, և՛ միավորում միմյանց հետ։ Այսպիսի դիալեկտիկական փոխհարաբերություն կա քերականական կատեգորիաների մեջ։

Այս կամ այն լեզվի մեջ խմբավորվող բայաձևերը իրենց սեփական անունները չունեն։ Այս պատճառով, նրանց անվանում են կամ ըստ ժամանակի, կամ ըստ եղանակի, կամ էլ ըստ որևէ ուրիշ կատեգորիայի, որոնք արտահայտված են տվյալ ձևերի խմբի մեջ։ Թյուրիմացության պատճառն էլ հենց այստեղ է թաքնված։ Բանն այն է, որ բայի ամեն մի ձևի մեջ արտահայտված է մի քանի քերականական կատեգորիա և երբ մի ձևը անվանում ենք միայն մի կատեգորիայի անունով, մյուս կատեգորիաների գոյությունը մոռացվում է, կամ նույնացվում գերադասված կատեգորիայի հետ։ Այս հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց Ա. Շանիձեն և որպեսզի ճշտեր այդ սխալը, ստեղծեց շարքի թեորիան։ Նա բայաձևերի այն խմբերը, որոնց մեջ արտահայտված են մի շարք կատեգորիաներ, անվանեց շարքեր, այս շարքերին տվեց իրենց սեփական անունները և առանձնացրեց որպես առանձին բարդ կատեգորիա՝ շարքի կատեգորիա[1]։ Ինչ վերաբերում է մյուս կատեգորիաներին (դեմքի, թվի, ժամանակի, եղանակի...), դրանք ըստ շարքի թեորիայի պարզ կատեգորիաներ են, որովհետև բայաձևերի խմբերի մեջ այս պարզ կատեգորիաների միավորությամբ է ստեղծվում շարքը։ Շարքի մեջ մտնող պարզ կատեգորիաները կոչվում են շարքի տարրեր, իսկ շարքի մեջ մտնող ձևերը՝ շարքի անդամներ. օրինակ՝ գրեցի, գրեցիր, գրեց, գրեցինք, գրեցիք, գրեցին բայաձևե-

[1] Ա. Շանիձեի, Վրացերենի քերականության հիմունքները, էջ 219—241։ Նույնի՝ Категория ряда в глаголе. Общие вопросы формообразований глаголов на примерах грузинского языка. «Известия» Института языка, истории и материальной культуры, 1941, т. X, стр. 209-229.

րի մի առանձին խումբ (շարք) են, այս խմբի ամեն մի ձևը շարքի անդամ է, որը մյուսներից զանազանվում է դեմքով կամ թվով։ Այսպես՝ գրեցի և գրեցիմ դեմքով միևնույնն են, բայց թվով տարբերվում են, կամ գրեցի և գրեց թվով միևնույնն են բայց դեմքով տարբեր են։ Այս շարքի ձևերը բացի դեմքի և թվի կատեգորիաներից ունեն հետևյալ կատեգորիաները՝ ժամանակի, սեռի, եղանակի, կերպի և ակտի։ Սրանք դեմքի և թվի կատեգորիաների հետ միասին շարքի տարրերն են։ Եթե վերցնենք մի ուրիշ շարք, այնտեղ էլ տարրերը կլինեն նույն կատեգորիաները, բայց ոչ նույնությամբ, քանի որ կարող է մի որևէ կատեգորիա ավելանալ այս կատեգորիաների վրա, կամ այս տարրերից մեկը կամ մի քանիսը կարող են դուրս ընկնել և դրանց փոխարեն ավելանալ ուրիշ կատեգորիաներ։ Օրինակ՝ գրել եմ շարքի բայաձևերը ունեն բոլոր կատեգորիաները (տարրերը), որոնք մտնում էին գրեցի շարքի մեջ, միայն գրեցի շարքի մեջ տեսած ակտ էր արտահայտված, իսկ գրել եմ շարքի մեջ՝ չտեսած ակտ։ Կամ թե՝ կգրեմ շարքի տարրերը նույն դեմքի, թվի, սեռի, եղանակի, ակտի, կերպի և ժամանակի կատեգորիաներ են, բայց գրեցի շարքի համեմատությամբ փոխված է միայն ժամանակը՝ գրեցի արտահայտում է անցյալ ժամանակ, կգրեմ՝ ապառնի։ Եթե համեմատենք գրելու եմ և կգրեմ շարքերը, կպարզվի, որ նրանց բոլոր կատեգորիաները նույնությամբ կրկնվում են, բացի կերպի կատեգորիայից, որը գրելու եմ շարքի մեջ անկատար է, իսկ կգրեմ շարքի մեջ՝ կատարյալ, ուստի և հայոց լեզվի մեջ այս երկու շարքերը իրարից անկախ շարքեր են հանդիսանում։ Եթե այս շարքերը կերպի կատեգորիայով էլ նույնը լինեին, սրանցից մեկը ավելորդ կլիներ և չէինք էլ առանձնացնի որպես անկախ շարք։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ բայաձևերի յուրաքանչյուր խումբ (շարք) ունի մի տարր (կատեգորիա), որով նա տարբերվում է մյուս շարքերից և այս տարրի պատճառով է, որ մենք ղգում ենք նրա անկախությունը։

Այժմ հարց է ծագում՝ ինչպե՞ս անվանենք այս շարքերը։

Ա. Շանիձեն այսպես է պատասխանում այս հարցին՝ «Հայտնի է, որ ավանդությամբ ստացված քերականական նոմենկլատուրան հաճախ ճիշտ չի արտացոլում իրականությունը և երբեմն խանգարում է, որ ճիշտ գնահատենք և ուսումնասիրենք երևույթը։ Պետք է ասել, որ ավանդական տերմինները ոչ մի տեղ այնպես խոչընդոտ չեն եղել, ինչպես բայի խոնարհման գործում։ Եթե կարելի լիներ միանգամից արհամարհել ավանդությունը, ավելի լավ կլիներ վերանվանել ամբողջ բայական շարքերի կոմպլեկտը։ Իդեալական կլի-

ներ, եթե բայական շարքերի անվանման ժամանակ նկատի չառնեինք այս շարքի մեջ մտնող տարրերը՝ ժամանակ, եղանակ, ակտ և այլն, այլ անվանեինք չեզոք անուններով, թեկուզ արհեստական անուններով ասենք՝ տալինք ծառերի անունները՝ կեչու շարք, սոճու շարք, կաղնու շարք, շագանակենու շարք, հաճարենու շարք և այլն։ Սա կլիներ ռեֆորմ։ Բայց այժմ անհնար է այսպես անել։ Այնուամենայնիվ բայական շարքերը անվանելու ժամանակ պետք է գտնենք այնպիսի միջոց, որը չմթագնի երևույթի էական կողմը»[1]։

Ա. Շանիձեն ըստ իր շարքի թեորիայի շարունակեց վրացերենի բայական ձևերը ուսումնասիրել և դրա շնորհիվ հայտնաբերեց մի քանի նոր քերականական կատեգորիաներ, որով ավելի պարզ պատկերացվեց վրացերենի բայի կառուցվածքը։ Այս թեորիան ընդունեցին բոլոր այն լեզվաբանները, որոնք ծանոթացան Շանիձեի թեորիայի հետ։ Վեճը միայն այն հարցի մասին է, թե «շարքը» իսկապես կատեգորիա է, թե՝ ոչ։ Ոմանք չեն հավանում նաև «շարք» տերմինը և նրա փոխարեն ուրիշ տերմին են գործածում, բայց նույն բովանդակությամբ։ Մեզ համար այս վեճերը նշանակություն չունեն, որովհետև նրանք գործի էական կողմերը չեն շոշափում, ընդհակառակը՝ շարքի թեորիայի էական կողմերը, ինչպես ասացինք, բոլորի կողմից ընդունված են։

Մեզ համար էականն այն է, որ այս թեորիան օգնում է մեզ ավելի լավ հասկանալ բայի էությունը։ Այդ պատճառով էլ հայոց լեզվի բայական ձևերի վերլուծության ժամանակ մենք հենվում ենք այս թեորիայի վրա։ Իհարկե, սա չի նշանակում, թե մենք վրացերեն լեզվի բայի հատկությունները վերագրում ենք հայոց լեզվի բայերին։ Այսպիսի գործառնությունը ոչ ոքի ոչինչ չի տա։ Այդ իսկ պատճառով, որպեսզի չստեղծենք այնպիսի տպավորություն, թե իբր վրացերեն լեզվի բայի հատկությունները փոխադրում ենք հայոց լեզվի բայերի վրա, դիտմամբ միմյանց չենք համադրում վրացերենը և հայերենը, թեև այդպիսի համադրություններն էլ երբեմն կարող են օգտակար լինել։ Այստեղ մենք ջանում ենք հենց իր՝ հայերենի բայաձևերի վերլուծությամբ և հայերենը ուսումնասիրողների կարծիքների օգնությամբ հաստատել մեր դրույթները։ Այսինքն՝ մենք միայն օգտվում ենք գիտության նվաճումներից, որոնք այս դեպքում պատահաբար նվաճված են վրացերենի նյութերի ուսումնասիրությամբ։ Հայոց լեզվի ուսումնասիրության ընթացքում մեզ համար պարզվեց, որ քերականական կատեգորիաների մասին այժմ հաս-

---

1 Ա. Շանիձե, *Վրացերենի քերականության հիմունքները*, էջ 221—222։

տատված դրույթները մշակվել են հայոց լեզվի բազմակողմանի ուսումնասիրությամբ, որ հայոց լեզվի բոլոր կատեգորիաները վաղուց են նկատվել, բայց սրանցից մի քանիսը մինչև այժմ առանձին կատեգորիայով բաժանված չեն, այսինքն խառնված են արդեն անջատված կատեգորիաների հետ։ Այս բանի մեջ համոզվելու համար, մեր կարծիքով, բավական է արդեն բոլորի կողմից ընդունված խոնարհման կատեգորիաների քննադատական տեսությունը և կարիք չկա բանավեճ սկսելու լեզվաբանների հետ։ Դժբախտաբար, անհնար է բոլորովին խույս տալ առանձին լեզվաբանների այս կամ այն կարծիքի քննադատական վերանայումից, որովհետև մենք այստեղ ոչ մի նոր բան չենք ասում, այլ աշխատում ենք արդեն բոլորի կողմից ընդունված քերականական կատեգորիաների բովանդակությունների վերլուծությամբ հաստատել մեր կարծիքները։ Իսկ այդ անելու համար անխուսափելի է խոսել, թե այժմ լեզվաբանները որ կատեգորիաներն են ընդունում հայոց լեզվի քերականությունների մեջ կամ ինչպես են հասկանում նրանք այդ կատեգորիաների բովանդակությունը։ Դրա համար մենք ստիպված ենք դիմելու այնպիսի աշխատությունների, որոնք հայոց լեզվի քերականական կատեգորիաների մասին գրվել են վերջին տարիներս։ Ասում ենք վերջին տարիներս, որովհետև, այդպիսի աշխատությունները որպես օրենք գիտության վերջին խոսքն են ներկայացնում։

Պետք է նկատել նույնպես, որ մենք հիմնականում սահմանափակվում ենք միայն խոնարհման կատեգորիանները շրջահայելով և ուշադրություն չենք դարձնում բայի դերիվացիոն (ածանցական) կատեգորիաների վրա, որոնք են՝ սեռի (ներգործական, կրավորական, չեզոք), կրկնողականության (ցատկոտել, թռչկոտել...), շարունակականության (կամեմ-կամենամ, ունեմ-ունենամ...), պատճառականության (մոտենալ-մոտեցնել) և այլն։ Այսպես ենք անում, որովհետև ածանցավոր բայերն էլ նույն ձևով են խոնարհվում, ինչպես անածանց բայերը և խոնարհելիս կարող են արտահայտել խոնարհման նույն կատեգորիանները։ Օրինակ՝ մոտենում եմ և մոտեցնում եմ խոնարհելիս միշտ, խոնարհման ամեն ձևի մեջ տարբերված կլինեն միայն պատճառականության կատեգորիայով, իսկ խոնարհման կատեգորիաներով, եթե վերցնենք նույն շարքում, ոչ մի տարբերություն չի լինի։

Խոնարհման կատեգորիաներից այստեղ չենք շոշափում միայն դեմքի և թվի կատեգորիանները, որովհետև այդ կատեգորիանների ըմբռնման հարցում հայ լեզվաբանական գրականության մեջ ոչ մի բյուրիմացություն գոյություն չունի։

Մի քանի տարի առաջ հրապարակված Հ. Խ. Բարսեղյանի արժեքավոր մենագրության մեջ մանրամասնորեն քննարկված են նոր գրական լեզվի բայական կատեգորիաները։ Ըստ հեղինակի, արդի հայերենի բայն ունի միայն հետևյալ կատեգորիաները՝ սեռի, կերպի, ժամանակի, եղանակի, թվի և դեմքի՝ ընդամենը վեց կատեգորիա[1]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ դիտվում են և՛ խոնարհման, և՛ դերիվացիոն կատեգորիաները։ Ինչպես ասացինք, սրանից մենք բաց ենք թողնում սեռի, դեմքի և թվի կատեգորիաները, իսկ մյուսների մասին կխոսենք հերթականությամբ։ Սկսենք ժամանակի կատեգորիայից։

5. ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ

Մենք արդեն ասացինք, որ բայական շարքերը հայ լեզվաբանական գրականության մեջ անվանված են համարյա միայն ժամանակի հատկանիշով։ Նշանակում է, որ բայաշարքերը միմյանցից, ըստ այդ գրականության, տարբերվում են միայն ժամանակով՝ ներկա ժամանակ, անցյալի անկատար, ապառնի ժամանակ, անցյալի ապառնի ժամանակ, վաղակատար ժամանակ, հարակատար ժամանակ, ըղձականի ապառնի ժամանակ, ըղձականի անցյալի ապառնի ժամանակ և այսպես մինչև վերջ։

Իհարկե, այդ գրականության մեջ հանդիպում ենք դիտողությունների, որոնցով առանձին շարքերի բովանդակությունը ճիշտ է որոշված և նշվում է, որ այս կամ այն շարքը մյուսներից միայն ժամանակով չի տարբերվում, այլև մի ուրիշ հատկանիշով, բայց շարքերն անվանելիս այդ նոր հատկանիշը ոչ մի տեղ հաշվի չի առնված։ Դրա հետևանքով հայոց լեզվի քերականության մեջ էլ ստացվում է «ժամանակների գամման», որը ճիշտ չի արտացոլում իրականությունը։ Այս պատճառով էլ ժամանակի կատեգորիան, ճիշտ չի որոշված հայ լեզվաբանական գրականության մեջ։

Այս թերությունը հայոց լեզվի քերականության մեջ քսան տարի առաջ նկատել է Ա. Շանիձեն։ Քննադատելով զանազան լեզուների քերականագետներին, հայոց լեզվի վերաբերյալ նա գրում է. «В новоармянском языке по Абегяну[2] и Гарибяну[3] есть не-

---

1 Հ. Խ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, *1953*։

2 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն*, Վաղարշապատ, *1906*, էջ *100*։

3 Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի քերականություն*, *1934*, էջ *66*։

сколько будущих и прошедших времен, по Финку[1] изъяв. наклонение имеет 7 времен, сослаг.—4, условное—2, а по Тер-Матевосяну[2] изъяв. наклонение имеет 3 прошедших и 4 будущих, а «условное» наклонение—7 прошедших времен. Почему получается такой разнобой? Можно было бы думать, что такие курьезы (4 будущих, 7 прошед. времен!) возможны только потому, что арм. язык—малоизученный язык»[3].

Վերադառնանք մեր հարցին.

Ընդհանրապես ընդունված է քերականական ժամանակի կատեգորիայի հետևյալ սահմանումը՝ «Время глагола—грамматическая категория, выражающая отношение действия или состояние к моменту речи»[4].

Հայ քերականական գրականության մեջ քերականական ժամանակի կատեգորիան սահմանվել է մի քիչ այլ կերպ. «...Բայի ժամանակ ասելով պետք է հասկանալ գործողության հարաբերումը խոսքի մոմենտին կամ սրա նկատմամբ վերցված որևէ անցյալ կամ ապառնի ժամանակակետին»[5]:

Ժամանակի կատեգորիայի այս սահմանումը այժմ ընդունված է հայոց լեզվի բոլոր ուսումնասիրողների կողմից, որոնք այն չեն էլ կարող չընդունել, քանի որ բայի շարքերի անվանումը տալիս են միայն ժամանակի հատկանիշով: Այսպես թե այնպես, հայ լեզվաբանական գրականության մեջ այս բնորոշման քննադատություն տակավին տեղ չի գտել: Քննարկվող հարցի մասին ընկ. Բարսեղյանը նույն աշխատության մեջ ավելի պարզորոշ ասում է. «Խոնարհվող բայը, արտահայտելով առարկայի գործողությունը, դրությունը, միաժամանակ մատնացույց է անում նրա ժամանակը: Բայց որպեսզի կարողանա ցույց տալ ժամանակի այն հատվածը, որի մեջ կատարվել, կատարվում կամ կատարվելու է գործողությունը, մեր լեզուն այն վերցնում է այլ գործողությունների համեմատությամբ, և որովհետև յուրաքանչյուր գործողություն մեկ ուրիշ գործողության

---

[1] Lehrbuch der neuostarmenischen Literatursprache. Unter Mit-wirkung von S. Kanajanz bearbeitet von F. N. Finck, 1902, S. 22.

[2] «Краткий сравнительный обзор структурных особенностей русского и армянского языков», Баку, 1939, стр. 38-41.

[3] **А. Г. Шанидзе,** Категория ряда в глаголе ..., стр. 214.

[4] БСЭ, второе изд., том 9, стр. 276.

[5] *Հ. Խ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 139, 395 (ընդգծումը մերն է—Ի. Շ.):*

համեմատությամբ իր ընթացքով կարող է կամ համաժամանակ լինել, կամ հաջորդել կամ էլ նախորդել նրան, *ուստի ստանում ենք գործողության կատարման քերականական տարբեր ժամանակներ»*[1]։

Այս դատողության մեջ, ինչպես տեսնում ենք, մոռացված է, որ գործողությունների համեմատումը ժամանակի մասին գաղափար չի տալիս. ժամանակի մասին գաղափար է տալիս գործողության կամ եղելության և խոսքի մոմենտի համեմատումը։ Եթե ասում ենք, որ ժամանակի կատեգորիան արտահայտվում է խոսքի մոմենտի և գործողության համեմատությամբ, սա նշանակում է, որ ժամանակի բոլոր ենթակատեգորիանները (ներկա, անցյալ, ապառնի) հաստատված են այդպիսի համեմատությամբ, իսկ երբ վերցնում ենք որևէ քերականական ժամանակ (ժամանակի կատեգորիայի ենթակատեգորիան) և նրա հետ համեմատում մի այլ գործողություն, սա չի լինում համեմատություն խոսքի մոմենտի հետ։ Եթե այդպես է, ապա այդպիսի համեմատությունը քերականական ժամանակի մասին գաղափար տալ չի կարող։ Այդ դեպքում փոխվում է մեր ելակետը, որի համաձայն ժամանակի կատեգորիան պիտի որոշենք խոսքի մոմենտի և գործողության համեմատությամբ։ Եթե համեմատում ենք միայն գործողությունները և ոչ թե գործողությունը խոսքի մոմենտին, ստացվում է գաղափար գործողությունների հաջորդականության, հետևողականության մասին, այսինքն հաջորդականության կատեգորիայի մասին և ոչ թե գործողության ժամանակի մասին։

Մենք արդեն գիտենք, որ ճիշտ նույնպիսի դատողությունների առթիվ է, որ Ա. Շանիձեն քննադատում է Վանդրիեսին։

Իրենք՝ հայոց լեզվի ուսումնասիրողներն էլ՝ զգում են, որ իրենց դատողությունները մատչելի չեն, ինչպես մյուս ուսումնասիրողների, նույնպես էլ աշակերտների համար, սակայն աշխատում են ամեն կերպ հաստատել իրենց դրույթները։ Ահա ինչ է գրում այս հարցի մասին Ա. Ղարիբյանը.

«Սահմանական եղանակի բոլոր ձևերը սովորեցնելուց առաջ պետք է նշել՝ թեև ժամանակները հիմնականում երեքն են, բայց իրենց մանրամասնության մեջ ունեն որոշ տարբերություններ. օրինակ՝ երեկը այսօրվա համեմատությամբ անցյալ է, իսկ նախանցյալ օրը այսօրվա համեմատությամբ վաղ անցյալ օր է, իսկ

---

1 Հ. Խ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 137 (ընդգծումը մերն է—Ի. Շ.)։

երեկվա համեմատությամբ միայն՝ անցյալ։ Նույնպես և վաղը այսօրվա համեմատությամբ ապառնի է, իսկ երեկը նախանցյալ օրվա համեմատությամբ ապառնի էր։ Հետևաբար. անցյալները լինում են մի քանի տեսակ, ինչպես և ապառնին լինում է մի քանի տեսակ։ Հայերենում միայն ներկան մի տեսակ ունի։ Ահա այդ նկատի առնելով որոշում ենք որ հայերենի սահմանական եղանակը ունի կամ ունենում է ինը ժամանակ։ Այդ ժամանակները առանձին-առանձին անուններ ունեն»[1]։

Առաջին հայացքից այս դատողությունը ճիշտ է թվում, բայց երբ ավելի մոտիկից ենք նրան ծանոթանում, պարզվում է, որ բերված օրինակները չեն արտացոլում գործի էությունը։ Այս օրինակները ճիշտ կլինեին, եթե լեզվի մեջ գոյություն ունենային այնպիսի ձևեր, որոնք արտացոլեին այս օրինակներում բերված ժամանակի հատվածները։ Բայց այդպես չէ՝ անցյալ ժամանակը ցույց չի տալիս անցյալ ժամանակի որևէ հատված, այլ միայն խոսքի մոմենտից առաջ եղած ժամանակ, որ կարող էր գոյություն ունենալ մի րոպեից առաջ, կամ տասնյակ դարեր առաջ։ Նույնպես և ապառնին։ Այդ պատճառով էլ լեզվի մեջ տեղ չի մնում ավելի առաջ կամ ավելի ուշ եկող ժամանակների համար։ Բայական ձևը, եթե արտահայտում է անցյալ ժամանակ, կլինի միայն անցյալ ժամանակ և սրանից առաջ կամ հետո չի կարող լինել որևէ ուրիշ անցյալ ժամանակ։ Այսինքն, այս դատողության մեջ նկատի չի առնված այն հանգամանքը, որ քերականական ժամանակը չի չափվում։ Բոլորովին ուրիշ բան է օրերի համեմատությունը, այստեղ ժամանակը չափվում է ոչ թե խոսքի մոմենտի համեմատությամբ, այլ այսօրվա հետ օրերի համեմատությամբ («երեկը նախանցյալ օրվա համեմատությամբ ապառնի էր»)։ Սրա համար օրերի և քերականական ժամանակի համեմատությունը միայն առաջին հայացքից է թվում ճիշտ։ Ա. Ղարիբյանի նշված դատողության մեջ խառնված են ֆիզիկական և քերականական ժամանակները։

Լեզվի մեջ, նախադասության մեջ, իհարկե, հանդիպում են բայաձևեր, որոնք արտահայտում են այնպիսի գործողություններ, որոնք կատարվել են կամ կկատարվեն մյուս գործողություններից առաջ կամ հետո, բայց այսպիսի դեպքերում իրար հարաբերում են գործողությունների կատարման ժամանակները և ոչ թե գործողու-

---

1 Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Երևան, 1954, էջ 308—309։

թյան կատարման ժամանակը և խոսքի մոմենտը։ Օրինակ, վերցնենք այսպիսի նախադասություն՝ «Ես տեսա, որ աշակերտը նստել էր իր տեղը»։

Այս նախադասության մեջ տեսա և նստել էր բայաձևերը արտահայտում են խոսքի մոմենտից առաջ եղած ժամանակը, անցյալ ժամանակը, բայց նախադասությունից երևում է և այն, որ նստելու գործողությունը կատարվել է տեսնելու գործողությունից առաջ, երբ ես տեսա խոսքի մոմենտից առաջ, նա արդեն նստած էր, բայց ըստ ժամանակի այս գործողություններից երկուսն էլ գոյություն ունեին խոսքի մոմենտից առաջ, այսինքն երկուսն էլ անցյալ ժամանակ են արտահայտում։ Մեր ուշադրությունից չպիտի վրիպի այն հանգամանքը, որ այստեղ իրար հետ համեմատվում են երկու գործողություններ, և որ դրանցից մեկը կատարվել է մյուսից առաջ։ Իսկ խոսքի մոմենտի համեմատությամբ երկուսն էլ անցյալ ժամանակ են արտահայտում։ Այստեղ տրամաբանական սխալն այն է, որ մի կողմից, խոսքի մոմենտի ու գործողության հարաբերությունը և, մյուս կողմից, գործողությունների հարաբերությունը շփոթվում են միմյանց հետ, այսինքն ժամանակի կատեգորիան որոշելիս երկու եկակետ ունենք. մի դեպքում՝ խոսքի մոմենտի և գործողության հարաբերություն, մյուս դեպքում՝ գործողությունների հարաբերություն։ Քերականական ժամանակը որոշելիս մենք ճիշտ եկակետի վրա ենք, երբ ասում ենք, որ տեսա անցյալ ժամանակ է արտահայտում, որովհետև այստեղ հարաբերում են խոսքի մոմենտը և գործողության մոմենտը, իսկ երբ ասում ենք, որ նստել էր անցյալի վաղակատար ժամանակն է, մենք արդեն փոխում ենք քերականական ժամանակի որոշման եկակետը, այսինքն երկու մոմենտի (խոսքի մոմենտի և գործողության ընթացքի մոմենտի) համեմատության փոխարեն համեմատում ենք երկու գործողություն։ Իհարկե, երկու գործողության համեմատությունը մեզ ժամանակի որևէ պատկերացում չի տա։ Այս պատճառով էլ ստացվում է, որ տեսա անցյալ կատարյալ ժամանակ է, տեսել է վաղակատար ժամանակ, այսինքն անցյալ կատարյալ ժամանակից առաջ կատարված ժամանակ, իսկ տեսել էր անցյալի վաղակատար ժամանակ, այսինքը՝ վաղակատարից առաջ կատարված ժամանակ։

Բայց ճի՞շտ է արդյոք, թե տեսա նշանակում է, որ գործողությունը կատարվեց երեկ (տեսա-երեկ), տեսել է՝ գործողությունը կատարվեց նախանցյալ օրը (վաղ անցյալ օրը), տեսել է՝ նախանցյալ օր, իսկ տեսել էր նշանակում է, որ գործողությունը կատարվեց նախանցյալ օրից առաջ, (տեսել էր՝ նախանցյալ օրից առաջ)։ Ոչ

այսպես չէ։ Այսպիսի սխալ սկզբունքից է, որ առաջանում է «ժամանակների գամման»։ Գործողությունների համեմատությամբ կարելի է պատկերացնել միայն այն, թե նրանցից ո՞րն է նախորդում մյուսին և որը հաջորդում, այսինքն այսպիսի համեմատությամբ կարելի է որոշել հաջորդականության բառական կատեգորիան և ոչ թե ժամանակի կատեգորիան։ Այս դրույթը կարելի է հաստատել և ուրիշ օրինակներով, այսպես՝ «Գրում էի, երբ դու ներս մտար»[1]։

Այս նախադասության մեջ երկու գործողություն կա՝ գրելու և ներս մտնելու։ Երկուսն էլ տրված են անցյալ ժամանակի ձևով, բայց նրանցից առաջինն ունի անկատար կերպ, իսկ մյուսը՝ կատարյալ։ Հակադրելով այս երկու գործողությունները, կտեսնենք, որ դրանք կատարվել են միաժամանակ, այսինքն՝ երբ դու կատարում էիր ներս մտնելու գործողությունը, այդ նույն ժամանակ ես կատարում էի գրելու գործողությունը, բայց այն տարբերությամբ, որ ներս մտնելու գործողությունն արդեն վերջացած կատարված էր խոսքի մոմենտին, իսկ գրելու գործողությունը դեռևս ավարտված չէր։

Մի ուրիշ օրինակ էլ վերցնենք՝ «Նստած էի սեղանիս առաջ, երբ ներս մտավ ընկերս»[2]։ Այս նախադասության մեջ նույնպես երկու գործողություն կա՝ նստելու և ներս մտնելու։ Համեմատելով սրանց՝ տեսնում ենք, որ երկուսն էլ կատարվել են դարձյալ միաժամանակ՝ ես որ նստած էի, հենց այդ ժամանակ նա ներս մտավ։ Ժամանակով նրանք նույնն են։ Սրանից չի ստացվում, իհարկե, որ նստած էի և ներս մտավ միևնույն ձևերն են, սրանց մեջ տարբերություններ շատ կան, բայց դրանք չեն վերաբերում ժամանակին, որովհետև այս երկու գործողությունները կատարվել են խոսքի մոմենտից առաջ։ Ջնայած սրան, պնդում են, որ նստած էի ձևն արտահայտում է անցյալի հարակատար ժամանակը, այսինքն այն ժամանակը, որ կատարվել է հարակատար ժամանակից առաջ։ Բայց, եթե ճիշտ է, որ նստած էի անցյալի հարակատար ժամանակ է, ինչպե՞ս ստացվեց որ այս «ժամանակով» արտահայտված գործողությունը և անցյալ կատարյալի ժամանակով արտահայտված գործողությունը կատարվեցին միաժամանակ։

Հայոց լեզվի մեջ արտահայտվում է ոչ միայն գործողությունների միաժամանակություն, այլև գործողությունների նախորդում, որով միաժամանակ արտահայտվում է գործողությունների հաջորդումը։ Սրանցից միայն նախորդն ունի իր սեփական ձևը, դա է,

---

1 Օրինակը բերված է Ա. Ղարիբյանի հիշյալ «Մեթոդիկայից», էջ 304։

2 Նույն տեղում, էջ 221։

այսպես կոչված, «անցյալի վաղակատար ժամանակը»։ Օրինակ՝ «Աշոտը սովորել էր իր դասերը, երբ նրա մոտ եկավ Արան»[1]։

Այս նախադասության մեջ երկու գործողություն կա՝ սովորելու և գալու։ Նախադասությունից երևում է, որ սրանցից մեկը՝ սովորելու գործողությունը կատարվել է գալու գործողությունից առաջ, թեև երկուսն էլ կատարվել են անցյալ ժամանակում։ Այսինքն անցյալի վաղակատար շարքի ձևերով արտահայտվում է որևէ գործողությունից առաջ կատարված գործողություն և հենց դրանով էլ արտահայտվում է հետո կատարված գործողությունը։

Գործողությունների հաջորդականությունը լեզվի մեջ կարելի է արտահայտել ուրիշ եղանակով. օրինակ՝ «Անտառում աշխատելիս մի մարդ հանդիպեց արջի, նա վերցրեց հրացանը, նշան բռնեց, սպանեց, մորթեց և գնաց իր գործին»։ Այս նախադասության մեջ յոթ գործողություն կա և դրանք անպատճառ պիտի կատարվեին այնպիսի հաջորդականությամբ, ինչպես թվարկված է նախադասության մեջ, որովհետև չի կարելի, որ առաջ սպաներ արջը և հետո վերցներ հրացանը, կամ առաջ մորթեր և հետո սպաներ և այլն։

Բայց այս հաջորդականությունը պայմանավորված է նախադասության բովանդակությամբ։ Դա է պատճառը, որ մեկը մյուսից հետո կատարված գործողությունները արտահայտված են միայն անցյալ կատարյալի ձևերով։ Բայց, եթե ելնենք մեզ ծանոթ սկզբունքից, դուրս կգա, որ գնաց անցյալ ժամանակ է արտահայտում, մորթեց՝ նախանցյալ (վաղ անցյալ), սպանեց՝ անցյալի նախանցյալ և այսպես մինչև վերջ։ Բայց սա թողնենք մի կողմ։

Բերված օրինակի մեջ թվարկված գործողությունների հաջորդականության և անցյալի վաղակատարի միջոցով արտահայտված հաջորդականության մեջ էական տարբերություն կա։ Բանն այն է, որ անցյալի վաղակատար շարքի բայաձևերով արտահայտվում է գործողությունների հաջորդականություն՝ անկախ այլ գործողություններից։ Մյուս կողմից՝ այս շարքի ձևերը արտահայտում են նախորդում (որևէ գործողությունից առաջ կատարված գործողություն) և հենց դրանով էլ արտահայտվում է հաջորդումը։ Սրանից դուրս է գալիս, որ հենց անցյալ վաղակատարի ձևերի շնորհիվ հայոց լեզվի մեջ ունենք հաջորդականության կատեգորիա։

Այսպիսով, անցյալի վաղակատարի ձևերով արտահայտված գործողությունը չի պահանջում նախադասության մեջ այլ գործո-

---

[1] Օրինակը բերված է Ա. Ղարիբյանի «Դասագրքից», 1959, էջ 194։

ղությյուն՝ հաջորդականությունն արտահայտելու համար։ Բայց հաջորդականությունը ենթադրում է ամենաքիչը երկու գործողություն։ Ինչպե՞ս է ստացվում, որ միայն մի քերականական ձևով արտահայտվում է հաջորդականություն։ Անցյալի վաղակատարի ձևը հաջորդականությունն արտահայտում է նրանով, որ այս ձևերի հանդեպ միշտ ենթադրվում են տեսա, նկատեցի, հասկացա, իմացա, ասացին և նման բովանդակություն ունեցող բայեր՝ անպատճառ անցյալ կատարյալի ձևով։ Օրինակ՝ «Հասել էր խաղողը»։ Հասել էր բայի հանդեպ այս նախադասության մեջ չկա ուրիշ գործողություն արտահայտող բայ, բայց հասել էր բայով մենք պարզ պատկերացում ենք ստանում, որ հասնելու գործողությունը կատարվել է մի ուրիշ գործողությունից առաջ։ Այսպես՝ «Ես չգիտեի, որ խաղողը հասած էր, բայց ասացին այդ մասին», կամ «տեսա, նկատեցի հասնելուց հետո, որ նա արդեն հասել էր»։ Անցյալի վաղակատար ձևերի կողքին դրված կամ ենթադրված գործողությունը արտահայտում է հաջորդում։

Նշանակում է՝ հաջորդականության քերականական կատեգորիան արտահայտված է համաժամանակության, նախորդման և հաջորդման ենթակատեգորիաներով։ Սրանցից միայն նախորդումն ունի իր սեփական ձևը (շարք)։ Մյուսների գոյությունը պայմանավորված է նրա գոյությամբ։ Եթե չլիներին անցյալի վաղակատարի ձևերը, հաջորդականության կատեգորիայի մասին չէինք էլ կարող խոսել։

Այսպիսով, անցյալի վաղակատար ժամանակը մի որևէ ժամանակի հատված չի արտահայտում, նա առանձին ժամանակի ձև չէ, այլ առանձին շարք է այն պատճառով, որ անցյալի վաղակատար ժամանակի ձևերով հայոց լեզվի մեջ արտահայտվում է մի նոր քերականական կատեգորիա, հաջորդականության կատեգորիան։

Դրա համար էլ ավելի ճիշտ կլինի, եթե այս շարքի անունը տանք իր սեփական հատկանիշով և ոչ ժամանակով։ Մեր կարծիքով ավելի ճիշտ կլինի անվանել նախորդման (կամ նախընթացի) շարք։

Այնուհետև տեսնենք, թե ի՞նչ է արտահայտում վաղակատար ժամանակը։ Արդյոք սա էլ առանձին ժամանակ է արտահայտում, թե՝ ոչ։ Եթե դատենք իր անունով, այս շարքի բայաձևը արտահայտում է վաղ կատարված ժամանակ, այսինքն՝ գրեցի շարքի ձևերն արտահայտում են արդեն կատարված ավարտված ժամանակ, իսկ վաղակատար ժամանակը ցույց է տալիս սրանից առաջ (վաղ) կատարված ժամանակը։ Ճի՞շտ է սա։ Ոչ, ճիշտ չէ։ Ամենից առաջ պիտի

նկատենք, որ ժամանակը չի կարող լինել ոչ կատարված (ավարտված), ոչ անկատար (անավարտ)։ Անավարտ կամ կատարյալ կարող է լինել գործողությունը։ Բայց այսպես «չնչին» բաների վրա չարժե ծանրանալ։

Վաղակատար ժամանակի ձևերի մեջ չի արտահայտվում մի որևէ առանձին ժամանակ, որովհետև խոսքի մոմենտից առաջ կատարված գործողությունը արտահայտում է միայն անցյալ ժամանակը, այսինքն գրեց և գրել է ձևերը երկուսն էլ արտահայտում են միևնույն քերականական ժամանակը՝ անցյալ ժամանակ, քանի որ երկուսն էլ ցույց են տալիս խոսքի մոմենտից առաջ ավարտված գործողություն։ Չնայած սրան, նրանց մեջ զգալի տարբերություն կա։ Երբ ասում ենք գրեց, հաստատում ենք, որ վկա ենք եղել այս գործողության կատարմանը, իսկ երբ ասում ենք գրել է, հաստատում ենք, որ գործը կատարված է, բայց միաժամանակ մենք (խոսողը) ցույց ենք տալիս, որ այս գործողության կատարման վկա չենք եղել, որ այս գործողության կատարման մասին մեզ ասել են ուրիշները կամ դատում ենք գործողությունը կատարվելուց հետո մնացած հետևանքով։ Օրինակ՝ տեսնում ենք գրված թուղթը և ասում՝ գրել է։ Այսինքն վաղակատար ժամանակի ձևով է արտահայտվում այն գործողությունը, որի կատարմանը խոսողը ականատես չի եղել։ Հայոց լեզվի մեջ այդպիսին արտահայտվում է նաև նախորդման շարքի (անցյալի վաղակատար ժամանակ) ձևերով, բայց այս վերջին ձևերով, ինչպես ասացինք, արտահայտվում է և ուրիշ քերականական կատեգորիա, որ չի արտահայտվում ուրիշ ոչ մի ձևով և դրա համար էլ անցյալի վաղակատար ժամանակի հատկանիշը ընդունեցինք նախորդումը։ Մեր կարծիքով վաղակատար ժամանակի շարքին ավելի հարմար է այն կատեգորիայի անունը, որով նա տարբերվում է մյուս շարքերից։ Այն է՝ չտեսություն։ Սա ոչ թե ժամանակի, այլ ակտի (գործողության, գործի) կատեգորիա է, որով այս շարքը տարբերվում է մյուսներից։

Տեսնենք մյուս «ժամանակները» ևս։ –Ած վերջածանցով կազմվում է անցյալի դերբայը, որ հիմա հայ լեզվաբանական գրականության մեջ կոչվում է հարակատար դերբայ։ Այդ դերբայով և օժանդակ բայի ձևերով կազմվում են բայաձևերի երկու շարքեր՝ հարակատար ժամանակը և անցյալի հարակատար ժամանակը նստած է և նստած էր։ Ինչպես տեսնում ենք, այս երկու ձևերի շարքերն էլ ընդունված են որպես առանձին ժամանակների ձևեր, բայց սա էլ ճիշտ չէ։ Նստած է շարքի ձևերը ժամանակով ներկա են, իսկ նստած էր շարքի ձևերը՝ անցյալ։ Ինչո՞վ են տարբերվում այս շարքի ձևերը

ներկայից և ուրիշ անցյալ ժամանակ արտահայտող շարքերից: Տարբերվում են այն քերականական կատեգորիայով, որը մյուս շարքերի մեջ գոյություն չունի: Այս կատեգորիան ստատուսի բերականական կատեգորիան է: Դժվար չէ համոզվել մեր դրույթի ճշտության մեջ:

Դիմենք օրինակների. ասում է և ասած է մեր տեսակետով ներկայի ձևեր են: Ի՞նչ տարբերություն կա սրանց մեջ: Հեշտ է նկատել, որ ասում է ձևը ցույց է տալիս կատարվող գործողություն, որը հիմա, խոսքի մոմենտին, կատարման ընթացքի մեջ է, այսինքն դինամիկ ձևն է, իսկ ասած է ցույց է տալիս, որ հիմա, խոսքի մոմենտին, գործողությունն արդեն դադարել է և գործողություն կատարողը գտնվում է ստատիկ, անշարժ վիճակում:

Բայց, եթե վերցնենք ներգործական բայի հարակատարի և անցյալի հարակատարի ձևերը, կտեսնենք, որ նա, որ այս գործողության օբյեկտն էր, դարձել է սուբյեկտ (ենթակա) և այս գործողության հետևանքով հիմա գտնվում է ստատիկ, անշարժ վիճակում: Սա է պատճառը, որ հարակատար և անցյալի հարակատար շարքերի ձևեր արդի գրական լեզվի մեջ սովորաբար չեն կազմվում ներգործական սեռի բայերից: Ներգործական բայի ձևերից նախ կազմվում են կրավորական, ապա կրավորականից՝ հարակատարի և անցյալի հարակատարի ձևերը:

Այսպես՝ գրում է>գրվում է>գրված է, գրված էր: Այս տեսակետից հարակատարի և անցյալի հարակատարի ձևերը դերիվացիոն ձևեր են և մենք կարող ենք չշոշափել այդ ձևերը, բայց չեզոք սեռի բայերի համար ստատուսի կատեգորիան, որ արտահայտվում է այս ձևերով, խոնարհման կատեգորիա է (նստած է, պառկած էր, քնած էր...) և, մեր կարծիքով, մեծ հանցանք չի լինի, եթե այստեղ այդ կատեգորիայի մասին էլ խոսենք:

Այսպիսով, հարակատար և անցյալի հարակատար շարքերի ձևերը արտահայտում են ենթակայի վիճակ, որն ստացված է գործողության կատարման հետևանքով, այսինքն ցույց է տալիս «գործողության ստատիկ ձևը», եթե կարելի է այսպես ասել: Այսպես՝ ընտում է ցույց է տալիս գործողությունն, իսկ ասած է նույն գործողության հետևանքով ստեղծված վիճակ, դրությունն: Նույնպիսի հարաբերություն կա ասում էր և ասած էր ձևերի մեջ, միայն այն տարբերությամբ, որ այստեղ անցյալ ժամանակն է վերցված:

Այսպիսով՝ ասած է ստատիկ ներկա է, իսկ ասած էր՝ ստատիկ անցյալ: Նշանակում է՝ հարակատարը և անցյալի հարակատարը ժամանակի առանձին ձևեր չեն: Այս շարքերի ձևերով հայոց լեզ-

վի մեջ արտահայտվում է ստատուսի կատեգորիան: Նրանց անուններն էլ պիտի կոչենք այնպես, որ ժամանակի կատեգորիայի հետ չշփոթենք: Այսպես կլինի այն դեպքում, երբ այս շարքերն անվանելիս նկատի առնվի նրանց տարբերող կատեգորիան: Մեր կարծիքով ստատիկ ներկա և ստատիկ անցյալ անունները հարմար են այս շարքերին:

Սահմանական եղանակի մյուս շարքերից միայն անցյալի ապառնի ձևերի ըմբռնման մասին ունենք մի քանի դիտողություններ: Ամենից առաջ նկատի ունենք նրա անվան հարցը: Ինչպես մյուս բաղադրյալ բայաշարքերի, այնպես և այս շարքի անվանակոչման հայեցակետը շատ ձևական է: Այսպես՝ անցյալի ապառնի ձևերը կազմվում են ապառնի դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ գրել բայի ապառնի դերբայը կլինի գրելու, իսկ օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ էի, էիր, էր... Այստեղից՝ գրելու էի՝ անցյալի (էի անցյալ ժամանակն է արտահայտում) ապառնի (գրելու ապառնի դերբայ է, արտահայտում է ապագայում կատարելիք գործողությունը, այսինքն ապառնի ժամանակը): Բայց սա միայն անհաջող անվանում չէ: Այս անունը թյուրիմացության մեջ է գցում ինչպես լեզու սովորողներին, այնպես էլ ուսումնասիրողներին: Ահա և այս շարքի բովանդակության բացատրությունը Ա. Ղարիբյանի «Դասագրքից» «Անցյալի ապառնին ցույց է տալիս, որ ենթական մի գործողություն անցյալում էր կատարելու (մի ուրիշ անցյալից հետո)»[1]:

Այս բացատրությունը հաստատելու համար նույն տեղում բերված է այսպիսի օրինակ. «Անցյալ ամսվա սկզբին մենք գնալու էինք Ճամբար, երբ մի դեպք մեզ մի քիչ ուշացրեց»[2]:

Ինչպես տեսնում ենք, այս նախադասության մեջ դիտամամբ է մտցված ժամանակ ցույց տվող բառը (ամիս), որպեսզի աշակերտները հասկանան, որ անցյալ կատարյալ ձևով արտահայտված գործողությունից առաջ, այսինքն անցյալից առաջ կատարվելու էր գնալու գործողությունը: Բայց, եթե քննադատորեն մոտենանք հարցին, կտեսնենք, որ այդ այդպես չէ: Իսկապես, որտեղի՞ց է երեվում, որ գնալու էինք որևէ անցյալ ժամանակից հետո էր կատարվելու: Այս նախադասության մեջ կա նաև մի ուրիշ բայ անցյալ կատարյալի ձևով (ուշացրեց), բայց օրինակից չի երևում, որ գնալու էինք գործողությունը ուշացրեց գործողությունից հետո էր կատարվելու: Ընդհակառակը՝ գնալու էինք ցույց է տալիս ուշացրեց բայից առաջ կատարվող գործողությունը: Այսպես՝ մենք առաջ ուզում էինք

1 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, 1959, էջ 193:

2 Նույն տեղում:

գնալ, բայց հետո ուշացանք։ Այսինքն՝ ուշանալու գործողությունը հետո կատարվեց, երբ մենք դեպքի պատճառով չգնացինք պլանավորված ժամանակին։

Դուրս է գալիս, որ անցյալի ապառնի ձևը արտահայտում է ոչ թե անցյալից հետո կատարվելիք գործողությունը, այլ ընդհակառակը՝ անցյալից առաջ կատարվող գործողությունը և եթե այս հաջորդականությունից ելնենք, ավելի ճիշտ կլիներ այս ձևերը կոչել «անցյալի անցյալ ժամանակ»։ Բայց, ինչպես գիտենք, քերականական ժամանակը որոշելու համար գործողությունների համեմատությունը արդյունք չի տալիս։ Քերականական ժամանակի մասին գաղափար է տալիս միայն խոսքի մոմենտի և գործողության ժամանակի համեմատությունը։ Եթե այս տեսակետից մոտենանք, կպարզվի, որ անցյալի ապառնին ըստ ժամանակի արտահայտում է միայն անցյալ ժամանակ և ուրիշ ոչինչ։ Այսինքն, անցյալի ապառնի շարքի ձևերը ժամանակով չեն տարբերվում անցյալ ժամանակ արտահայտող ուրիշ բայաշարքերից։

Ընկ. Հ. Բարսեղյանն իր նշված աշխատության 148—149 էջերում ընդունում է այն ճշմարտությունը, որ ասելու էր ... ժամանակով միայն անցյալ է արտահայտվում, բայց հետո 157 էջում վիճում է Ս. Լիսիցյանի հետ, որ նույնպես հաստատում է այս ճշմարտությունը։ Վիճելիս Հ. Բարսեղյանը դարձյալ վերադառնում է այն մրտքին, թե այս ձևով արտահայտվում է «անցյալ ժամանակակետի համեմատությամբ կատարելիք գործողություն»[1]։

Այսպես՝ վերջ ի վերջո ընդունվում է, որ անցյալի ապառնի ձևերն արտահայտում են կատարելիք գործողություն, այսինքն, ապառնի ժամանակ, քանի որ կատարելիք գործողությունը հետագայում է կատարվելու։ Բայց հետագա քերականության մեջ նշանակում է միայն խոսքի մոմենտից հետո գալիք ժամանակ և որպեսզի այսպես չհասկանանք, ավելացնում են, թե այս ձևերով արտահայտված ժամանակը վերցվում է անցյալ ժամանակակետի համեմատությամբ։

Սակայն, ինչպես տեսանք, քերականության մեջ գործողության ժամանակը որոշելիս այդ գործողությունը կարելի է վերցնել միայն խոսքի մոմենտի համեմատությամբ։

Ինչի՞ց է ծագում այսպիսի անորոշությունը «անցյալի ապառնի» շարքի ձևերի բովանդակությունը բացատրելիս։ Նրանից, որ հայոց լեզուն ուսումնասիրողների կարծիքով բայի բաղադրյալ ձևերի մեջ մասնակցում են օժանդակ բայի ներկայի կամ անցյալի

1 Հ. Ս. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 148—149, 157։

ձևերը և նրանց թվում է, որ երբ այսպիսի ձևերում օժանդակ բայը վերցված է ներկայի ձևերով, նշանակում է, գործողությունն էլ վերցված է ներկայի համեմատությամբ, իսկ երբ այդպիսի ձևերում մատնակցում են օժանդակ բայի անցյալի ձևերը, նշանակում է, որ գործողությունը վերցված է անցյալ ժամանակի համեմատությամբ: Դերբայով կազմված ձևերը անվանելիս վերցնում են օժանդակ բայով արտահայտված ժամանակը (ներկա կամ անցյալ) և դերբայով արտահայտված գործողությունը: Օրինակ՝ գրում էր անցյալ անկատար ժամանակ է, որովհետև էր օժանդակ բայը արտահայտում է անցյալ ժամանակ, իսկ գրում անկատար դերբայ է: Նույնպես, գրել էր—անցյալի վաղակատար ժամանակ է, որովհետև էր անցյալ ժամանակ է արտահայտում, իսկ գրել վաղակատար դերբայ է...

Այսպիսով, բայաշարքերը անվանելիս նկատի չի առնվում, որ տվյալ բայական ձևը անբաժանելի է և այն չի կարելի բաժանել մասերի, որովհետև այդ մասերը միասին արտահայտում են այս կամ այն քերականական կատեգորիան, այն դեպքում, երբ քերականական շարքի մեջ այդ կատեգորիան արտահայտող ուրիշ որևէ ձևաբանական նշան չկա: Մեր կարծիքով անցյալի ապառնի ձևերը ժամանակի առանձին հատված չեն արտահայտում, այլ ցույց են տալիս անցյալ ժամանակը: Այս շարքի ձևերի բովանդակության սխալ ըմբռնումը, ինչպես տեսանք, նրա անվանման սխալ սկզբունքից է ծագում: Այս բայաշարքի, ինչպես և շատ ուրիշ շարքերի անունները մեզ խանգարում են քերականական ձևերի էության մասին ճիշտ պատկերացում կազմել:

Անցյալի ապառնիի մասին այստեղ այսքանով ավարտենք, քանի որ հետագայում կանդրադառնանք այս շարքի էության պարզաբանմանը:

Սահմանական եղանակի ներկայի, անցյալ անկատարի, անցյալ կատարյալի և ապառնի ձևերի անվանումների դեմ առարկություններ չունենք: Այս շարքերի ժամանակներն, ըստ իս, ճիշտ են որոշված հայոց լեզվի քերականության մեջ: Այս շարքերի մասին մի քանի դիտողություններ կանենք այլ կատեգորիաների տեսության ժամանակ: Ինչ վերաբերում է վաղակատարի (չտեսածի), անցյալի վաղակատարի (նախորդի), հարակատարի (ստատիկ ներկա), անցյալի հարակատարի (ստատիկ անցյալ) և անցյալի ապառնի (որ հետո կանվանենք) շարքերին մեր կարծիքով, հաստատեցինք, որ սրանք առանձին ժամանակների ձևեր չեն: Սրանով քանդվում է «ժամանակների գամման» և պարզվում է, որ հայոց լեզվի մեջ գոյություն ունի քերականական միայն երեք ժամանակ: Նշանակում է՝ հայոց

լեզուն հարուստ է ո՛չ թե ժամանակներով, ինչպես պնդում են հայոց լեզվի ուսումնասիրողները, այլ քերականական շարքերով, որոնք արտահայտում են առանձին-առանձին քերականական կատեգորիաներ։

Սրանից է, որ հայոց լեզուն ճկուն է և մտքի արտահայտության եղանակներով իսկապես հարուստ։

6. ԵՂԱՆԱԿԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ

Հայ քերականական գրականության մեջ եղանակի կատեգորիան ճիշտ է սահմանված, որի պատճառով էլ դրա մասին այստեղ երկար խոսելու կարիք չկա։ Ուշադրություն դարձնենք միայն այն մոմենտների վրա, որոնք մեր կարծիքով ճշտելու կարիք ունեն։

Հ. Բարսեղյանը ճիշտ է սահմանում եղանակի կատեգորիան։ Նա գրում է. «Եղանակի քերականական կատեգորիան արտահայտում է գործողության եղանակ, այսինքն՝ ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության և իրականության հարաբերման նկատմամբ»[1]։

Չնայած սրան, հեղինակը երբեմն մոռանում է, որ եթե մի որևէ քերականական եղանակի մասին ենք խոսում, խոսողի վերաբերմունքը անպատճառ պիտի երևա տվյալ գործողության նկատմամբ։

Օրինակ՝ երբ նա խոսում է սահմանական եղանակի մասին, մեկ պնդում է, թե «սահմանական եղանակը իրականության ուղղակի արտացոլումն է ըստ խոսողի։ Նա հաստատում կամ մերժում է... գործողության իրական լինելը»[2]։ Սակայն մի քիչ հետո կարծես մոռանում է այս դրույթը և ասում է. «Սահմանական եղանակը հիմնականում տարբերվում է մյուսներից նրանով, որ նրա ձևերով խոսողի որևէ զգացական, կամային վերաբերմունք դեպի հայտնվող գործողությունը չի արտահայտվում»[3]։

Ինչպես տեսնում ենք, տրամաբանությունը խախտվում է։

Եթե քերականական եղանակի կատեգորիան ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, այդ դեպքում այնպիսի քերականական ձևը, որը չի արտահայտում այս վերաբերմունքը, իհարկե, ոչ մի քերականական եղանակ ցույց չի տալիս և ընկ. Բարսեղյանը իզուր է քննադատում Պեշկովսկուն և ուրիշներին, որոնք ասում էին՝ քանի որ այսպես կոչված սահմանական եղանակի

1 Հ. Խ. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 173։

2 Նույն տեղում, էջ 179։

3 Նույն տեղում (ընդգծումը մերն է—Ի. Շ.)։

ձևերով չի արտահայտվում խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, սա զերո եղանակ է, այսինքն եղանակ էլ չէ։ Այս դեպքում նրանց դատողությունն ավելի տրամաբանական է, որովհետև չեն տեսնում խոսողի վերաբերմունքի արտահայտությունը և չեն էլ ընդունում, որ այդպիսի ձևը որևէ եղանակ է արտահայտում։ Իսկ ընկ. Բարսեղյանը, որը ընդունում է սահմանական եղանակը որպես եղանակային ձև, պնդում է, որ խոսողի վերաբերմունքը արտահայտվում է այս ձևերի մեջ, բայց հետո մերժում է ինքն իր դրույթը, ասելով՝ սահմանական եղանակի «ձևերով խոսողի որևէ զգացական, կամային վերաբերմունք դեպի հայտնվող գործողությունը չի արտահայտվում»[1]։

Այստեղ հակասությունն ակներև է։

Ճիշտ է, հեղինակն այստեղ միայն սահմանական եղանակի ձևերի մասին է խոսում և խոսողի «զգացական, կամային վերաբերմունք» է ենթադրում, բայց այս բառերը (կամային, զգացական վերաբերմունք) չեն օգնում գործին, որովհետև դրանք չեն նախատեսվում եղանակի էությունը սահմանելիս։ Մյուս կողմից, բոլոր եղանակները խոսողի զգացական և կամային վերաբերմունք չեն արտահայտում. նրանցից մեկը արտահայտում է զգացական վերաբերմունք գործողության նկատմամբ (գնամ), մյուսը՝ կամային վերաբերմունք (գնա՛), երրորդը՝ պայմանական վերաբերմունք (գնայի), չորրորդը պարզապես արտահայտում է խոսողի հավաստումը գործողության իսկության մասին, իհարկե, սա էլ խոսողի վերաբերմունք է։

Այսպիսով, այս դատողության մեջ «զգացական» և «կամային» բառերն ավելորդ են։ Այսպիսի հակասությունները հատկապես բայի կատեգորիաների մասին գրված աշխատության մեջ նրանով պետք է բացատրել, որ եղանակի կատեգորիան դեռևս հանգամանորեն ուսումնասիրված չէ։ Սա վերաբերում է հատկապես պայմանական կամ ենթադրական եղանակին։ Այս վերջինիս լուսաբանությամբ կպարզվեն նաև եղանակի կատեգորիայի հետ կապված հարցերը։ Դրա համար էլ այժմ անդրադառնանք այդ հարցի լուսաբանմանը։

Կարելի է ասել, որ «պայմանական կամ ենթադրական եղանակի» ձևերը հայ լեզվաբանական գրականության մեջ տակավին վիճելի ձևեր են։ Մինչև Մանուկ Աբեղյանը հայոց լեզվի բոլոր ուսումնասիրողները կարծում էին, որ այդ ձևերը, որոնց Մանուկ Աբեղյանը տվեց «ենթադրական եղանակ» անունը, եղանակով սահմանական էին։ Մ. Աբեղյանից հետո նրա դրույթը մեծ մասամբ ընդունեցին,

[1] Հ. Բարսեղյան, Op. cit., էջ 179։

թեև կային և այնպիսի քերականներ, որոնք մնացին հին դիրքերի վրա։ Այս հարցի պատմությունը մանրամասնորեն տրված է Հ. Բարսեղյանի աշխատության մեջ[1]։ Ուստի, մենք այստեղ մեր խոսքը չենք երկարացնի այդ հարցի մասին։ Միայն նկատենք, որ վերջնականապես, կարելի է ասել, հաղթեցին պրոֆ. Մ. Աբեղյանի հետևորդները, և հիմա հայ լեզվաբանական գրականության մեջ որոշ վերապահումներով իշխում է Մ. Աբեղյանի դրույթը։

Մ. Աբեղյանը կարծում էր, որ այս ձևերը արտահայտում են ենթադրություն և դրա համար նրանց կոչեց «ենթադրական եղանակի» ձևեր, իսկ հիմա, ընդհանրապես ընդունված է, որ այս ձևերով արտահայտվում են պայմանականություն կամ ենթադրություն, որի համար էլ այս ձևերը կոչում են «պայմանական կամ ենթադրական եղանակի» ձևեր։

Հարցը դիտենք ավելի մոտիկից։

Նոր հայերենում կան բայական երկու շարքեր, որոնք կազմվում են համարյա նույն ձևով, ինչպես գրաբարում կազմվում էին սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի շարքերը։ Այս շարքերը աշխարհաբարում ընդունված են ըղձական եղանակի ձևերով։ Բացի դրանից աշխարհաբարում կան նաև երկու բայաշարքեր, որոնք կազմվում են ճիշտ այնպես, ինչպես ըղձականի շարքերը՝ ավելացնելով կր նախամասնիկը։ Այսպես՝

Գրաբար		Աշխարհաբար	
Սահմանական եղանակ		*Ըղձական եղանակ*	
ներկա		ապառնի	
գրեմ	կարդամ	գրեմ	կարդամ
գրես	կարդաս	գրես	կարդաս
գրէ	կարդայ	գրի	կարդա
գրեմք	կարդամք	գրենք	կարդանք
գրէք	կարդայք	գրեք	կարդաք
գրեն	կարդան	գրեն	կարդան
անցյալի անկատար		անցյալի ապառնի	
գրէի	կարդայի	գրեի	կարդայի
գրէիր	կարդայիր	գրեիր	կարդայիր
գրէր	կարդայր	գրեր	կարդար
գրէաք	կարդայաք	գրեինք	կարդայինք

1 Հ. Ս. Բարսեղյան, Հիշյալ աշխատութ., էջ 229 և հետևյալը։

գրէիք	կարդայիք	գրեիք	կարդայինք
գրէին	կարդային	գրեին	կարդային

Աշխարհաբար

Պայմանական կամ ենթադրական եղանակ

ապառնի		անցյալի ապառնի	
կգրեմ	կկարդամ	կգրեի	կկարդայի
կգրես	կկարդաս	կգրեիր	կկարդայիր
կգրի	կկարդա	կգրեր	կկարդար
կգրենք	կկարդանք	կգրեինք	կկարդայինք
կգրեք	կկարդաք	կգրեիք	կկարդայիք
կգրեն	կկարդան	կգրեին	կկարդային

Ինչպես տեսնում ենք, պայմանական և ենթադրական եղանակն ունի երկու «ժամանակ»՝ ապառնի և անցյալի ապառնի։ Այս վերջինը, ինչպես երևում է իր անունից, արտահայտում է ժամանակի այն հատվածը, որն ապառնի ժամանակ է որևէ անցյալ ժամանակի նկատմամբ և ոչ խոսքի մոմենտի նկատմամբ։ Եթե պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալի ապառնի ձևերով արտահայտված գործողությունը համեմատենք խոսքի մոմենտի հետ, կպարզվի, որ դա ցույց է տալիս անցյալ ժամանակ և ոչ թե ապառնի ժամանակ։ Այս հարցը վիճելի չէ այժմյան հայ լեզվաբանական գրականության մեջ։ Ինքը՝ Հ. Բարսեղյանն իր աշխատության մեջ պարզորոշ գրում է. «ժամանակակից հայերենում կը եղանակիչով կազմված ձևերը արտահայտում են գործողության ապառնի և անցյալ ժամանակ, ըստ այդմ էլ լինում են՝ ապառնի ժամանակի ձևեր (կգնամ, կսիրեմ) և անցյալ ժամանակի ձևեր (կգնայի, կսիրեի)»[1]։

Ջնայած սրան, կգնայի, կսիրեի ձևերի շարքերը ինքը Հ. Բարսեղյանն էլ կոչում է «անցյալի ապառնի ժամանակի» ձևեր։ Պարզ չէ՞ արդյոք, որ եթե այս ձևերը ժամանակով անցյալ են, էլ ինչո՞ւ են նրա հետ կապում «ապառնի» տերմինը։ Սա թյուրիմացության մեջ է գցում և՛ սովորողին, և՛ ուսումնասիրողին։ Բացի դրանից՝ ինչո՞ւ անպատճառ այս շարքը ժամանակի հատկանիշով են անջատում մյուս շարքերից, եթե հայերենում գոյություն ունի միայն երեք քերականական ժամանակ։ Ավելի ճիշտ չէ՞ր լինի արդյոք, եթե այս շարքը մյուսներից անջատեինք այն հատկանիշով, որով նա տարբերվում է մյուս բոլոր շարքերից։ Բայց ո՞րն է տվյալ շարքի համար յուրահատուկ նշանը։ Այս հարցը պարզելու համար պիտի ուսումնասիրենք այս շարքով արտահայտված եղանակը։

1 Հ. Ս. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 232—233։

Ինչպես տեսնում ենք, եղանակով այս շարքի ձևերը ընդունված է անվանել պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր։ Բայց այս եղանակի ձևերով ընդունված է անվանել նաև կգնամ շարքի ձևերը, որոնք կգնայի շարքի ձևերի հետ միասին կազմվում են կը մասնիկով։ Մենք էլ սկսենք հենց «պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնի» ձևերի քննությամբ։ Այս շարքի ձևերը նույնպես մանրամասնությամբ ուսումնասիրվել են Հ. Բարսեղյանի կողմից։ Նա ցույց է տալիս, որ կգնամ շարքի ձևերը գործածվում են զանազան նշանակությամբ, բայց՝ ամփոփելով իր ուսումնասիրության արդյունքները՝ ասում է.

«Երբ ուշադրությամբ դիտում ենք պայմանական ապառնի ձևերի եղանակային գործածության մեր բերած դեպքերը, տեսնում ենք, որ այդ բայաձևերը ավելի շատ օգտագործվում են առանձին նախադասություններում, որոնք գործողության կատարման համար ոչ մի պայման չեն պահանջում։ Ինչպես վերը տեսանք, պայմանական գործողություն արտահայտելու ֆունկցիան նրա կիրառության 7—8 դեպքերից մեկն է միայն։ Բացի այդ, նույնիսկ այն դեպքում, երբ պայմանական ապառնիով արտահայտված գործողության կատարումը կապվում է որևէ պայմանի հետ, այդտեղ էլ պայմանի գաղափարը արտահայտվում է ոչ թե գլխավոր նախադասության ստորոգյալով, այլ երկրորդական նախադասությամբ։

Երբ ասում ենք՝ «Վաղը լավ օր կանի»,—մենք հայտնում ենք մեր համոզմունքը վաղվա օրվա մասին, իսկ երբ ասում ենք՝ «Եթե անձրև չգա, վաղը լավ օր կանի», մենք այդ իրողության կատարումը կապում ենք որոշ պայմանների հետ, ըստ որում պայմանի գաղափարը արտահայտվում է երկրորդական նախադասությամբ (դրա համար էլ նա պարագա երկրորդական նախադասություն է) և ոչ թե գլխավոր նախադասություն ստորոգյալով։

Նույնը կարելի է ասել այդ ձևերի հետ կապված «ենթադրական» հասկացողության մասին։

«Խոսողի ենթադրությունը որևէ գործողության կատարման մասին, ավելի շատ կապված է պայմանական եղանակի ապառնու, քան անցյալի ձևերի հետ, ուստի այս եղանակը ենթադրական անվանելիս իրավունքը մեզ պիտի տան ապառնիի ձևերը։ Սակայն, ինչպես տեսանք, երբ այս եղանակի ապառնի ձևերը, իրոք, ապառնի ժամանակին են վերաբերում, նրանցով արտահայտված գործողությունը խոսողի հաստատմամբ ստույգ է և ոչ ենթադրական։

Այս բայաձևերով ենթադրական գործողության կամ գործողության կատարման ենթադրություն է արտահայտվում այն դեպքում,

երբ նրանք այդ գործողությունը վերցնում են ներկա ժամանակակետում (կունենա, կիմանա, կարժենա, կլինի, կանի, կուտի—ինձա, այժմ, երբ ես խոսում եմ)։ Բայց քանի որ պայմանական ապառնիի ձևերով առաջին հերթին արտահայտվում է գործողության կատարման ապառնի ժամանակ և ոչ թե ներկա, հետևաբար, ենթադրվող գործողության դրսևորումը նրա հիմնական ֆունկցիան չէ, այլ երկրորդական առումներից մեկը»[1]։

Շատ ճիշտ է դատում ընկ. Հ. Բարսեղյանը։ Բայց այս դատողությունը հենվում է լեզվական նյութերի վրա, իսկ երբ նա ելնում է այս շարքի ամունից (պայմանական եղանակի ապառնի ժամանակ), որ այժմ ընդունված է բոլորի կողմից, ստիպված է զիջել և փոխել իր դրույթները։ Իր այս դատողությունը նա ավարտում է այսպես.

«Մեր կարծիքով, պայմանական ապառնիի հիմնական առանձնահատկությունն այն է, որ արտահայտում է կատարելի եղելության վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունքը։ Հետևաբար այդ ժամանակը կարելի է սահմանել այսպես.

Պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնին արտահայտում է խոսքի մոմենտից հետո կատարելիք գործողություն, որի կատարման իսկությունը խոսողը հաստատում է հաստատ համոզմունքով, երբեմն էլ պայմանով կամ ենթադրաբար»[2]։

Չի կարելի զարմանք չարտահայտել այսպիսի զիջումի նկատմամբ։ Եթե պայմանական ապառնիի ձևերը չեն արտահայտում ոչ պայման, ոչ ենթադրություն (նա ինքն է պնդում, որ պայմանականություն կամ ենթադրություն արտահայտվում է ոչ այս ձևերով, այլ երկրորդական նախադասությամբ), էլ ինչո՞ւ պիտի կոչենք «ենթադրական կամ պայմանական»։ Իհարկե, այսպիսի զիջումի պատճառը տերմինն է, որ ավանդությամբ ստացել ենք և հիմա դժվարանում ենք փոխել։ Մյուս կողմից, այսպիսի զիջումի պատճառը նաև թաքնված է սահմանական եղանակի սխալ ըմբռնման մեջ։ Բանն այն է, որ մեր հեղինակի կարծիքով, սահմանական եղանակը չի արտահայտում «խոսողի որևէ զգացական, կամային վերաբերմունք դեպի հայտնվող գործողությունը», իսկ «պայմանական կամ ենթադրական եղանակի» ձևերը «արտահայտում են կատարելի եղելության վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունքը»։ Բայց, նույն տեղում ասված է այն, որ սահմանական եղանակի ձևերով արտա-

---

1 Հ. Ս. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 244—245։

2 Նույն տեղում, էջ 245։

հայտվում է այնպիսի եղելությունը, որը «խոսողի հավաստմամբ համընկնում է իրականության հետ»[1]։

Իհարկե, եթե այսպես է (և սա ճիշտ է), իսկ «պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնի» շարքի ձևն էլ «արտահայտում է կատարելի եղելության վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունքը» այն ժամանակ եղանակային ի՞նչ տարբերություն կարելի է գտնել գալու եմ և կգամ, սիրելու եմ և կսիրեմ և նման ձևերի մեջ։ Մի՞թե «խոսողի հաստատ համոզմունքը» նույն խոսողի վերաբերմունքը չէ։ Իսկ այս վերաբերմունքը ցույց է տալիս, որ խոսողի համոզմունքով և՛ առաջին (գալու եմ), և՛ երկրորդ (կգամ) դեպքերում գործողության կատարումը ստույգ է, իսկական է, այսինքն այս ձևերով «արտահայտված եղելությունը խոսողի հավաստմամբ համընկնում է իրականության հետ»[2]։ Նշանակում է պայմանական կամ ենթադրական եղանակի ձևերը եղանակով չեն տարբերվում սահմանական եղանակի մյուս ձևերից։

Եզրակացություն. կգնամ շարքի ձևերը արտահայտում են «կատարելի գործողության վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունք»։ Նշանակում է, ըստ խոսողի կգնամ շարքի ձևերով արտահայտված գործողությունը իրոք կկատարվի, խոսողն այս բանում հաստատ համոզված է։ Ուրիշ խոսքով՝ ըստ խոսողի այս շարքով արտահայտված գործողությունն իրականության ուղղակի արտացոլումն է։ Իսկ իր՝ Հ. Բարսեղյանի սահմանման համաձայն, եթե բայի ձևի մեջ ունենք իրականության ուղղակի արտացոլում ըստ խոսողի, սա սահմանական եղանակի ձև կլինի։ Մեր կարծիքով էլ, իսկապես, այդպես է՝ այսպես կոչված պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնի շարքի ձևերը եղանակով սահմանական են, ժամանակով՝ ապառնի։

Այս դրույթը հաստատենք հենց իր՝ Հ. Բարսեղյանի օրինակներով՝

1. «Իսկ մենք չենք կործանվի, որովհետև չենք վախենում մեր թուլություններից մասին խոսելուց և կսովորենք հաղթահարել թուլությունը»[3]։ (ԼԵՆԻՆ)

2. «Ծաղիկները քուն կմտնեն, երբ լինի աշուն.
Կանաչները լուռ կթոշնեն աշնան մշուշում,
Աղբյուրները մարգարտաշիթ՝ երբ ձմեռ լինի,
Էլ չեն կանչի, չեն կարկաչի, ինչպես որ հիմա»։
(Գ. ՍԱՐՅԱՆ)

1 Հ. Խ. Բարսեղյան, Հիշյալ աշխատութ., էջ 179։

2 Նույն տեղում։

3 Օրինակները վերցված են Հ. Բարսեղյանի հիշյալ աշխատությունից։

3. «— Լավ, որ տամ, ի՞նչ կանես:

— Այ ինչ կանեմ, Արտեմ ջան: Առաջ մի քիչ բուրդ կառնեմ, թել կմանեմ, գուլպա կգործեմ...»: (ՆԱՐ-ԴՈՍ)

4. «Մենք կսպանենք դիշերվան, կելենք, կզարթեցնենք դիակներին անթիվ ու կխայլենք դեպի քաղաքները քարահատակ:

...Բուք ու բորանի հետ մենք կխուժենք ամենուրեք, շռինդ ու շրխկոցով կբանանք փակ դռներն ու ներս կտանենք ցրտահար, արյունոտ մեր ճշմարտությունը»: (ԱՐԱՉԻ)

5. «Այդ եկողներին էլ կջարդենք,— գոռաց զորապետը:

— Չենք կարող, որովհետև նրանց ուրիշները կհետևեն»:
(ՄՈՒՐԱՑԱՆ)

6. «Սովին մեզ պես մարդը կդիմանա, աղա-մարդը ո՞նց կդիմանա»: (ԱՐԱՉԻ)

7. «Մի տաղ էլ ասա լսենք. կարդացվոր մարդ ես, աղզային տաղեր շատ կգիտենաս...»: (ՓԱՓԱՋՅԱՆ)

8. «Հույս ունիմ, որ նա, ինչպես և դուք, շնորհ կբերեք լսելու ինձ»: (ՆԱՐ-ԴՈՍ)

9. «—Մի քիչ շատ եմ ուղարկում, որ, ասում եմ, ընկեր տղերք կուենեա, լավ չի, որ ինքն ստանա ուտի, նրանք մտիկ անեն»:
(ՉՈՐՅԱՆ)

10. «—Ոչինչ, գլխիդ մեռնեմ, հենց որ քո մոտ կգան, իրեքի վրա էլ կբարկանաս, որ ամեն դատարկ բանի համար քեզ գլխացավանք են տալիս, կհրամայես ծակը կոխել. երկու օր կնգնեն, հետո էլ միջնորդ կրնկնեմ, կրաշխես. մեծին կհրամայես՝ պատիկներին չզրնել, պատիկներին էլ կպատվիրես՝ մեծի պատիվը պահել, ինձ էլ կկանչես կհանձնես, որ ինչպես խելքս կտրում ա դրանց բարիշեցնեմ»:
(ՊՈՒՇՅԱՆ)

11. «Երեխան որ լաց կլինի, կօրորես»: (Ն. ՉԱՐՅԱՆ)

12. «Հանգուցյալ նահապետի մահից հետո տիկինն է կառավարում բոլոր գործերը, կգա, կնստե, կուրախանա և ամեն բանի մասին հարց ու փորձ կանե»: (ՐԱՖՖԻ)

13. «Կգա ժամերով կնստի և ոչ մի բառ չի ասի»: (ՐԱՖՖԻ)

14. «Մեծ տղան յոթը տարվա ճանապարհը կկապե ու ճանապարհ կընկնի, կերթա: Կերթա՜-կերթա՜, կանցնի աշխարհի բոլոր կողմերը, կմտնի ամեն մի քյոշա, քյանար: Օխտը տարի կանցնի, մեկ օր էլ չորանը կտեսնի, որ տղեն եկավ»: («Արևի մոտ». Հայ ժողովրդական հեքիաթներ):

15. «Հույս ունեի, թե խնայողությամբ այնքան կհավաքեմ, որ կարող կլինեմ ձգտումս իրագործել, բայց հիվանդացա և խնայած փողերս ծախսեցի»: (ՆԱՐ-ԴՈՍ)

16. «Ես մտածում էի, թե նա հրեշտակների մոտ կգնա, նրա համար որ ինձ երբեք չէր ծեծում»: (ՐԱՖՖԻ)

Բերված օրինակներից առաջինը (1) վերցված է օրինակների այն խմբից, որոնք հենց իր՝ Հ. Բարսեղյանի կարծիքով էլ ցույց են տալիս «խոսողի հաստատ համոզմունքը, անխախտ հավատը ենթակայի մի կատարելիք գործողության վերաբերյալ»: Եվ սա միանգամայն ճիշտ է: Բայց երկրորդ (2) օրինակը հեղինակը բերում է հաստատելու համար, որ իբր թե այս խմբի օրինակները ցույց են տալիս «ենթակայի մի այնպիսի գործողություն, որի կատարումը կախված է որևէ պայմանից»: Սա արդեն ճիշտ չէ: Ինչպես ինքը՝ Հ. Բարսեղյանը հետո նկատում է, այսպիսի օրինակներում եթե արտահայտվում է որևէ պայմանականություն, ապա դա արտահայտված է լինում շարահյուսորեն և ոչ ձևաբանորեն: Մեր կողմից ընտրված օրինակներում պարզորեն ասվում է, որ «Աշնան ժամանակ ծաղիկները քուն կմտնեն, կանաչները կթոշնեն, իսկ ձմեռը աղբյուրները չեն կանչի և չեն կարկաչի...»: Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ մի պայման չի երևում: Այսպես է նաև այս խմբի մյուս օրինակներում:

Մեր կողմից բերված երրորդ (3) և չորրորդ (4) օրինակները վերցված են օրինակների այն խմբից, որոնք Հ. Բարսեղյանի կարծիքով ցույց են տալիս «խոսողի ցանկությունը, կամքը, վճիռը մի բան անելու վերաբերյալ»[1]:

Մեր կարծիքով, այս խմբի օրինակներն էլ ցույց են տալիս խոսողի հաստատ համոզմունքը, թե բայով արտահայտված գործողությունը անպատճառ կկատարվի: Այսինքն՝ սրանք էլ արտահայտում են իսկական սահմանական եղանակ. «Բուրդ կառնեմ, թել կմանեմ, գուլպա կգործեմ...» բայաձևերը եղանակով միայն սահմանական կարող են լինել:

Հինգերորդ և վեցերորդ օրինակները վերցված են Հ. Բարսեղյանի օրինակների չորրորդ (Դ) խմբից, որոնք ըստ մեր հեղինակի, արտահայտում են «իր կատարմամբ խոսքի մոմենտից հետո ընկնող կարելիական հնարավոր գործողություն»[2]: Մեր կարծիքով սրանք էլ միայն սահմանական եղանակ են արտահայտում՝ «Այդ եկողներին կջարդեմ», «Սովին մեզ պես մարդը կդիմանա» խոսողը հաստատ

---

1 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 237:

2 Նույն տեղում, էջ 238:

համոզմունք է ցույց տալիս, որ այս գործողությունները անպատճառ կկատարվեն։

Մեր տասնհինգերորդ (15) օրինակը վերցված է այլ խմբի օրինակներից, որոնց մեջ «երկրորդական նախադասություններում ըղձական բայաձևերի փոխարեն հաճախ գործածվում են պայմանական ապառնի ձևեր»[1]։

Բայց բերված օրինակներում ոչ ըղձականի, ոչ պայմանականի նշանակություն չկա։ Մեր կողմից բերված օրինակի մեջ պայմանականություն է ստեղծվում ոչ թե բայերով, այլ այնքան, որ, բայց բառերով, իսկ կհավաքեմ, կլինեմ բայերը արտահայտում են սահմանական եղանակ։ «Խնայողությամբ (փող) կհավաքեմ (և հետո) կարող կլինեմ ձգտումս իրագործել»։

Մեր տասնվեցերորդ (16) օրինակը վերցված է օրինակների այն խմբից, որոնց մեջ «պայմանական ապառնիի ձևերը երկրորդական նախադասությունների մեջ գործածվում են անցյալի ձևերի փոխարեն, այսինքն կատարելիք գործողությունը առնում են անցյալ ժամանակի համեմատությամբ»[2]։ Նվ բերում է օրինակներ, որոնցից մենք վերցրինք մեկը՝ «Ես մտածում էի, թե նա հրեշտակների մոտ կգնա, նրա համար որ ինձ երբեք չէր ծեծում»[3]։

Սա արդեն ուրիշ հարց է՝ մի քերականական ձև գործածվում է ուրիշ ձևի փոխարեն, բայց այստեղ ուշադրության արժանի է այն փաստը, որ այսպիսի դեպքերում էլ այս ձևերը գործածվում են սահմանական եղանակի ձևերի կողքին։ Թե ինչո՞ւ է այսպես, մի քիչ ներքև կխոսենք։ Այստեղ միայն ավելացնենք, որ «հրեշտակների մոտ կգնա» ձևի փոխարեն եթե լիներ «հրեշտակների մոտ կգնար», այնուամենայնիվ պայմանականի ձև չէր լինի։ Ինչ վերաբերում է բայաձևերի մի շարքը մի այլ շարքի նշանակությամբ գործածելուն, սա լեզուների համար հայտնի երևույթ է։ Այսպիսի դեպքեր շատ կան և աշխարհաբարում, որոնց մասին խոսում է ինքը՝ Հ. Բարսեղյանը նույն աշխատության մեջ[4]։

Վերևում բերված 7—14 օրինակների մեջ տրված են պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնիի «ձևեր երկրորդական առումներով, բայց ոչ մի դեպքում» պայմանականի նշանակություն նրանց մեջ չի զգացվում։ Այս օրինակները միայն ենթադրության մասին են գաղափար տալիս։ «Կարդացվոր մարդ ես, ազգային տա-

---

1 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 242։

2 Նույն տեղում, էջ 243։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում, էջ 181—194, 205—207 և այլն։

ղեր շատ կգիտենաս...», այսինքն՝ ենթադրվում է, որ գիտես։ Բայց այս ձևերի այսպիսի գործածությունը շատ հաղվադեպ է և այդ դեպքերով չի կարելի այս ձևերի բովանդակությունը որոշել։ Ենթադրության բովանդակությունը այս ձևերում արտահայտվում է միայն այն ժամանակ, երբ նրանք գործածվում են երկրորդական առումով։ Կարելի է ասել, որ ենթադրական եղանակի ենթակատեգորիան աշխարհաբարում դեռևս գտնվում է իր զարգացման սաղմնային վիճակում։

Այսպիսով, պայմանական կամ ենթադրական ապառնիի ձևերը միայն սահմանական եղանակի ապառնիի ձևեր պիտի համարենք։ Իհարկե, երբեմն այս ձևերը գործածվում են և ուրիշ իմաստներով, բայց այդպիսի դեպքերը համեմատաբար շատ քիչ են և բացի դրանից ուրիշ շարքերի ձևերն էլ են գործածվում երկրորդական տարբեր իմաստներով։ Այսպիսի շեղումները չեն կարող ձևի հիմնական բովանդակությունը փոխել։

Եզրակացնենք՝ կգնամ, կսիրեմ... շարքի ձևերը եղանակով սահմանական են, ինչպես կարծում էին Մ. Աբեղյանից առաջ և երբեմն էլ Աբեղյանից հետո, իսկ ժամանակով՝ ապառնի են։ Հարց է ծագում՝ եթե այդ այդպես է, հապա ի՞նչ տարբերություն կա գնալու եմ (սահմանական եղանակի ապառնի) և կգնամ (էլի սահմանական եղանակի ապառնի) շարքերի միջև։ Այս հարցը կպարզվի, երբ ուսումնասիրենք կերպի քերականական կատեգորիան։

Հիմա անդրադառնանք կգնայի շարքի եղանակը պարզելու հարցին։

Հ. Բարսեղյանն իր աշխատության մեջ այս շարքի մասին գրում է. «Պայմանական եղանակի անցյալ ժամանակը ունի եղանակային նույն առումները, ինչ ապառնին. տարբերությունն այն է, որ նույնօրինակ գործողությունը այստեղ վերցվում է մի անցյալ ժամանակակետում։ Սակայն անցյալ ժամանակաձևերի եղանակային հիմնական հատկանիշը այլ է։

«Արտահայտելով անհրաժեշտ պայմանի բացակայության պատճառով տեղի չունեցած եղելություն կամ գործողություն, որի կատարումը այլևս անսպասելի է, անցյալի ձևերով խոսողը պայմանով կամ ենթադրաբար է հաստատում նրա իրականացման հնարավորությունը անցյալ ժամանակամիջոցում»[1]։

Այս դրույթը հաստատելու համար նա բերում է շատ օրինակներ։ Մենք այստեղ էլ օրինակները չենք փոխում, որպեսզի ընթերցողը չկարծի թե դիտմամբ աղավաղում ենք նրա դրույթը։ Այսպես՝

1 Հ. Բարսեղյան, Հիշյալ աշխատութ., էջ 246։

1. «Եվ ահա, գիշերային տարաժամ պահուն հայտնվում էին հարկապահանջները։ Սկսում էին դուռը զարկել։ Կկոտրեին, եթե իսկույն չբացանեինք»։ (ՐԱՖՖԻ)

2. «Փողոցում Ջաուշենկոյի գլուխը պտտվեց այնպես, որ անշուշտ կընկներ, եթե չհենվեր պատին»։ (ՇԻՐՎԱՆԶԱԴԵ)

3. «Եթե յուր փոխարեն լիներ մի ուրիշ վանահայր, անշուշտ այդ եղածն էլ կմատնվեր կորստյան»։ (ՄՈՒՐԱՅԱՆ)

4. «Հավատացած եմ, որ եթե նավակիս միջի ոչխարները վշխառուինը չլինեին, ինձ կամ մի գյուղացու պատկաներին, իսկույն նավակը շուռ կգար, կփշրվեր»։ (ՓԱՓԱԶՅԱՆ)

Ինչպես երևում է այս օրինակներից պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալի ապառնիի ձևերը իսկապես մասնակցում են պայմանական բարդ նախադասության մեջ և այս ձևերի հանդեպ անպատճառ տրված է մի ուրիշ բայ, որը սովորաբար ըղձական անցյալի ապառնիի ձևով է։ Բերված օրինակներում, դրանք են՝ չբացանեիմ, չհենվեր, լիներ, չլինեին, պատկաներին։

Եթե ուշադրությամբ դիտենք այս նախադասությունները, կըպարզվի, որ պայմանն արտահայտված է հենց այս վերջին ձևերով և ոչ այսպես կոչված «պայմանականի» ձևերով, իսկ «պայմանականով» արտահայտված է «ըղձականի» ձևերով արտահայտված գործողության արդյունքը։ Օրինակ՝ «կկոտրեին, եթե չբացեիմ» նշանակում է, որ չկոտրեցին (դուռը), բայց սա արդյունք է այն գործողության, որ նրանք դուռը բաց արին, իսկ «չբացանեինք» իր կողմից արտահայտում է պայման, որի կատարման հետևանքով դուռը չկոտրեցին։

Այսպես է և մյուս օրինակներում՝ «Անշուշտ կընկներ, եթե չհենվեր պատին» նշանակում է՝ նա չընկավ, որովհետև պատին հենվեց։ Այսինքն հենվելու գործողությամբ պայմանավորված է ընկնելու գործողությունը, կամ այն բանը, որ նա չընկավ այն բանի հետևանքն է, որ նա պատին հենվեց։

Բարդ պայմանական նախադասության վերլուծումից հաստատվում է, որ բոլոր դեպքերում այսպիսի հարաբերություն կա երկու գործողությունների միջև՝ մի գործողությունը պայման է, և սա դրված է սովորաբար միշտ ըղձական եղանակի անցյալի ապառնի ձևով, իսկ մյուս գործողությունը առաջին գործողության հետևանքն է և դրված է պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալ ապառնիի ձևով։

Այս հանգամանքից ելնելով՝ ավելի ճիշտ կլինի, եթե ընդունենք,

որ պայմանական եղանակը արդի հայերենում արտահայտվում է այսպես կոչված, ըղձական եղանակի անցյալի ապառնի ձևերով և այն պիտի կոչենք պայմանական եղանակի շարք: Իհարկե, պայմանականությունը հայոց լեզվի մեջ կարելի է արտահայտել նաև ուրիշ ձևերով կամ ուրիշ միջոցներով, բայց արդի հայերենում հիմնականում այսպես է արտահայտվում: Հետաքրքիր է, որ պայմանականության արտահայտության մեջ սովորաբար մասնակցում են միայն անցյալի ձևերը, բայց սա առանձին հարց է: Հիմա մեզ համար գլխավորն այն է, որ եթե նախադասության մեջ առանձին-առանձին կամ միասին գործածված լինեն ըղձական եղանակի անցյալի ապառնի կամ պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալի ապառնիի ձևեր, այդպիսի նախադասության մեջ անպատճառ արտահայտված կլինի պայմանականություն: Եթե նախադասության մեջ գործածված են միայն գրեր շարքի ձևերը, նրա հանդեպ ենթադրվում են նաև կգրեր շարքի ձևերը և գրեր շարքի ձևերով անպատճառ արտահայտվում է պայման, իսկ կգրեր շարքի ձևերով անպատճառ հետևանք, այսինքն գրեր շարքի ձևերը գործածվում են նախադասության երկրորդ մասի մեջ, իսկ կգրեր շարքի ձևերը՝ նախադասության գլխավոր մասի մեջ: Օրինակ՝

«Ջուր դառնայիր մորդ փորում, Հասո: Երանի չմտնեիր այս աշխարհը՝ որ լի է աղաներով: Երանի չտեսնեիր արևի փայլը՝ որ քեզ այրեց-խորովեց: Սև-ջրի ալիքները՝ որ քեզ տրորեց, շամբի օրորվելը՝ որ քեզ կախարդեց»: (Վ. ՓԱՓԱԶՅԱՆ)

Ինչպես տեսնում ենք, այս օրինակի մեջ դառնայիր շարքի բայաձևերի հետ չեն գործածվում կդառնայիր շարքի ձևերը, բայց դրանք ենթադրվում են՝ «ավելի լավ կլիներ...», եթե ջուր դառնայիր, չմտնեիր այս աշխարհը, չտեսնեիր արևի փայլը...

Վերցնենք մի այլ օրինակ.

«Լինեի չոբան՝ սարերում հեռու,
Գայիր անցնեիր վրանիս մոտով,
Իրար նայեինք անուշ կարոտով,
Քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու»[1]: (ՏԵՐՅԱՆ)

Ավելացնենք այս նախադասությունների վրա այն, ինչ ինքնըստինքյան ենթադրվում է՝ «Ինչ լավ կլիներ» և հասկանալի կդառնա, որ այս նախադասությունն էլ իսկական պայմանական նախադասություն է: Իհարկե, գրողը կարող էր արտահայտել մի որևէ ուրիշ

1 Օրինակները բերված են Հ. Բարսեղյանի գրքից:

միտք՝ «ես երջանիկ կղզայի ինձ», «կթռչեի երկնքում» և այլն, բայց գլխավորն այն է, որ այս օրինակների մեջ դառնայիր շարքի բայաձևերի հետ ենթադրվում են կդառնայիր շարքի բայաձևերը և այսպիսի ձևերի հարաբերությամբ անպատճառ արտահայտվում է պայմանականություն:

Եթե վերցնենք հակառակը, այսինքն՝ երբ նախադասության մեջ տրված լինեն միայն կգնայի շարքի ձևերը, այն ժամանակ էլ զգացվում է, որ նրա հանդեպ կարելի է ենթադրել ուրիշ գործողություն՝ գնայի շարքի ձևով: Օրինակ՝

«Բայց ես կուզեի ապրել, տեսնել մեր հաղթանակը, որ շատ մոտ է, համբուրել քո ձեռքը և հայր լինել այդ երեխայի համար» (Հ. ՄԿՐՏՉՅԱՆ)

Այս նախադասության մեջ կուզեի բայի հանդեպ կարելի է ենթադրել «եթե կարողանայի, եթե կարելի լիներ, եթե թույլ տային» և նման բայեր, բայց պիտի նկատենք, որ այստեղ այսպիսի պահանջը ավելի թույլ է: Սրանով է բացատրվում, որ պայմանականության հետևանքը կարելի է արտահայտել ոչ միայն կգնայի շարքի ձևերով, այլև անցյալի ուրիշ ձևերով, ինչպես նաև զանազան ուրիշ միջոցներով: Օրինակ.

«Գոնե անձրևն ու խավարը չլինեին, մարդ կարող էր տեսնել որտեղ է գտնվում»: (Գ. ՍԵՎՈՒՆՑ)

Շատ պարզ երևում է, որ չլինեին, եղելության պայմանն է տեսնել կարողանալու համար, այսինքն չլինեին պայման է արտահայտում, կարող էր՝ հետևանք:

Ուրիշ օրինակ. «Եթե նա աչքերը փակեր՝ կատարյալ դիակի տեղ կարելի էր ընդունել»: (Գ. ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆ)

Այս օրինակի մեջ նույնպես փակեր բայը պայման է արտահայտում, իսկ կարելի էր ընդունել՝ նրա հետևանք:

Պայմանականություն կարելի է արտահայտել. շարահյուսորեն ևս: Օրինակ. «Ես կարծում եմ, որ այս ուղղությամբ լուրջ աշխատանք կատարելու դեպքում մենք կարող կլինենք մի երեք-չորս տարուց հետո մանր ու միջակ անհատական գյուղացիական տնտեսություններից ունենալ հարյուր միլիոն փթից ոչ պակաս նոր ապրանքային հաց»:

Այս նախադասության մեջ կարող կլինեինք, իհարկե, արդեն հետևանք է արտահայտում և ոչ պայման: Այս նախադասության մեջ պայմանն արտահայտված է ամբողջ նախադասությամբ՝ «այս ուղղությամբ լուրջ աշխատանք կատարելու դեպքում», որի փոխարեն

կարող է ասել՝ «եթե աշխատեինք», «եթե աշխատանք կատարեինք»։

Գնայի և կգնայի շարքերի ձևերը, իհարկե, կարելի է լեզվի մեջ գործածել զանազան առումներով, զանազան բովանդակությամբ։ Բայց մեզ համար գլխավորն այն է, որ եթե առանձին վերցնենք այս ձևերը, ամենից առաջ կզգանք, որ կգնայի շարքի ձևերը պահանջում են պայմանի արտահայտություն, իսկ գնայի ձևերից հետո սպասում ենք նրանց հետևանքին։ Օրինակ՝ երբ առանձին արտահայտում ենք կգրեի իսկույն հասկացվում է, որ այս գործողությունը կատարելու համար պակասում է ինչ որ պայման՝ «կգրեի, եթե ասեիր, եթե գրիչ ունենայի...»։ Նույնպես, երբ առանձին վերցնում ենք (եթե, որ) գրեի զգում ենք, որ այս գործողությունը կատարելուց հետո որոշ հետևանք կստանանք։ Բայց պիտի ավելացնենք, որ կգրեի շարքի ձևերի մեջ պայմանի պահանջը ավելի պարզորոշ է, քան գրեի շարքի ձևերի մեջ հետևանքի սպասումը։

Ելնելով այս ձևերի բովանդակությունից և կիրառությունից պիտի եզրակացնենք, որ «ըղձական եղանակի անցյալի ապառնի» շարքի ձևերի հիմնական հատկությունը պիտի ընդունենք պայմանական եղանակի բովանդակությունը։ Այս պատճառով ավելի ճիշտ կլիներ, եթե այս բայաշարքի ձևերը կոչեինք ավելի պարզ՝ պայմանական (այսինքն պայմանականի շարք)։ Պայմանական կամ ենթադրական եղանակի անցյալի ապառնի շարքի բայաձևերի հիմնական հատկությունը պիտի ընդունենք հետևանքի արտահայտությունը։ Հետևաբար ավելի ճիշտ կլինի, եթե այն կոչենք հետևանքի շարք (հետևանքային եղանակ)։

Այս ձևերի երկրորդական առումների մասին չարժի խոսել, որովհետև երկրորդական առումով ամեն մի լեզվի մեջ գործածվում է համարյա ամեն մի քերականական ձև։

Ըղձական եղանակի ապառնիի դեմ նույնպես չենք առարկում, որովհետև այս շարքի ձևերը եղանակով իսկապես ըղձական են, իսկ ժամանակով՝ ապառնի։ Պետք է նկատենք միայն, որ ավելի ճիշտ կլինի այս շարքի ձևերը կոչել ըղձականի շարք կամ ըղձական։

Ինչ վերաբերում է այսպես կոչված հարկադրական եղանակի ապառնիին և անցյալ ապառնիին, մեր կարծիքով նույնպես (ինչպես և Ս. Լիսիցյանի և ուրիշների կարծիքով) սրանք բայական առանձին շարքեր չեն, որովհետև չեն արտահայտում որևէ նոր քերականական կատեգորիա։ Ուստի, այս շարքերի մասին էլ ասելիք չունենք։ Եթե այս ձևերը ավելի խորամուխ ուսումնասիրենք և կպարզվի, որ մենք սխալվում ենք, ինչ արած, ընդհանրապես գիտությունը սխալների պատմություն է, վիճաբանությունից ծնվում է ճշմարտությունը։

Այստեղ չենք խոսում նաև հրամայական եղանակի մասին, որովհետև այս եղանակի ձևերը ճիշտ են սահմանված հայ լեզվաբանական գրականության մեջ։ Մի քանի դիտողություններ կարող էինք անել հրամայականի մասին, բայց այս դիտողությունները չեն վերաբերում նրա հիմնական բովանդակությանը և չարժե երկարացնել։

Հայոց լեզվի քերականական եղանակի կատեգորիայի մասին մեր դիտողություններից հետո, մեր կարծիքով պարզվեց, որ հետևանքի եղանակը, որով հայտնվում է խոսողի կարծիքը, թե արտահայտված գործողությունը մի այլ գործողության հետևանք է, մինչև այժմ, ըստ իս, սխալմամբ ընդունված էր որպես պայմանական եղանակի ձև։ Եվ քանի որ այս ձևը միշտ մասնակցում է բարդ պայմանական նախադասության մեջ, ուստի և պատկերված էր սխալ բովանդակությամբ։ Ահա այս թյուրիմացության հետևանքով է, որ իսկական պայմանական եղանակի ձևը (գրեի, կարդայի) դիտվում էր որպես ըղձական եղանակի ձև։ Քանի որ կը մասնիկը թվում էր պայմանական եղանակ կազմող եղանակիչ, կգրեմ, կկարդամ շարքերի ձևերը ևս հասկացվում էին որպես «պայմանական եղանակի ապառնի ժամանակ»։ Այս սխալը կախված է նրանից, որ ճետևաճի ձևերը ընդունվում էին որպես պայմանական եղանակի ձևեր, որովհետև սրանք միշտ մասնակցում են բարդ պայմանական նախադասությունների կազմության մեջ և ունենում են կը մասնիկը։ Տրամաբանական է, որ, եթե կը եղանակիչով կազմված ձևը ընդունվում է որպես պայմանական եղանակի ձև, նույն «եղանակիչով» կազմված մյուս ձևն էլ պիտի ընդունեին որպես պայմանական եղանակի ձև։ Եվ չնայած նրան, որ կգրեմ, կկարդամ շարքի ձևերի մեջ հայոց լեզվի ուսումնասիրողները պայմանականի նշանակություն չէին գտնում, բայց և այնպես այս ձևերը ընդունում էին որպես «պայմանական եղանակի ապառնի» ձևեր։ Մեր կարծիքով, կգրեմ, կկարդամ շարքի ձևերը նույն սահմանական եղանակի ձևեր են։ Ըղձական եղանակը աշխարհաբարում արտահայտվում է մեկ բայաշարքով (գրեմ, կարդամ)։

Այսպիսով, աշխարհաբարում եղանակի քերականական կատեգորիան ունի հետևյալ ենթակատեգորիաները՝ 1. Սահմանական, 2. Պայմանական, 3. Հետևանքի, 4. Ըղձական և 5. Հրամայական։ Սրանցից պայմանական, հետևանքի և ըղձական ենթակատեգորիաները ունեն իրենց սեփական բայաշարքերը, որոնք բոլոր մյուս շարքերից տարբերվում են միայն այս ենթակատեգորիաների արտահայտությամբ։ Համարյա նույնը կարելի է ասել հրամայական եղա-

նակի մասին։ Սա էլ իր սեփական ձևերն ունի, բայց հրամայական եղանակի ենթակատեգորիան իր հերթին բաժանվում է երկու մասի՝ արդելական և բուն հրամայական, որոնք ունեն իրենց սեփական ձևերը։ Սահմանական եղանակը արտահայտվում է մի քանի շարքերի մեջ (ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի, անցյալի կատարյալ, վաղակատար (չտեսած), անցյալի վաղակատար (նախընթաց, նախորդ), հարակատար (ստատիկ ներկա) և անցյալի հարակատար (ստատիկ անցյալ)։

Եղանակով հետևանքային է նաև սահմանական եղանակի անցյալի ապառնին, որը ժամանակով անցյալ է, բայց քանի որ դեռ չենք խոսել սահմանական եղանակի ապառնի և պայմանական եղանակի ապառնի ձևերի մեջ եղած տարբերությունների մասին, դրա համար էլ առայժմ նրանց ավելի հարմար անուն չենք տալիս։ Նրանց մեջ եղած տարբերությունը կպարզվի կերպի քերականական կատեգորիայի վերլուծումից հետո, ուր և կխոսենք նրա անվան մասին։

7. ԿԵՐՊԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ

Հայոց լեզվաբանական գրականության մեջ կերպի քերականական կատեգորիան մնացած բոլոր կատեգորիաներից ավելի քիչ է ուսումնասիրված և, ճիշտն ասած, նրա հասկացությունն էլ բավական մութ է։ Քերականական կերպի մեջ հասկացվում են և խոնարհման և դերիվացիոն կատեգորիաների զանազան ձևերը։ Այսպես՝ «Հայոց լեզվի դասագրքի» մեջ կերպի կատեգորիան, որպես առանձին քերականական կատեգորիա, հիշված չէ, բայց դերիվացիոն կատեգորիաներից երկուսը՝ սեռի և պատճառի կատեգորիաներն անվանված են որպես կերպի ձևեր։ Այդ դասագրքի մեջ մտել են այնպիսի պարագրաֆներ՝ «§ 127. պատճառական (կերպի) բայերի խոնարհման մասին»[1] և «§ 128. կրավորական (կերպի) բայերի խոնարհման մասին»[2]։

Իհարկե, սրանից դժվար է իմանալ, թե ի՞նչ է քերականական կերպ։ Կարելի է միայն եզրակացնել, որ կերպ տերմինը այստեղ գործածված է շատ ընդարձակ նշանակությամբ՝ կերպ այստեղ հավասար է ձև հասկացությանը, այսինքն, կարծես կարելի է ասել՝ «այս բայը կրավորականի կերպ (ձև) ունի, իսկ այս բայը՝ պատճառականի կերպ (ձև), կամ կատարյալի, անկատարի...»։ Եվ իսկապես, այս իմաստով է գործածվում Ա. Ղարիբյանի մոտ կերպ տեր-

1 Ա. Ղարիբյան, Դասագիրք, 1959, էջ 233։

2 Նույն տեղում, էջ 240։

մինը։ Իր «Մեթոդիկայի» մեջ նա այս տերմինը գործածում է զանազան քերականական կատեգորիաներ արտահայտող ձևերի համար։ Այստեղ կա այսպիսի պարագրաֆ. «Ժդ. կերպածանցավոր բայերի խոնարհումը և ուսուցումը», որը սկսվում է այսպես՝ «Կերպածանցավոր բայերը երեք տեսակ են լինում՝ կրավորական, պատճառական և բազմապատկական»[1]։

Այսինքն՝ վ–ն կերպածանց է, ինչպես և ցն և –ատ, –ոտ, –կոտ ածանցները։ Բայց մենք գիտենք, որ «կրավորական սեռի բայը կազմվում է ներգործական սեռի բայից –վ ածանցի միջոցով»[2], այսինքն –վ ածանցը կազմում է կրավորական սեռ, նա կրավորական սեռի ածանցն է, իսկ հիմա պարզվում է, որ նույն –վ ածանցը կրավորական կերպի ածանցն է։ Դուրս է գալիս, որ կերպը և սեռը միևնույն բանն են։ Հետո էլ պարզվում է նաև, որ հայոց լեզվի մեջ կան նաև պարզ կերպի բայեր (այսինքն՝ բայեր, որոնք «կերպ» կազմող ածանցներ չունեն)։ Նա գրում է. «Բայի պատճառական կերպի խոնարհումը, սակայն, տարբերություն ունի պարզ կերպի կանոնավոր բայի խոնարհումից, օրինակի համար պետք է վերցնել նույն կերպի մի կանոնավոր բայ և ապա նույն բայը պատճառական կերպի և ղուգահեռ կերպով խոնարհել դրատախտակին»[3]։ Ինչպես տեսնում ենք, այս նախադասության մեջ կերպ տերմինը գործածվում է զանազան նշանակություններ։

Այսպիսով, Ա. Ղարիբյանի կարծիքը կերպի քերականական կատեգորիայի մասին անհասկանալի է։

Կերպի քերականական կատեգորիայի մասին բավական մանրամասնորեն է խոսում Հ. Բարսեղյանը, բայց այստեղ էլ համարյա նույն դրությունն է։ Նա էլ նախ խոսում է բայի դերիվացիոն կերպերի մասին, թեև նրանց մեջ չի մտցնում պատճառական և կրավորական կերպերը, այլ միայն «բազմապատկական կամ կրկնողական» և «շարունակական» կերպերի ձևերը։ Հ. Բարսեղյանը շատ ճիշտ է վարվում, որ դերիվացիոն կատեգորիաները անջատում է խոնարհման կատեգորիաներից, այսինքն «բազմապատկական կամ կրկնողական և շարունակական կերպերը» անջատում է կերպի խոնարհման կատեգորիայից։ Դերիվացիոն «կերպի կատեգորիաները» նա կոչում է «խոսքի մասային քերականական կատեգորիա», իսկ կեր-

---

1 Ա. Ղարիբյան, *Մեթոդիկա*, էջ 353։

2 Ա. Ղարիբյան, *Դասագիրք*, էջ 258։

3 Ա. Ղարիբյան, *Մեթոդիկա*, էջ 359 (ընդգծումները մերն են—Ի. Շ.)։

պի խոնարհման կատեգորիան՝ կերպի «ստորոգելիական կատեգորիա»[1]։

Այսպիսով՝ կերպ տերմինը հայ լեզվաբանական գրականության մեջ գործածված է զանազան նշանակությամբ։ Այդ տերմինը գործածվում է և շարունակականության և բազմապատկականության, և կրկնողականության և ինչ-որ «ստորոգելիական կերպի կատեգորիայի» համար։ Սա նշանակում է, որ կերպի շարունակականության, բազմապատկականության, կրկնողականության, սեռի և պատճառականության քերականական կատեգորիաները որպես առանձին կատեգորիաներ պատշաճ կերպով ուսումնասիրված չեն։ Այս է պատճառը, որ ձև և կերպ տերմինները համարյա նույն նշանակությամբ են գործածվում։ Իհարկե, որոշ դեպքերում կերպը և ձևը կարելի է գործածել միմյանց փոխարեն։ Բայց բառի ամենօրյա գործածությունն մի բան է, իսկ տերմին դարձնելը մի այլ բան։ Երբ որևէ բառ վերցվում է որպես տերմին, պետք է ամենայն ճշտությամբ որոշվեն նրա գործածության սահմանները։ Սակայն հայ լեզվաբանական գրականության մեջ կերպ տերմինի սահմանները չեն երևում։

Հենց այդ պատճառով է, որ Հ. Բարսեղյանը կերպի կատեգորիան բաժանել է երկուսի՝ կերպ որպես խոսքի մասային կատեգորիա և կերպ որպես ստորոգելիական կատեգորիա, իսկ իսկական կերպի կատեգորիան ժամանակի կատեգորիայից բաժանել չի հաջողվել։ Նա գրում է. «Տարբեր ժամանակներում (իմա՝ շարքերում։ Ի. Շ.) գործողության տարբեր վիճակների դրսևորումը, որը կատարվում է բայի եղանակային ձևերով, մենք պայմանականորեն անվանում ենք «գործողության կերպ» և այդ մասին խոսում ենք ժամանակի կատեգորիայի կապակցությամբ, քանի որ «գործողության կերպը» և ժամանակը, ինչպես ճիշտ նկատում է պրոֆ. Աղայանը «Հաճախ միասնաբար են հանդես գալիս և փոխադարձաբար լրացնում են իրար»։

«Այժմ խոսելու ենք բայի կերպի այն հասկացության մասին, որը առանձնահատուկ է բայի ոչ թե դիմորոշ ձևին, այլ բային ընդհանրապես, այսինքն բայի համար խոսքի մասային քերականական կատեգորիա է»[2]։

Եվ իսկապես, այս գրքի մեջ «ժամանակի և գործողության կերպը» իրարից բաժանված չեն։

---

1 Հ. Բարսեղյան, Հիշյալ աշխատութ., էջ 133։

2 Նույն տեղում, (ընդգծումը մերն է, անջատումը՝ հեղինակինը)։

Չի կարելի զարմանք չարտահայտել՝ մեկ կատեգորիան կարելի է երկուսի բաժանել, իսկ երկու կատեգորիան իրարից բաժանել չի կարելի։ Նման հակասությունը նրանից է, որ պատճառականը, կրավորականը կամ շարունակականը, բազմապատկականը և կրկնողականը ոչ թե կերպի կատեգորիայի ենթաձևեր, ենթակատեգորիաներ են, այլ ավելի շուտ, առանձին կատեգորիաներ և ավելի հեռու են իսկական կերպի կատեգորիաներից, քան այս վերջինս ժամանակի կատեգորիայից։

Մյուս կողմից՝ եթե չենք կարողանում երկու կամ ավելի կատեգորիաներ իրարից անջատել, նշանակում է, որ այդ կատեգորիանները խառնում ենք իրար, այսինքն նրանցից ոչ մեկի մասին ճիշտ գաղափար չունենք։ Իհարկե, քերականական կատեգորիաներն իրար հետ կապված են և հաճախ այնքան սերտորեն, որ քերականական մի ձևի մեջ են կուտակված, բայց քանի որ նրանք առանձին կատեգորիաներ են, ուստի յուրաքանչյուրի մասին առանձին գաղափար պիտի կազմենք։ Բայի ամեն մի դիմավոր ձևի մեջ, ինչպես արդեն ասացինք, միասին են հանդես գալիս դեմքի, ժամանակի, եղանակի, թվի, կերպի և երբեմն նաև ուրիշ կատեգորիաներ, բայց այս զանազան կատեգորիանները անջատում ենք իրարից և առանձին ուսումնասիրում։ Այստեղ էլ պետք է այդպես վարվել։

Ի՞նչ է քերականական կերպի կատեգորիան։ Կերպ բառը բազմիմաստ բառ է, նա նշանակում է՝ կերպարանք, երես, դեմք, տեսակ, ձև, տիպ։ Բայց այս նշանակություններից ոչ մեկը չի կարելի գործածել քերականական կերպի կատեգորիայի համար։ Դրա համար պետք է սահմանենք թե ի՞նչ երևույթ ենք ուզում նշել կերպ տերմինով։

Կերպի կատեգորիան հայոց լեզվի քերականության մեջ մտցրեց մեծ գիտնական Մ. Աբեղյանը և չնայած շատ-շատերի կողմից այն քննադատվեց, սակայն մինչև այժմ էլ նրա դրույթները համարյա անփոփոխ մնում են գործածության մեջ։

Մ. Աբեղյանը կերպի կատեգորիան սահմանելիս ելնում է իր նույն սկզբունքից, ինչ սկզբունքով սահմանում էր ժամանակի կատեգորիան, որի հետևանքով էլ նրա և նրա հաջորդների մոտ ժամանակի և կերպի կատեգորիաները խառնվում են իրար հետ։ Հարցը էլ ավելի է բարդանում նաև նրանով, որ կերպը սահմանելիս Մ. Աբեղյանի մոտ հանդես են գալիս ոչ թե մեկ, այլ զանազան սկզբունքներ։ Ի՞նչ սկզբունքներ են դրանք։ Դրանցից մեկն այն է, որ եթե բայի ձևը բաղադրյալ չէ, նա կերպ ունենալ չի կարող, ուստի

նա անկերպ բայ է։ Մյուս տեսակետը համընկնում է ժամանակի կատեգորիայի սահմանման հետ։

Այսպես՝ կերպի կատեգորիան սահմանում է նրանով, թե գործողությունը (բայը) կատարմա՞ն ընթացքում է, արդեն կատարվա՞ծ է, թե՞ պետք է կատարվի, այսինքն կատարելի է. կերպերն էլ սրանք են՝ կատարվող, կատարված և կատարելի։ Ինչպես տեսնում ենք, սրանք նույն քերականական ժամանակների երկրորդ անուններ են։ Կատարվող գործողությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կատարվում է, կատարման ընթացքի մեջ է խոսքի մոմենտում, որի գործողության ժամանակը համընկնում է խոսքի մոմենտին, այսինքն սա գաղափար է տալիս ներկա ժամանակի մասին։

Կատարելի գործողությունը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը կկատարվի խոսքի մոմենտից հետո, այսինքն սա գաղափար է տալիս ապառնի ժամանակի մասին։

Վերջապես, կատարված գործողությունը ցույց է տալիս, որ գործողությունը արդեն կատարվել է խոսքի մոմենտից առաջ, այսինքն սա գաղափար է տալիս անցյալ ժամանակի մասին։ Այսպիսով, քերականական կերպի և ժամանակի կատեգորիաները խառնվում են իրար հետ։ Պետք է նկատենք, որ այսպես սահմանված կերպի կատեգորիայի մեջ ավելի պարզ է զգացվում ժամանակի կատեգորիան, քան ժամանակի կատեգորիան սահմանելիս։

Հարց է ծագում՝ եթե կերպի կատեգորիան ցույց է տալիս գործողության կատարվող, կատարելի կամ կատարված վիճակը, մի՞թե բայի պարզ ձևերի մեջ չեն ըմբռնվում այսպիսի վիճակներ։ Իսկ եթե չեն ըմբռնվում՝ ինչո՞ւ են գրեցի, գրեցիր... շարքի ձևերը կոչվում «անցյալ կատարյալ»։ «Կատարյալ» չի նշանակո՞ւմ արդյոք, որ գործողությունն արդեն կատարված է, և մի՞թե կատարված գործողությունը չի՞ արտահայտվում «անցյալ կատարյալ» շարքի ձևերով։ Կամ՝ մի՞թե վիճելի է, որ կգրեմ, գրեմ շարքերի ձևերը ցույց են տալիս կատարելի գործողություն, իսկ եթե սա վիճելի չէ, ինչո՞ւ սրանք չեն մտցվում «կատարելի կերպ» ցույց տվող ձևերի մեջ։

Քանի որ քերականական ժամանակն արտահայտվում է դիմավոր բայի ձևերով, չի կարելի, որ նրանցից որևէ մեկը չարտահայտի կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն, սակայն բայի պարզ ձևերը կերպի կատեգորիայից դուրս են գցվում։ Ասում են «...Դերբայը ցույց է տալիս կերպը, իսկ բայը ժամանակը»[1]։ Այս

1 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 345։ Եվ կերպի կատեգորիայի մասին տես նույն աշխատության մեջ էջեր 308—309, նաև նույնի Աշխարհաբարի շարահյուսությունը, Վաղարշապատ, 1912, էջ 224—269։

դրույթը մինչև այսօր իշխում է հայ լեզվաբանական գրականության մեջ, և չնայած, որ երբեմն որոշ ուղղումներ են մտցվում նրանում, բայց այդ ուղղումները չեն վերաբերում երևույթի էական կողմերին։ Մ. Աբեղյանի դրույթը հիմնականում անփոփոխ է մնում։ Այս հաստատելու համար բավական է այստեղ հիշենք վերջին տարիներին հրատարակված աշխատությունները, որոնցից այս հարցը մանրամասնորեն մշակված է Հ. Բարսեղյանի հիշյալ աշխատության մեջ։ Ահա թե ինչ է ասում Հ. Բարսեղյանը կերպի կատեգորիայի էության մասին. «...կերպի ստորոգելիական կատեգորիան կապված է բայի միայն եղանակային ձևերի հետ և արտահայտում է գործողության վիճակի կամ ընթացքի հարաբերումը որևէ ժամանակակետի»[1]։ Եվ մի քիչ ներքև՝ «Պարզ ժամանակները (իմա շարքերը։ Ի. Շ.), որոնք դերբայներով չեն կազմվում և հետևաբար գործողության վիճակի վրա ուշադրություն չեն դարձնում, անկերպ են»[2]։

Ի՞նչ է նշանակում այս սահմանումը։ Նշանակում է, որ գործողության վիճակը արտահայտվում է միայն դերբայով և հետևաբար պարզ բայերը չեն կարող կերպ ունենալ։ Իսկ «գործողության վիճակի կամ ընթացքի հարաբերումը որևէ ժամանակակետի» նշանակում է, որ դերբայով արտահայտված գործողությունը հարաբերվում է օժանդակ բայի հետ և այս հարաբերությունը գաղափար է տալիս կերպի կատեգորիայի մասին։ Բայց սա ճիշտ չէ, որովհետև գործողության հարաբերումը խոսքի մոմենտի հետ գաղափար է տալիս քերականական ժամանակի մասին, իսկ գործողությունների հարաբերում միմյանց հետ՝ հաջորդականության կատեգորիայի մասին։ Այսպիսով, երբ գործողությունը վերցնում ենք ներկայի (խոսքի մոմենտի) համեմատությամբ գաղափար է ստացվում քերականական ժամանակի մասին, իսկ երբ այդ գործողությունը վերցվում է անցյալի համեմատությամբ, նշանակում է, որ մենք այդ գործողությունը վերցրել ենք ոչ թե խոսքի մոմենտի, այլ մի որևէ գործողության կամ եղելության համեմատությամբ, որովհետև գաղափար քերականական անցյալ ժամանակի մասին ստացվում է գործողության և խոսքի մոմենտի համեմատման շնորհիվ։ Հենց այս պատճառով է, որ արդի հայերեն քերականական գրականության մեջ ժամանակը որոշելիս միշտ այնպես է ստացվում, իբր թե մի քերականական շարքը արտահայտում է որևէ քերականական ժամանակ, իսկ նրա երկակի ձևը այս առաջին ձևի անցյալ ժամանակ, այսինքն

---

1 Հ. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 151։

2 Նույն տեղում։

նրա նախորդ ժամանակը, որը, իհարկե, գործողությունների հաջորդականություն է ցույց տալիս և ոչ ժամանակ։ Օրինակ, ըստ այժմյան քերականությունների, գրելու եմ արտահայտում է ապառնի ժամանակ, իսկ գրելու էի՝ անցյալի ապառնի, այսինքն ապառնի որևէ անցյալ ժամանակի նկատմամբ, որ նշանակում է, թե գրելու էի հաջորդում է որևէ գործողության, բայց նախորդում է խոսքի մոմենտին։ Նույնպես՝ գրել է արտահայտում է վաղակատար ժամանակ, իսկ գրել էի անցյալի վաղակատար ժամանակ, որտեղ հաջորդականության ավելի բարդ ձևեր ունենք։ Այսպես՝ վաղակատար նշանակում է, որ գործողությունը կատարվել է «վաղ», այսինքն որևէ անցյալից առաջ, իսկ անցյալի վաղակատար տերմինը ինքնըստինքյան ենթադրում է, որ այս գործողությունը կատարվել է էլ ավելի «վաղ», քան ինքը՝ վաղակատարը։ Եվ այսպես շարունակ։

Այսպիսով, քանի որ «գործողության վիճակի կամ ընթացքի հարաբերումը որևէ ժամանակակետի» նշանակում է, որ դերբայով արտահայտված գործողությունը հարաբերվում է օժանդակ բայի հետ, սա մի դեպքում (երբ օժանդակ բայը ներկայի ձևով է) գաղափար է տալիս քերականական ժամանակի մասին, որովհետև այս դեպքում գործողությունը համեմատվում է խոսքի մոմենտի հետ, իսկ մյուս դեպքում (երբ օժանդակ բայը անցյալի ձևով է)՝ քերականական հաջորդականության կատեգորիայի մասին։

Դուրս է գալիս, որ այսպիսի համեմատությունը կերպի քերականական կատեգորիայի մասին գաղափար տալ չի կարող։

Այստեղ դժվար չէ նկատել, որ քերականական ժամանակի և կերպի կատեգորիաներին մոտենում են միևնույն տեսակետից։ Այսպես՝ քերականական ժամանակը որոշելիս, բաղադրյալ շարքերում վերցվում է դերբայի հարաբերում ժամանակակետի (օժանդակ բայի) հետ, ինչպես նաև քերականական կերպը որոշելիս նույն դերբայի և օժանդակ բայի հարաբերում են տեսնում։ Ստացվում է, որ քերականական կերպի և ժամանակի կատեգորիաները գաղափար են տալիս միևնույն երևույթի մասին, այսինքն, նրանց միջև տարբերություն չկա։ Այս նշանակում է, որ այս կատեգորիաները խառնում են միմյանց հետ։ Այստեղ մոռացված է և այն բանը, որ դերբայ+օժանդակ բայ միասին մի քերականական ձև է կազմում։

Կերպի կատեգորիայի սահմանման այս տեսակետը շատ ուրիշ թերություններ էլ ունի։ Նրանցից մի քանիսի մասին էլ կխոսենք։

Ասում են, որ քերականական կերպի կատեգորիան հայոց լեզվի մեջ արտահայտվում է դերբայով ու օժանդակ բայով և ցույց է տալիս գործողության վիճակի կամ ընթացքի հարաբերումը որևէ ժա-

մանակակետի հետ։ Այսպես՝ «Արտահայտելով գործողության տարբեր վիճակները՝ դերբայները, ինչպես տեսանք, օժանդակ բայի բաղադրմամբ այլևայլ ժամանակներ էին դրսևորում։

«Անցյալ ժամանակակետի նկատմամբ վերցված բոլոր գործողությունները անցյալ ժամանակ են ունենում, իսկ ապառնի ժամանակակետի նկատմամբ վերցվածները՝ ապառնի, բայց այդ նույն ժամանակակետերի համեմատությամբ առնված գործողությունները, անկախ նրանց կատարման ժամանակի նույնությունից, տարբեր վիճակներ են ունենում։

«Գործողության կերպ ասելով այստեղ հասկացվում է գործողության այն վիճակը, որը վերցվում է տվյալ ժամանակակետերի համեմատությամբ»[1]։

Եվ մի քիչ ներքև արդեն տալիս է կերպի կատեգորիայի վերջնական սահմանումը՝ «...կերպի ստորոգելիական կատեգորիան կապված է բայի միայն եղանակային ձևերի հետ և արտահայտում է գործողության վիճակի կամ ընթացքի հարաբերում որևէ ժամանակակետի»[2]։

Ինչպես տեսնում ենք, այստեղից չի երևում, թե վերջիվերջո ի՞նչ է կերպի կատեգորիան, ինչի՞ մասին է գաղափար տալիս այս հարաբերումը՝ ենթակայի վիճակի՞, թե՞ գործողության մասին։ Բայց սրանց մասին առանց որևէ հարաբերության էլ գաղափար են տալիս դերբայները («Արտահայտելով գործողության տարբեր վիճակները՝ դերբայները...»)։ Մյուս կողմից, եթե այս հարաբերությունը գաղափար է տալիս գործողության վիճակի մասին, այն ժամանակ ի՞նչ գործ ունի կերպ տերմինը, ավելի լավ չէր լինի եթե այս «կատեգորիան» անվաններինք «վիճակի կամ ընթացքի» կատեգորիա։

Բացի դրանից՝ եթե դերբայներն արտահայտում են գործողության վիճակներ, ապա ի՞նչ են նշանակում «ապառնի», «անկատար», «վաղակատար» և «հարակատար» տերմինները, երբ նրանք գործածված են որպես դերբայների անուններ՝ ժամանա՞կ թե կե՞րպ կամ վիճակ։ Մեզ կարող են պատասխանել՝ բայաշարքերը անվանում ենք հետևյալ սկզբունքով. «...Տրվում է ժամանակակետի անունը, որի նկատմամբ առնվում է գործողությունը, և դերբայի անունը, որով անվանվում է գործողության վիճակը։ Օրինակ՝ անցյալի անկատար, անցյալի վաղակատար, ներկայի անկատար և այլն։ Բայց քանի որ ներկա ժամանակակետը հիմնական է, և նրա համեմատությամբ են որոշվում մնացած ժամանակները, ուստի նրա

1 Հ. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 149 (ընդգծումը մերն է—Ի. Շ.)։

2 Նույն տեղում։

նկատմամբ վերցված գործողությունների ժամանակը անվանվում են միայն դերբայով (ժամանակակետը ինքնին հասկանալի է), բացի ներկա ժամանակից»[1]։

Թե որքան ճիշտ է բայաշարքերի անվանման այս սկզբունքը, մենք արդեն խոսել ենք և հետո էլի ստիպված կլինենք խոսել։ Այստեղ նկատենք միայն, որ եթե բայաշարքի անունը միաժամանակ ցույց է տալիս և գործողության ժամանակ և գործողության կերպ, սա արդեն նշանակում է, որ հայոց լեզվի մեջ ունենում ենք ոչ թե միայն կատարվող, կատարված և կատարելի կերպեր, այլև անկատար, ապառնի (հիշենք անցյալի ապառնի, որը ըստ այս սկզբունքի ցույց է տալիս անցյալ ժամանակ և ապառնի [կատարելի=ապառնին] կերպ), վաղակատար և հարակատար կերպեր։ Եթե չընդունենք կերպերի մասին վերոհիշյալ դատողությունը, տրամաբանական սխալ կկատարենք, որովհետև ասում ենք, որ բայաշարքերն անվանելիս վերցնում ենք դերբայի անունը և օժանդակ բայով արտահայտված ժամանակը, իսկ դերբայներն արտահայտում են բայի վիճակը։

Կերպի սահմանման սկզբունքն ունի մի այլ թերություն ևս։ Դա այն է, որ առաջուց վերցված սկզբունքը մինչև վերջ չի պահվում, փոխվում է. այսպես՝ հայերենի քերականությունների մեջ անջատվում է չորս քերականական կերպ՝ կատարվող, կատարված, կատարելի և պարզ (կամ երբեմն այս վերջինիս անկերպ են համարում)։ Եթե մոտիկից դիտենք այս կլասիֆիկացիան, կպարզվի, որ կատարվող և կատարված տերմինների մեջ նկատի է առնված՝ գործողությունը անկատար է թե կատարյալ, իսկ կատարելի տերմինը ցույց է տալիս, որ գործողության կատարումը կսկսվի խոսքի մոմենտից հետո և անտեսում է այն հանգամանքը, թե այդ գործողության կատարումը կկատարվի՞, կվերջացվի՞, կավարտվի՞, թե ոչ։ Այսինքն կատարվող և կատարված տերմինները ցույց են տալիս գործողության կատարման ավարտվածություն (կատարվածություն), իսկ կատարելի տերմինը՝ գործողության ժամանակ, այսինքն կերպի սահմանման սկզբունքն արդեն փոխվում է և սրանից է, որ կերպի և ժամանակի կատեգորիաները ոչ ոքի չի հաջողվել իրարից անջատել։ Կերպի և ժամանակի կատեգորիաները շփոթվում են իրար հետ։

Կերպի քերականական կատեգորիան սահմանելիս մյուս անհետևողականությունն այն է, որ կատարվող, կատարված և կատարելի կերպերը որոշելիս, այսպես թե այնպես կանխատեսվում է բայաձևվերի քերականական բովանդակությունը և հենվելով դրա վրա՝

---

1 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 153։

որոշվում կատարման մե՞ջ է գտնվում գործողությունը, արդեն կատարվե՞լ է, թե՞ հետո պիտի սկսվի նրա կատարումը։ Իսկ պարզ կերպը որոշելիս բայածևի բովանդակությունը չի կանխատեսվում, թեպետ սա էլ է ցույց տալիս՝ արդեն կատարվե՞լ է գործողություն, թե՞ հետո պիտի կատարվի։ Այս պատճառով է, որ ստացվում է այնպիսի անտրամաբանություն, որ «անցյալ կատարյալ» շարքի ձևերը մնում են կատարված կերպի ձևերից դուրս և դասվում «պարզ կերպի» ձևերի մեջ։ Ճիշտ չէ, երբ ձևը անվանվում է անցյալ կատարյալ և իսկապես ցույց է տալիս կատարյալ (կատարված) գործողություն և կատարված կերպի մեջ չի դասվում։ Չի կարելի կասկածել, որ «անցյալ կատարյալ» տերմինի մեջ գործողությունն է կատարյալ և ոչ ժամանակը, որովհետև կատարված կարող է լինել գործողությունը և ոչ ժամանակը։ Ժամանակը չի կատարվում, չի վերջանում։

Այսպիսով, հայ լեզվաբանական գրականության մեջ կերպի քերականական կատեգորիայի ոստմոնքը դեռևս այնպես չի մշակված, որ կարողանա ճիշտ գաղափար տալ այդ կատեգորիայի մասին։

Այս հարցը ճշտելու ամենամեծ արգելքը հանդիսանում է այն, որ վերջնականապես որոշված չէ, թե լեզվական ո՞ր երևույթը պետք է կոչել կերպ։ Ոչ պակաս արգելք է նաև այն, որ առանձին վերցված որևէ բայի բաղադրյալ ձևը ընդունվում է ոչ թե մի ամբողջական ձև, այլ որպես բաղկացուցիչ մասերի գումար։ Ճիշտ է, Մ. Աբեղյանի այս դրույթը երբեմն քննադատում են, բայց իրենք՝ քննադատողներն էլ չեն կարողանում այս դրույթի ազդեցությունից խուսափել։ Օրինակ, Հ. Բարսեղյանը քննադատելով այս դրույթը՝ գրում է.

«Ուստի, եթե դերբայներով արտահայտվում են· գործողության տարբեր վիճակներ, իսկ օժանդակ բայով՝ տարբեր ժամանակակետեր, և բայի ժամանակ ասելով մենք հասկանում ենք այդ տարբեր գործողությունների հարաբերումը տարբեր ժամանակակետերին, հետևաբար ոչ դերբայները և ոչ էլ օժանդակ բայը, առանձին վերցրած, գործողության կատարման ժամանակ չեն արտահայտում»[1]։

Չնայած սրան, ինչպես արդեն տեսանք, Հ. Բարսեղյանն էլ կարծում է, որ կերպի կատեգորիա արտահայտելու համար գործողության վիճակը (որ արտահայտվում է դերբայով) հարաբերում է որևէ ժամանակակետի (որ արտահայտվում է օժանդակ բայով)[2]։ Բացի դրանից՝ բայաշարքերի անվանումը, ինչպես տեսանք, ենթադրում է ամբողջական ձևերը մասնատված։

Ըստ մեր կարողության չանանք որոշել կերպի քերականական

1 Հ. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 146։

2 Նույն տեղում։

կատեգորիան։ Ընդհանրապես ընդունված է, որ բայի կերպը ցույց է տալիս գործողությունը կատարվա՞ծ է, թե՞ անկատար։ Այսպես է, օրինակ ռուսերենում և վրացերենում։ Մեր կարծիքով ոչինչ չի խանգարում, որ հայերենում էլ այսպես ընդունենք։ Ինչպես տեսանք, կերպի կատեգորիան հայերենում հիմնականում սահմանված է այսպես՝ կատարվող կերպը նույն անկատարն է, իսկ կատարվածը՝ կատարյալ։ Կերպի մասին ճիշտ գաղափար կազմելուն խանգարում է միայն կատարելի և պարզ ենթակատեգորիաները կերպի կատեգորիայի մեջ մացնելը։ Քանի որ գործողության ավարտվածությունը և անավարտվածությունը արտահայտվում են նաև հայոց լեզվի համարյա բոլոր բայաձևերով, իսկ այդպիսի վերացականությունը զանազան լեզուների քերականությունների մեջ ճանաչված է որպես կերպի կատեգորիա, մենք էլ կարող ենք պայմանավորվել, որ հայերենում նույնպես դա ընդունվի որպես կերպի կատեգորիա։

Քերականական կերպի կատեգորիան սովորաբար շփոթում են ժամանակի կատեգորիայի հետ։ Այս պատճառով քերականական կերպի կատեգորիայի էության մասին հիմա էլ հանդիպում ենք զանազան կարծիքների, նույնիսկ այնպես լավ ուսումնասիրված լեզվի քերականությունների մեջ, որպիսին է ռուսերեն լեզուն։ Իր աշխատության մեջ Վ. Վինոգրադովը առանձին պարագրաֆ է նվիրում այս հարցին։ Այդ պարագրաֆի վերնագիրն արդեն ցույց է տալիս այս կարծիքների տարաձայնությունները. «Современные грамматические разногласия в определении сущности двух основных видов русского языка—совершенного и несовершенного»[1].

Ինչպես ասացինք, կերպի կատեգորիան հաճախ են շփոթում ժամանակի կատեգորիայի հետ։ Սրա մասին նույն հեղինակը գրում է հետևյալը. «Однако Греч внес в учение о видах много лишнего, искусственного и схоластического, плохо отличая виды от времени, включая в понятие вида значение времени»[2], *և մի քիչ ներքև* «Понятие вида у Греча откровенно и грубо смешивается с категорией грамматического времени»[3].

Բայց ոչ միայն ժամանակի, այլև գործողության բազմապատկականության և վայրկենականության=շարունակականության կատեգորիաները նույնպես շփոթում են կերպի կատեգորիայի հետ, ինչպես ցույց է տալիս նույն հեղինակը. «В научной грамматике

1 В. В. Виноградов, Русский язык, Учпедгиз, М—Л, 1947, стр. 493-498.

2 *Նույն տեղում, էջ 481։*

3 *Նույն տեղում։*

все более и более созревало убеждение, что выделение многократного и однократного «видов» несоотносительно с делением глаголов на основные виды—несовершенный и совершенный»[1].

Ջնայած նրան, որ ռուսերեն լեզվի բայով լավ է արտահայտվում նաև գործողության բազմապատկականությունը (многократность), *կերպի կատեգորիայի հասկացողությունը կապվեց միայն գործողության կատարելության-անկատարելության հետ, որովհետև անկատարելությունը* (несовершенность) *ինքնըստինքյան ենթադրում է, որ գործողությունը անավարտ, կատարվող, գործողության ընթացքի մեջ եղող է, որ գործողության սահմանը չի երևում, գործողության արդյունքը դեռևս չի նկատվում, որ գործողությունը շարունակվում է կամ շարունակվում էր, իսկ կատարելությունը, ընդհակառակն, նշանակում է, որ գործողությունն արդեն ավարտված, կատարված է, գործողության ընթացքը վերջացել է, նրա սահմաններն արդեն որոշված են և նրա արդյունքը արդեն հայտնի է։ Ելնելով այս տեսակետից «Սովետական մեծ էնցիկլոպեդիայի» մեջ կերպի քերականական կատեգորիան այսպես է սահմանված՝* «Лексико-грамматическая категория, передающая различные оттенки процесса, обозначаемого глаголом, главным образом его предельность, достижение цели, результативность — совершенный вид... — и отсутствие процесса, длительность—несовершенный вид... Вид имеется в системе глагола разных языков и тесно связан с категорией времени. В русском языке вид—один из характерных категорий глагола. Как правило, глагол одного вида имеет соотносительный глагол другого вида»[2].

Այսպիսով, կերպի քերականական կատեգորիան ռուսաց լեզվի քերականության մեջ նույնպես շփոթվում էր ուրիշ կատեգորիաների հետ, բայց հետո արդեն համաձայնեցին, որ կերպի կատեգորիան արտահայտում է գործողության ավարտվածության կամ անավարտվածության։ Սրա մասին իր աշխատության մեջ մանրամասն խոսում է Վ. Վինոգրադովը[3]։

Կերպի կատեգորիան, ըստ Ա. Շանիձեի[4] *և ուրիշների, գործողության ավարտվածությունն է արտահայտում նաև վրացերենի մեջ։*

1 В. В. Виноградов, Русский язык, стр. 491.

2 БСЭ, *2-րդ հրատ., հատ. 8, էջ 19։*

3 В. В. Виноградов, Русский язык, стр. 477—539.

4 Ա. Շանիձե, *Վրացերենի քերականության հիմունքները, էջ 269։*

Մեր կարծիքով, եթե մենք էլ ընդունենք, որ հայոց լեզվի մեջ նույնպես կերպի քերականական կատեգորիան արտահայտում է գործողության ավարտվածություն-անավարտվածությունը, այն ժամանակ արդեն հեշտ կլինի նրա ըմբռնումը ինչպես առանձին, անկախ կատեգորիա և չի շփոթվի ուրիշ կատեգորիաների հետ։ Կերպի կատեգորիայի սահմանումը, իհարկե, չի նշանակում, որ այն պետք է անջատենք (պոկենք) քերականական կատեգորիաների ամբողջ սիստեմից։ Ելնելով դիալեկտիկական մեթոդի այդ պահանջից, միմյանց հետ կապված երևույթները միմյանցից անկախ պետք է ուսումնասիրենք, որ ավելի լավ հասկանանք նրանց մեջ եղած կապերը և հարաբերությունները։ Հակառակ դեպքում, բայի ձևերի ուսումնասիրության միջոցին կարելի է բայի զանազան կատեգորիաները միմյանց հետ շփոթել, որովհետև բայի ամեն մի ձևի մեջ միաժամանակ արտահայտվում է մի քանի քերականական կատեգորիա։

Եթե ելնենք այն սկզբունքից, որ հայոց լեզվի մեջ կերպի քերականական կատեգորիան ցույց է տալիս ավարտված կամ անավարտ գործողություն, կպարզվի, որ արդի հայերենի համարյա ամեն մի բայաշարք արտահայտում է կամ կատարված կերպ, կամ անկատար կերպ։ Կերպերի այլ տեսակներ հայոց լեզվի մեջ գոյություն չունեն, եթե կերպի կատեգորիայի հետ չշփոթենք ժամանակի, պատճառականության, սեռի, բազմապատկականության կամ որևէ այլ քերականական կատեգորիա։

Հայ քերականական գրականության մեջ միայն Ս. Զարբհեյանն (Զարբաչին) է մոտեցել այն կարծիքին, թե կերպի քերականական կատեգորիան արտահայտում է հայոց լեզվի բայի բոլոր քերականական ձևերով։ Նա գրում է. «[*Հայոց լեզվի մեջ*] Каждая временная форма, в том числе и «простая», наделена определенным видовым содержанием и без него немыслима»[1].

Ընկ. Զարբհեյանը միանգամայն ճիշտ է քննադատում հայոց լեզվի նախորդ ուսումնասիրողներին։ Նա գրում է. «...Языковые факты показывают, что в армянском языке носителем видового значения является **личная временная форма глагола**, а не причастие; отсюда «простой вид», введенный в армянскую грамматику М. Абегяном и сохраняющийся во всех последующих грамматических трудах, в том числе и в труде О. Х. Барсегяна «Теория и спряжение глагола современного армянского языка» (1953), где автор на стр. 151 пишет:

[1] **С. Зарбаджи**, К вопросу о грамматической категории вида в современном армянском языке, *ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1956, հ. 7, էջ 82։*

«Պարզ ժամանակները, որոնք դերբայներով չեն կազմվում և հետևաբար գործողության վիճակի վրա ուշադրություն չեն դարձնում, անկերպ են»։ И еще *«Պարզ ժամանակների բայերը համարվում են անկերպ կամ պարզ կերպի»։* Здесь О. Х. Барсегян фактически повторяет взгляды М. Абегяна на «простой вид», что не соответствует языковым фактам армянского языка...»[1].

Ջնայած սրան, ինքը՝ ընկ. Ջարբեջյանն էլ չի կարողացել կերպի կատեգորիան անջատել ժամանակի կատեգորիայից։ Նա գրում է. «Вид и время неотделимы и немыслимы друг без друга. Во временных формах армянского глагола существует такая тесная связь между понятием времени и вида, что они не поддаются разграничению.

Иными словами, армянский глагол не может выделить способ прохождения действия («вид») в самостоятельное понятие, свободное от понятия времени, как это можно сделать в русском языке, где эти два понятия отделимы друг от друга, ибо понятия вида и времени в русском языке являются ярко выраженными самостоятельными грамматическими категориями с четкими морфологическими признаками»[2].

Իր դրույթը հաստատելու համար նա շարունակում է. «...В русских глагольных формах прошедшего времени «он шел» и «он пришел» мы можем оставить на заднем плане понятие времени, которое для обеих форм является одинаковым (прошедшим), и сосредоточить все внимание на понятии вида; в таком случае можно сказать, что первый глагол обозначает несовершенное действие (он шел), а второй—совершенное действие (он пришел).

Нам в этом помогает при одинаковой временной примете (окончание-л) парная видовая система русского глагола.

Можно также абстрагировать понятие времени от понятия вида.

В глагольных формах «я беру» и «я брал» мы можем оставить в стороне несовершенный вид, как одинаковый для обеих форм, и только видеть временную разницу. Первый глагол стоит в настоящем времени, второй—в прошедшем. Нам в этом помогают при одинаковой видовой форме разные

---

1 **С. Зарбаджи**, Op. cit, стр. 80.

2 *Նույն տեղում, էջ 82։*

приметы времени: окончание-у (настоящ. время) и окончание-л (прошедшее время).

Если в русском языке понятия вида и времени переплетаются и в случае надобности могут быть отделены друг от друга, то в армянском языке понятия времени и вида органически взаимосвязаны, представляют одно неразрывное целое, которое мы не в состоянии разъединить, так как **видовое значение не имеет своего формального показателя** и, тесно переплетаясь с временным, находит свое формальное выражение через **видо-временную категорию»**.

Ինչպես տեսնում ենք, Ս. Զարբեջյանի կարծիքով նույնպես կերպի կատեգորիան հայոց լեզվի մեջ չի կարելի աբստրահել (վերացարկել) և անջատել ժամանակի կատեգորիայից, որովհետև հայերենում չունենք կերպի և ժամանակի ձևաբանական նշաններ, իսկ ռուսերենում այդպիսիք կան։ Բայց եթե հայերենում էլ վերցնենք նույնպիսի օրինակներ, որպիսիք հեղինակը վերցնում է ռուսերենում, կնկատենք, որ այստեղ նույնպես իրար զուգադրվում են կատարյալ և անկատար կերպերի ձևերը։ Այսպես՝ գնում էր և գնաց, գրում էր և գրեց, կարդում էր և կարդաց:

Այս օրինակները շատ պարզ ցույց են տալիս, որ դրանք ժամանակով նույնն են, ինչպես «он шел» և «он пришел» ձևերը, բայց իրարից զանազանվում են նրանով, որ սրանցից առաջինները (գնում էր, գրում էր, կարդում էր) արտահայտում են խոսքի մոմենտից առաջ կատարված աեավարտ գործողություն, այսինքն անցյալ ժամանակ, իսկ երկրորդները (գնաց, գրեց, կարդաց)՝ նույնպես խոսքի մոմենտից առաջ (անցյալ ժամանակում) ավարտված գործողություն։ Բերված օրինակները միայն կերպով են զանազանվում իրարից։ Մյուս կատեգորիաներով (ժամանակի, եղանակի, դեմքի, թվի, ակտիվ կատեգորիաներով) նրանց մեջ ոչ մի տարբերություն չկա։ Եթե նրանք չտարբերվեին կերպի կատեգորիայով, այս երկու շարքերից մեկը չէր լինի հայոց լեզվի մեջ։ Դուրս է գալիս, որ ժողովրդը խոսակցական և գրական լեզվի մեջ շատ լավ է ըմբռնում այս շարքերի միջև եղած տարբերությունը, այսինքն լեզվի մեջ «աբստրահված էֆ գործողության կատարվածություն, բայց և այնպես, քերականագետները պնդում են, որ այսպիսի աբստրահում չի կարելի հայոց լեզվի մեջ։ Ինչո՞վ է բացատրվում այս հակասությունը։ Նրանով, որ չգիտես ինչու, հայոց լեզվի ուսումնասիրողները քերականական յուրաքանչյուր ձևի մեջ աշխատում են քերականական

[1] С. Зарбаджи, Op. cit, стр. 80.

ամեն մի կատեգորիայի համար անպատճառ գտնել որևէ ձևաբանական նշան։ Ինչպես տեսանք, Ս. Զարբեջյանի նախորդները կեր-ևի համար այդ նշանը փնտրում էին դերբայների մեջ, որ միանգամայն ճիշտ կերպով քննադատել է Ս. Զարբեջյանը, բայց, երբ ինքն էլ չի գտել այդպիսի նշան, ստիպված է եղել եզրակացնել՝ «Если в русском языке понятия вида и времени переплетаются и в случае надобности могут быть отделены друг от друга, то в армянском языке **понятия времени и вида органически взаимосвязаны, представляют одно неразрывное целое, которое мы не в состоянии разъединить**, так как **видовое значение не имеет своего формального показателя** и, тесно переплетаясь с временным, находит свое формальное выражение через видо-временную категорию[1]».

Սթե այս դատողությունը ճիշտ է, այն ժամանակ ինչպե՞ս, ի՞նչ «ձևական ցուցանիշներով» է նա հաստատում այն, որ ներկան արտահայտում է «дуративного (курсивного, имперфективного) вида действия», անցյալի անկատարը՝ «дуративного, несовершенного вида действия», վաղակատարը՝ «начатое в прошлом и законченное к моменту речи прошедшее действие», ճարակատարը՝ «законченное к моменту речи прошедшее действие», անցյալի վաղակատարը՝ «прошедшее действие, которое мыслится законченным, завершенным к определенному моменту плана прошлого или до времени действия другого прошедшего действия», անցյալի ճարակատարը՝ «законченность прошедшего действия», ապառնին՝ «несовершенный вид действия», անցյալի ապառնին՝ «несовершенный вид действия», անցյալ կատարյալը՝ «момент-перфективный вид действия»[2].

Ինչպես տեսնում ենք, այստեղ հիմնականում սահմանված է երկու կերպ՝ կատարյալ և անկատար, բայց սրա մասին պարզ չի ասված։ Շարքերը սահմանելիս կերպը և ժամանակը խառնում է իրար հետ, ինչպես և պետք էր սպասել։ Բայց և այնպես բայի կերպերը այս սահմանումներով պատկերացվում են որպես կատարյալ կամ անկատար, թեև որևէ ձևական ցուցանիշ գտնված չէ։ Ի՞նչ ցուցանիշներից է երևում հեղինակը։ Իհարկե, միայն այն ցուցանիշներից, որով ամեն մի հայերեն լեզվով խոսողը իրարից զանազանում

---

1 С. Зарбаджи, Op. cit, стр. 80.

2 *Նույն տեղում, էջ 83—84։*

է գրում էր և գրեց ձևերը և զգում է, որ գրում էր անկատար գործողության է արտահայտում, իսկ գրեց՝ կատարյալ։ Դժբախտաբար ընկ. Զարբեջյանը սահմանափակվում է միայն սահմանական եղանակի ձևերով և ոչինչ չի ասում, թե մյուս եղանակների շարքերից ո՞րն է արտահայտում կատարյալ և որը՝ անկատար կերպ։ Ջնայած սրան, պետք է ասենք, որ ընկ. Զարբեջյանն այս ուսումնասիրությամբ ավելի է մոտենում ճշմարտությանը, ասելով՝ «...Каждая временная форма, в том числе и «простая», наделена определенным видовым содержанием и без него немыслима»[1].

Ճիշտ է, նա ևս դեռ չի կարողանում կերպի և ժամանակի կատեգորիաները սահմանազատել իրարից և դրա համար էլ հնարում է մի նոր տերմին՝ «видо-временная категория», բայց և այնպես նա, անկասկած, մի քայլ առաջ է գնում։ Եթե նա գտներ, որ խոնարհման յուրաքանչյուր կատեգորիայի համար յուրաքանչյուր քերականական ձևի մեջ սովորաբար ձևական որևէ ցուցանիշ կարող է և չլինել և որ խոնարհման կատեգորիանները սահմանելիս պետք է միմյանց հետ հարադրենք զանազան շարքերի ձևերը[2], այն ժամանակ նա կտրոշեր, որ հայոց լեզուն ունի առանձին ժամանակի կատեգորիայից անկախ՝ կերպի կատեգորիա, որ հայոց լեզուն իր սեփական միջոցներն ունի այս կատեգորիան արտահայտելու համար։

Կերպի կատեգորիան զանազան լեզուներում արտահայտվում է զանազան միջոցներով։ Նույնիսկ միևնույն լեզվի մեջ էլ երբեմն զանազան եղանակներ են գործածվում կերպի կատեգորիան արտահայտելու համար։ Օրինակ՝ ռուսերենում կերպի կատեգորիան, այսինքն գործողության ավարտվածությունն արտահայտվում է զանազան միջոցներով։ Այսպես՝ նախածանցներով (приставками)՝ писать—написать, играть—сыграть, միջածանցներով (инфиксами) вписать—вписывать, շեշտով՝ насыпать—насыпáть, բառերի զուգահեռությամբ (лексическими параллелями) сказать—говорить, взять—брать[3].

Արդի վրացերենում կերպի կատեգորիան արտահայտվում է միայն նախածանցներով (превербами, приставками)։

Նախածանցավոր ձևերը միշտ ունենում են կատարյալ կերպ, եթե բայը կարող է զանազանել կերպերը (որովհետև կան և այնպիսի

---

[1] С. Зарбаджи, Op. cit, стр. 82.

[2] Տես այս աշխատության մեջ «Ինչպես սահմանենք խոնարհման կատեգորիաները» գլուխը։

[3] БСЭ, II изд., том 8, стр. 19.

բայեր, որոնք չեն կարող կերպեր զանազանել, սրանք անկերպ բայեր են), իսկ անածանց բայերը միշտ ունենում են անկատար կերպ, բացառյալ անկերպ բայերի[1]։

Հին վրացերեն լեզվի մեջ կերպի կատեգորիան արտահայտվում էր ոչ թե նախածանցներով (թեև հին վրացերեն լեզուն ուներ նույն նախածանցները, որոնք գոյություն ունեն նոր վրացերենում), այլ բայի հիմքերով՝ ներկայի հիմքից կազմված բայաշարքերն արտահայտում էին անկատար կերպ, իսկ անցյալի հիմքից կազմված բայաշարքերն արտահայտում էին կատարյալ կերպ[2]։

Ինչպես տեսնում ենք, վրացերենում կերպը զանազանելու սկզբունքը միանգամայն փոխվել է՝ հին վրացերենը հունարենի նման էր, նոր վրացերենը սլավոնական լեզուների սկզբունքի վրա է հենվել[3]։

Հին հայերենում (գրաբարում) իշխում էր կերպերը զանազանելու նույն սկզբունքը, ինչպիսիք հունարենում և հին վրացերենում էր։ Այսպես՝ ներկայի հիմքից կազմված շարքերն արտահայտում էին գործողության անկատար կերպ, իսկ անցյալի հիմքից կազմված շարքերը՝ կատարյալ կերպ։ Ա. Շանիձեն 1948 թ. Վրացական և Հայկական գիտությունների ակադեմիաների հասարակական գիտությունների բաժանմունքների միացյալ գիտական սեսիայում կարդացած «теория скрив в применении к спряжению древнеармянского языка» զեկուցման մեջ, որի թեզիսները տպված են[4], գրաբարում եղած բայաշարքերը այսպես է դասավորել՝

1. սիրես	любишь
2. (մի՛) սիրեր	(не) люби
3. սիրէիր	ты любил (-ла)
4. սիրիցես	будешь любить
5. սիրեցեր	ты полюбил (-ла)
6. սիրեա	полюби
7. սիրեսցես	полюбишь[5]

Այս շարքերի մեջ արտահայտված գործողության կերպերի

---

1 Ա. Շանիձե, Վրացերենի քերականության հիմունքները, էջ 269 և հետո։

2 Նույն տեղում, էջ 274 և հետո։

3 Նույն տեղում, էջ 276։

4 Совместная научная сессия отделений общественных наук, в Тбилиси и Ереване 22—30 мая 1948 г. Тезисы к докладам, 1949, стр. 20—23.

5 А. Шанидзе, Тезисы, стр. 21.

մասին նա գրում է. «Четыре первых из приведенных скрив[1] (№№ 1, 2, 3, 4) имеют несовершенный вид, а три последних (№№ 5, 6, 7)—совершенный. Поэтому хорошо противополагаются друг другу следующие формы, имеющие в других отношениях одинаковый состав элементов: с одной стороны, *սիրէիր* («ты любил-ла») и *սիրեցեր* («ты полюбил-ла»), *սիրիցես* («будешь любить») *սիրեսցես* («полюбишь»). Остальные скривы (№№ 1, 2, 6) не имеют коррелятивных форм, но противоположение в отношении вида остается в силе; например, *և որպես առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ* «Как послал меня отец, и я посылаю вас» (Мф. 28, 18)[2].

Մեր կարծիքով, կերպերի տարբերության սկզբունքը հիմնականում պահվում է և աշխարհաբարում։ Այստեղ էլ ներկայի հիմքից կազմված շարքերը հիմնականում արտահայտում են գործողության անկատարություն, իսկ անցյալի հիմքից կազմված ձևերը՝ կատարվածություն։ Այս դրույթի մեջ համոզվել դժվար չէ, որովհետև նույնիսկ եղած դասակարգումներից աշխարհաբարի բայաշարքերից այն բոլորը, որոնք կազմված են անցյալի հիմքից, ընդունվում են որպես կատարված (կատարյալ) կերպի ձևեր, բացի անցյալ կատարյալ շարքի ձևերից, իսկ ներկայի հիմքից կազմված բայաշարքերը (բացի սահմանական եղանակի ապառնի, անցյալի ապառնի և սինթետիկ ձևով կազմված շարքերից՝ գրեմ, գրեի, կգրեմ, կգրեի) ընդունված են որպես կատարվող (կատարյալ) կերպի ձևեր։ Այսպիսով, եղած դասակարգումներից կատարված (կատարյալ) կերպի շարքեր են՝ 1. վաղակատար, 2. անցյալի վաղակատար, 3. հարակատար, 4. անցյալի հարակատար, բոլորն էլ կազմված են անցյալի հիմքից, իսկ 1. ներկա և 2. անցյալի անկատար՝ կատարվող (անկատար) կերպի շարքեր են և սրանք կազմվում են ներկայի հիմքից։ Երկու բայաշարք՝ սահմանական եղանակի ապառնին և անցյալի ապառնին ըստ եղած դասակարգումների արտահայտում են կատարելի կերպ, իսկ մնացած շարքերը այս դասակարգումներից դուրս են մնում։ Այսինքն՝ մենք խոսք չունենք կատարվող (անկատար) և կատարված (կատարյալ) կերպեր արտահայտող շարքերի մասին։ Դրանք բոլորի կողմից էլ ընդունված են որպես կատարյալ կամ անկատար կերպ արտահայտող շարքեր։

---

[1] *Ա. Շանիձեն միանգամայն ճիշտ էր կարծում, որ նրա «շարքի թեորիան» կգործածվի ուրիշ լեզուների քերականությունների մեջ էլ և որպեսզի չիներ տերմինավորման զանազանություն, վրացական (mckrivi մծկրիվի) տերմինը պահեց* skriv *ձևով, որ նշանակում է «շարք»։*

[2] А. Шанидзе, Тезисы, стр. 22.

Անցյալ կատարյալի շարքի մասին նույնպես երկար խոսելու կարիք չկա, որովհետև այս շարքով արտահայտվում է, որ գործողությունը ապրեն կատարված-ավարտված է և սա ընդունված է բոլորի կողմից։ Նույնիսկ դասագրքերում այս շարքի բովանդակությունը սահմանված է այսպես՝ «Անցյալ կատարյալը ցույց է տալիս ենթակայի կատարված, վերջացրած մի գործողություն, որ չի համեմատվում ոչ մի ժամանակակիտի հետ[1]»։ Չնայած որ «անցյալ կատարյալը ցույց է տալիս ենթակայի կատարված վերջացրած գործողություն» և նրա անունն էլ «անցյալ կատարյալ» է, այս շարքի ձևերը դասակարգված են գործողության կերպ չարտահայտող ձևերի մեջ։ Ինչո՞ւ։ Որովհետև նա չի կազմվում դերբայից և օժանդակ բայից։ Այս սխալ սկզբունքի արտացոլումն է սահմանման երկրորդ մասում արտահայտված հետևյալ միտքը. «որ չի համեմատվում ոչ մի ժամանակակիտի հետ»։ Բայց, եթե այսպես է, եթե գործողությունը չի համեմատվում խոսքի մոմենտի հետ, ինչպե՞ս է որոշվում, որ անցյալ կատարյալի շարքի ձևերով արտահայտվում է անցյալ ժամանակ։ Իսկ եթե բայաձևը գաղափար է տալիս գործողության ժամանակի մասին, դա նշանակում է, որ այդ ժամանակը որոշվում է գործողության և խոսքի մոմենտի համեմատությամբ։ Բայց չարժե երկարացնել։ Հենց իրենց՝ հայոց լեզվի ուսումնասիրողների վկայությամբ անցյալ կատարյալ շարքի ձևերը արտահայտում են կատարված, վերջացած գործողություն, իսկ մենք արդեն պայմանավորվեցինք, որ այսպիսի ձևը ընդունենք որպես կատարյալ կերպի ձև։

Սահմանական եղանակից մնում են ապառնի և անցյալի ապառնի շարքի ձևերը։ Դժբախտաբար, հայոց լեզուն ուսումնասիրողները նույն վճռականությամբ, ինչպես անցյալ կատարյալի մասին, չեն ասում, թե այս ձևերում ի՞նչ է արտահայտվում՝ ավարտված, թե՞ անավարտ գործողություն։ Նրանց կարծիքով, այս ձևերով արտահայտվում է գործողության կատարելի կերպը, բայց, ինչպես արդեն ասացինք, այն գործողությունը, որ խոսքի մոմենտից հետո կկատարվի, կարող է արտահայտել, ապագայում կվերջանա՞ արդյոք գործողությունը, թե այդ գործողության վերջը չի երևում, ինչպես ռուսերենում՝ буду писать и напишу, буду читать—прочту...

Ըստ մեր սահմանումի պետք է ենթադրել, որ այդ շարքերի ձևերը արտահայտում են անկատարություն, քանի որ նրանք կազմվում են ներկայի հիմքից։ Եվ իսկապես, ինչպես երևում է, հայոց լեզվի ուսումնասիրողները կարծում են, որ այս ձևերը գործողու-

1 Ա. Ղարիբյան, Դասագիրք, 1959, էջ 197։

թյան անկատարությունն են արտահայտում։ Այսպես՝ Մ. Աբեղյանը գրում է. «Ապառնին և ապառնի անցյալն իրենց բնավորությամբ ցույց են տալիս հարաձիգ, տևական վիճակ կամ մտադրություն մի բան անելու[1]»։

Իհարկե, հարաձիգ, տևական գործողությունը գործողության անկատար կերպն է։ Այս դրույթն ավելի պարզորոշ է հաստատում Ս. Զարբեջյանը, երբ ապառնիի մասին գրում է. «выражает несовершенный вид действия»։ Նույնն է գրում նաև անցյալի ապառնիի մասին[2]։ Այսպիսով, պարզվում է, որ սահմանական եղանակի շարքերի բոլոր ձևերը, որոնք կազմված են անցյալի հիմքից, արտահայտում են գործողության կատարյալ կերպ, իսկ ներկայի հիմքից կազմվածները՝ անկատար կերպ։ Բայց, բացի սրանից կան ուրիշ եղանակների շարքեր, որոնք հայոց լեզվի ուսումնասիրողների կողմից ճանաչված են որպես պարզ կերպ ունեցող կամ անկերպ ձևեր։ Պետք է պարզենք՝ նրանք արտահայտո՞ւմ են, թե՞ ոչ գործողության ավարտվածություն կամ անավարտվածություն։ Այս բանը պարզել ավելի դժվար է, որովհետև չենք կարող մեր դրույթը հաստատել ուսումնասիրողների ուղղակի ցուցումներով, ինչպես անում էին վերև։ Չնայած դրան, այդ ուսումնասիրողների մոտ կարելի է գտնել շատ անուղղակի ցուցումներ, որոնց վրա հենվելով կաշխատենք հաստատել մեր դրույթները։

Սկսենք պայմանական եղանակի ապառնի ձևերից։

Մենք արդեն հաստատեցինք, որ գրելու եմ և կգրեմ շարքերի ձևերը միմյանցից եղանակով չեն տարբերվում (իսկ որ մյուս կատեգորիաներով նրանք բոլորովին նույնն են, սա ակներև է և անվիճելի)։ Կգրեմ շարքի ձևերը եղանակով սահմանական էին համարում համարյա բոլոր քերականները, սկսած Սկրոդերից մինչև Մ. Աբեղյանը։ Այս վերջինը՝ հենվելով կգրեմ և կգրեի շարքերի ձևերի վրա՝ հայոց լեզվի քերականության մեջ մտցրեց եղանակի մոտ ենթակատեգորիա՝ ենթադրական եղանակ անունով, որը այժմ կոչում են պայմանական կամ ենթադրական եղանակ։ Բայց հետո, երբ մանրամասն ուսումնասիրեցին, այս խնդիրը, եզրակացրին. «Երբ ուշադրությամբ դիտում ենք պայմանական ապառնի ձևերի եղանակային գործածության մեր բերած դեպքերը, տեսնում ենք, որ այդ բայաձևերը ավելի շատ օգտագործվում են առանձին նախադասություններում, որոնք գործողության կատարման համար ոչ մի պայման չեն պահանջում։ ... Նույնիսկ այն դեպքերում, երբ պայմանական ա-

1 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն*, էջ 227։

2 С. Зарбаджи, Op. cit, стр. 84.

պանիով արտահայտված գործողության կատարումը կապվում է որևէ պայմանի հետ, այդտեղ էլ պայմանի դաղափարը արտահայտվում է ոչ թե գլխավոր նախադասության ստորոգյալով[1], այլ երկրորդական նախադասությամբ[2]»։ Նույնպիսի եզրակացության է հանգում նույն հեղինակը այս ձևերի ենթադրականության մասին՝ «խոսողի ենթադրությունը, որևէ գործողության կատարման մասին, ավելի շատ կապված է պայմանական եղանակի ապառնու, քան անցյալի ձևերի հետ, ուստի այս եղանակը ենթադրական անվանելիս իրավունքը մեզ պիտի տան ապառնիի ձևերը։

Սակայն, ինչպես տեսանք, երբ այս եղանակի ապառնի ձևերը, իրոք ապառնի ժամանակին են վերաբերում, նրանցով արտահայտված գործողությունը խոսողի հավաստմամբ ստույգ է և ոչ ենթադրական։ ... Ենթադրվող գործողության դրսևորումը նրա հիմնական ֆունկցիան չէ, այլ երկրորդական առումներից մեկը[3]»։ Եվ հետո՝ «Մեր կարծիքով, պայմանական ապառնիի հիմնական առանձնահատկությունն այն է, որ արտահայտում է կատարելի եղելության վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունքը»[4]։

Ջնայած սրան, չգիտես ինչու, մեր հեղինակը հետո սկսում է տատանվել։ Նա գրում է. «Իսկ այն հարցին, թե արդյո՞ք Պալասանյանը և նրա որոշ հետևորդներ ճիշտ են վարվել, որ պայմանական ապառնիի ձևերը մտցրել են սահմանական եղանակի մեջ, և թե մեր վերը տված բացատրությունից արդյո՞ք չի բխում, որ պայմանական ապառնիի ձևերը (գումլ նաև անցյալի ձևերը) պիտի համարել սահմանական եղանակի բայաձևեր,—պիտի պատասխանենք հետևյալը։

Պայմանական եղանակի ոչ միայն անցյալի, այլև ապառնիի ձևերը սահմանական եղանակի բայաձևերի շարքը դասել չի կարելի ոչ միայն նրա համար, որ բացի ստույգ կատարելի գործողության արտահայտելուց, այդ ձևերով արտահայտվում են նաև պայմանական, ցանկալի, հնարավոր, ենթադրական գործողություններ, այլ նաև նրա համար, որ պայմանական եղանակի ապառնիի ձևերը, երբեմն գործածությամբ նմանվելով սահմանական ապառնիին, այսուամենայնիվ հիմնականում պահպանում են իրենց եղանակային առանձնահատկությունները[5]»։

Այս դատողության մեջ հակասությունն ակնհայտ է՝ նախ պնդում

---

1 Այսինքն այն բայաձևով, որ տրված է պայմանական ապառնիի ձևով։

2 Հ. Բարսեղյան, Հիշյալ աշխատութ., էջ 244 (ընդգծումը մերն է —Ի. Շ.)։

3 Նույն տեղում, էջ 244—245։

4 Նույն տեղում, էջ 245։

5 Նույն տեղում, էջ 249—250։

է, որ «պայմանական ապառնի» ձևերով չի արտահայտվում ոչ ենթադրություն, ոչ էլ պայմանականություն, որ այս ձևերով արտահայտվում է «խոսողի հավաստմամբ ստույգ» գործողություն, որ պայմանականության կամ ենթադրության արտահայտումը այս ձևերում «երկրորդական առումներից մեկն է», բայց և այնպես, գրտնում է, որ այս ձևերը պիտի համարենք «պայմանական կամ ենթադրական» եղանակի ձևեր։ Ինքը՝ հեղինակը զգում է այս հակասությունները և հարց է դնում՝ ավելի ճիշտ չէի՞ն վարվում արդյո՞ք նրանք, որոնք այս ձևերը դասում էին սահմանական եղանակի մեջ։ Այս հակասությունները բխում են նրանից, որ եթե այս ձևերը դասեին սահմանական եղանակի մեջ, այն ժամանակ դուրս կգար, որ գրելու է և կգրի շարքերի ձևերի մեջ ոչ մի տարբերություն չկա, իսկ այդպես վարվել չէր կարելի, որովհետև այս ձևերի մեջ տարբերությունը ակնհայտ է։ Նրանք միմյանցից տարբերվում են և ձևականորեն և ֆունկցիայով։

Մյուս կողմից կը մասնիկավոր ձևերը («պայմանական անցյալի ապառնի») մասնակցում են բարդ պայմանական նախադասությունների կազմությանը և այդ պատճառով դրանք ընդունվեցին որպես պայմանական ձևեր։

Սակայն թողնենք բանավեճը։

Սահմանական եղանակի ապառնի շարքի մասին խոսելիս Հ. Բարսեղյանը ճիշտ է դատում, որ «Քանի որ ապագայում ընկնող յուրաքանչյուր գործողություն ինքնին անստույգ է և այդպիսին ավելի շուտ ենթադրվում, հնարավոր, ցանկալի կամ անհրաժեշտ է համարվում, քան ստույգ, ուստի խոսքի մոմենտից հետո ընկնող կամ ապառնի ժամանակակետի համեմատությամբ առնված գործողությունները սովորաբար արտահայտվում են ըղձական, հարկադրական և ենթադրական եղանակներով[1]»։

Ճիշտ է այս դատողությունը, բայց մեր հեղինակը չի բացատրում, թե ինչից է բխում այս «անստուգությունը»։ Դա ծագում է նրանից, որ այն գործողությունը, որը պիտի կատարվի, դժվար է առանց որևէ լրացուցիչ միջոցների պատկերացնել որպես կատարյալ գործողություն։ Այսպես է, որովհետև, երբ որ գործողությունը դնահատվում է ըստ կատարելության-անկատարության, սա նշանակում է, որ մեր մոտեցման ելակետը ներկա ժամանակն է, խոսքի մոմենտ է։ Իհարկե, խոսքի մոմենտի համեմատությամբ խոսքի մոմենտից հետո կատարելի գործողությունը դժվար է պատկերացնել որպես կատարված, կատարյալ գործողություն։ Սակայն, երբ խոսողը ցան-

1 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 196։

կանում է համոզել խոսակցին, թե որևէ գործողություն, որը թեև խոսքի մոմենտից հետո կսկսվի, բայց անպատճառ կավարտվի, կվերջանա, իհարկե, նա կաշխատի զանազանել այնպիսի գործողություններից, որ նույնպես խոսքի մոմենտից հետո կսկսվի, բայց խոսողը ուշադրություն չի դարձնում նրա ավարտելիության վրա։ Այսպիսով, մի դեպքում խոսողը աշխատում է գործողությունը պատկերացնել որպես կատարյալ, իսկ մյուս դեպքում նրա վրա ուշադրություն չի դարձնում։ Այս իր համոզմունքն արտահայտելու համար խոսողը գործածում է մի նոր միջոց՝ կը մասնիկը։ Այսպիսով, կը մասնիկը ոչ թե եղանակիչ է, այլ կերպիչ, կատարյալ կերպ ցույց տվող մասնիկ։ Սրանով է բացատրվում նաև այն բանը, որ «ապառնիի ձևերը սահմանական եղանակի ամենասակավ գործածական ձևերից են[1]»։

Քանի որ կատարելի գործողությունը ինքնին անստույգ է ըստ գործողության կատարելության, իհարկե, լեզվի մեջ իշխում են այնպիսի ձևեր, որոնցով ավելի պարզ է արտահայտվում խոսողի համոզմունքը նրա կատարելության մասին։

Այսպիսով՝ կգրեմ ապառնի կատարյալ է, իսկ գրելու եմ՝ ապառնի անկատար և այս ձևերը միմյանցից տարբերվում են միայն կերպի կատեգորիայով։ Սրանից երևում է, որ ի տարբերություն գրաբարի, աշխարհաբարը կերպի կատեգորիան արտահայտելու համար գործածում է ոչ միայն հիմքը, այլև մասնիկ, որ կը մասնիկավոր ձևերը արտահայտում են այնպիսի գործողություն, որը անպատճառ կկատարվի (կատարյալ)։ Սա միայն մեր կարծիքը չէ, դրան համաձայնում են հայոց լեզվի նաև ուրիշ ուսումնասիրողներ։

Այսպես, Հ. Բարսեղյանը գրում է. «Սակայն ըղձական և սրա ձևերից կազմված մյուս եղանակային ձևերով, ինչպես վերը տեսանք, արտահայտվում է ոչ թե կատարելի գործողություն անցյալ ժամանակակետի համեմատությամբ, այլ անցյալ ժամանակակետում ինչ-ինչ պատճառներով տեղի չունեցած իրողություն, որը եթե կատարվեր, պիտի սկսվեր ու ավարտվեր այդ նույն ժամանակամիջոցում»[2]։

Ինչպես տեսնում ենք, այս դատողությունը վերաբերում է «ըղձական եղանակին և նրա ձևերից կազմված մյուս եղանակային ձևերին», այսինքն «պայմանական ապառնի» ձևերին էլ։ Այս դատողության երկրորդ մասից կարելի է ենթադրել, որ հեղինակը նկատի է ունենում միայն այս եղանակների անցյալի ձևերը, բայց նա պար-

1 Հ. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 196։

2 Նույն տեղում, էջ 161 (ընդգծումը մերն է—Ի. Շ.)։

ղորոշ գրում է, որ իր դասողությունը վերաբերում է «ըղձական և սրա ձևերից կազմված մյուս եղանակային ձևերին»: Բայց, եթե կարծենք, որ նա միայն ըղձականի և պայմանականի անցյալի ձևերի մասին է խոսում, միևնույն է, արդյունքը նույնն է ստացվում, քանի որ նրանց ղուգահեռ ձևերը կազմվում են նույն միջոցներով: Եվ եթե կգրեր ձևն արտահայտում է կատարյալ գործողություն, նույնը պիտի արտահայտի կգրի ձևն էլ, որովհետև այս ձևերը միմյանցից տարբերվում են ոչ թե գործողության կատարման արտահայտությամբ, այլ եղանակներով՝ կգրեր հետևանքային եղանակ է, իսկ կգրի սահմանական: Սահմանական և հետևանքային եղանակները շատ են նմանվում իրար: Սահմանական եղանակը ցույց է տալիս, որ ըստ խոսողի գործողությունը ստույգ է կատարվում, կատարված կամ կատարվելու է, իսկ հետևանքայինը ցույց է տալիս, որ գործողությունը դարձյալ ստույգ կկատարվեր, եթե որոշ պայման լիներ: Այսինքն՝ հետևանքայնությունը փաստորեն շարահյուսական կատեգորիա է:

Երբ համեմատում ենք գրելու է և կգրի շարքերի ձևերը, մենք սրանց մեջ որևէ տարբերություն չենք գտնում, բացի կերպից: Հ. Բարսեղյանը գրում է, որ եթե «պայմանական եղանակի ապառնի» ձևերի փոխարեն գործածենք «սահմանական եղանակի ապառնիի» ձևերը, կստացվի բոլորովին այլ բան»[1], բայց նա չի բացատրում թե ի՞նչ «այլ բան» կստացվի: Ոչ էլ կարող էր, քանի որ կերպի կատեգորիայի մասին նա բոլորովին այլ կարծիք ունի, իսկ այս ձևերը միայն կերպով են տարբերվում իրարից:

Բերենք մի քանի օրինակ.

1. «Կաց մի րոպե, բան եմ ասելու»[2]:

2. «Նա մի քանի խոսք արտասանեց բարկացած ձայնով, որոնցից միայն լսվեց «էլ չեմ աղոթելու» և շարունակեց ճանապարհը»: (Ն. տ.):

3. «—Ահա քո-քո-քո վեզերը,— արտասանեց նա:

Բարի տղա էր Բլուքունը:

— Քեզ եմ նվիրում, Սոս,—պատասխանեցի,— այսուհետև էլ չեմ խաղալու, գնալու եմ Թիֆլիզ»: (էջ 184):

4. «...Երեկոյան եկ տար ...այսուհետև էլ չեմ գրելու, գնում եմ Թիֆլիզ»: (Ն. տ.):

---

1 Հ. Բարսեղյան, հիշյալ աշխատութ., էջ 251:

2 Օրինակները բերած են Գ. Բաշինջաղյանի «Ճանապարհորդական նոթեր, էսքիզներ, ֆելիետոններ, հոդվածներ» աշխատությունից, Երևան, 1957, էջ 106:

5. «...Ասպա ինչ ես տալու ինձ, քուչրիկս, որ տղիդ Թիֆլիզ ենք ուղարկում»: (էջ 186):

6. «Ա՜խ կնիկ, պատրա՞ստ է տղեդ, որ վաղը, առավոտյան կանուխ ուղարկելու ենք Թիֆլիզ»: (էջ 188):

7. «...Վեգերս թողնելու եմ այստեղ»: (էջ 189):

8. «—Բա ի՞նչ է լինելու, Մացակ ապեր»[1]:

9. «Գնացինք, բայց գիտեի, որ հացը ցամաք ենք ուտելու»[2]:

10. «Է, ե՞րբ ենք գնալու Ջանգվի ձորը որսի»: (Ն. տ., 336):

11. «Մեկ է, որ մեռնելու ենք, խմենք»: (Ն. տ., 337):

12. «Երդվեց կնոջ ու երեխաների առաջ, որ այլևս ոչ մի կաթիլ օղի չի խմելու»: (Ն. տ., 338):

13. «Է, Ղազախի հոնի օղին թաքցնե՞լ կլինի: Ոբր էլ դնես՝ անմահական բուրմունքը մատնելու է, թե՝ եկ, այստեղ եմ...»: (Ն. տ., 339):

14. «...Չգիտեմ ինչ է գալու գլուխս»: (Ն. տ., 339—340):

15. «Հակոբը երդվում է, որ «շամպանսկի» խմելուց հետո, այլևս ոդելից խմիչք չի գործածելու...»: (Ն. տ., 341):

16. «Հետո է տաքանալու, դու մի բաժակ էլ խմի...»: (Ն. տ.):

17. «Ընկերոջս համար գդալ չբերեք, կուշտ է, չի ուտելու»: (Ն. տ., 343):

18. «Ես էլ մոլորվել էի, թե գերանները ոնց եմ տաճելու Դիլիջան»: (Ն. տ., 351):

19. «Ախր Նորաշենից էլ են հյուրեր գալու»: (Ն. տ., 362):

20. «Մտածում եմ էսպես ու սպասում, թե վերջն ինչ է լինելու»: (Ն. տ., 365):

21. «Մտածում եմ, թե ե՞րբ է լուսանալու, որ ազատվեմ ես ծանր երազից...»: (Ն. տ., 366):

Մեր կարծիքով կարիք չկա շարունակելու օրինակները: Մենք դիտմամբ վերցրել ենք որոշ գրքեր, սկսել ենք պատահական տեղից թերթել և վերցնել սահմանական եղանակի ապառնի ձևով գործածված բոլոր բայերը, որպեսզի չկարծեն, թե դիտավորությամբ ենք ընտրել օրինակները: Մեր կարծիքով, բերված օրինակներում եթե փոխենք սահմանական եղանակի ապառնի ձևերը «պայմանական եղանակի ապառնիի» ձևերով, ոչինչ չի փոխվի բացի կերպից: Բերված օրինակներում արտահայտված է գործողության անկատար կերպ ապառնի ժամանակում, իսկ փոխված ձևերով կարտահայտվի գործողության կատարյալ կերպ նույն ժամանակում:

---

1 Ն. Զարյան, *Հացավան*, Երևան, 1947, էջ 492:

Վ. Անանյան, *Որսորդական պատմվածքներ*, պրակ ե, Երևան, 1959, էջ 334:

Նույնպիսի արդյունք կստացվի, իհարկե, եթե վերցնենք պայմանական եղանակի ձևերը և հետո նրանք փոխենք սահմանական եղանակի ապառնու ձևերով։

Բերենք մի քանի օրինակ.

1. «—Արևիդ մատաղ, էն օրվա մասին մարդի բան չասես հա, խաղք ու խայտառակ կլինեմ գյուղում...

— Չէ, պապի, չեմ ասի, բայց դու աչքաբաց կաց, չքնես, արջերը փեթակները կփշացնեն»։ (Ն. տ., 324)։

2. «—Այո, շունչս կտրվում է, սիրտս վատ է աշխատում...

— Որսով կզբաղվեմ,—խորհուրդ տվի ես։

— Կպայքեմ, շատ եմ ճարպակալել»։ (Ն. տ., 325)։

3. «—Հը՞, ի՞նչ դեղեր կառաջարկես»։ (Ն. տ., 326)։

4. «Հա՞, այդ լավ է, մենակ չեմ լինի...»։ (Ն. տ., 326)։

5. «—Հա՞, դե որ այդպես է, հինգին կգամ...»։ (Ն. տ., 326)։

Իհարկե, եթե այս ձևերը այսպես միմյանց փոխարեն գործածենք, միտքը, բովանդակությունն էլ կփոխվի, բայց այս փոփոխությունը կապված կլինի միայն կերպի կատեգորիայի հետ։ Այս պատճառով է, որ սովորաբար այս ձևերը միմյանց փոխարեն չեն գործածվում։

Սրանից հետո պարզ է նաև «պայմանական եղանակի անցյալի ապառնու» կերպը՝ սա էլ է կատարյալ կերպի գործողություն արտահայտում, իսկ ժամանակով՝ անցյալ է։ Բայց նա միայն ժամանակով չի տարբերվում ապառնի կատարյալի ձևերից (պայմանական ապառնի)։ Սա մյուս բոլոր շարքերի ձևերից տարբերվում է եղանակով (հետևանքային)։ Հետևանքային ենթակատեգորիա արտահայտելու համար աշխարհաբարն ունի միայն այս բայաշարքը։ Հենց այս պատճառով է, որ այս շարքի զուգահեռ ձևերը՝ «սահմանական եղանակի անցյալի ապառնի» ձևերը աշխարհաբարում խիստ սակավադեպ գործածություն ունեն։ Բանն այն է, որ հետևանքայնություն արտահայտելու համար անհարմար է այնպիսի ձևը, որն արտահայտում է անկատար գործողություն։ Գործողության արդյունքը դժվար է ըմբռնել անկատար ձևի բայով։ Եվ իրոք, այժմյան գրականության մեջ կարելի է հարյուրավոր էջեր կարդալ և սահմանական եղանակի ապառնի ձևերի չհանդիպել։ Այս բայաձևն այնքան հազվադեպ է, որ նույնիսկ «Հայոց լեզվի դասագրքի» հեղինակը ստիպված է եղել արհեստական օրինակ բերել, որպեսզի հաստատի իր դրույթը այս շարքի բովանդակության մասին։ Ավելին՝ այս ձևի սահմանումից հետո վարժության համար հեղինակը վերցնում է այնպիսի հատված, որտեղ սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառ-

նի ձևերը բոլորովին չեն գործածվում։ Դրա համար էլ վարժությունը պահանջում է «ներկայով գործածված բայերը փոխել ապառնիի[1]»։ Սրա պատճառն այն է, որ այս ձևերով հարուստ հատված դժվար է գտնել հայ գրականության մեջ։

Հետաքրքիր է, որ գրելու էր շարքի գործողության մեջ էլ նկատվում է հետևողականության նշանակությունը։ Օրինակները բերում ենք առանց որևէ ընտրության։

1. «Նա ուզում էր հանդիպել իր ընկերներին, նրանց հետ խորհրդակցել, ճշտել մի շարք փաստեր՝ կազմելու համար Կենտկոմին ուղղված իր զրավոր բացատրությունը, որը և լինելու էր գլխավոր հակահարվածը[2]»։

Այստեղ լինելու էր կատարում է նույն ֆունկցիան, ինչ կկատարեր կլիներ ձևը, այսինքն արտահայտում է մի ուրիշ գործողության հետևանքը, արդյունքը։ Այսպես՝ եթե Լևոն Համբարյանը հանդիպեր իր ընկերներին, նրանց հետ խորհրդակցեր, ճշտեր մի շարք փաստեր և գրեր բացատրությունը — սա կլիներ —(լինելու էր) գլխավոր հակահարվածը։ Այս նախադասությունը պայմանական նախադասության կազմություն չունի, բայց նրա բովանդակությունից երևում է, որ մի գործողությունը պայմանավորում է մի այլ գործողության և այս պայմանավորված գործողությունը սովորաբար պահանջում է իր հետևողականության ձև (կլիներ), որ ինչպես տեսնում ենք կարելի է փոխել անցյալի ապառնի (լինելու էր) շարքի ձևերով։

2. «Նախանցյալ օրը աշխատանքի էի գնալու, ընկերս հանդիպեց և ասաց, որ այդ օրը դաշտում կոլխոզնիկների հավաք պիտի լինի»[3]։

Այստեղ էլ էի գնալու արտահայտում է հետևանք, որ կախված է մյուս գործողության կատարումից։ Այսպես՝ «Նախանցյալ օրը աշխատանքի կգնայի, եթե ընկերս չհանդիպեր և չասեր...», այսինքն՝ նրա պատճառով, որ ընկերս հանդիպեց ինձ և մի բան ասաց, ես չգնացի (կամ գնացի) աշխատանքի։ Պարզ է, որ հանդիպելու և ասելու գործողությունները արտահայտում են պայման, որի համաձայն չի կատարվում կամ կատարվում է գնալու գործողությունը։

Միանգամայն նույն դրությունն է հետևյալ օրինակների մեջ.

3. «Անցյալ ամսվա սկզբին մենք գնալու էինք Ճամբար, երբ մի դեպք մեզ մի քիչ ուշացրեց»[4]։

---

1 Ա. Ղարիբյան, *Դասագիրք, 1959, էջ 193։*

2 Ն. Ջարյան, *Հացավան, էջ 448։*

3 А. Гарибян, Краткий курс армянского языка, Ереван, 1944, стр. 93.

4 Ա. Ղարիբյան, *Դասագիրք, 1959, էջ 193։*

Այսինքն, մենք կգնայինք, եթե չուշացներ մեզ մի դեպք։

4. «Այդ խնդիրը կատարելուց հետո՝ մենք պետք է մի քանի օր մնայինք այդ գյուղում, մարդկային ուժի և զենքի համալրում ստանայինք, որից հետո առաջվա պես շարունակելու էինք դեպի Արևմուտք քշել թշնամուն՝ ոչնչացնելով նրա կենդանի ուժն ու տեխնիկան»։ (Գ. Բես, Կրակ)[1]։

Այս վերջին օրինակն արդեն իսկական պայմանական նախադասություն է։ Պայմանն արտահայտված է պայմանականի ձևերով (մնայինք, ստանայինք), իսկ հետևանքը՝ անցյալի ապառնի ձևով (շարունակելու էինք), որի փոխարեն սպասելի էր կշարունակեինք ձևը։ Այս օրինակը, մյուս կողմից հաստատում է, որ պետք է || պիտի մասնիկային ձևերը առանձին, անկախ բայաշարքեր չեն, այլ նույն ըղձական եղանակի ձևեր և, իհարկե, կատարում են նույն դերը, ինչ այս վերջիններիը, այսինքն այս վերջին օրինակի մեջ էլ շարունակելու էինք արտահայտում է հետևանք, որը կատարելու համար պետք է կատարել մնալու և զենք ստանալու գործողություններիը։

5. «Բայց ոչինչ, չէ՞ որ մի քանի ժամից նորից հանդիպելու էին» (Ա. Սահինյան, Խաչուղիները)[2]։

Այս նախադասությունը լրիվ չէ, բայց մեր կարծիքով այստեղ հեշտությամբ կարելի է հանդիպելու էին բայը փոխել կհանդիպեին ձևով, իսկ եթե լրացնենք նախադասությունը, կստացվի իսկական պայմանական նախադասություն՝ «...նորից հանդիպելու էին, եթե գար», որ նույնն է՝ «նորից կհանդիպեին, եթե գար»։

6. Հ. Բարսեղյանը անցյալի ապառնի ձևերը պարզելու համար միայն երեք օրինակ է բերում և ավելացնում է հետևյալը՝ «Սահմանական եղանակի անցյալի ապառնին կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայով ու օժանդակ բայի անցյալի ձևերով և ցույց է տալիս այնպիսի եղելություն, որը մի անցյալ ժամանակակետից հետո էր կատարվելու[3]»։

Բերված օրինակներում, ինչպես տեսանք, ամենից առաջ արտահայտված են այնպիսի գործողություններ, որոնք պայմանավորված են ուրիշ գործողություններով և դրա համար հեշտությամբ կարելի է փոխարինել պայմանական եղանակի անցյալի ապառնի ձևերով։ Կարող ենք Հ. Բարսեղյանի սահմանման մեջ գործածված կատարվելու էր ձևը նույնպես փոխել կկատարվեր ձևով և նախադասության միտքն էլի չի փոխվի։ Ներքևում բերված մյուս օրինակնե-

1 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 197։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

րում ևս կարող ենք սահմանական եղանակի անցյալի ապառնի ձևերը փոխարինել պայմանական եղանակի անցյալի ապառնի ձևերով և դրանով նախադասության բովանդակությունը հիմնականում չի փոխվի։

7. «Պատվեց-պատվեց ձորի վրա այն ագռավը ու եկավ ընկավ եռացող կաթսայի մեջ։

— Վո՜ւյ, քոռանաս դու, մեր մատաղը հարամեց,— ճչացին կանայք ու խփեցին իրենց ծնկներին։ Դե հո հարամ մատաղը չէին բաժանելու։ Կաթսան շուռ տվին տափարակի կանաչի վրա»[1]։

8. «Մինչև շները կհասնեին, արծիվը ճանկում էր գառներից մեկին ու օդ բարձրացնում։ Ավազակությունն էր նրա արածը, բայց դե ինչպես մեղադրես, ձագերը հո քաղցած չէի՞ն մնալու...»[2]։

Բայց ինչո՞ւ այդքան չարչարվենք։ Վերցնենք այնպիսի օրինակներ, որտեղ սահմանական եղանակի անցյալի ապառնի ձևը իր տեղումն է, գործածված է իսկական պայմանական նախադասության մեջ և արտահայտում է պայմանականի ձևով տրված գործողության հետևանք։

1. «Թուփը չլիներ, Վաշագը պոկված կոճղի նման ցած էր գնալու, նա ամուր բռնել էր թփից»[3]։

2. «Էդ արջին մի ամիս ման գայիճ՝ չէիճ գտնելու, տեսա՞ր ոնց էր եկել գյողի կողքին քնել, որ գլխավերևը դուրս գամ ու էս Զանգեզուրի ձորերում արջ սպանողի անուն հանե՞մ»[4]։

Այս օրինակներից շատ պարզ երևում է սահմանական եղանակի անցյալի ապառնիի հետևանքային եղանակ արտահայտելու իսկական ֆունկցիան։

Այսպիսով, սահմանական եղանակի անցյալի ապառնի և պայմանական եղանակի անցյալի ապառնի ձևերը կարող են արտահայտել մի այլ գործողության հետևանք, բայց քանի որ հետևանքն ավելի պարզ է արտահայտվում կատարյալի ձևերով, պայմանական նախադասության մեջ սովորաբար գործածվում են պայմանական եղանակի անցյալի ապառնի ձևեր, որի պատճառով սահմանական եղանակի անցյալի ապառնի ձևերի գործածությունը լեզվի մեջ խիստ սահմանափակվել է։ Դրանք գործածվում են ոչ թե բարդ պայմանական նախադասությունների մեջ, այլ ուրիշ զանազան տեսակի

---

1 Վ. Աճառյան, Որսորդական պատմվածքներ, պրակ ե, էջ 356։

2 Նույն տեղում, պրակ Դ, էջ 92։

3 Նույն տեղում, պրակ ե, էջ 97։

4 Նույն տեղում, էջ 106։

նախադասություններ մեջ, բայց այնպես, որ համարյա բոլոր դեպքերում կարելի է այս շարքի ձևերը փոխարինել պայմանական անցյալի ապառնի ձևերով։ Եթե այս ձևերի մեջ բացի կերպից որևէ տարբերություն լիներ, այսպիսի փոխարինություն անկարելի կլիներ։ Այս պատճառով, եթե կգրեր շարքն անվանենք հետևանքային եղանակ, գրելու էր շարքի ձևերին էլ նույն անունը պիտի տանք, բայց առաջինը (կգրեր) կլինի հետևանքային կատարյալ, իսկ երկրորդը (գրելու էր) հետևանքային անկատար։

Այժմ աշխատենք պարզել հրամայական եղանակի կերպի հարցը։

Եթե ընդունենք, որ անցյալի հիմքից կազմված բայաձևերն արտահայտում են կատարյալ կերպ, այն ժամանակ հրամայականի ձևերի կերպի հարցն առաջին հայացքից բարդանում է, որովհետև հրամայականի եզակի թիվը կազմվում է և ներկայի և անցյալի հիմքից։ Օրինակ՝ իջի՛ր<իջնել, մտի՛ր<մտնել, փախի՛ր<փախչել, մոտեցի՛ր <մոտենալ... բայց կարդա՛ <կարդալ, աղա՛ <աղալ, խաղա՛<խաղալ։ Միայն «Ա» խոնարհման պարզ բայերի հրամայականը կազմվում է ներկայի հիմքից և այն էլ միայն եզակիում։ Այս տիպի բայերի հոգնակի հրամայականն էլ է կազմվում անցյալի հիմքից՝ կարդացե՛ք, գնացե՛ք..., ինչ վերաբերում է «Ե» խոնարհման պարզ բայերին՝ նրանցից եզակի թվի հրամայականը կազմվում է նույն հիմքից, որից անցյալի դերբայը՝ գրել<գրել, նստել<նստել, այսինքն՝ գրել <գրի՛ր, նստել <նստի՛ր։ Բոլոր մյուս տիպերի բայերի անցյալի դերբայը կազմվում է անցյալի հիմքից (կարդացել<կարդալ, փախել<փախչել, նստեցրել<նստեցնել...)։ Բայց թե՛ սրանցից, և թե՛ առաջիններից կազմված բայաձևերը կերպի նկատմամբ հավասար են, ուրեմն պետք է ընդունենք, որ այսպիսի բայերի եզակի հրամայականը կազմելիս էլ անցյալի հիմքի այսպիսի գործածությունը չի ազդում կերպի հասկացության վրա։

Այստեղ կարելի է մի նկատողություն էլ անել՝ «Ա» խոնարհման պարզ բայերից հրամայականը դրաբարում էլ նույն ձևով էր կազմվում, ինչպես աշխարհաբարում՝ կարդա՛, աղա՛, խաղա՛... Հրամայականի ձևն է և դրաբարի և աշխարհաբարի համար, բայց ընդունված է, որ դրաբարում այս ձևերը կազմված են անցյալի և ոչ ներկայի հիմքից՝ կարդաց՝ (անցյալ կատարյալի 3-րդ դեմք), կարդա՛ (նույն ձև առանց -ց), ինչպես՝ գրեաց (անցյալ կատարյալի 3-րդ դեմք), բայց գրե՛ (հրամայական)։ Ինչո՞ւ չի կարելի կարծել, որ այս տիպի բայերի եզակի հրամայականը աշխարհաբարում էլ նույն

հիմքից է, ինչպես գրաբարում։ Այսպես, թե այնպես պետք է ընդունենք, որ հրամայականի ձևերը կազմվում են անցյալի հիմքից։ Այսպիսով, կարող էինք եզրակացնել, որ հրամայականի ձևերը արտահայտում են գործողության կատարյալ կերպ, բայց այստեղ մի հանգամանք կա՝ հրամայականի ձևերի հանդեպ աշխարհաբարում ապրեն չի գործածվում որևէ բայաձև, որն արտահայտեր հրամայականի անկատար կերպը, իսկ եթե այդպես է, իրավունք չունենք ասելու, որ հրամայականի ձևերով արտահայտվում է որևէ (կատարյալ կամ անկատար) կերպ, այսինքն նրանք անկերպ ձևեր են։

Էլ ավելի բարդ է աշխարհաբարում արգելականի կերպի հարցը։ Արգելականի եզակի թիվը ձևով նույն հրամայականն է մի՛ մասնիկ ավելացնելով, իսկ նրա հոգնակին՝ ըղձական եղանակի ապառնի 2-րդ դեմք, հոգնակի թիվ նույն մի՛ մասնիկով։ Հիմնականում այսպես են կազմվում արգելական հրամայականի ձևերը[1]։ Բայց պետք է նկատենք, որ կարդա՛ և մի՛ կարդա, գրի՛ր և մի՛ գրիր ձևերը ծագումով միևնույնը չեն։ Մի՛ կարդա, մի՛ գրիր ձևերը ստացված են մի՛ կարդալ, մի՛ գրիլ ձևերից, այսինքն նրանք առանց որևէ կասկածի կազմված են ներկայի հիմքից։ Իսկ՝ մի՛ կարդամ, մի՛ գրեմ նույնպես ներկայի հիմքից են կազմված՝ նրանք նույն ըղձական եղանակի ապառնի ձևերն են։

Այստեղից կարծես ստացվում է, որ բուն հրամայականի դեմ աշխարհաբարում գործածվում են արգելական հրամայականի ձևերը, ինչպես ունենք գրաբարում[2], այսինքն բուն հրամայական ձևերը կազմվում են անցյալի հիմքից և արտահայտում են կատարյալ կերպ, իսկ արգելականը կազմվում է ներկայի հիմքից և արտահայտում է անկատար կերպ։

Բայց այդպես չէ՝ կերպի կատեգորիան չի արտահայտվում ոչ հրամայականի, ոչ էլ արգելականի ձևերով։ Այս մեր դրույթը հաստատվում է նրանով, որ նույնիսկ գրական լեզվի մեջ շփոթվում են արգելականի և բուն հրամայականի ձևերը։ Այսպես՝ մի՛ մոռեցամ, –մի՛ մոռեցեք, մի՛ ճեռացամ–մի՛ ճեռացեք, մի՛ բարձրացամ–մի՛ բարձրացեք, գրի՛–գրի՛ր, նստի՛–նստի՛ր...։ Ահա թե ինչ է գրում սրա մասին Հ. Բարսեղյանը. «Եթե նույնիսկ հաշվի չենք առնում անկանոն կազմություններ... դարձյալ նկատում ենք, որ հրամայական եղանակի համար բանավոր խոսքի մեջ արդի հայերենը դեռ գործածում է բարբառային ու սխալ կազմության մի շարք բայաձևեր։

---

1 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 211 և հետո։

2 А. Шанидзе, Тезисы, стр. 20—23.

Գրի՛ր, խոսի՛ր, նստի՛ր, վազի՛ր—մի՛ գրիր, մի՛ խոսիր, մի՛ նստիր, մի՛ վազիր ձևերին զուգահեռ ամենուրեք կարելի է լսել՝ գրի՛, խոսի՛, նստի՛, վազի՛, մանավանդ՝ մի՛ գրի, մի՛ նստի, մի՛ խոսի, մի՛ վազի ոչ ճիշտ կամ բարբառային ձևերի գործածությունը։ Այդպիսի բազմաթիվ օրինակների կարելի է հանդիպել նաև գրավոր լեզվում[1]»։ *Եվ նա բերում է օրինակներ գրականությունից։ Եթե հրամայականն ու արգելականը լեզվի մեջ ունենային միմյանց հակառակ կերպային իմաստ, այն ժամանակ նրանց ձևերը չէին շփոթվի միմյանց հետ։*

Այսպիսով, հրամայականի ձևերը իրենց հանդեպ չունեն լեզվի մյուս ձևը, որի միջոցով կարելի լիներ կերպերը զանազանել։ Մենք էլ հրամայականի և՛ դրական, և՛ բացասական ձևերը պետք է ընդունենք որպես անկերպ *ձևեր։ Բայց, եթե այս այսպես է, դուրս է գալիս, որ* կերպի *կատեգորիան հայերենում արտահայտվում է ոչ միայն հիմքերով և մասնիկով, այլև շարքերով։ Եվ ավելի ճիշտ կլիներ, եթե ասեինք, որ կերպի կատեգորիան աշխարհաբարում արտահայտվում է բայաշարքերով՝ ներկայի հիմքից կազմված մի քանի բայաշարքեր արտահայտում են անկատար կերպ (ներկա, անցյալ անկատար, ապառնի, հետևանքային անկատար), անցյալի հիմքից կազմվածները՝ կատարյալ կերպ (անց. կատարյալի, չեզոքի, նախորդի, ստատիկ ներկայի, ստատիկ անցյալի), իսկ հրամայականի, ըղձականի և պայմանականի բայաշարքերի գործողության* կերպ *չեն արտահայտում, այսինքն՝* անկերպ են: *Սրանից բուն հրամայականը կազմված է անցյալի հիմքից, իսկ մյուսները՝ ներկայի հիմքից։*

Մնաց ըղձական եղանակի ձևերի կերպը *պարզելու հարցը։ Բայց, եթե չենք սխալվում, սա էլ հեշտությամբ կլուծվի, քանի որ ըղձական եղանակի ձևերը չունեն իրենց հանդեպ կերպով տարբերված ձևեր, պետք է եզրակացնել, որ ըղձական եղանակի ձևերն էլ կերպով չեզոք են, այսինքն՝ չեն արտահայտում ոչ կատարյալ և ոչ էլ անկատար կերպ։ Բայց այստեղ էլ մի քանի խոչընդոտներ կան։ Սրանցից մեկն այն է, որ ըղձականի ձևերը կազմվում են ներկայի հիմքից, որ սովորաբար անկատար կերպն է արտահայտում, մյուսը՝ ըղձական եղանակի անցյալի ապառնի ձևերը նախադասության մեջ սովորաբար գործածվում են հետևանքային եղանակի (պայմանական եղանակի անցյալի ապառնի) հանդեպ (*«կրճկներ, եթե չճենվեր *պատին»), իսկ վերջինը, ինչպես արդեն հաստատեցինք, կատարյալ կերպ է արտահայտում։ Կարող են հարցնել՝ մի՞թե կատարյալի*

---

[1] Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ., էջ 211։*

հանդեպ կարելի է գործածել անկերպ բայի ձևը։ Իհարկե, կարելի է։ Բանն այն է, որ գրեր և կգրեր շարքերը միմյանց հանդեպ գործածվում են ոչ թե կերպեր զանազանելու, այլ եղանակներ զանազանելու համար՝ գրեր արտահայտում է պայման, իսկ կգրեր՝ հետևանք։ Եթե կատարվեր կամ չկատարվեր մի գործողություն (որ պայման է), կկատարվեր կամ չէր կատարվի և մյուս գործողությունը։ Այսպես՝ «կընկներ, եթե չհենվեր պատին», նշանակում է, որ ենթական կատարեց մի գործողություն (հենվեց պատին), որի հետևանքով նա չընկավ։ Այսինքն՝ չհենվեր արտահայտում է պայման, իսկ կընկներ՝ հետևանք։ Սրանք կերպով չեն հակադրվում իրար։ Մյուս կողմից՝ կընկներ ձևը իր հանդեպ ունի անկատար կերպ արտահայտող ձև՝ ընկնելու էր։ Հենց այս պատճառով, որ կընկներ ձևն ունի անկատարի ձև ևս, կընկներ ձևի հանդեպ դրված ձևի մեջ (հենվեր) չպետք է որոնել նույնպես կատարյալ կամ անկատար կերպի ձևը՝ պայմանական նախադասության մեջ։ Այսպիսով, կընկներ և ընկներ շարքի ձևերը կերպով չեն հակադրվում իրար։ Իսկ եթե այդպես է, հայոց լեզվի մեջ չի երևում մի ուրիշ բայաշարք, որ ընկներ շարքի ձևերից տարբերվեր միայն կերպով։

Ինչ վերաբերում է այն բանին, որ ըղձականի ձևերը կազմվում են ներկայի հիմքից, մենք արդեն տեսանք, որ արգելական հրամայականի ձևերն էլ կազմվում էին ներկայի հիմքից, բայց որևէ կերպ չէին արտահայտում։ Ով մեր կարծիքով, պատահական չէ, որ արգելականի ձևերն էլ օգտագործում են ըղձականի ձևերը՝ մի՛ կարդա, մի՛ կարդաք, մի՛ մոռեցեք... Այսպիսով, քանի որ ըղձական (գրեմ) և պայմանական (գրեի) եղանակի ձևերը իրենց հանդեպ չունեն մյուս ձևերը, որոնք կարող էին արտահայտել կերպի հակառակ իմաստը, այս շարքի ձևերը կերպ չեն արտահայտում, այսինքն՝ անկերպ շարքեր են։

Հարկադրական եղանակի ձևերի իմաստը մեզ համար դեռևս պարզ չէ։ Մեր կարծիքով, այս ձևերը անկախ բայաշարքեր չեն, ինչպես կարծում են հայոց լեզվի մի քանի ուսումնասիրողներ։ Բայց եթե ընդունենք, որ նրանք էլ առանձին շարքեր են, միևնույն է, կերպով նրանց պետք է ընդունենք չեզոք, որովհետև նրանք էլ չունեն իրենց հանդեպ այլ կերպ արտահայտող ձևեր։ Ըղձականի, պայմանականի և հարկադրականի ձևերը, մեր կարծիքով, կերպով չեն հակադրվում իրար։ Ավելի ճիշտ կլիներ ասել, որ հարկադրական եղանակի ձևերը պահանջում են ավելի մանրամասն ուսումնասիրություն։

Այսպիսով, եթե չհաշվենք հարկադրական եղանակի ձևերը, կերպի կատեգորիայի մասին կարող ենք եզրակացնել հետևյալը. արդի հայերենում արտահայտվում է և՛ կատարյալ, և՛ անկատար գործողություն, այսինքն ունենք կատարյալ և անկատար կերպեր: *Միաժամանակ կան մի քանի բայաշարքեր, որոնք* կերպ *չեն արտահայտում, այսինքն* անկերպ *են: Բայի կերպերն արտահայտվում են առանձին շարքերով, այսինքն բայաշարքերից մի քանիսն արտահայտում են* անկատար կերպ, *մի քանիսը՝ կատարյալ, իսկ մի քանիսը որևէ* կերպ *չեն արտահայտում: Եթե բայաշարքը արտահայտում է* անկատար կերպ, *նա իր դեմ անպատճառ կունենա* կատարյալ կերպ *արտահայտող բայաշարք, իսկ եթե չի արտահայտում որևէ* կերպ *նա չի կարող ունենալ իր հանդեպ* կերպ *արտահայտող շարք և հենց այս հանգամանքը ցույց է տալիս, որ այսպիսի բայաշարքը* անկերպ *է:*

Աշխարհաբարի բայաշարքերը ըստ կերպի *այսպես պետք է դասավորել.*

Անկատար կերպի բայաշարքեր	կատարյալ կերպի բայաշարքեր
1. Ներկա (Նստում եմ)	*2. ստատիկ ներկա (Նստած եմ)*
3. անցյալ անկատար (Նստում էի)	*4. անցյալ կատարյալ (Նստեցի)* *5. ստատիկ անցյալ (Նստած էի)* *6. չտեսած (Նստել եմ)* *7. նախորդ (Նստել էի)*
8. ապառնի անկատար (Նստելու եմ)	*9. ապառնի կատարյալ (կնստեմ)*
10. հետևանքային անկատար (Նստելու էի)	*11. հետևանքային կատարյալ (կնստեի)*

Անկերպ շարքեր

12. Հրամայական (Նստի՛ր, Նստեցե՛ք)

13. Ըղձական (Նստեմ)

14. Պայմանական (Նստեի)

[*15. Հարկադրական ապառնի (պիտի նստեմ)*
16. Հարկադրական անցյալ (պիտի նստեի)]

Ըստ եղանակի այս բայաշարքերը կարելի է խմբավորել այսպես.

I Սահմանական եղանակի շարքեր

1. Ներկա (Նստում եմ)

2. անցյալ անկատար (Նստում էի)

3. ապառնի անկատար (Նստելու եմ)

4. ստատիկ ներկա (նստած եմ)
5. ստատիկ անցյալ (նստած էի)
6. չտեսած (նստել եմ)
7. նախորդ (նստել էի)
8. անցյալ կատարյալ (նստեցի)
9. ապառնի կատարյալ (կնստեմ)

II Հետևանքային եղանակի շարքեր
1. հետևանքային անկատար (նստելու էի)
2. հետևանքային կատարյալ (կնստեի)

III Հրամայական եղանակի շարք
1. հրամայական (նստի՛ր, նստեցե՛ք)

IV Ըղձական եղանակ
1. ըղձական (նստեմ)

V Պայմանական եղանակ
1. պայմանական (նստեի)

VI Հարկադրական եղանակ
1. հարկադրական ապառնի (պիտի նստեմ)
2. հարկադրական անցյալ (պիտի նստեի)

Այս բայաշարքերը ըստ ժամանակի այսպես են խմբավորվում՝

I Ներկա
1. ներկա (նստում եմ)
2. ստատիկ ներկա (նստած եմ)

II Ապառնի
1. ապառնի անկատար (նստելու եմ)
2. ապառնի կատարյալ (կնստեմ)
3. հրամայական (նստի՛ր, նստեցե՛ք)
4. ըղձական (նստեմ)
[5. հարկադրական ապառնի (պիտի նստեմ)]

III Անցյալ
1. անցյալ անկատար (նստում էի)
2. ստատիկ անցյալ (նստած էի)
3. չտեսած (նստել եմ)
4. նախորդ (նստել էի)
5. անցյալ կատարյալ (նստեցի)
6. հետևանքային անկատար (նստելու էի)
7. հետևանքային կատարյալ (կնստեի)
8. պայմանական (նստեի)
[9. հարկադրական անցյալ (պիտի նստեի)]

Ըստ ակտի կատեգորիայի առանձին խումբ են կազմում միայն չեզոսածի (Նստել եմ) և նախորդի (Նստել էի) շարքերը, որոնք ցույց են տալիս, որ խոսողը ականատես չի եղել այս գործողությունների կատարմանը: Մյուսները ցույց են տալիս, որ խոսողը ականատես է եղել կամ կլինի կամ թե խոսքի մոմենտում է տեսնում բայով արտահայտված գործողությունը: Իհարկե, պայմանականի, հրամայականի, ըղձականի ձևերի ականատեսության մոմենտը ավելի մթագնված է:

Ստատիկ եղելությունը արտահայտվում է միայն ստատիկ ներկայի (Նստած եմ) և ստատիկ անցյալի (Նստած էի) ձևերով, մյուսները առհասարակ արտահայտում են դինամիկ գործողություն:

Մի գործողությունից առաջ կատարված մի այլ գործողություն արտահայտելու համար արդի հայերենում կա միայն մեկ բայաշարք՝ նախորդի (Նստել էի) շարքը, որի հանդեպ նախադասության մեջ սովորաբար տրված է կամ ենթադրվում է անցյալ կատարյալի ձևով արտահայտված մի այլ գործողություն: Մյուս շարքերից հաջորդականության կատեգորիա արտահայտելուն մասնակցում են նաև անցյալ անկատարը (Նստում էի), ստատիկ-անցյալը (Նստած էր) և հետևանքային անկատարը (Նստելու էր), որոնցով արտահայտվում է միաժամանակություն («Երեկ երեկոյան ես գնում էի տուն, երբ քեզ հանդիպեցի»[1]: «Նստած էի սեղանիս առաջ, երբ ներս մտավ ընկերս»[2]: «Գնալու էի տուն, երբ քեզ հանդիպեցի»[3]:

Բերված օրինակների մեջ արտահայտված է միաժամանակություն, այսինքն գնալու (նստելու) գործողությունը միաժամանակ կատարվեց հանդիպելու (ներս մտնելու) գործողության, բայց հանդիպելու (ներս մտնելու) գործողությունը վերջացած է, իսկ գնալու (նստելու) գործողությունը դեռ չի վերջացել: Նկատենք միայն, որ հետևանքային անկատարի («Գնալու էի տուն, երբ քեզ հանդիպեցի») գործածությունն այս նշանակությամբ շատ հազվադեպ է: Այսպիսով միաժամանակությունը արտահայտվում է անցյալ անկատարի (Նստում էի) և անցյալ կատարյալի (Նստեցի) ձևերով: Նախորդականությունը արտահայտելու համար արդի հայերենում առանձին բայաշարք է ստեղծված: Սա նախորդի նստել էի շարքն է, որի հանդեպ նախադասության մեջ տրվում է (կամ ենթադրվում է) անցյալ կատարյալի ձևը, որ այդ դեպքում արտահայտում է հաջորդ-

---

1 А. Гарибян, Краткий курс арм. языка, 1944, стр. 78.

2 Ա. Ղարիբյան, Դասագիրք, էջ 196:

3 А. Гарибян, Краткий курс арм. языка, стр. 81.

ությունն։ Օրինակ՝ «Ասում էր, ձկները նոր էի լցրել նավակը, երբ ափին, խոտերի մեջ մի սև ճիպոտ տեսնվեց, շվվոց լսվեց ու մի բարակ, սև օձ, բերանը բաց էնպես նայեց ինձ, որ տեղումս քարացա։ Դա կծիկ դառավ ու իրեն շպրտեց նավակիս մեջ։ Դեռ ուշքի չէի եկել, երբ տեսա, որ ափը լցվեց օձերով»[1]։

Առանձին շարքերով են արտահայտվում նաև եղանակի կատեգորիայի ենթակատեգորիաները՝ ըղձական եղանակը (ըղձականի շարքով՝ նստեմ), պայմանական եղանակը (պայմանականի շարքով՝ նստեի) և հետևանքային եղանակը (հետևանքային շարքով՝ կնստեի), բայց այս վերջինը ունի կատարյալ կերպ և նրա հանդեպ լեզվի մեջ գոնվում է էլի մի բայաշարք, որ արտահայտում է անկատար կերպ։ Սակայն, քանի որ հետևանքային եղանակը ավելի հըստակորեն արտահայտվում է կատարյալ կերպի բայով, նրա անկատար ձևը չի գործածվում այս եղանակը դրսևորելու համար։ Հետևանքային անկատարի շարքը գործածվում է ավելի շուտ առանձին, քան պայմանական նախադասություններում։

Ահա թե ինչով է հայոց լեզուն հարուստ։ Այս շարքերով արտահայտվում են առանձին քերականական (խոնարհման) կատեգորիաներ, իսկ այս կատեգորիաներով (և ոչ թե ժամանակներով) իսկապես որ հարուստ է արդի հայերեն լեզուն։ Սրանով է բացատրվում հայոց լեզվի ճկունությունը։ Նա հարուստ է միտքն արտահայտելու նուրբ միջոցներով, քերականական կատեգորիաներով։

8. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

Ա մ փ ո փ ու մ

Պարզվում է, որ արդի հայերենի քերականության կողմից խոնարհման կատեգորիաներից ճանաչված են միայն դեմքի, թվի, ժամանակի, եղանակի և կերպի կատեգորիաները։ Բայի անալիզը ցույց է տալիս, որ բացի հիշված խոնարհման կատեգորիաներից արդի հայերենում գոյություն ունեն նաև ակտի, հաջորդականության և աստատուսի կատեգորիաներ։ Քանի որ այս վերջին կատեգորիաները մինչ այժմ հայտնաբերված չէին, այդ կատեգորիաները շփոթվում են լեզվաբանների կողմից ժամանակի, եղանակի և կերպի կատեգորիաների հետ։ Այս է պատճառը, որ ժամանակի, եղանակի և կերպի կատեգորիաների մասին հայոց լեզվաբանական գրականության

---

2 Վ. Աճառյան, *Որսորդական պատմվածքներ*, պրակ Ե, էջ 364։

մեջ կա ոչ ճիշտ պատկերացում։ Ժամանակի, եղանակի և կերպի կատեգորիաների մասին եղած այդ պատկերացումը քննադատելու ընթացքում արդեն խոսել ենք նոր հայտնաբերված՝ ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիաների վերաբերյալ։ Դրա համար էլ այստեղ այդ նոր հայտնաբերված կատեգորիաների մասին առանձին խոսելու կարիք չենք զգում։ Մնաց միայն ամփոփել մեր դիտողությունները։

Արդի հայերենի քերականության մեջ բայական ձևերը դասդասված են տասնվեց խմբի։ Ամեն մի բայաձև միաժամանակ գաղափար է տալիս քերականական ժամանակի, եղանակի, դեմքի և թվի մասին, իսկ որոշ բայաձևեր նաև մյուս քերականական կատեգորիաների մասին։ Այսինքն մեկ բայաձև միշտ գաղափար է տալիս մի շարք քերականական կատեգորիաների մասին և այդ այդպես է ոչ միայն հայերենում, այլ նաև այն բոլոր լեզուների մեջ, որոնք ձևաբանությունից զուրկ չեն։ Այս փաստի վրա է հենվում Ա. Շանիձեի շարֆի թեորիան, որի համաձայն քերականություններում խմբավորված բայաձևերը կոչվում են շարֆ, քանի որ ամեն մի բայախմբի մեջ խմբավորվում են մի շարք քերականական կատեգորիաներ։ Խմբի մեջ մտնում են մի քանի անդամներ համաձայն լեզվի կառուցվածքի։ Այս անդամները միմյանցից զանազանվում են դեմքով և թվով (սեռ ունեցող լեզուներում նաև սեռով), բայց չնայած սրան, խմբի այս անդամները սերտորեն կապված են իրար հետ, որովհետև խոնարհման մյուս կատեգորիաներով խմբի անդամները միշտ նույնն են։ Օրինակ, գրում եմ և գրում է իրարից տարբերվում են միայն դեմքով, իսկ մյուս կատեգորիաներով (ժամանակով, եղանակով, կերպով) սրանք նույնն են։ Ամեն մի խումբ մյուսներից տարբերվում է որևէ մի կատեգորիայով (որը չի կարող լինել խմբի մեջ մտնող անդամների զանազանող կատեգորիա՝ դեմք, թիվ, սեռ), կամ ենթակատեգորիայով։

Այս պատճառով է, որ բայաձևերը ամեն մի լեզվի քերականության մեջ դասդասվում են խմբերով, այսինքն շարքերով։ Ստացվում է, որ շարֆը լեզվաբանության մեջ նորություն չէ. շարքերով դասված բայախմբերի հանդիպում ենք բոլոր լեզուների քերականության մեջ։

Այսպիսի բայախմբեր տրված են և հայերենի քերականություններում մեջ, բայց քանի որ ամեն մի բայաձևի մեջ ժամանակի և եղանակի գաղափարը միշտ գտնվում է, այս խմբերն անվանել են միայն ժամանակի և եղանակի հատկանիշով։ Ճիշտ այդպես էր նաև առաջ

վրացերենի քերականությունում։ Այս պատճառով ստեղծվել էր սխալ գաղափար, կարծես թե այս բայախմբերը միմյանցից տարբերվում են միայն ժամանակով։ Այս հանգամանքն է խանգարել նաև հայոց լեզվի ուսումնասիրողներին գտնելու այս խմբերի մեջ արտահայտված ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիաները իրենց ենթակատեգորիաներով։

Ինչպես Ա. Շանիձեն վրացերենում, մենք ևս հայերենում բայախմբերին մոտեցանք որպես անկախ բայախմբերի և ոչ որպես միմյանցից միայն ժամանակով տարբերվող խմբերի։ Այս նոր տեսակետը նոր լույս է սփռում արդի հայերենի բայի կառուցվածքի վրա։ Պարզվում է, որ արդի հայերենում ունենք ոչ միայն ժամանակի, եղանակի, կերպի, թվի և դեմքի խոնարհման կատեգորիաներ, այլև այլ կատեգորիաներ իրենց ենթակատեգորիաներով։ Այդ կատեգորիաներն են՝

1. Շարքի կատեգորիա: Մենք արդեն նշեցինք, որ Ա. Շանիձեի կողմից առաջարկած շարքի թեորիան մտել է գործածության մեջ, բայց ոմանք գտնում են, որ շարքը քերականական կատեգորիա չէ, թեև ինքնին շարքի գոյության փաստը ոչ ոք չի առարկում։ Մենք չենք ուզում այս հարցում բանավեճի մտնել, որովհետև այդ մեր նպատակներից դուրս է, բայց քանի որ ամբողջ աշխատությունը հենվում է Ա. Շանիձեի շարքի թեորիային, չի կարելի այստեղ մեր կարծիքը չարտահայտել։ Մեր կարծիքով շարքը քերականական կատեգորիա է, քանի որ օգնում է մեզ ավելի խորաթափանց լինելու երևույթի էության մեջ։

Բայց ինչպես նկատում է Ա. Շանիձեն, շարքը բարդ կատեգորիա է և սրանով տարբերվում է մյուս կատեգորիաներից։ Շարքի կատեգորիայի մեջ մտնում են խոնարհման բոլոր պարզ կատեգորիաները և ենթակատեգորիաները։

Շարքը դաղափար է տալիս բայաձևերի խմբերի մասին այդ սլաբրզ կատեգորիաների շնորհիվ։ Ամեն մի բայախումբ մյուսներից տարբերվում է որևէ մեկ պարզ կատեգորիայով կամ ենթակատեգորիայով, իսկ խմբի մեջ գումարած ձևերը միմյանցից տարբերվում են դեմքի և թվի (մի քանի լեզուների մեջ նաև սեռի) խոնարհման կատեգորիաներով և ենթակատեգորիաներով։ Հենց այս է պատճառը, որ ցարդ շարքի կատեգորիան ոչ մի լեզվի քերականության մեջ առանձնացված չէր որպես առանձին կատեգորիա. այդ լեզուների քերականությունների մեջ շարքի, ժամանակի, եղանակի և մյուս խոնարհման կատեգորիաները, որոնք մասնակցում են բայաձևերի խմբավորման մեջ, շփոթվում են միմյանց հետ, որի հետևանքով

հաճախ անհնարին է դառնում այս կամ այն լեզվի քերականության մեջ առանձնացնել խոնարհման ամեն մի կատեգորիա մյուսներից։

Այսինքն Ա. Շանիձեի կողմից ընդհանուր լեզվաբանության մեջ մտցրած շարքի թեորիան, օգնում է մեզ լեզուներում եղած խոնարհման կատեգորիաների մասին, լեզուների կառուցվածքի մասին ճիշտ գաղափար ստեղծել։ Մեզ այսքանը բավարարում է, իսկ իսկապես առանձին կատեգորիա է շարքը, թե ոչ, այս հարցը մեզ չի հետաքրքրում։

Այսպիսով՝ հենվելով Ա. Շանիձեի շարքի թեորիային, արդի հայերենում մենք հաստատում ենք մի քանի նոր կատեգորիաներ և ենթակատեգորիաներ ու ճշտում ենք արդեն առանձնացած կատեգորիաների (ժամանակի, եղանակի և կերպի) և նրանց ենթակատեգորիաների մասին եղած տեսակետը։

Շարքի ենթակատեգորիաներ կլինեն բոլոր այն կատեգորիաները և ենթակատեգորիանները, որոնք մասնակցում են շարքեր ստեղծելու գործում։ Սրանք են՝

1. Դեմքի կատեգորիա երեք ենթակատեգորիաներով՝ առաջին, երկրորդ և երրորդ դեմքեր։

2. Թվի կատեգորիա երկու ենթակատեգորիաներով՝ եզակի և հոգնակի։

3. Ժամանակի կատեգորիա երեք ենթակատեգորիաներով՝ ներկա, անցյալ և ապառնի։

4. Եղանակի կատեգորիա հինգ ենթակատեգորիաներով՝ սահմանական, ըղձական, պայմանական, հետևանքային և հրամայական։

5. Կերպի կատեգորիա երկու ենթակատեգորիաներով՝ կատարյալ և անկատար։ (Անկերպ ձևերը, իհարկե, չեն մտնում կատեգորիայի մեջ)։

6. Ակտի կատեգորիա երկու ենթակատեգորիաներով՝ տեսած և չտեսած։

7. Հաջորդականության կատեգորիա երեք ենթակատեգորիաներով՝ միաժամանակության (համաժամանակություն), նախորդության և հաջորդության։

8. Ստատուսի կատեգորիա երկու ենթակատեգորիաներով՝ դինամիկ և ստատիկ։

Այս ութ պարզ կատեգորիաներն աշխարհաբարում դրսևորվում են 22 ենթակատեգորիաներով։ Իսկ եթե հետևենք Ա. Շանիձեին և շարքի բարդ կատեգորիայի ենթակատեգորիանները համարենք շար-

քերը, այսինքն բայաձևերի խմբերը (որոնք հայ լեզվաբանական գրականության մեջ անվանվում են ըստ ժամանակի), կստացվի, որ արդի հայերենում 36 ենթակատեգորիաներ են դրսևորվում։ Եթե սրանց ավելացնենք բայի դերիվացիոն կատեգորիաները ևս (սեռի, պատճառականության, բազմապատկականության, շարունակականության և այլն), ավելացնենք նաև հոլովման կատեգորիաները, կպարզվի թե ինչով է հարուստ հայոց լեզուն։ Նա հարուստ է միտք արտահայտելու միջոցներով, քերականական կատեգորիաներով և ոչ ժամանակով։

Խոնարհման այս պարզ կատեգորիաները և ենթակատեգորիաները դրսևորվում են բայական տասնչորս շարքերով։ Բացի դեմքի և թվի խոնարհման կատեգորիաներից աշխարհաբարում ոչ մի խոնարհման կատեգորիա չունի իր սեփական ձևաբանական նշանը։ (Բացառություն է կազմում նաև կերպի կատեգորիան, որը միայն մի դեպքում՝ կատարյալ ապառնի և սրանից կազմված կատարյալ հետևանքային կազմելու համար ունի կը մասնիկը)։ Այս կատեգորիաների մասին գաղափար են տալիս բայաշարքերի համադրությունները, քանի որ այս շարքերը հակադրվում են իրար հակադիր ենթակատեգորիաներ արտահայտելով։ Օրինակ՝ գրում էր և գրեց... շարքերի ձևերը ժամանակով անցյալ են, եղանակով՝ սահմանական, բայց կերպով առաջինը (գրում էր) արտահայտում է անկատար, իսկ մյուսը՝ կատարյալ կերպ։ Կամ՝ գրել է և գրեց շարքերի ձևերը ժամանակով, եղանակով, կերպով, դեմքով նույնն են, բայց այս ձևերի համեմատությունից պարզվում է, որ նրանք իրարից տարբերվում են ակտի կատեգորիայով։ Գրել է ցույց է տալիս չտեսած ակտ, իսկ գրեց՝ տեսած ակտ։

Ի՞նչ են արտահայտում թվարկված խոնարհման կատեգորիաները։

1. Դեմքի կատեգորիան գաղափար է տալիս գործող դեմքի մասին, թե որն է գործողը՝ առաջին դեմքը, երկրորդը, թե երրորդը։ (Վրացերենում դեմքի կատեգորիան գաղափար է տալիս նաև ուղիղ և անուղղակի օբյեկտների մասին)։ Դեմքի կատեգորիայի ենթակատեգորիաներն են հենց այդ դեմքերը՝ առաջին դեմքը, երկրորդը և երրորդը։

2. Թվի կատեգորիան գաղափար է տալիս գործողի թվի մասին՝ եզակի է գործողը, թե՝ հոգնակի։ Եվ թվի այս եզակիությունն ու հոգնակիությունը թվի կատեգորիայի ենթակատեգորիաներն են։

3. Ժամանակի բերականական կատեգորիան ցույց է տալիս

գործողության կամ եղելության հարաբերումը խոսքի մոմենտին։ Եթե գործողության (կամ եղելության) կատարման ժամանակը համընկնում է խոսքի մոմենտին, գաղափար է ստացվում ներկա ժամանակի մասին (նստում է, նստած է)։ Եթե գործողության (եղելության) կատարման մոմենտը նախորդում է խոսքի մոմենտին, գաղափար է ստացվում անցյալ ժամանակի մասին (նստում էր, նստած էր, նստեց, նստել է, նստել էր, նստեր, կնստեր, նստելու էր), իսկ եթե գործողության (եղելության) կատարման մոմենտը հաջորդում է խոսքի մոմենտին, գաղափար է ստացվում ապառնի ժամանակի մասին (նստելու է, նստի, կնստի, նստիր, նստեցնք)։ Այլ ժամանակներ աշխարհաբարում չկան։

4. Քերականական եղանակի կատեգորիան ցույց է տալիս, թե ըստ խոսողի ինչպես պիտի հասկանանք խոսողի կողմից արտահայտած գործողությունը՝ որպես իսկակա՞ն, ստո՞ւգ փաստ (նըստում է, նստում էր, նստեց, նստել է, նստել էր, նստած է, նստած էր, կնստի, նստելու է), որպես ի՞ղձ, կարելիությո՞ւն (նստի), որպես պայմա՞ն (նստեր), որպես հետևա՞նք (կնստեր), թե որպես ցանկալի կամ պարտադրելի (նստի՛ր, նստեցե՛ք)։

Այսպիսով, եղանակի կատեգորիան աշխարհաբարում ունի հինգ ենթակատեգորիա։ 1. սահմանական, որ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ ըստ խոսողի ստույգ փաստ է, այդպիսին էր կամ այդպիսին կլինի։ 2. ղեկական, ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը ըստ խոսողի ղեկալի է, կարելի է կամ ենթադրվում է անել։ 3. պայմանական, որը սովորաբար հանդես է գալիս բարդ պայմանական նախադասության մեջ և ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը պայման է հանդիսանում մի այլ գործողության համար։ 4. հետևանքային՝ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը ըստ խոսողի հետևանք կլիներ, եթե իրագործվեր պայմանականի ձևով տված գործողությունը։ Պայմանականի և հետևանքային շարքերի ձևերը սովորաբար միասին են գործածվում պայմանական նախադասությունների մեջ։ 5. հրամայական՝ ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը ըստ խոսողի ցանկալի է իրագործել (կամ չիրագործել), կամ խոսողը պարտադրում է որևէ մեկին իրագործել (կամ չիրագործել) այդ գործողությունը։

5. Կերպի կատեգորիա՝ գաղափար է տալիս գործողության ավարտվածության-անավարտվածության մասին։ Եթե բայաձևը գաղափար է տալիս այնպիսի գործողության մասին, որի վերջը դեռ չի երևում, չէր երևում կամ չի երևալու, այս դեպքում գործ ունենք ան-

կատար կերպի հետ, իսկ եթե այդ բայաձևը գաղափար է տալիս այնպիսի գործողության մասին, որն արդեն ավարտված է, կամ կավարտվի, մենք գործ ունենք կատարյալ կերպի հետ։ Օր. գրում էր—գրեց, գրելու էր—կգրեր...

6. **Ակտի քերականական կատեգորիան** ցույց է տալիս, թե խոսողը տեսել է կամ չի տեսել բայաձևով արտահայտված գործողությունը։ Եթե բայաձևը արտահայտում է այնպիսի գործողություն, որ խոսողը տեսել է, մենք գործ ունենք տեսած ակտի հետ։ Իսկ եթե բայաձևով արտահայտված գործողությունը գաղափար է տալիս, որ խոսողը չի տեսել այդ գործողությունը, դա չտեսած ակտի ձև կլինի։ Աշխարհաբարում չտեսած գործողությունն արտահայտվում է երկու բայաշարքով՝ չտեսածի (նստել է) և նախորդի (նստել էր) շարքերով։ Մյուս շարքերը մեծ մասամբ տեսած ակտն են ցույց տալիս։

7. **Հաջորդականության քերականական կատեգորիան** գաղափար է տալիս թե երկու գործողության միջև ինչպիսի ժամանակային հարաբերություն կա՝ միաժամանակ են կատարվել կամ կատարվելու այդ գործողությունները, թե մեկը մյուսից առաջ։ Եթե գործողությունները համեմատելիս պարզվի, որ նրանք միաժամանակ են կատարվում, մենք գործ կունենանք միաժամանակության ենթակատեգորիայի հետ (ես գրում էի, երբ ընկերս ինձ մոտ եկավ)։ Բայց եթե այդ գործողությունները համեմատելիս պարզվի, որ նրանցից մեկը նախորդում է մյուսին (սա ինքնըստինքյան նշանակում է, որ մյուս գործողությունը հաջորդում է առաջինին), այդ դեպքում գործ կունենանք նախորդման և հաջորդման հետ։

Աշխարհաբարում նախորդության ենթակատեգորիան ցույց տալու համար ունենք առանձին շարք՝ նախորդի շարքը (նստել էր, գրել էր, կարդացել էր) և սրանով արտահայտվում է նաև հաջորդության ենթակատեգորիան։ Հաջորդությունը աշխարհաբարում արտահայտվում է անցյալ կատարյալի ձևերով, որը նախորդ շարքի ձևերի հետ կամ գտնվում է նախադասության մեջ, կամ ինքնըստինքյան ենթադրվում է։ Օրինակ՝ «եկել էր բուժվելու, բայց ինքը նրանից շուտ բուժվեց»[1]:

Այստեղ եկել էր ցույց է տալիս առաջ կատարված գործողություն, իսկ բուժվեց նրանից հետո կատարված գործողություն։

«Մոլլան իր տան առաջ կորեկ էր ցանել»[2]: Այս նախադա-

---

1 Վ. Անանյան, Որսորդական պատմվածքներ, պրակ Ե, 1959, էջ 327։
2 Նույն տեղում, էջ 333։

սության մեջ միայն մի գործողություն է տրված՝ էր ցանել, բայց և այնպես նա արտահայտում է որևէ գործողությունից առաջ կատարված գործողություն։ Բանն այն է, որ ցանել էր արտահայտում է այնպիսի գործողություն, որ խոսողը չի տեսել։ Քանի որ այսպես է, ինչի՞ց գիտե խոսողը որ ցանելու գործողությունն արդեն կատարված է և իսկական, ստույգ փաստ է։ Նրանից, որ խոսողը տեսել է այս գործողության հետևանքը (կորեկի արտը) կամ այդ մասին իմացել է ուրիշից։ Այս պատճառով էլ, եթե այսպիսի ձևերի դեմ տրված չէ անցյալ կատարյալի ձևով մյուս բայը, այն ժամանակ անպատճառ ենթադրվում են տեսա, իմացա, հասկացա, ասացին և նման բովանդակության բայեր, որոնք և արտահայտում են հաջորդ գործողությունը։ Այդ բանում համոզվելու համար բավական է վերցնել որևէ բայ նախորդի ձևով (գրել էր, նստել էր, կարդացել էր...) և տեսնել՝ նրա դեմ ենթադրվո՞ւմ են, թե՞ ոչ վերոհիշյալ բովանդակությունն ունեցող բայեր։

Միաժամանակությունը նույնպես կարելի է արտահայտել միայն անցյալ ժամանակում։

8. Ստատուսի (կամ վիճակի, դրության) քերականական կատեգորիան արտահայտվում է կրավորական կամ չեզոք սեռի բայերով և գաղափար է տալիս, թե այդպիսի բայերով արտահայտված գործողությունը ինչպիսի ստատուս ունի՝ դինամիկ՝ թե ստատիկ։ Դինամիկ կլինի այնպիսի ձևը, որ գործողությունը ցույց է տալիս որպես պրոցես (նստում է, գրվում է, նստում էր, գրվում էր...), իսկ ստատիկը այն ձևն է, որը ցույց է տալիս գործողության կատարման հետևանքով ստեղծված դրություն (նստած է, գրված է, նստած էր, գրված էր)։ Այսպիսով, աշխարհաբարում ստատուսի կատեգորիան մասնակիորեն դերիվացիոն կատեգորիա է, քանի որ կրավորական սեռը կազմվում է դերիվացիոն ձևով (-վ ածանցով) և մասնակիորեն էլ խոնարհման կատեգորիա է, քանի որ չեզոք բայերից ստատիկ ձևերը կազմվում են առանց կրավորականի ածանցի։

Վերոհիշյալ քերականական կատեգորիաների մասին մենք խոսել ենք ոչ հիմնավորապես, կանգ ենք առել միայն ամենակարևոր մոմենտների վրա։ Բայց, մեր կարծիքով, այդ մոմենտները գտնելուց հետո հեշտանում է ավելի խորամուխ կերպով և մանրամասնորեն ուսումնասիրել տվյալ կատեգորիաները։

9. ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԿՏԻ, ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏԱՏՈՒՍԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Մենք այստեղ մտադիր չենք մանրամասնությամբ ուսումնասիրել խոնարհման կատեգորիաների զարգացման հարցը հայոց լեզվի մեջ։ Այստեղ ուզում ենք միայն մի քանի դիտողություններ անել այս հարցի շուրջը։ Մեր կարծիքով սա հարկավոր է նրա համար, որ մի քանի խոնարհման կատեգորիաներ, որոնց մասին խոսել ենք վերևում, գրաբարում չկային, իսկ մյուս կողմից՝ վերը քննված բոլոր կատեգորիաները կան վրացերենի մեջ, ինչպես նաև կային հին վրացերենում։ Սակայն չպետք է կարծել, թե հայոց լեզվի մեջ նոր առաջացած կատեգորիաները՝ ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիաները մշակվել են վրացերեն լեզվի ազդեցության տակ։ Եթե ավելի մոտիկից ուսումնասիրենք հայոց լեզվի զարգացման ներքին կանոնները կպարզվի, որ չի կարելի այդպիսի հարց հարուցել։

Եթե ավելի խոր ուսումնասիրենք հայերեն և վրացերեն լեզուների հարաբերությունները և կապերը, գուցե այդ հանգամանքը մեզ որևէ բան տա։ Սակայն այդ լեզուների հարաբերությունները դեռևս այնքան ուսումնասիրված չեն։ Բայց և այնպես, այս հանգամանքն էլ շատ հետաքրքիր է, քանի որ հայ և վրաց ժողովուրդները հարյուրավոր տարիներ բարեկամաբար և միասին ապրել են կողք-կողքի և միասնաբար պայքարել թշնամիների դեմ։ Այսպիսի հարցերի ուսումնասիրությունը մեր պարտքն է, որպեսզի ավելի լավ հասկանանք մեր ժողովուրդների բարեկամության հիմքերը և ավելի ամրապընդենք այդ բարեկամությունը։

Բայց, ինչպես ասացինք, հայերեն և վրացերեն լեզուների հարաբերությունների ուսումնասիրության այժմյան փուլը մեզ դեռևս իրավունք չի տալիս հիշված քերականական կատեգորիաների զարգացման հարցը կապելու վրացերենի ազդեցության հետ, քանի որ դա հեշտությամբ բացատրվում է հայոց լեզվի զարգացման ներքին կանոնաչափով։

Մենք ասացինք, որ գրաբարը չուներ ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիա։ Գրաբարում չկան նաև հետևանքային եղանակի ենթակատեգորիա, ոչ պայմանական եղանակի ենթակատեգորիա, ոչ էլ սահմանական եղանակի ապառնի ժամանակի ենթակատեգորիա։ Գրաբարը չէր էլ կարող ունենալ այդքան խոնարհման կատեգորիաներ, որովհետև նա ուներ ընդամենը յոթ բայաշարք։

Սա, իհարկե, չի նշանակում, որ դրաբարը կարող էր արտահայտել միայն այն կատեգորիաները, որոնց արտահայտելու համար ուներ առանձին շարքեր։ Ոչ, յուրաքանչյուր լեզվով կարելի է արտահայտել մի այլ լեզվի այս կամ այն ձևի բովանդակությունը նույնիսկ այն դեպքում, երբ դրանցից մեկը չունի համապատասխան ձև։ Այսպիսի դեպքում լեզուն դիմում է նկարագրության, վերլուծության։ Օրինակ՝ ռուսերեն լեզուն չունի ակտի կատեգորիա, այսինքն չունի այնպիսի բայաձև, որով խոսողը կարողանա արտահայտել այնպիսի գործողություն, որի ականատեսը նա չի եղել։ Բայց ռուսերեն լեզվով կարելի է արտահայտել հայերեն լեզվի չտեսած գործողություն արտահայտող բայի բովանդակությունը. գրել է—«оказывается, он (она) написал (а)», կարդացել է «оказывается, он (она) прочитал (а)» և այլն։ Այս թարգմանության մեջ բայի բովանդակությունը բավական ճիշտ է արտահայտված, բայց քանի որ համապատասխան ձևը չկա ռուսերենում, դրա համար էլ բովանդակությունը արտահայտված է նկարագրությամբ, վերլուծական սիստեմով։

Այսպիսի միջոցներով յուրաքանչյուր լեզվի ամեն մի ձև կարելի է արտահայտել մի այլ լեզվով։ Բայց, բացի դրանից, լեզուների մեջ նկատվում է մի այլ երևույթ ևս։ Քերականական յուրաքանչյուր ձև բացի իր հիմնական ֆունկցիայից, ունենում է նաև այլ ֆունկցիաներ։

Ահա, թե ինչ է ասում այդ մասին ակադ. Վ. Վինոգրադովը. «Форма настоящего времени несовершенного вида при субъективном смещении перспективы времени может быть применена и к плану прошлого (praesens historicum). Тогда она служит для изображения прошедших фактов как бы совершающимися в момент речи перед глазами слушателя или читателя»[1].

Նույն տեղում նա նկատում է.

«Употребление настоящего времени в значении прошедшего в русском литературном языке, по-видимому, распространилось под влиянием живой народной речи»[2].

Մի մեջբերում ևս.

«Таким образом, синтаксическое употребление форм будущего времени совершенного вида отличается разнообра-

---

1 В. В. Виноградов, Русский язык, 1947, стр. 572—573.

2 Նույն տեղում, էջ 572։

зием модальных оттенков. Вместе с тем, формы будущего времени— при соответствующих синтаксических условиях— способны выражать значения не только настоящего, но и прошедшего действия»[1]:

Օրինակներ կարելի է բերել ուրիշ լեզուներից ևս։ Բայց ուշադրությունդարձնենք միայն աշխարհաբարի վրա։ Հ. Բարսեղյանը գրում է. «Սահմանական եղանակի ներկայի բայաձևերով արտահայտվում են.

ա) ոչ միայն խոսքի մոմենտում, այլև բոլոր ժամանակների համար մշտապես կատարվող գործողություններ...

Վարդը մայիսին է բացվում...

բ) իրար հաջորդող գործողություններ, որոնք իրրև սովորություն միշտ կրկնվում են, բայց ոչ խոսքի մոմենտում, այլ այդ ներկան ևս իր մեջ առնող ամեն մի հարաճիգ ժամանակաշրջանում։ Օրինակ՝ «—Այ, միշտ այսպես է, ոչինչ չի ուտում։ Տուն է գալիս միայն ուշ երեկոյան և մի բաժակ թեյ է խմում։ Չգիտեմ, թե ինչով է ապրում ամբողջ օրը,— գորովանքով կշտամբեց մայրը»։

գ) Մի անցած վերջացած գործողություն, որը կենդանի, տպավորիչ դարձնելու համար խոսողը պատմում է ներկայով։ Այս իմաստով գործածված ձևերը կոչվում են պատմական ներկա։ Պատմական ներկայով արտահայտվում է անցյալում ավարտված իրողությունն իր ողջ ընթացքով։ Օրինակ՝ «Արագի էն երեսին մովրով էի, մին էլ մի գիր եմ ստանում, որ ինձ հալ հալբաթ (շտապ) կանչում են Երևան։ Շտապում եմ, մութը գետինն առնելուս հասնում ու ուղղակի գնում նաչալնիկի մոտ։ —Բարով ես եկել,—քաղցրությունով ձեռս բռնում է նաչալնիկը։ Ես զարմանում եմ, առաջին անգամն էր, որ նրա երեսին ծիծաղ եմ տեսնում...»։

դ) Ապագա գործողություն, որի կատարումը ստույգ է, չի կախված որևէ պայմանից (որպես թե խոսքի մոմենտին կատարվելիս լինի)։ Օրինակ՝ «...Ամսի վերջին սկսվում են մեր քննությունները...», «Վաղը գնում ենք...»[2]։

Զանազան բովանդակություններ կարող են ունենալ և մյուս շարքերը, ինչպես հիշված աշխատության մեջ ցույց է տալիս Հ. Բարսեղյանը[3]։

Քերականական ձևերի բազմիմաստությունը հայտնի բան է լե-

---

1 В. Виноградов, Русский язык, 1947, стр. 577.

2 Հ. Բարսեղյան, *Հիշյալ աշխատութ., էջ 181—182։*

3 *Նույն տեղում, էջեր 184, 190, 198, 205... և այլն։*

դոնների մեջ։ Սա բացատրվում է նրանով, որ օբյեկտիվ իրականությունը լեզուներից շատ ավելի հարուստ է շարժման տեսակներով ու երևույթներով, որոնք արտացոլվում են մարդկանց կողմից և այդ արտացոլումը դրսևորվում է լեզվի մեջ։ Այս պատճառով է, որ լեզվի մեջ գոյություն ունի միայն այն երևույթների արտացոլումը, որոնք արդեն ճանաչված են մարդկանց կողմից։ Իրողության այն երևույթները, որոնք դեռևս չեն ճանաչել մարդիկ, լեզվի մեջ չեն կարող գոյություն ունենալ։ Բայց բանն այն է, որ լեզուն զարգանում է ավելի դանդաղ, քան մտածողությունը, ձևը զարգանում է բովանդակությունից դանդաղ և այս պատճառով լեզուն հաճախ ստիպված է միևնույն քերականական ձևը գործածել զանազան բովանդակությամբ, զանազան ֆունկցիաներով։ Այդ զանազան ֆունկցիաները պետք է ընդունենք որպես հնարավորություն (պոտենցիա) նորանոր կատեգորիաների զարգացման համար։ Այսինքն՝ լեզվի զարգացման պրոցեսում կարող են հետզհետե ձևավորվել նոր կատեգորիաներ իրենց սեփական ձևերով, բայց այդ ֆունկցիաներից մեկն ու մեկը զարգացման պրոցեսում դառնում է հիմնական, իսկ մյուսները հետզհետե ետին պլան են մղվում, կամ այս ֆունկցիաները ճյուղավորվում են։

Այսպիսով, լեզվի զարգացման բոլոր փուլերում ամեն մի քերականական ձևի մեջ թաքնված են նրա զարգացման զանազան հնարավորությունները։ Եթե որոշենք, թե զարգացման ինչ հնարավորություններ են թաքնվում այս կամ այն լեզվի այս կամ այն ձևի մեջ տվյալ էտապում, այն ժամանակ արդեն կարող ենք ասել, որ լեզվի զարգացման ներքին կանոններից որոշ բան արդեն գիտենք։ Բայց, երբ ասում ենք որ այս կամ այն արդյունքը ստացվում է լեզվի ինքնակամ (спонтанный) զարգացման ներքին կանոնների համաձայն և չենք ասում, թե կոնկրետ կերպով ո՞ր ներքին կանոնի համաձայն, սա նշանակում է, որ մենք ոչինչ չգիտենք այդ կանոնների մասին։

Այսպիսով, քերականական ձևի բազմիմաստությունը ցույց է տալիս, որ լեզվի մեջ պահանջ է ծագել՝ արտահայտելու նոր իմաստ, նոր ֆունկցիա, որն արդեն մտածողության մեջ ձևավորված է երևույթի ճանաչման և ընդհանրացման բազայի վրա։

Ինչո՞ւ մենք երկար կանգ առանք բազմիմաստության վրա։ Նրա համար, որ ես եմ և եսել էի, եսած եմ, եսած էի, ձևերը, որոնցով արտահայտվում են ակտի, հաջորդականության և սատատուսի կատեգորիաները, առաջացել են գրաբարի անցյալի դերբայի (-եալ վերջավորությունով) և օժանդակ բայի միասին գործա-

ծությունից։ Այսպիսի ձևերը գրաբարում շատ գործածական են և արտահայտում են զանազան մտքեր ու բովանդակություն։

Միևնույն ժամանակ այս ձևերը գրաբարում չի կարելի ընդունել որպես ինքնուրույն բայաշարքեր։ Չի կարելի այսպես ընդունել, որովհետև՝ ա) անցյալ դերբայի ձևը գործածվում է նաև անվանաբար (գոյական, ածական), բ) նա գործածվում է նաև աբսոլուտիվի (деепричастие) նշանակությամբ, որի պատճառով նա կարող է լինել ստորոգյալ, գ) այդ դերբայով և օժանդակ բայով կազմված ձևերի բովանդակությունները չափազանց շատ են, դ) այդ բովանդակությունները իրարից շատ հեռու են, ե) դժվար է ասել, թե այդ բովանդակություններից ո՞րն է գլխավորը և ո՞րը երկրորդականը, զ) գրաբարը սինթետիկ լեզուէ, բոլոր բայաշարքերը գրաբարում կազմվում են սինթետիկ ձևով, անալիտիկ կերպով կազմված բայաշարքեր գրաբարում բոլորովին չկան և այդպես կազմված ձևերը կխախտեին գրաբարի սիստեմը և վերջապես, է) աշխարհաբարի չտեսածի, նախորդի և ստատիկ շարքերի ձևերին գրաբարում հաճախ համապատասխանում են զանազան բայաձևեր և ոչ միայն դերբայով և օժանդակ բայով կազմված ձևեր։

Այս պատճառով դերբայ+օժանդակ բայ գրաբարում պետք է ընդունենք որպես բաղադրյալ ստորոգյալ և ոչ որպես անկախ բայաշարքեր։

Ահա թե ի՞նչ նշանակություններով (ֆունկցիաներով) էր գործածվում գրաբարում անցյալ դերբայ+օժանդակ բայը։ Մեր ձեռքին եղած շատ հարուստ նյութերից այստեղ բերենք միայն մի քանիսը։ Օրինակները քաղենք միայն Ավետարանի՝ Հովհաննեսի գլխից, որպեսզի ավելի լավ ներկայացնենք, թե որքան տարբեր են այս ձևերի գործածությունները։ Աշխարհաբարով թարգմանությունները բերում ենք աշխարհաբարով թարգմանված ավետարանից[1]։

Օրինակներ.

ա) Գրաբարի անցյալ դերբայը գործածվում է դիմավոր բայերի նշանակությամբ՝

1. Եւ նայեցեալ ընդ Յիսուսի ոմն գնայր, և ասէ, ահաւասիկ Քրիստոս գառն Աստուծոյ (1, 36. տե՛ս նաև 1, 42)։

Եվ մտիկ տուավ Յիսուսին, որ ման էր գալիս, և ասաց. ահա աստուծոյ գառը։

2. Զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս եկեալ ի Հրէաս-

---

1 «Նոր կտակարան», Կոստանդնուպոլիս, 1911։

տանէ ի Գալիլեա (4, 54)։ Սա դարձեալ երկրորդ նշանն արաւ Յիսուսը, երբ որ Հրեաստանիցն եկաւ Գալիլեա։

3. Իսկ իբրև ստիպեցին հարցանելով ցնա, հայեցեալ ի վեր՝ ասէ ցնոսա՝ անմեղն ի ձենջ՝ նախ նա ընկեսցէ զքար ի վերայ դորա (8,7)։

Բայց երբ որ ստիպում էին հարցնելով նրան, վեր նայեց՝ և ասաց, ձեղանից ով որ անմեղ է, թող առաջ նա քար գցի դրա վրա։

4. Եւ լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոց մինչև ի վերջինսն (8, 9)։ Նրանք էլ երբ որ լսեցին... մեկը մեկի հետից դուրս էին գնում, ծերերից սկսած մինչև հետինները...

5. Իսկ Մարեամայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան աղնուի մեծագնոյ, էօծ զոտսն Յիսուսի, և հերով իւրով մաքրէր զոտս նորա (12, 3)։ Մարիամն էլ մի լիտր նարդոսի աղնիվ մեծագին յուղ առավ, Հիսուսի ոտները օծեց և մազերով սրբում էր նրա ոտները։

6։ Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա, որպէս և գրեալ է (12, 14, տե՛ս նաև 13, 4, 13, 30)։

Եվ Հիսուսը մի ավանակ գտավ և նրա վրա նստեց, ինչպես գրված է։

7. Եւ ապա առեալ ջուր՝ էարկ ի կոնք, և սկսաւ լուանալ զոտս աշակերտացն... (13,5)։

Հետո ջուր ածեց կոնքը, և սկսեց աշակերտների ոտները լվանալ...

8. Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին ձգեցից առ իս։ Զայս ասէր, նշանակեալ՝ թէ որու մահու մեռանելոց իցէ (12, 32—33)։

Եվ ես երբ որ բարձրանամ երկրիցը, ամենքին կքշեմ ինձ մոտ։ Եվ այս ասում էր, որ ցույց տա, թե ինչպիսի մահով պիտի մեռնի։

բ) Գրաբարի անցյալ դերբայը (օժանդակ բայի հետ միասին) գործածված է անցյալ անկատարի նշանակությամբ՝

1. Նա էր հրագն, որ լուցեալ էր և ծագիւր և դուք կամեցայք ցնծալ առ ժամանակ մի ի լոյս նորա (5, 35)։

Նա այն հրագն էր, որ վառվում էր և լույս էր տալիս, և դուք կամեցաք մի առժամանակ ուրախանալ նրա լույսովը։

գ) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի հետ գործածվում է պայմանական և հետևանքային նշանակությամբ՝

1. Թէ սիրէիք զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր երթամ (14, 28)։

Թե ինձ սիրեիք, ապա ուրախ կլինեիք՝ որ ասացի հոր մոտ եմ գնում։

դ) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայով համապատասխանում է աշխարհաբարի ներկայի շարքին՝

1. Այս է հացն, որ յերկնից իջեալ է (6, 50)։ Սա է այն հացը, որ երկնքից է իջնում:

2. Ընդ իս ցասուցե՞ալ էք՝ զի զողջույն իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու (7, 23)։

Ինձ բարկանո՞ւմ եք, որ ես ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրը։

3. Բայց արդ ասէք, եթէ տեսանեմք՝ և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են (9, 11)։ Բայց հիմա ասում եք, թե տեսնում ենք, նրա համար ձեր մեղքերը մնում են:

ե) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի ներկայով համապատասխանում է աշխարհաբարի չտեսածին՝

1. Յանձանէ իմմէ ոչ եմ եկեալ (7, 28)։ Ես իմ անձից չեմ եկել:

2. Ի մեղս իսկ ծնեալ ես ամենևին և դու վարդապետ լինե՞ս մեր (9, 34)։ Դու բոլորովին մեղքի մեջ ես ծնվել և դո՞ւ ես մեզ սովորեցնում։

3. Տէր, ահաւասիկ՝ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է (11, 3)։ Տեր, ահա նա՝ որին դու սիրում ես՝ հիվանդացել է:

4. Վարդապետն եկեալ է և կոչէ զքեզ (11, 28)։

Վարդապետը եկել է և կանչում է քեզ։

5. Ես այդ իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեան (18, 37)։

Ես դրա համար եմ ծնվել և եկել աշխարհ, որ ճշմարտությունը վկայեմ։

6. Զևևս ելեալ եմ առ Հայր իմ (20, 17)։

Դեռ չեմ վեր ելել իմ Հոր մոտ։

7. Եկայք և տեսէք զայր իմ, որ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ է (4, 29)։

Եկեք տեսեք մի մարդ, որ ինձ ասաց բոլորը, ինչ որ գործել եմ:

8. ...Ամբարձէք զաչս ձեր և տեսէք զարտորայսն, զի սպիտակացեալ են և ի հունձս հասեալ (4, 35)։

Բարձրացրեք ձեր աչքերը և տեսեք արտերը, որ սպիտակացել են և արդեն հնձին հասել:

զ) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի առաջին ապառնի ձևով համապատասխանում է աշխարհաբարի նույն չտեսածի շարքին՝

1. Երանի, որոց ոչ իցէ տեսեալ՝ և հաւատասցեն (20, 29)։

Երանի նրանց, որ չեն տեսել և հավատում են։

2. Եւ եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ ի հարութիւն կենաց. և որոց զչար արարեալ ի յարութիւն դատաստանաց (5, 29)։

Եվ դուրս կգան նրանք, որ բարին են գործել՝ դեպի կյանքի հարությունը, նրանք, որ չար են արել՝ դեպի դատաստանի հարությունը։

3. Ասէ ցնա թագաւորազն, Տէր, էջ մինչչև մեռեալ իցէ մանուկն իմ (4, 49)։

Ազնվականը նրան ասաց. Տէր, իջիր դեռ քանի որ չի մեռել երեխաս։

4. Իբրև ոչ եթէ զհայր ուրուք տեսեալ իցէ։ Եթէ ոչ՝ որ էն յաստուծոյ, նա եւս զհայր (6, 46)։

Իբր չէ թե մեկը տեսել է Հորը, բայց միայն նա, որ աստվածանից է, նա տեսել է Հորը։

5. Զև իցէ հաւու խոսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս (13, 38)։

Հավը դեռ չի խոսիլ, որ դու երեք անգամ կուրանաս ինձ։

է) Դրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի ներկայով ստատիկ ներկայի նշանակություն ունի՝

1. Ժամանակ իմ չև է հասեալ, բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է (7, 6)։

Իմ ժամանակը դեռ հասած չէ, բայց ձեր ժամանակը միշտ պատրաստ է։

2. Իմ ժամանակ չև է լցեալ (7, 8)։

Իմ ժամանակը դեռ լրացած չէ։

3. Ո՞չ յօրէնս ձեր գրեալ է, ես ասացի թէ աստուածք իցէք (10, 34)։

Գրված չէ՞ ձեր օրենքումը, թե ես ասացի՝ աստվածներ եք։

4. Զբանս, զորս ես խոսիմ ընդ ձեզ, ոչ եթէ յանձնէ ինչ խոսիմ. այլ հայրն, որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն (14, 10)։

Այն բանն՝ որ ես խոսում եմ ձեզ հետ, իմ անձիցը չեմ խոսում, բայց հայրը՝ որ ինձանում բնակած է, նա է գործում այդ գործերը։

5. Որ հաւատայ ի նա, ոչ դատապարտեսցի, և ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն միածնի որդւոյն աստուծոյ (3, 18)։

Նրան հավատացողը չի դատապարտվիլ, իսկ չհավատացողն արդեն դատապարտված է, որովհետև չհավատաց աստծո միածին որդու անունին։

6. Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ եմ առաջի նորա (3, 28)։

Դուք ինքներդ վկայում եք ինձ համար, որ ասացի ձեզ, թե ես Քրիստոսը չեմ, այլ թե նրա առաջից ուղարկված եմ:

7. Արդ՝ այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է (3, 20)։

Արդ իմ այս ուրախությունը լցված է:

8. Այլ այն խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտէ զօրենս, և նզովեալ են (7, 48)։

Այլ այդ ամիկ ժողովուրդը, որ օրենքը չգիտե, անիծված են:

9. Եւ յօրենս իսկ ձեր գրեալ է՝ թէ երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է (8, 17)։

Եվ ձեր օրենքումն էլ գրված է, թե երկու մարդկանց վկայությունը ճշմարիտ է։

ը) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի առաջին ապառնիի ձևերով նույն ստատիկ նշանակությունն ունի՝

1. Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է (11, 39)։

Տեր, արդեն հոտած է, որովհետև չորս օրվա է։

թ) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի անցյալի ձևերով արտահայտում է աշխատհարաւոի նախորդ շարքի բովանդակությունն՝

1. Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. տուր ինձ ըմպել։ Զի աշակերտքն նորա երթալ էին ի քաղաք անդր՝ զի կերակուրս գնեսցին (4, 8)։

Արդ Սամարիայից մի կին եկավ, որ ջուր հանէ. Հիսուսը նրան ասաց. ինձ ջուր տուր խմեմ։ Որովհետև նրա աշակերտները քաղաք էին գնացել, որ կերակուր առնեն։

2. Ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ էր (4, 39)։

Ասաց ինձ բոլորը ինչ որ գործել էի:

3. Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց, եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Այլ յորժամ եկն նա ի Գաղիլեա ընկալան զնա գաղիլեացիքն. զի տեսեալ ևս էր զամենայն նշանսն, զորս արար յերուսաղեմ ի տօնին, քանզի և նոքա եկեալ էին ի տօնն (4, 45)։

Որովհետև Հիսուսն ինքը վկայեց, թե մարգարեն իր հայրենիքումը պատիվ չունի։ Բայց, երբ որ Գալիլեա եկավ, գալիլեացիները ընդունեցին նրան. տեսնելով այն բոլորն, որ տօնին արավ Երուսաղեմումը, որովհետև նրանք էլ եկել էին այն տոնին։

4. Իսկ դրացիքն և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն եթէ մուրացիկ էր, ասէին... (9, 8)։

Բայց դրացիները և նրանք, որ առաջուց տեսել էին նրան, որ կույր էր, ասում էին...

5. Պատուէր տուեալ էր քահանայապետին և փարիսեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է՝ դուշակեսցեն զնմանէ, զի կալցեն զնա (11, 56)։

Քահանայապետները և փարիսեցիները հրաման էին տվել, որ եթե մեկը գիտենա թե ուր է, իմաց տա, որ բռնեն նրան։

6. Եւ այնչափ նշանս առաջի նոցա. և նոքա ոչ հաւատացին ի նա (12, 37)։

Եվ թեպետ նա այնքան նշաններ արել էր նրանց առաջին, նրանք չէին հաւատում նրան։

7. Եւ ի լինիլ ընթրեացն, սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ, զի մատնեսցէ զնա Յուդա Սիմօնի Իսկարիոտացւոյ (13, 2)։

Եվ երբ որ ընթրիք էր լինում, սատանան արդեն Յուդա Սիմոնեան Իսկարիոտացու սրտի մեջ էր գցել, որ մատնե նրան։

8. Բազումք ի հրէիցն՝ որք եկեալ էին առ Մարիամաւ, իբրև տեսին՝ զոր արարն՝ հաւատացին ի նա (11, 45)։

Եվ հրեաներից շատերը, որ Մարիամի մոտ էին եկել և տեսան ինչ որ արավ Հիսուսը, հավատացին նրան։

ժ) Գրաբարի անցյալ դերբայը օժանդակ բայի անցյալի ձևերով արտահայտում է ստատիկ անցյալի շարքի բովանդակություն՝

1. Եւ էր մի ոմն յաշակերտացն բազմեալ առ Հիսուսիւ՝ զոր սիրէրն Յիսուս (13, 23)։

Եվ նրա աշակերտներից մեկը Հիսուսի գոգին նստած էր, որին Հիսուսը սիրում էր։

2. Եւ էր ի տեղւոջն՝ յորում խաչեցաւ՝ պարտէզ. և ի պարտիզի անդ գերեզման նոր. յորում ոչ ոք երբեք էր եդեալ (19, 41)։

Եվ այն տեղը, ուր ոչ խաչվեց, մի պարտեզ կար, և այն պարտեզում մի նոր գերեզման, որ նրանում երբեք ոչ ոք չէր դրված։

3. Զայս ասէր վասն հոգւոյն՝ զոր ընդունելոց էին, որք հաւատային ի նա. զի չև էր հոգի տուեալ, քանզի Յիսուս չև էր փառաւորեալ (7, 39)։

Սա ասաց այն հոգու համար, որ ընդունելու էին նորա հավատացողները, որովհետև դեռ սուրբ հոգին տրված չէր, որովհետև Հիսուսը դեռ չէր փառավորված։

4. ...Յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա... (12, 16)։

Եվ երբ Հիսուսը փառավորվեցավ՝ այն ժամանակ հիշեցին, թե այս նրա համար գրված էր...

5. ...Եւ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն, և սրբէր լինջական՝ զոր սփածեալն էր (13, 5)։

Եվ սկսեց աշակերտների ոտները լվանալ, և այն լենջակովը սրբել, որ մեջքին պատած էր:

6. Գրեաց և տախտակ մի Պիղատոս, և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ՝ Յիսուս Նազովրեցի, թագաւոր հրէից (19, 19):

Պիղատոսը մի տախտակ էլ գրեց, և խաչի վրա դրեց. և գրված էր Հիսուս Նազովրեցի թագավոր հրեից:

7. եկին զինվորքն և զառաջնոյն խորտակեցին զբարձս նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն ելեալ էր (19, 32):

Զինվորներն էլ եկան և առաջինի սրունքները ջարդեցին, այնպես էլ մյուսինը, որ նրա հետ խաչված էր:

8. Եւ էր երեկոյ ի միշաբաթոջ աւուրն. և դրօք փակելօք՝ ուր էին աշակերտքն ժողովեալք վասն ահին հրէից. եկն Յիսուս և եկաց ի միջի նոցա... (20, 19):

Եվ նույն օրը, միաշաբթի կիրակումը, երբ որ դռները փակված էին, այնտեղ, ուր որ աշակերտները ժողովված էին հրեաների վախից, Հիսուսը եկավ և նրանց մեջ կանգնեց:

9. ...Եւ էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն և հունարէն (19, 20):

Եվ գրված էր եբրայերեն, հունարեն և լատիներեն:

Եթե շրջենք մեր համեմատության եղանակը և աշխարհաբարի չտեսածի, նախորդի և ստատիկ շարքերի ձևերը համեմատենք դրաբարի հետ, կպարզվի, որ դրաբարում չտեսածի և նախորդի բովանդակությունը հաճախ արտահայտվում է անցյալ կատարյալի շարքով, իսկ ստատիկ ներկայի և անցյալի բովանդակությունը՝ ներկայի և անցյալ անկատարի, նաև անցյալ կատարյալի շարքերով: Այսպես՝

ա) Աշխարհաբարի չտեսածի շարքին համապատասխանում է դրաբարի անցյալ կատարյալի շարքը:

1. Տէր, եթէ ենջեաց ապա ապրի (11, 12):

Տեր, թե որ ճնել է՝ կառողջանա:

2. Զայս խոսեցայ ընդ ձեզ. զի ընդ իս զխաղաղութիւն ունիցիք. յաշխարհի աստ զնեղութիւն ունիցիք, այլ քաջալերեցարուք, զի ես հաղթեցի աշխարհին:

Այս բաները խոսեցի ձեզ հետ, որ ինձանում խաղաղություն ունենաք. աշխարհումը նեղություն կունենաք, բայց քաջացեք, ես հաղթել եմ աշխարհին:

3. Զի՞ հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որք լուանան, եթէ զինչ ասացի ցնոսա. ահաւասիկ նոքա գիտեն զինչ ասացի ես (18, 21):

Ինչո՞ւ ես ինձ հարցնում, լսողներին հարցրու, թե ես ինչ խոսեցի նրանց. ահա նրանք գիտեն, ես ինչ եմ ասել:

4. Տէր, եթէ դու բարձեր ղնա՝ ասա ինձ, ուր եդեր ղնա՝ զի ես առից ղնա (20, 15):

Տեր, եթե դու վեր առար նրան, ասիր ինձ՝ ուր ես դրել նրան, որ ես վեր առնեմ նրան:

5. Գիտաց Յիսուս՝ զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նոցա. և թէ յաստուծոյ էլ՝ և առ աստուած երթայ. յառնէ յընթրեաց անտի, և դնէ զհանդերձան և առեալ զղենջակ մի՝ սփածաւ (13, 3):

Հիսուսը գիտենալով որ Հայրն ամեն բան իր ձեռքն է տվել, և որ աստվածանից դուրս եկավ, և աստծո մոտ է գնում. ընթրիքիցը վեր կացավ և հանդերձները վայր դրեց և մի ղենջակ առավ իր մեջքը պատեց:

6. Եւ ամենայն, որ կենդանի է՝ և հաւատայ յիս, մի մեռցի ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ: Ասէ ցնա. այո, տէր, ես հաւատացի եթէ դու ես Քրիստոսն որդի աստուծոյ, որ յաշխարհ գալոց էիր (11, 27):

Եվ ամեն ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատո՞ւմ ես սրան: Նրան ասաց. այո, տեր, ես հավատացել եմ, թե դու ես Քրիստոսն՝ աստծո որդին, որ պետք է աշխարհ գայիր:

7. Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս ատեաց (15, 18):

Եթե աշխարհը քեզ ատում է, գիտցէք, որ ինձ ձեզնից առաջ է ատել:

բ) Աշխարհաբարի նախորդ գործողության բովանդակությունն էլ արտահայտվում է գրաբարի անցյալ կատարյալի շարքի ձևերով երբեմն էլ անցյալ անկատարի շարքերով: Այսպես՝

1. Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ. բայց սպասաւորքն գիտէին՝ որք առկին զջուրն խօսի ընդ փեսային տաճարապետն (2, 9):

Եվ երբ որ վերակացուն այն գինի դրված ջուրը ճաշակեց, (և չգիտեր թե ինչ տեղից է, բայց սպասավորները գիտեին՝ որ ջուրը լցրել էին) սեղանապետը փեսային կանչեց:

2. Եւ իբրև նսեմացաւ և չև ևս եկեալ էր առ նոսա Յիսուս (6, 17):

Եվ արդեն մթնել էր և Հիսուսը չէր եկել նրանց մոտ:

3. Այլ Յիսուս վասն մահու նորա ասէր. նոցա այսպես թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէր (11, 13):

Բայց Հիսուսը նրա մահվան համար էր ասել. նրանք էլ կարծում էին, թե քուն քնելու համար էր ասում։

գ) Գրաբարի անցյալ կատարյալի և անցյալ անկատարի շարքերով արտահայտվում է նաև աշխարհաբարի ստատիկ ներկայի և ստատիկ անցյալի բովանդակությունը՝ օրինակ.

1. Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ երաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնեցելոյ (9, 32)։

Աշխարհի սկզբից հետե չէ լսված, որ մեկը կույր ծնվածի աչքերը բացած լինի։

2. Ի վերջին աւուր մեծի տօնին կայր Յիսուս՝ աղաղակէր և ասէր... (7, 37, 11, 58, 12, 29)։

Եվ տոնի վերջին մեծ օրումը Հիսուսը կանգնած էր, աղաղակեց և ասաց...

3. Մարիամ նստէր անդէն ի տան (11, 20, 12, 29)։

Մարիամը տանը նստած էր։

Աշխարհաբարի -ած- և -ել- վերջավորություն ունեցող դերբայներով կազմված բայաշարքերի մյուս ավելի հազվադեպ համապատասխանող ձևերի մասին այստեղ կարելի է չերկարացնել։ Բերված օրինակներից էլ կարող ենք եզրակացնել, որ -եալ- վերջավորություն ունեցող դերբայ+օժանդակ բայ գրաբարում առանձին, անկախ բայաշարքեր չեն եղել, որովհետև այսպիսի բայաձևերը իրենց սեփական նշանակությունը (բովանդակություն) չունեն։ Նրանք նախադասության մեջ կատարում էին բաղադրյալ ստորոգյալի դեր և նայած, թե ինչպիսի բայաձևերով էին շրջապատվում, մոտավորապես նույնպիսի նշանակություն էին ստանում։ Գրաբարի անցյալ դերբայ+օժանդակ բայ կարող էր արտահայտել և անցյալ ժամանակ, և ներկա ժամանակ, կարող էին արտահայտել և սահմանական եղանակ, և պայմանական, և հետևանքային։ Կարող էին արտահայտել և նախորդ գործողություն, և չտեսած գործողություն, բայց միևնույն ժամանակ գրաբարը շատ անգամ ուշադրություն չէր դարձնում նախորդականության և չտեսածության վրա և այս պատճառով այնպիսի դեպքերում էլ, երբ աշխարհաբարը առավելություն է տալիս չտեսած կամ նախորդ շարքերի գործածությանը, գրաբարը կարող էր գործածել անցյալ կատարյալի կամ որևէ այլ բայաշարք։ Իհարկե, եթե գրաբարում ունենայինք չտեսածի կամ նախորդի հնթակատեգորիաներ, նա այդ նշանակությունն արտահայտելու համար չէր գործածի զանազան ձևեր։

Մյուս կողմից՝ անցյալ դերբայ+օժանդակ բայ, ինչպես տեսանք, գրաբարում ավելի հաճախ համապատասխանում է աշխար-

հաբարի չեհսածի և նախորդի ձևերին։ Կարծես այդ հանգամանքը ստիպում է մեզ, որ այս ձևերը դրաբարում ընդունենք որպես չեհսածի և նախորդի բայաշարք, սակայն այդ նույն ձևերը հաճախ համապատասխանում են աշխարհաբարի ստատիկ ներկայի և անցյալի ձևերին։

Այսինքն՝ դրաբարի դերբայական ձևերը նույն իրավունքով կարելի է ընդունել որպես ստատուսի կատեգորիա արտահայտող ձևեր։ Դուրս է գալիս, որ մեկ ձևը կարող է երկու հիմնական բովանդակություն ունենալ։ Իհարկե, մեկ բայաձևը կարելի է գործածել զանազան նշանակությամբ, բայց այս նշանակություններից հիմնական նշանակությունը կարող է միայն մեկը լինել։ Մյուսները նրա երկրորդական նշանակություններն են ցույց տալիս։ Բայց այդ նշանակությունները հնարավորություն են ստեղծում մի նոր կատեգորիայի զարգացման համար, կամ գուցե այդ նշանակություններից որևէ մեկը կամ մի քանիսը արդեն մեռած կատեգորիաների մնացորդներ են և հետզհետե մեռնում են։ Քերականական բայաձևերը սովորաբար կարող են ունենալ միայն մեկ հիմնական նշանակություն։ Այս պատճառով չի կարելի եզրակացնել, որ դրաբարի դերբայական բայաձևերը անկախ բայաշարքեր էին։ Հենց այն պատճառով, որ նրանք անկախ բայաշարքեր չէին, դրաբարի դերբայական ձևերը գործածվում էին զանազան դեպքերում և զանազան նշանակությամբ, որոնցից հիմնական նշանակությունն անջատելը անհնար է։

Որ դրաբարի դերբայական բայաձևերը անկախ բայաշարքեր չեն, ավելի ակներև կերպով հաստատվում է նրանով, որ այս ձևերը կազմող մասերը (դերբայ և օժանդակ բայ) դեռևս չեն ներկայացնում մի ամբողջական ձև։ Օժանդակ բայը կարող է մյուս խոսքի մասերի հետ էլ կազմել ստորոգյալ և դերբայն էլ առանձին վերցված իր հերթին կարող է գործածվել որպես բայ կամ ածական։ Այսպես՝

1. Օժանդակ բայը առանձին, անկախ ստորոգյալ է՝

«Առն միոջ էին երկու որդիք» (Ղուկաս, 15, 11) կամ՝ «Մեք ի քուն էաք» (Մտթ., 28, 13)։

2. Որ անցյալ դերբայը նախադասության մեջ կարող է լինել անկախ ստորոգյալ, սրա մասին արդեն խոսել ենք վերևում։

3. Օժանդակ բայը մյուս խոսքի մասերի հետ միասին կազմում է բաղադրյալ ստորոգյալ։

Գայ նա ի քաղաք մի սամարացւոց՝ որում անուն էր Սուքար (Հովհ., 4, 5)։

Եվ անդ էր աղբիւր մի Յակոբայ (Հովհ. 4, 5)։

Եւ էր ժամ իբրև վեցերորդ (Հովհ. 4, 6)։

Դու՝ որ ներեայդ ես, զի՞ արդ յինէն ըմպել խնդրես (Հովհ. 4, 9)։

Եւ ով է՝ որ ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել... (Հովհ. 4, 10)։

Ջրհորս խոր է (Հովհ. 4, 11) և այլն։

4. Առանձին վերցված անցյալ դերբայը ածական է և նախադասության մեջ գործածելիս կարող են լինել և որոշիչ, և ենթակա, և խնդիր։ Օրինակ՝

1. Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի գերեզմանն և էր այր մի, և վէմ մի եդեալ ի վերայ նորա։ (Հովհ. 11, 38)։

Եվ Հիսուս դարձյալ խռովված ևկավ դերեզմանը և այն մի քարայր էր, և մի քար նրա վրա դրված։

2. Մեռեալ լուիցեն ձայնի որդւոյն աստուծոյ (Հովհ. 5, 25)։

Մեռելներն աստծո որդու ձայնը կլսեն...

3. Եւ ոչ հաւատային հրեայքն ցնմանէ՝ եթէ կոյր էր՝ և բացաւ. մինչև կոչեցին զծնողս բացելոյն (Հովհ. 9, 18)։

Եվ հրեաները չէին հավատում՝ նրա համար, թե կույր էր և բացվեց. մինչև որ աչքը բացվածի ծնողներին կանչեցին։

4. ...Մարգարէացավ եթէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին։ Եւ ոչ ի վերայ ազգին միայն, այլ զի և զորդիսն աստուծոյ զցրուեալսն ժողովեսցէ ի մի (Հովհ. 11, 52)։

...Մարգարեացավ՝ թե Հիսուսը պիտի մեռներ ազգի համար։ Եվ ոչ թե միայն ազգի համար, այլ որ նա աստուծո ցրված որդիքն էլ մեկտեղ ժողովի։

5. Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիայ, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մեռելոց (Հովհ. 12, 1)։

Եվ Հիսուսը զատկից վեց օր առաջ եկավ Բեթանիա, որտեղ մեռած Ղազարոսն էր, որին մեռելներից հարուցյուն տվեց։

6. Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր և ոչ առաքեալ մեծ քան զայն՝ որ առաքեացն զնա (Հովհ. 13, 16)։

Ծառան իր տերից մեծ չէ, ոչ էլ ուղարկվածը մեծ է իրան ուղարկողից։

Այսպիսով՝ գրեալ է և գրել է չի կարելի ընդունել միևնույն ձևվերով. գրել է մի ամբողջական բայաձև է, նրան բաժանել չի կարելի, իսկ գրեալ է ձևի մեջ դեռևս զգացվում է, որ նրանք բաղկացած են երկու մասից։ Գրեալ է—մոտավորապես նույնպիսի ձև է, ինչպիսին աշխարհաբարում կատարյալն է, օրինակ, այսպիսի նախադասության մեջ՝ «գրեցի բայի կերպը կատարյալ է, իսկ գրում էի բայինը՝ անկատար»։ Ինչ տարբերություն որ կա կատարյալ է և կատարել է ձևերի մեջ, նույն տարբերությունն է նաև գրաբարի գրեալ է և աշ-

խարհաբարի գրել է ձևերի մեջ։ Իսկ նրանց մեջ ամենից առաջ կա այն տարբերությունը, որ գրել է արտահայտում է չտեսածի ենթակատեգորիա, իսկ գրեալ է ձևի մեջ գործողություն կատարելու այդպիսի հատկությունը միայն ակնարկվում է։ Այս նոր ենթակատեգորիան է, որ միաձուլում է գրել է ձևի բաղկացուցիչ մասերը, որովհետև ուրիշ կատեգորիաների համար, որոնք արտահայտվում են չտեսածի շարքով, հայոց լեզուն ունի առանձին շարքեր կամ արտահայտման ուրիշ միջոցներ։ Այսինքն՝ գրեալ է ձևի մասերի միաձուլումը սկսվեց միայն այն բանից հետո, երբ հայոց լեզվի մեջ չտեսած գործողության արտահայտելու պահանջը ավելի մեծացավ, քան այդ բանը զգացվում էր գրաբարում։ Սրանից հետո արդեն այս ձևերի մեջ սկսվում են զանազան փոփոխություններ մտցնել, որոնց մասին իր արժեքավոր աշխատության մեջ մանրամասնորեն խոսում է Ա. Ա. Աբրահամյանը[1]։

Չտեսած գործողություն արտահայտելու ակնարկը, ինչպես ասացինք, թաքնվում է գրաբարի դերբայական ձևերի մեջ և այս ակնարկը շատ մեծ նշանակություն ուներ չտեսած ենթակատեգորիայի զարգացման համար։

Գրաբարի դերբայական ձևերը ինչո՞վ կամ ինչպե՞ս էին ակնարկում չտեսած գործողությունը։

Անցյալ դերբայը ցույց է տալիս, որ ենթական խոսքի մոմենտից առաջ որոշ գործողություն է կատարել և այդ գործողության հետեվանքն այն է, ինչ արտահայտված է դերբայով։ Օրինակ՝ գրեալ (գրված) նշանակում է, որ ենթական արդեն կատարել է գրելու գործողությունը, որի արդյունքով ստացվել է մի բան, որը ցույց է տալիս այդ գործողության հետևանքը։ Աղացեալ (աղացված) նշանակում է, որ ենթական կատարել է աղալու գործողություն և այն առարկան, որի հետ կատարվել է այս գործողությունը, արդեն ձևափոխվել է։ Ասենք՝ աղալուց առաջ ցորեն էր, իսկ հետո դարձավ ալյուր։ Այստեղ մի շատ կարևոր հանգամանք կա՝ ոչինչ չգիտենք, թե ո՞վ (կամ ի՞նչ) է ենթական, գործողություն կատարողը։ Սրանից է որ այս դերբայով կազմված ձևերը գործածելիս խոսողը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որին նա ականատես չի եղել։ Իսկ երբ լեզվի մեջ զարգացել է չտեսած գործողություն արտահայտելու պահանջը խոսողը այս ձևերը գործածել է գործողության հենց այդպիսի հատկությունը ընդգծելու նպատակով։

Բայց այս հարցն ունի նաև մի այլ կողմ։ Բանն այն է, որ այդ

[1] Ա. Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 180։

նույն գրաբարի դերբայական ձևերը ակնարկում են նաև գործողության մի այլ հատկության. և կարելի է ասել, որ այդ մյուս հատկությունը այս ձևերի մեջ ավելի է ընդգծված, քան չտեսած գործողության մասին ակնարկությունը: Այդ մյուս հատկությունը գործողության հետևանքի մատնանշումն է: Դա նույնպես բխում է անցյալ դերբայի բնույթից, որը ցույց է տալիս, թե ենթական որոշ գործողություն արդեն կատարել վերջացել է և այդ գործողության հետևանքը մնացել է:

Եթե այդ հետևանքը վերցնենք իբրև որևէ առարկայի կամ երևույթի հատկանիշ, կստացվի բաղադրյալ ստորոգյալ, որը ցույց կտա, թե ենթական, որին մենք վերագրում ենք այս հատկանիշը, ունի կամ ուներ դերբայով ցույց տված հատկանիշ: Այսպիսով՝ գրեալ է, աճեալ է, բնակեալ է, հասեալ է, կատարեալ էր և նման ստորոգյալները առաջ ցույց են տալիս ենթակայի հատկանիշ, որ նա գրված, բնակված, ընկած... է, կամ էր:

Բայց այստեղ կա նաև մի շատ կարևոր հանգամանք ևս: Մեդիոպասիվ բայերից կազմված անցյալ դերբայի մեջ գործողության կատարողի ով լինելը որոշված է: Երբ ասում ենք նստած է, ինքնին ենթադրվում է, որ նստած վիճակում հիմա գտնվում է այն նույն առարկան, որն առաջ կատարել է նստելու գործողությունը: Այդպես էլ՝ պառկած է, կանգնած է, ընկած է... գրված է, կարդացված է, ազատված է....:

Բայց ներգործական բայերից կազմված դերբայների մեջ, ինչպես ասացինք, գործողություն կատարողը խոսողի համար անհայտ է և եթե ասենք՝ գրած է, կարդացած է, թալանած է..., սա նշանակում է, որ մենք ցույց ենք տալիս այն հետևանքը, որ մնացել է գործողություն կատարելուց հետո, բայց չգիտենք, թե ո՞վ է այդ գործողությունը կատարողը: Միայն պարզ է, որ գործողություն կատարողի համար այն առարկան, որի վրա մնացել է գործողության հետևանքը, եղել է գործողության օբյեկտ:

Օրինակ՝ երբ ասում ենք, գրած թուղթ, կարդացած գիրք, ազատած թռչուն, հասկանում ենք, որ որևէ մեկը կարդացել է գիրքը, գրել է թուղթը, ազատել է թռչունին և այս գործողությունը կատարվելուց հետո գործողության օբյեկտները՝ գրված, կարդացված, ազատված դարձան: Եվ այսպիսի ձևերը կարելի է գործածել նաև արդի հայերենում[1]:

Գրած է, կարդացած է ձևերը Ա. Ղարիբյանը որպես «հարակա-

---

1 Ա. Աբրահամյան, Դերբայները..., էջ 369:

տար և անցյալի հարակատար ժամանակների ձևեր» բերում է իր «Դասագրքի» մեջ[1]։

Բայց դրանք աշխարհաբարի համար չի կարելի ընդունել որպես անկախ բայաշարքեր, քանի որ «գրած է, կարդացած է» ձևերը աշխարհաբարում դեռևս բաղադրյալ ստորոգյալ են, ցույց են տալիս, թե ինչ հատկանիշ ունի ենթական և ոչ թե գործողություն կամ վիճակ։

Վերադառնանք մեր հարցին։

Ինչպես ասացինք, անցյալ դերբայը ցույց է տալիս.

ա) որ գործողությունն արդեն կատարված է, բ) որ գործողությունը կատարողն անհայտ է, եթե անցյալ դերբայը կազմված է ներգործական սեռի բայից։ Այստեղից՝ եթե անցյալ դերբայի հետ գործածվում է օժանդակ բայ, հնարավորություն է ստեղծվում և չեսած գործողություն ցույց տալու, և որոշ վիճակում գտնվող առարկա ցույց տալու համար։

Հայոց լեզվի մեջ հետզհետե զարգացավ չեսած գործողություն արտահայտելու պահանջը և գրաբարի անցյալ դերբայ+օժանդակ բայի միաձուլումով ստեղծվեցին չեսածի շարքերը (չեսած—«վաղակատար» և նախորդ—«անցյալ վաղակատար»)։ Քանի որ այս ձևերն արդեն ստեղծվեցին, նրանք չէին կարող արտահայտել նաև ենթակայի վիճակ[2]։

Միաժամանակ իրականության մեջ գոյություն ունեցող երևույթները պահանջում էին արտացոլել նաև ենթակայի վիճակը։ Բայց այս վերջին նշանակությամբ նույն ձևերի գործածումը անհնարին էր, քանի որ նրանք արդեն գործածված էին չեսածի նշանակությամբ։

Այս պատճառով լեզուն դիմեց անցյալի դերբայի մյուս ձևին՝ (-ած վերջավորություն ունեցող ձևին), որը գրաբարում գործածվում էր որպես գոյական կամ ածական։ Բայց գրաբարում էլ նկատվում էր, որ -ած վերջավորությունով կազմված բառերը կարող էին ունենալ իսկական անցյալ դերբայի նշանակություն։ Ա. Աբրահամյանն իր աշխատության մեջ շատ լավ է հաստատում այս դրույթը[3]։

---

1 Ա. Ղարիբյան, Դասագիրք, 1951, էջ 283։ Հետագա հրատարակություններում գրված է փոխված է նստած է բայով, բայց կարդացած է մնում է։ (Տե՛ս նույն «Դասագրքի», 1959 թ. հրատարակությունում)։

2 Թեև հայոց լեզվի զանազան բարբառներում և հատվածներում հարակատարի և վաղակատարի ձևերը և նշանակությունները շփոթում են, որը լավ է հաստատում մեր դրույթը։ (Տե՛ս Ա. Աբրահամյան, հիշյալ աշխատութ., էջ 362, 363, 373—374)։

Ա. Աբրահամյան, Դերբայները..., էջ 204 և հետո։

Այսպես ստացվեցին անցյալ դերբայի երկու ձևերը՝ -ել (<հալ) և -ած վերջավորություններով։ Սրանով հնարավորություն ստեղծվեց, որ լեզվի մեջ արտահայտվեր նաև ենթակայի վիճակ, այնպիսի վիճակ, որ ստեղծվել է նախկինում կատարված գործողության հետևանքով։ Բայց քանի որ –ած վերջավորություն ունեցող դերբայն էլ անցյալ դերբայ էր և բոլորովին նույն նշանակությունն ուներ, ինչ –եալ վերջավորություն ունեցող դերբայը, այդ պատճառով էլ –ած+ օժանդակ բայը կարող էր արտահայտել նաև չտեսած գործողություն։ Այդպես էլ եղավ և դրանից է, որ նույնիսկ մասնագետները հաճախ կարծում են, թե –ած և –ել վերջավորություն ունեցող դերբայներով կազմված ձևերը միևնույնն են[1]։

Արևմտահայ գրական լեզվի և մի քանի բարբառների մեջ իսկապես խառնված են այս ձևերը։ Նրանք կամ միմյանց փոխարեն են գործածվում, կամ –ած ձևերը ճնշում են –ել վերջավորություն ունեցող դերբայով կազմված ձևերին[2]։

Հայոց գրական լեզվի մեջ հիմա արդեն կազմավորված են և –ել վերջավորություն ունեցող և՛ –ած վերջավորություն ունեցող դերբայներով առանձին բայաշարքեր՝ –ել+եմ-ը՝ չտեսած գործողություն արտահայտելու համար, իսկ -ած+–եմ, –ած+էի՝ ենթակայի վիճակ արտահայտելու համար։ Բայց պետք է նկատենք, որ այս վերջինից (-ած դերբայով) առանձին բայաշարքեր ստացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք կազմված են չեզոք կամ կրավորական բայերից, իսկ ներգործական բայերից կազմված –ած վերջավորություն ունեցող դերբայից և օժանդակ բայից առանձին բայաշարք չի ստացվի։ Այդպիսի ձևը նախադասության մեջ միայն բաղադրյալ ստորոգյալ կլինի։ Այսպես՝ գրված է ստատիկ ներկա է, բայց գրած է՝ բաղադրյալ ստորոգյալ կլինի հետևյալ տիպի նախադասությունների մեջ։ «Այս նկարը Գրիգորի նկարածն է» (համեմատ. «Գրիգորի նկարած նկարը»)[3]։

Սակայն լեզվի մեջ նման ձևեր գործածելու կարիք չկա, որովհետև այս միտքը կարելի է արտահայտել բայով։

Այստեղից պարզ է, որ չտեսած և նախորդ շարքերը ծագումով շատ ավելի հին են, քան ստատիկ ձևերի շարքերը։ Բավական է մատնանշել այն հանգամանքը, որ գրաբարի անցյալ դերբայից ծա-

---

1 Ստ. Լիսիցյան, *Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը*, Երևանի Պետ. համալսարանի գիտաշխատություններ, հ. 19, Երևան, 1941, էջ 47։

2 Ա. Աբրահամյան, *Հիշյալ աշխատութ.*, էջ 367—393, առանձնապես էջ 381։

3 Նույն տեղում, էջ 369։

դել են առաջինները և այդ պատճառով ստատուսի կատեգորիա արտահայտելու համար լեզուն ստիպված եղավ նոր ձևեր որոնել։

Այս ձևերի ծագումը շատ մեծ նշանակություն ուներ հայոց լեզվի կառուցվածքի փոփոխության համար։ Գիտենք, որ գրաբարի բայը սինթետիկ կազմություն ուներ՝ բոլոր բայաշարքերը կազմվում էին սինթետիկ ձևով, իսկ աշխարհաբարը արդեն հիմնականում անալիտիկ կերպով է կազմում բայաձևերը։ Դժվար չէ նկատել, որ այսպիսի լուրջ փոփոխությունը լեզվի կառուցվածքի մեջ սկսվեց –ել վերջավորություն ունեցող դերբայներով կազմված ձևերից։ Սրանք առաջին անգամ լեզվի մեջ մտցրին անալիտիկ ձևով կազմված շարքեր և սրանց նմանությամբ լեզուն հետզհետե փոխեց իր երանգը անալիտիկ սիստեմով կազմելով մի քանի այլ շարքեր ևս։ Այսպիսով, աշխարհաբարում անալիտիկ սիստեմով կազմված ձևերից որպես ամենահինը պետք է ընդունենք –ել վերջավորություն ունեցող դերբայներով կազմված ձևերը։

Կարող ենք եզրակացնել. չեսածի և նախորդության ենթակատեգորիաներ արտահայտող բայաշարքերը աշխարհաբարում զարգացել են գրաբարում եղած ձևերից, որոնք պոտենցիալ կերպով ունեին այսպիսի ձևերի և բովանդակությունների զարգացման հնարավորություններ։ Իհարկե, այստեղ էլ շատ հետաքրքիր է ուսումնասիրել վրացերենի և հայերենի համապատասխան ձևերի հարաբերությունը, բայց այս հարցով զբաղվողը չպիտի մոռանա գրաբարը։ Ուսումնասիրության արդի էտապում այսպես ենք մենք պատկերացնում հայերենի և վրացերենի մեջ եղած նմանությունները, որոնք նկատվում են ակտի, հաջորդականության և ստատուսի կատեգորիաների մեջ։

10. Դիտողություններ բայաշարերի անվանման մասին

Ինչպես տեսանք, ամեն մի բայաշարք մյուսից տարբերվում է ոչ միայն ժամանակով, ինչպես կարծում են, այլև մի որևէ ենթակատեգորիա արտահայտելով։ Օրինակ՝ ներկան (ներկայի շարք—նստում եմ) մյուս մի քանի շարքերից կերպով չի տարբերվում, որովհետև անկատար կերպ ունեն նաև անկատարի և ապառնիի շարքերը։ Ներկայի շարքը եղանակով նույնպես նույնն է, ինչ մի քանի այլ շարքեր, ակտով էլ նման է մի քանիսին (նստեցի... նստելու եմ... կնստեմ...) Նա բոլորից տարբերվում է միայն ժամանակով՝ նստում եմ շարքի ձևերը արտահայտում են միայն ներկա ժամանակ։ Բայց ներկա ժամանակ է արտահայտում նաև ստատիկ ներ-

կան՝ նստած է: Եթե չսահմանենք նրանց միջ եղած տարբերությունը, այս շարքերը կխառնվեն իրար հետ: Այդ սահմանումը դժվար չէ. նստում է արտահայտում է գործողության դինամիկ ձև, իսկ նստած է՝ գործողության կատարվելուց հետո ստացված դրություն, «գործողության ստատիկ ձևը»: Այսպիսով, այն բայաշարքը, որ կոչվում է ներկա, դինամիկ ներկա է, իսկ այն բայաշարքը, որ կոչվում է համակատար՝ ստատիկ ներկա է: Եթե անվանելիս չգործածենք «դինամիկ» մակդիրը և թողնենք միայն «ստատիկը», դա արդեն բավական կլինի և տերմինավորումն էլ կհեշտանա: Ներկայի և ստատիկ ներկայի շարքերը միմյանցից տարբերվում են նաև կերպով. ներկան արտահայտում է գործողության անկատար կերպ, իսկ ստատիկ ներկան՝ գործողության կատարյալ կերպ: Այսպիսով, ստատիկ ներկա տերմինի փոխարեն կարելի է նաև գործածել կատարյալ ներկա: Եթե այսպես անվաննենք, այն ժամանակ ներկան պատկերացվում է որպես անկատար ներկա և դա ճիշտ կլինի, ճիշտ դաղափար կտա այս շարքերի բովանդակության (ֆունկցիայի) մասին: Բայց այստեղ մի հանդամանք կա, որը նկատի պիտի ունենանք: Այդ այն է, որ կերպի կատեգորիան արտահայտվում է համարյա բոլոր բայաշարքերով և ըստ այդ կատեգորիայի մի քանի բայաշարքեր համադրվում են, իսկ ստատուսի կատեգորիան արտահայտվում է միայն երկու շարքով և եթե այս դեպքում չգործածենք այդ տերմինը, ստատուսի կատեգորիայի գոյությունը չի արտացոլվի բայաշարքերի անվանման մեջ: Դրա համար էլ, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլինի, եթե ներկայի համար թողնենք նույն անունը (ներկա), իսկ հարակատար տերմինի փոխարեն գործածենք ստատիկ ներկա տերմինը:

Սրանով արդեն որոշվում է նաև նստած էր շարքի անվանման հարցը, քանի որ սա էլ բայի ստատիկ ձևն է, որով նա տարբերվում է բոլոր մյուս բայաշարքերից, բացի ստատիկ ներկայի շարքից: Իսկ ստատիկ ներկայից նա տարբերվում է ժամանակով՝ նստած էր, ցույց է տալիս անցյալ ժամանակ: Այսպիսով, նստած է ստատիկ ներկա կլինի, իսկ նստած էր՝ ստատիկ անցյալ:

Անցյալի անկատար շարքի (նստում էր) ձևերին համադրվում են անցյալ կատարյալի (նստեց) ձևերը, այն էլ միայն կերպի կատեգորիայով: Նստում էր արտահայտում է անկատար կերպ, իսկ նստեց՝ կատարյալ: Բոլոր մյուս կատեգորիաներով (ժամանակով, եղանակով, ակտով) նրանք նույնն են և երբեմն նմանվում են և մյուս շարքերին: Սրա համար այս շարքերի անունները կարելի է թողնել անփոփոխ: Այսպիսով, նստում էր անցյալ անկատարի շարքն է, իսկ նստեց՝ անցյալ կատարյալ:

Գրելու է շարքին համադրվում են կգրի շարքի ձևերը, որոնք բոլոր կատեգորիաներով նմանվում են իրար, բացի կերպից, իսկ մյուսներից տարբերվում են միայն ժամանակով, գրելու է և կգրի երկուսն էլ արտահայտում են ապառնի ժամանակ։ Ապառնի ժամանակը արտահայտվում է նաև մյուս շարքերով (գրի, գրի՛ր), բայց նրանք այս շարքերից տարբերվում են նաև մյուս կատեգորիաներով կամ ենթակատեգորիաներով, իսկ գրելու է և կգրի բոլորովին նույնն են բացի կերպից։ Սրա համար գրելու է կլինի ապառնի անկատար, իսկ կգրի՝ ապառնի կատարյալ։

Գրելու էր շարքին համադրվում է կգրեր շարքը և նրանց միջև տարբերությունը միայն կերպի մեջ է։ Ժամանակով երկուսն էլ անցյալ են, եղանակով՝ հետևանքային։ Նրանք բոլոր մյուս շարքերից տարբերվում են միայն եղանակով։ Սրա համար նրանց անվանելիս պետք է հենվել այս կատեգորիայի վրա։ Այսպիսով, կատացվի՝ գրելու էր հետևանքային անկատար է, իսկ կգրեր՝ հետևանքային կատարյալ։

Նստել է շարքը բոլոր մյուս շարքերից տարբերվում է նրանով, որ նստել էր շարքի հետ միասին արտահայտում է այնպիսի գործողություն, որին խոսողը ականատես չի եղել։ Այսինքն, այս շարքով արտահայտվում է չտեսած գործողություն։ Սրանով էլ նրանք տարբերվում են մյուս բոլոր շարքերից։ Ժամանակով երկուսն էլ անցյալ են, եղանակով՝ սահմանական, կերպով՝ կատարյալ բոլորովին այնպես, ինչպես անցյալ կատարյալի շարքը։ Հենց այս պատճառով, որ այս շարքերով արտահայտվում է չտեսած գործողություն, հայոց լեզվի մեջ գոյություն ունի ակտի (գործի) կատեգորիան։ Եթե աշխարհաբարը չարտահայտեր չտեսած գործողություն, մենք իրավունք չէինք ունենա խոսել ակտի կատեգորիայի մասին, քանի որ տեսած գործողության գոյությունը ընդգծվում է չտեսած գործողության գոյությամբ։

Այսպիսով, նստել է և նստել էր երկուսն էլ արտահայտում են տեսած գործողություն, բայց այս շարքերը միևնույնը չեն։ Նրանք միմյանցից տարբերվում են մի այլ կատեգորիայով՝ հաջորդականության կատեգորիայով։ Նստել էր նախադասության մեջ արտահայտում է նաև որևէ գործողությունից առաջ կատարված գործողություն։ Նստել էր շարքի հանդեպ նախադասության մեջ գտնվում է, համ ենթադրվում է, որևէ բայ անցյալ կատարյալի ձևով, որն արտահայտում է հաջորդ գործողությունը։ Այսպես, նստել էր նշանակում է, որ խոսողը ականատես չի եղել ենթակայի նստելու գործողության կատարելուն, բայց նկատել է այն ժամանակ, երբ նա ար-

դեն նստել էր։ Երբ ասում ենք նստել էր, արդեն ենթադրվում է նրա հանդեպ որևէ բայ անցյալ կատարյալի ձևով՝ տեսա, նկատեցի, իմացա, ասացին և այլ բայեր նման նշանակությամբ։ Այս անցյալ կատարյալի ձևով դրված կամ ենթադրված բայը նստել էր շարքի ձևերի հանդեպ արտահայտում է հաջորդ գործողություն, իսկ նստել էր շարքի ձևերով տրված բայը՝ նախորդ գործողություն։ Սրանից (նախորդից և հաջորդից) իրենց սեփական ձևը և բովանդակությունը (ֆունկցիան) ունեն միայն նստել էր շարքի ձևերը։ Այսպիսով, ընտել էր շարքի շնորհիվ հայոց լեզվի մեջ արտահայտվում է հաջորդականության կատեգորիա, իսկ նստել է շարքը այս կատեգորիան արտահայտելու մեջ ոչ մի դեր չի կատարում։ Նստել է շարքի ձևերը առանձին ուշադրություն են դարձնում ակտի կատեգորիա արտահայտելու վրա։ Ակտի կատեգորիան ունի երկու ենթակատեգորիա՝ տեսածի և չտեսածի։ Սրանցից իր սեփական ձևն ունի միայն չտեսածի ենթակատեգորիան, որով նստել է շարքի ձևերը տարբերվում են բոլոր մյուս շարքերից և, մեր կարծիքով, ավելի հարմար կլինի, եթե նրան անվանենք չտեսածի շարք։

Հաջորդականության կատեգորիան ունի երեք ենթակատեգորիա՝ միաժամանակության (ես գրում էի, երբ դու ներս մտար), հաջորդության և նախորդության։ Սրանցից միայն վերջինն ունի իր սեփական ձևը և բովանդակությունը, որի շնորհիվ հայոց լեզվի մեջ գոյություն ունի հաջորդականության կատեգորիա։ Այսպիսով, ընտել էր շարքը բոլոր մյուս շարքերից տարբերվում է նախորդ գործողություն արտահայտելով։ Այս պատճառով, ավելի հարմար կլինի, եթե նստել էր շարքը անվանենք նախորդ տերմինով։

Նստի շարքի ձևերը մյուսներից տարբերվում են եղանակով։ Ըղձական եղանակը միայն այս շարքի ձևերով է արտահայտվում, սրա համար կարելի է իր անունը թողնել անփոփոխ, բայց ավելի լավ կլինի, եթե ուղղակի կոչենք ըղձական։

Նստեր շարքի ձևերն էլ մյուսներից միայն եղանակով են տարբերվում, բայց նրանցով արտահայտվում է ոչ թե ըղձական եղանակ, ինչպես կարծում են, այլ պայմանական։ Նստեր շարքի ձևերը, սովորաբար, գործածվում են պայմանական նախադասության մեջ, որտեղ նրա հանդեպ տրված է կամ ենթադրվում է ենթահաճային շարքի ձևով մի այլ բայ։ Առանձին վերցրած նստեր ձևը ինքնին արտահայտում է պայման որևէ այլ գործողության համար։ Այսպես՝ «նստեր՝ կընկներ»։ Այստեղ «նստեր» նշանակում է՝ «եթե նստեր»՝ և արտահայտում է պայման ընկնելու գործողության համար։ Այս վերջին գործողության կատարման համար պետք է կատարվեր նըս-

տելու գործողությունը կամ նստելու գործողության կատարման հետևանքով կատացվեր ընկնելու գործողությունը։ Այստեղ շատ նրբություններ կան, որոնք պահանջում են ուսումնասիրել, բայց սրանցից հիմնականն այն է, որ նստեր շարքի ձևերով արտահայտվում է պայման մյուս գործողության համար։ Այս պատճառով, մեր կարծիքով, ավելի հարմար կլինի, եթե նստեր շարքի ձևերը անվաններք պայմանական տերմինով։ Նստի՛ր, նստեցե՛ք շարքն էլ մյուսներից միայն եղանակով է տարբերվում։ Նրանք նրամայական եղանակ են արտահայտում, այդպես էլ կոչվում են և կարիք չկա փոխելու անունը։ Այսպիսով՝ նստի՛ր, նստեցե՛ք շարքը նրամայական է։

Ի՞նչ կարելի է ասել «հարկադրական եղանակի շարքերի» մասին։ Ինչպես տեսանք, ամեն բայաշարք արտահայտում է որևէ մի նոր, մյուս շարքերի մեջ չեղած կատեգորիա և սրանով տարբերվում է բոլոր մյուս շարքերից։ Ի՞նչ են արտահայտում պիտի մասնիկով ձևերը։ Սրանք նույն ըղձականը կամ պայմանականն են, ավելացրած պիտի մասնիկը։

Ինչպես որ ամեն մի բայաձև, իր վրա կրելով որևէ նոր մասնիկ, կորցնում է իր հիմնական բովանդակությունը, թեև ոչ ամբողջովին, նույնն էլ կարելի է ասել պիտի մասնիկով ձևերի մասին։ Բայց գլխավորն այն է, որ եթե պիտի||պետք է մասնիկով ձևերը նոր իմաստ, նոր բովանդակություն են ստանում, դա միայն այն իմաստն է, ինչ այդ մասնիկը ունի առանձին։

Այսինքն՝ պետք է գնամ նշանակում է՝ պետք է+գնամ։ Ոչ մի բայաշարք աշխարհաբարում չի կարելի այսպես բաժանել։ Օրինակ՝ գրում է չի նշանակում գրում+է, գրելու է, չի նշանակում գրելու+է, գրել է չի նշանակում գրել+է, կգրի չի նշանակում կ+գրի... և այսպես մինչև վերջ։

Այսպես է կարծում նաև ընկ. Հ. Բարսեղյանը։ Նա գրում է. «Զեզանից յուրաքանչյուրը պետք է հասկանա սխալը։ Նրանք պետք կ հայտնեն այդ մասին։ Դուք չպետք է հանգստանայիք ձեր նվաճումներով» ու նման նախադասություններում ստորոգելիական կատեգորիաները, բացի եղանակից, արտահայտվում են ըղձականի բայաձևերով, իսկ պետք է կապակցությունը դառնում է գործողության կատարման անհրաժեշտություն, հարկադրանք արտահայտող ձևական միջոց»[1]։

